


L44

942



Handwritten scribbles



№ 1820
2/24

Handwritten signature

ՆՕՏԱՐՔ ՀԱՅՈՑ


содержащий а изданный
ՀԱՒԱԲԵՍԱԼ ԵՒ Ի ԼՈՅՍ ՍԾԵՍԱԼ

Заменил
Императорской
руководителю

Չ Ե Ռ Ա Մ Բ

архив. Мокрица № 10
ՂԵՒՈՆԵՂ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՓԻՐՂԱԼԻՄԵԱՆ ՏՈՒՔԵՅԻՈՅ

Վ Ա Ր Ա Գ Ա Ց Վ Ա Ն Ո Ւ Յ Վ Ա Ն Ա Կ Ա Ն Ի



Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԷՋՄԻԱՏՆԻ

Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ Ս. ԿԱԹՈՒՂՈՒԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Handwritten notes:
Крест
содержит

Ի ՊԱՏԻՍԵՔՈՒԹԵԱՆ Ս. ԵՐԱՅԱԿԷՄԻ

Տ. ՅԱՐՈՒԹԻԻՆ Ս. ԱՐՔ ԵՓՐՍԿՈՓՈՍԻ

Ի ՊԱՏԻՍԵՔՈՒԹԵԱՆ Ս. ԵՐԱՅԱԿԷՄԻ

Տ. ՍԻՄԷՕՆ Ս. ԱՐՔ ԵՓՐՍԿՈՓՈՍԻ

№ 290 / x
№ 2469 m



جليله سنك ۳۵۶ نومرو لي رخصتنامه سيلاه طبع اولمشدر



Востановлено

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳԸ ԿԵՆՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1888

9(47.925)
47-65

2012

5 OCT 2011

ՄԵ
ԼԱՎ
942

ՆՕՏԱՐՔ ՀԱՅՈՑ

ՀԱՒԱՔԵԱԼ ԵՒ Ի ԼՈՅՍ ԱԾԵԱԼ

Ձ Ե Ռ Ա Մ Բ

ՊԵՐՈՆԻԳ ՊԱՐԳԱՊԵՏԻ ՓԻՐՂԱԼԻՄԵԱՆ ՏՈՍԲԵՑԻՈՑ

Վ Ա Ր Ա Գ Ա Ց Վ Ա Ն Ո Ւ Ց Վ Ա Ն Ա Կ Ա Ն Ի



Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Տ. Տ. ՄԱԿԱՐԱՅ Ս. ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի ՊԱՏՐԻԱՐԳՈՒԹԵԱՆ Ս. ԵՐՈՒՍԺՂԵՄԻ

Տ. ՅԱՐՈՒԹԻԻՆ Ս. ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ


Ի ՊԱՏՐԻԱՐՔ ՏԵՂԱՊԱՀՈՒԹԵԱՆ Կ. ՊՕԼՍՈՑ

Տ. ՍԻՄԷՕՆ Ս. ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

№ 2469 մ

№ 2901 ռ.


معارف نظارت جلیله سنک ۳۵۶ نومرولی رخصتنامه سیله طبع اولتمشدر



Կ. ՊՕԼԻՍ

—

ՏՊԱԳԲ • ՆԻՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



81814 97020

СЕРТИФИКАТ НА ДОКЛАД

№ 1111

СЕРТИФИКАТ НА ДОКЛАД ЗА ИЗПЪЛНЕНИЕ НА ДОКЛАДА

№ 1111

СЕРТИФИКАТ НА ДОКЛАД ЗА ИЗПЪЛНЕНИЕ НА ДОКЛАДА

№ 1111

№ 1111

№ 1111

№ 1111



942-2012

4982 39 9 | 1934

Ի Յ Ի Շ Ա Տ Ա Կ

ԱԶՆԻԻ ԱԶԳԱՅՆՈՑ

Մ Ա Ն Չ Է Ս Դ Է Ր Ի

Կ Ա Ն Խ Ա Յ Ա Ն

Ա. Յայտնի է ընթերցասէր Ազգայնոց գրաւոր խոստումն իմ, զոր արարեալ եմ երկիցս ի 1871. և ի 1882 ամի տպագրեալ գործըս իմ. որք են Ա. ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ի ՍՈՒՐԲ ԷՋՄԻՍԾԻՆ. և Բ. ՉՈՐՍ ԸՆԿԵՐԻՔ. վասն ներկայ Գործոյս. և ահա այսօր հազիւ հազ շնորհիւն Աստուծոյ, և քաջալերութեամբ զըրազէս և պատմասէր Ազգայնոց, եկեղեցական Հարց, նշանաւոր տոհմական պայազատաց, ծանօթ պատմաբանից, երևելի հրապարակախօսաց, հմուտ վիճակագրաց և բոլոր գրասէր Ազգայնոց՝ ձեռն ի գործ արկեալ եկի յասպարէզս այս՝ առ ի կատարել գործնականաւ զիմս կրկնակի խոստումն, զոր կռեցի անխոհեմաբար ընդ Ազգիս սիրեցելոյ:

Բ. Ըստ պայմանի խոստման իմոյ յօժարեցայ հանել ի հրապարակ՝ զայս ներկայ աշխատութիւնս՝ զոր բազում ներդրութեամբ եւ չարաչար աշխատութեամբ սրտամաշ պանդխտութեամբ և անհանգիստ անձնազոհողութեամբ եղի ի գործ վասն մտադրեալ նպատակիս այսորիկ. բերել ի ձեռն և հաւաքել ի մի թէ Չեռագիր մատենից. թէ ի Տարեգրութեանց, թէ յԱրձանագրութեանց վանօրէից և եկեղեցեաց, և թէ յայլ իրաց՝ զայնս ամենայն բանս որք պատկանին մերս Ազգային պատմութեան և գաւառագրութեան, քան զկարն իմ աւելի մոլեղին սիրայօժարութեամբ ազահօրէն աշխատեալ բերի ի ձեռն. և հրատարակութեամբ տամ ի լոյս զայս աշխատութիւնս ՆՕՏԱՐՔ ՀԱՅՈՑ անուն տալով սմա:

Գ. Գործ մեր բաղկացեալ ի բազմազան նիւթոց և ի բազմազան թղթոց, բաժանեցաք ի Տարեգրութեան, յԱրձանագրութեան և ի Յիշատակարանս, սկսեալ ի 1393 թուականէ Փրկչին եւ ի Հայոցս ՊԽԲ:

Թէպէտ գոն ի ձեռս իմ Յիշատակարանք և այլ օրինակութիւնք յառաջ քան զայդ թուական, որպէս և յամէ անտի և այսր, զորս թողաք ականայ վասն ինչ ինչ պատճառաց, նոյնպէս եւ վասն ծախուց տպագրութեան, վասնորոյ և ոչ զգործն գլխովին՝ այլ ի տասներորդէ զմին և եթ յայսմ հատորի ամփոփեցաք, տալով զփորձ ի ճաշակ բանասիրաց, և առնուլ զփորձ գոնէ ի փոխարէն տպագրական ծախուց:

Եթէ յաջողեսցի ակնկալութիւն իմ, ունիմ հետզհետէ տալ ի լոյս հատորս հատորս:

Դ. Եթէ ընթերցասէր Հայ Ազգայինք և սիրողք պատմութեան նախնեաց իւրեանց, գնահատելով զայս մեր տաժանելի աշ-

խատութիւնս՝ որ յօգուտ ինքեանց յօժարութեամբ ի գործ եղի զմի մի օրինակ ՆՕՏԱՐՔ ՀԱՅՈՑ գնելով քաջալերեցեն զմեզ . և չթողուցուն նուաստիս մնալ և ճնշիլ ի ներքոյ ծանր պարտուց՝ աքաղաքութեան . առիթ կարգան այսու ինձ հետզհետէ հրատարակել զամենայն հաւաքածոյս իմ շարունակաբար , որք կարեն մեծ լոյս տիւնել ի վերայ պատմութեանս մերոյ . որք այժմ կան և մնան ի մէնջ անձանօթ ի ձեռագիր մատեանս ցրուեալք ի սփիւռս տիեզերաց :

Ե . Իսկ եթէ , մի՛ արտօցէ Տէր , հակառակին հանդիպեալ չը գտի յուսանքէ ինձ քաջալերութիւն սպառմամբ օրինակաց ներկայ հատորոյս . լքեալ պարտասեալ ցաւ ի սիրտ մեկնիմ ի գրական յասպարիզէ աստի . և առ այս մի ոք ինձ անգիտակցաբար մեղադիր լիցի . զի չեմ կարող ես տանել տոկալ յետ այսքան աշխատանացս ի ժամանակի նշխարեալ ծերութեան իմոյ . յորում պէտք են ինձ մեծի մխիթարութեան . և փոխանակ նմին մնացից պարտական տպարանատեառն , թղթավաճառին և կազմարարին , ուստի յոյժ օգտակար է մասնաւոր վնասուց տուժմամբ դադարիլ ի գործոյ , քան տեւել , տոկալ և անկանիլ ի մեծամեծ վնասս , որ չէ մխիթարական :

Զ . Չէ ինձ փափագ թէ գտանիցի ոք որ իւրով առատաձեռնութեամբ մեկենաս հանդիսանայցէ խոնարհ աշխատաւորիս , և պոսակեցէ զնպատակս իմ , այլ իմ այս են իղձք և փափագք , զի իւրաքանչիւր ոք հմուտ գրագէտ և պատմասէր Ազգայինք՝ փութացին ստանալ զմի մի օրինակ ի մերս ՆՕՏԱՐՔ , փոխարէն վըճարելով մի միայն կէս արծաթ մէճիտ . և այս ինձ բաւ և հերիք համարիմ , արդարեւ ի վարձատրութիւն և ի սփոփանս յաւիտեանս ժամանակաց :

Է . Արդ եթէ գտցէ շնորս խոնարհ Տոսպեցին առաջի գրագիտաց Ազգիս սիրեցելոյ և վաճառեացէ անվնաս զշորս հարիւր օրինակս իւրոց ՆՕՏԱՐՔ մնայ պարզերես և անպարտական , և խոստանայ հրապարակաւ իւր համակիր Բաժանորդաց՝ մատուցանել և տալ պատմութեան զթանկագին զանուն և զմականուն նոցին ապագայ Հայոց ի յիշատակ յաւիտենական և ի խրախոյս այլոց՝ ի վերջ կոյս յետագայ հատորոց :

Ը . Գիտեմ ես իբրեւ մարդ տկար և մոռացկոտ բնութեան ենթակայ՝ դուցէ սխալեալ եմ յընթացս ձեռնարկեալ գործոյս թէ ի տարեթիւս և թէ ի սրբագրութիւնս , որք անտեսանելի են մընացեալ ի մէնջ , ուստի առ այս ներողամիտ լինել ինձ նուաստիս աղաչեմ ի բարեսէր Ընթերցողացդ . վասն զի մի միայն Աստուած

է անսխալ և ամենագէտ . իսկ մարդիկ տկար և սխալական :

Թ . Բայ ի ազգային ծանուցեալ Գրատանց և Թանգարանաց որպիսիք են Էջմիածնի , Երուսաղիմայ , Մշոյ Ս . Կարապետի , Վարագայ Ս . Նշանի , Աղթամարայ , Սոյ , Բարձրահայեաց Ս . Աստուածածնի Արղնոյ , Լիմ և Կտուց Անապատայ , Սերաստիոյ Ս . Նշանի , Արմաշու Չարխափան Ս . Աստուածածնի , Կեսարիոյ Ս . Կարապետի , Փրկչի Հիւանդանոցի , Ղալաթիոյ մատենադարանի , Չմիւռնիոյ Թանգարանի , Մշոյ Առաքելոյ վանից , Բաղիշոյ Արմատայ ուխտին և այլ սոյնպիսեաց , նոյնպէս և բայ ի ազգային Խմբագրաց և Լրագրագրաց և ծանօթ Գրագիտաց ոմանց , թէ եկեղեցական իցէ և թէ աշխարհական՝ որոց պարտական գտանիմ զմի մի օրինակ ՆՕՏԱՐՔ ՀԱՅՈՑ նուիրել վասն քրննադատութեան , չունի այլ ոք իրաւունք պահանջել յինէն ճրի՝ ՆՕՏԱՐՔ ՀԱՅՈՑ մատեան վասն ընթերցման . վասն զի սակաւաթիւ տպագրութեանս աղագաւ՝ չմնան ինձ այլ միջոց զի գոհ առնիցեմ զայնպիսի ճրիասէր շահախնդիրս :

Ժ . Մտադիր էի կարգել ի վերջ կոյս գրոցս զցանկ յատուկ անուանց , քաղաքաց , գիւղօրէից , վանօրէից , եկեղեցեաց և այլ նշանաւոր անձանց հանդերձ պատմական ծանօթութեամբ ի գիւրութիւն ընթերցողաց՝ մատենիս հանդիպողաց . բայց այլ եւ այլ զբաղմունքս և գէպք սատան կացեալ օգտակարագոյն փափաքանացս՝ ճնշեալ կասեցուցին զիս ի մտադրեալ բարի նպատակէս . և ես ակամայից հնազանդեալ նոյն բուռն ճնշման . թողի զայնս յաջող ժամու և ժամանակի :

ԺԱ . Սոյն ներկայ մատենիկ ՆՕՏԱՐՔ ՀԱՅՈՑ է ընդ ամէն եօթանասուն և չորս ամաց պատմութիւն , սկսեալ ի Պիմ . թուականէն Հայոց՝ մինչեւ ի ԶԺԶ . թուական . այսինքն ի փառաւոր նահատակութենէ սրբոյն Չաքարիա Բ . Կաթուղիկոսին Աղթամարայ , որ եղեւ ի քաղաքն Ոստան , մինչեւ ի մահն Զհանշահայ որդւոյն Ղարայ Ուսուֆա Պարսից արքային . որ նստաւ հըրամանաւ Շահ Ռուհայ որդւոյն Վանկթամուրայ ի Դաւրէթ . և սպանաւ ապա յՈւղուն Հասանայ ամիրայէն Միջագետաց և Ամթայ , որդւոյն Օթմանայ նենգութեամբ գաղտագողի ի զօրաց իւրոց ի վրանի անդ իւրում , մինչ բանակն երկոցունց ահեղ իմն պատրաստութեամբ կային ճակատ առ ճակատ հանդէպ միմեանց :

Ի Մ Վ Ե Ր Ձ Ի Ն Խ Օ Ս Ք

Սիրուն եղբայր մինչ ընթեռնուս հերոյս բան
 Սխալանացս ներեա՛ խնդրեմ եթէ կան .
 Ձի իմ որքան կարողութիւն էր և ջան .
 Ի գործ դրի՛ որ չերեւիմ ստաբան :
 Եթէ ուրեք չգիտութեամբս իմ սպրտան .
 Այնք արգասիք են իմ գիտեմ խակութեան .
 Ձի մանկութեանս Վան բարգաւաճ վարժարան ,
 Չգոյրվ անցան մատաղ աւուրքս իմ խորան :
 Պերճ պուէտից բախտ չունեցայ յանդիման՝
 կալ՝ և լինիլ ծանօթ լուսոյ գիտութեան .
 Ինչ որ ունիմ ներկայս ողջն է մուրացկան ,
 Սմա նմա հարցեալ ուսոյ զամենայն :
 Ուրեմն եղբայր բնութեանդ դատաստան՝
 Խփեա՛ և սի՛ մեղադրեր դիս ընդունայն .
 Տուր զողորմի ողորմելոյս միմիայն ,
 Ձոյգ աչաց լոյս իմ բանասէրդ աննման :
 Թերեւս Յիսուս բարեսիրիդ լսէ ձայն .
 Եւ առնէ դիս արժան իւր սուրբ գթութեան .
 Ձի այն յուսով հող լեալ մնամ ի տապան
 Եւ սպասեմ հասարակաց յարութեան :
 Խնդրեմ եղբայր դու եւս յիշեա՛ քոյդ վախճան .
 Բարիս գործեա՛ . որ վայելես յետ մահուան .
 Գիտես անշուշտ լինի ահեղ դատաստան ,
 Այնպէս շարժիր՝ չմնաս առանց պատասխան :
 Արթուն լե՛ր գու ինչպէս այն ժիր դռնաբան ,
 Երբ զարնէ դուռդ՝ Փրկիչ տաս իւր փութով ձայն .
 Անցաւորիս մի՛ ծխեր խունկ հեշտութեան ,
 Ձի նոյն առնողք վաղուց լեալ են փոշիման :
 Լե՛ր հեղ՝ պարկեշտ՝ առաքինի փութաջան ,
 Սիրեա՛ զՏէրդ ի սուրբ սրտէ անխափան .
 Կուրին ցուպ լեր և աղքատին օգնական ,
 Բանտարկելոցն տես փութացիր ի զնգան :
 Օտար բեր տունդ՝ տո՛ւր հաց նմա առանց ձայն՝
 Որբ և այրին թող գան բազմին քո սեղան .
 Լեր դու մի Յոր՝ կամ Աբրահամ պատուական ,
 Ի մէջ Ազգին . որ բերես փառս Հայութեան :
 Հիւանդ անձանց սիրով գնա՛ տեսութիւն ,
 Որ հիւսեցէ Յիսուս պսակ քոյդ գլխոյն .
 Միով բանիւ ձեռքէդ եկեալ բարութիւն ,
 Արա՛ աստ որ՝ անդրէն առնես դու խկոյն :
 Պահեա՛ ամուր դքս սուրբ կրօն Հայութիւն .
 Կաց Ազգին մէջ՝ որ զօրանայ Հայկայ տուն .
 Խնդրեմ եղբայր մի տար ականջ անպիտոյն ,
 Որ կամովին թողեր լքեր Հայութիւն :
 Անէճք հազար և նախատինք այն մարդոյն ,
 Որ կործանել կամի այսպէս Ազգի տուն .
 Վասակ է նա հող՝ փոշին միշտ իւր գլխոյն ,
 Որ չի աներ իւր խեղճ Ազգին գթութիւն :
 Բարոյականս այսչափ բաւ է լսողին ,
 Ով կատարէ բերէ փառս իւր և Ազգին .
 Մինչ ընթեռնուք զայս երկտողիկս իմ շնչին ,
 Ժանեմ յիշել մի Տէր ծերուկ ՏՈՍՊԵՅԻՆ՝

ՆՕՏԱՐՔ ՀԱՅՈՑ

1393 . — ՊԽԲ.

Տարեգիր .

Չաքարիա Բ . կաթուղիկոսն Աղթամարայ նահատակի Ոստան քաղաքի Ռշտունեանց յունիս 26 , յաւուրս ամիր Նզդին քուրդ ամիրայի տեղւոյն , և զմարմին երանելոյն տարեալ ամփոփեն յԱղթամար ի հարաւ կուսէ մերձ ի հիմն Ս . Սաչ եկեղեցւոյն .

Սով սաստիկ ի մեծն Հայս :

Մխիթար քահանայ գրէ զՍաղգիրք մի ի գիւղն Բարերդիկ :

Յիշատագիր .

ՉՇահիկ վանաց հեր (հայրն) յիշեցէք ի Քրիստոս(1) :

Թիւ 1 . Աւետարանէ :

Փառք . . . Ուստի և տեսեալ զսորա անճառ փրկագործ ութեան խորհուրդ սրբասէր և ընտրեալ կրօնաւորն Թաղէոս . և ստացաւ զսուրբ Աւետարանս յիշատակ իւր . և ծնողաց իւրոց Խնկկայ եւ Ավիայի : Եւ արդ ես յետինս ի գրչաց և անարժան սուտ անուն կրօնաւոր Չաքարիայ(2) : Արդ գրեցաւ Ս . Աւետարնաս ի կղզիս Աղթամար(3) . ընդ հովանեաւ սուրբ Սաչի և սուրբ Նշանի . ի հայ-

[1] Այս խաչվէճն կայ յԱրժկէ ի վանս Յիպնայ Ս . Ստեփաննոսի մերձ ի վերի Սիփան գիւղն Հայոց . որ կայ ի սիրտ Մասիք լերին հզօրի , և սյժմ սոյն ուխտն անցեալ կայ ի շարս շաքաթացեալ վանօրէից մերոց :

[2] Փիլիսոփայ կոչեցեալ մինն յերեւելի և նշանաւոր գրչացն Աղթամարայ :

[3] Է սա ի ծովուն Ռշտունեաց ի հարաւային արեւելս Առտէր կղզւոյն . որ մի ժամ հազիւ կայ բացակայ ի նմանէ .

րապետութեան Տէր Զաքարիայի ⁽¹⁾ և ի թուին Հայոց ՊԽԲ . Գրեցի անարժան ձեռօք իմովք ի ստոյգ և յընտիր օրինակէ . կենօք տառապանօք և բազում պանդխտութեամբ : ⁽²⁾ Ես թաղէոս կրօնաւոր տուի զսուրբ Աւետարանս ի դուռն Ս . Աստուածածնիս Խառարաստայ վանիցս ⁽³⁾ յիշատակ ինձ և ծնողաց իմոց :

Թիւ 2 . Ճաշոցէ :

Զօրութեամբն Աստուծոյ կատարեցի (զսա) ի դառնացեալ և ի վշտալից ժամանակի . ընդ հովանեաւ Սուրբ Գէորգայ զօրավարիս . որ հանդէպ (կայ) Վարազայ ⁽⁴⁾ . և ի Հայրապետութեան (Վարազայ) տէր Սահակայ և եղբօր նորին Պօղոսի . և ի թուին Հայոց ՊԽԲ :

(Ի Գեղէ Սուրբ Սուրբ Եկեւ — Արեւ Էրեւոյէ)

Թիւ 3 . Գրոց Եւագրի համառօտողէն :

Արդ եղեւ զբաւ համառօտութեան սորա ի ներքսագոյն Անապատիս Տանձափարախոյ ⁽⁵⁾ . յորում նստէաք լուիկ ի տան : Յամի ՊԽԲ . երորդի թուականութեանս Հայոց : Արդ ալաչեմ որք օգտիք ի սմանէ . . . յիշեցիք զանարժան աշխատող սմին զՄատթէոս վարդապետն ⁽⁶⁾ :

Թիւ 4 . Մաշտոցէ :

Փառք և երկրպագութիւն : Արդ՝ գրեցաւ տառս Աստուածային ի խնդրոյ հոգեւոր և պատուական միայնակեցին Ատոմի :

[1] Այն է Բ. Զաքարիա նահատակն . որ ի սմին ՊԽԲ իսկ ամի նահատակեցաւ յԱստան բաղաբի վասն Քրիստոսի աստուածութեան :

[2] Ի վերջն Մարկոսի :

[3] Է ուխտս յերկրին Քաջբերունեաց՝ յարեւելից հիւսիսոյ Ականց աւանին . և այժմ կոչի Արծուաբեր :

[4] Ինձ թուի թէ Շուշանից Սուրբ Գէորգն ակնարկէ :

[5] Է սա ի Բարկուշատ գաւառին Փայտակարանի :

[6] Էր սա յաշակերտաց մեծի վարժապետին Հայոց Արքայն Գրիգորի Տաթևացոյն :

Եւ արդ ես անպտուղս ի բարեաց . . . անյիշելիս ի գրչաց . Թովմա քահանայ . տկար անձամբս յանձն առի և ամենակարող զօրութեամբն Աստուծոյ կատարեցի զսուրբ տառս . ի դառնացեալ և ի վշտարեր ժամանակին . յորում էր թուին Հայոց ՊՍԲ . ի քաղաքիս որ կոչի Վան⁽¹⁾ . ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Առաքելոյն Պետրոսի և Պօղոսի . և Սրբոյն Սահակայ . և Սրբոյն Վարդանայ⁽²⁾ . ի Հայրապետութեան (Աղթամարայ) տեառն Զաքարիայի⁽³⁾ : և տէր Սահակայ⁽⁴⁾ . Արդ աղաչեմք զդասքդ լուսերամից զմանկունսդ Սուրբ Եկեղեցւոյ , որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր զԱտում միայնակեաց զստացող սորին . և զեղբայրն իւր զԹումայ արեղայ . . . և ընդ արժանաւորացն զանարժան գծողս զԹումայ մաղթեմ յիշել ի սուրբ յաղօթս ձեր . և զհայրն իմ զՄուրատ Մահտասի⁽⁵⁾ . և զմայրն իմ զՆազմէլիք : Յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր զՊարոն Թումայ և զեղբայրն իւր զԹադէոս , և զճաղկեցեալ զաւակս իւրեանց զԽալիֆայ⁽⁶⁾ . և զԱսլան Մէլիք , զոր տէր Աստուած պահեսցէ զնոսա անսասան . . . մինչեւ ի խորին ծերութեան . . . ամէն :

Ի ԹՈՎՄԱՍ ԳՐՁԷ ԳՈՎԵՍՏ ԱՌԻ ԹԱԴԷՈՍ

Պարոն Թադէոս հեզ և խոնարհ , առաքինի և յոյժ արդար . Աղաւնապէս դու ծերացար Սիմէոնի հանգունեցար . Դէմ բարութեան ես դու ճատար՝ և չարութեան ես խիստ տկար , Յաշխարհիս ոչ զբաղեցար՝ ոչ կաշառօք յիմարեցար : Թողեր զտուն զհայր և զմայր՝ առանձնական բնակեցար , Որպէս ասէ Տէրն արդար՝ յԱւետարանն Աստուածաբար : Թէ որ ոչ թողու զհայր և զմայր՝ ոչ երեւի սուրբ և արդար , Ոնց զհրամանս Փրկչին լուար՝ ջերմ սիրով զնա ընկալար . Թողեր զամէն զինչ որ քեզ կայր՝ հետ Քրիստոսի հետեւեցար : Պողովատիկ զէն զգեցար՝ դէմ թշնամոյն ի մարտ մտար . Ոչ ի նմանէ դու յաղթեցար՝ այլ կոխեցեր զնա շարաչար :

[1] Է սա մինն ի հնագոյն քաղաքաց համօրէն աշխարհի . և նախկին հիմնադիր սորին է աղեղնաւորն Հայկ :

[2] զԷջմիածինն և զՄիրանաւորն չէ յիշատակեալ :

[3] Նահատակ Զաքարիայն է . որ եղև յաջորդ Ներսէսի Բ. ի ՊԺԸ . ամի . և վկայեաց վասն Քրիստոսի ի ամին իսկ ամի :

[4] Առաջնորդին Վարդայ :

[5] Սոյն Մահտասի բառն 4)Յ ամաց հետէ գործածելի լեալ է :

[6] Ֆէ տառն ի կիր արկեալ են :

Թէպէտ որ ես անձամբ տկար՝ բայց հոգւովդ սուրբ ես և արդար
 Պարծանք ազգին քո ծանուցար՝ գիւղ ի քաղաք համբաւեցար .
 Գեղեցիկ վարս դու ընկալար՝ յանուանակցէն քում վարժեցար .
 Զմարմինդ ճնշես յոյժ չարաչար՝ զի զկեանքս անցաւ որ համարեցար .
 Փոխան ճգանցդ որ ճգնեցար՝ Տէրն սացէ քեզ մխիթար .
 Ուր Աբրահամ է հայրն արդար՝ երթաս հանգչիս դու անդ յերկար .
 Ուրախութիւն անդ անսպառ՝ խոստումն և տալն է անվճար .
 Միայնակեաց Թադէոս եղբայր զբարին քեզ մէն մի կամենար .
 Այլ աղաչեա զՏէրն բարերար՝ որ ամենայնի տայ հաւասար .
 Ինձ որ գրիչս եմ ապիկար՝ Թումայ անուն գործովքս չար .
 Յաշխարհիս (աստ) անմխիթար՝ յօրն ահագին լինիմ շիւար .
 Լեզու չունիմ որ տամ համար՝ ոչ քանքարին փող մի վճար .
 Այնց գործեցի մեղք չարաչար՝ որ թողութեան չեմ ի մնար .
 Ոչ ոք չունիմ ես ինձ ի ճար՝ ոչ բարեխօս ինձի համար .
 Բայց զքահանայքդ սրբարար՝ զվարդապետունքդ հաւասար .
 Զճգնաւորքդ կամարար՝ զմիանձունքդ՝ որ ի լեառնդ էք և ի յայր .
 Յերես անկեալ ինձ (իմ) գլխովար՝ և համբուրեմ զձերդ դարչապար .
 Աղաչեցէք վասն իմ յերկար զԱստուածածին կոյս Տիրամայր .
 Նա բարեխօս է անդադար՝ վասն իմ որ գործս է չարաչար .
 Տէրն ծնողին է կամարար՝ չառնէ հետ ինձ գործոց համար .
 Տէրն է գթած և բարերար՝ լինի թէ տայ ինձ մխիթար .
 Եւս և տացէ ձեզ հաւասար՝ որ զմեզ յիշէք ձեռնակարկառ ,
 Եւ Քրիստոսի Փրկչին մերոյ՝ առաքեսցուք փառս անդադար :

Ի ԹՈՎՄԱՍ ԳՐԶԷ ԳՈՎԵՍՏ ՀՕՐՆ ԱՏՈՄԱՅ

Օրհնած է հայրն մեր հոգւով՝ Ատոմն ամէն ազգատուհմով .
 (Որ) փափագմամբ առ մեզ գալով՝ և զայս Սուրբ գիրքս ետ գրելով .
 Բազում ծախիւք ազատելով՝ զպէտս մարմնոյ մեզ բերելով .
 Ունկ գրէք դուք լսելով՝ որ ես սլատմեմ զամէն կարգով .
 Բերէր խաղող մեծ կողովով՝ գինի բերէր մեծ տկերով .
 Քաղա բերէր անունձ խոնչով՝ և զայլ բարիք ով ածեր ի բով .
 Այլ ոչ ասեմ ես բան յովով՝ որ չձանձրանայք դուք լսելով .
 Բայց ով որ սէր ունի հոգով՝ զմեզ յիշէ բոլոր սրտով .
 Տէրն ձեզ ողորմելով՝ զձեր մեղքն և զմերն ջնջելով . ամէն⁽¹⁾ -

Ի ԽԼԹԵՅԷ ԾԵՐԵՆՅ ԳՐԵԿՈՍ ԼՈՐԴՊԵՏԷ, հարստած Պ

[1] Սուրբ Յակոբ Եկեղեցին : Այսչափ էին շափական բանք Վանիցի տ
 Թովմային . զորս արժան դատեցի օրինակել աստ . ի քննութիւն հայ լեզուար
 նից :

Գարձեալ կրկին ի դուրս եկին . ի քառասուն երկու ամին⁽¹⁾ .
 Ի Բաբելոն արչաւեցին՝ և ի Միջագետս կոխեցին .
 Չուրհայ քաղաքն սլանծալին՝ նաեւ զԱմիթ երեւելին ,
 ՉՄերտին ամուր և զՆսերին՝ զորս բնաջինջ գերեցուցին :
 Եւ զայլ բազում քաղաքանին՝ զորս քանդեցին և գերեցին .
 Անտի դարձան զաշխարհս վերին՝ մինչեւ յԱւնիկ արչաւեցին .
 Չոր և ջանիւ մեծաւ առին՝ և զՄըսըրն գերեցին :

Գ. Ծերեռնց :

1394 . — ՊԽԳ .

Տարեգիր .

Լանկիթամուրն էառ զԱմիթ քաղաք և զամենայն սահմանս նո-
 րա . . . էառ և զՄէրտին . նոյնպէս էառ և զՆզնկայ , և զԵկեղե-
 ցիս նորա կործանեաց . . . Եւ մինչդեռ յՆզնկայ էր Լանկիթամուրն՝
 դնաց առ նա Գէորգ վարդապետ Նզնկացին վասն աղաչելոյ զնա՝
 խնայել յեկեղեցիս . . . Խաղաց Լանկիթամուր յերկիրն Բասենոյ՝ և
 առեալ զբերդն Աւնիկ դիմեաց ի Շիրակ և ի Վանանդ . և աւեր-
 եաց զչէնս և զաւանս- Իրրեւ ետես զայն Լանկիթամուր հրամայեամ
 կոտորել զխումբն այլազգեացն : Աղաղակեցին երկոքին դռքա եղ-
 բարք եպիսկոպոսին⁽²⁾ և ասեն մեք քրիստոնեայ եմք . իսկ Լանկի-
 թամուր ասէ , եթէ քրիստոնեայ էք՝ զի՞ կայք ի խմբի աստ այ-
 լազգեաց :

Չմէն Գ. Հոր. ԵԸ 426 .

Թիւ 5 Գանձարանէ .

Գրեցաւ (գանձարանս) ի Լիմն կղզիս . ընդ հովանեաւ Սրբոյն
 Գէորգայ հոյակապ և հռչակաւոր բարձրաչէն և գեղեցկաչէն տա-
 ճարիս . յամի ՊԽԳ . յորում ամի սաստուածասաստ բարկութիւն շար-
 ժեցաւ ի վերայ երկրի : արիւնարբու զօրքն թաթարին . որոյ ա-
 նուն գլխաւորին Լանկիթամուր կոչիւր . . յորոյ սաստից զերծեալ
 մեր ապրեցաք առ ոտս երջանիկ վարժապետին Սարգսի⁽³⁾ ի Լըման
 կղզիս :

Սրբեռն . Հին Հայտ. 228 Բ. 2 .

[1] ՊԽԲ աշխարհաւերն Լանկիթամուրն և զօրքն իւր :

[2] Մկրտիչ առաջնորդին կարուց :

[3] Սրբեցւոյ մեծի բարունոյ . Թովմայ Մեծ . ի Թուղթ . 35—49 :

Թիւ 6 Աւետարանէ :

Գրեցաւ Սուրբ Աւետարանս ձեռամբ , Բարսեղ քահանայի ի թուակ . Հայոց ՊԽԳ . ի կաթուղիկոսութեան տէր Կարապետին⁽¹⁾ . ի հայրապետութեան տէր Գրիգորին , ի գաւառս որ յԵզնկէոյ , ի գեղս որ կոչի Կալամաթի , ընդ հովանեաւ Ս . Թէոդորոսի և Ս . Կիրակոսի .

Թարգմանս Աւետար . Բ . հոգ . էջ 368 [Գ . ար . էպիս . Արամանց .]

1395 . — ՊԽԴ .

Տարեգիր :

Քահանայ մի Ստեփաննոս անուն յերկրէն Ամիու . սակաւ աւուրբք եկեալ բնակեցաւ ի կղզին Լիմն կոչեցեալ . և անտի եկեալ ի քաղաքն Արճէշ . տեսեալ անտեսուչս . . . յափշտակեալ կին մի ի քաղաքացւոյն . . . և բազում ժամանակս եղեւ առաջնորդ քաղաքին : Եւ նենգեալ . . . և ստախօս քրիստոնէից մատնեն զնա քաղաքապետին Արծկոյ Սահանտ անուն . և զտանուտէր մի աստուածասէր Մուսէֆիր անուն . և հեղին զարիւն նոցա . և զգլուխս ի պարսպէն ի վայր կախեցին : Եւ այն թէպէտ և պատիժ էր ի տեսանէ . զի ամենայն կարգաւոր յիւրում կարգի կացցէ . այլ անմեղ արեամբն իւրեանց լուացին զաղտեղութիւն մեղաց իւրեանց , զի աստի կենաց պատիժս ազատէ ի պատժոց տանջանաց դժոխոց : Եւ այս էր ի ՊԽԴ ամի :

Թարգմ . Մեծ . էջ 113 .

Թիւ 7 Աստուածաշնչէ հատուած :

Ի թուարեքութեանս ՊԽԴ . ի հայրապետութեան տեսան Թէոդորոսի և յառաջնորդութեան մերոյ նահանգիս Խաղտեայ Բարբերոյ տէր Յովհաննիսի արք եպիսկոպոսի . եղեւ հրաման ի տեսանէ Աստուծոյ մերոյ վերափոխել ի Տէր Յիսուս , սըրբաանունդ . և երանաչնորհ եպիսկոպոսին մերոյ տէր Յովհանն (ու) . եղեւ պակասութիւն ամենայնի մեզ ամենեցուն , եւս առաւել հըրեշտակարնակ մենաստանիս Խաղճանեայ . զոր և ի սատրեւոյ չա-

[2] Չամչ . երկու ամաւ . յետոյ դնէ զկաթուղիկոսութիւն սորին :

րին . յարեան ոմանք ի մէնջ ի մեր ազգականաց և հակառակեցան վանիցն , և ցրուեցին զուխտ և զամենայն որ ինչ կայր ի նմա . զոր տէր Յովհաննէս հանցէ զպատիժ պատուհասին ի գլուխ հակառակողին ամէն : Ես նուառտ ոգի քոյր տէր Յովհան եպիսկոպոսի վերստին հաստատեցի զսուրբ ուխտն Խաղճեանեայ Ուստիանէ խաթուն և սրարոն Թորոս որդի իմ , և ժողովեցաք զգահ և զանօթ սուրբ եկեղեցեաց և եղաք ընդ ձեռամբ մերով . յիշատակ մեզ և ծնողաց մերոց սրարոն Աստուածատուրին և մօրն իմոյ Խաթիկ խաթունին :

1880 — Վ. հ. Վ. Ս. Մխաթան .

Գրեցաւ⁽¹⁾ ի թուականիս Հայոց ՊԽԴ . ի յերկիրս Ռչտունեաց ի գեաւղս որ կոչի Տշող . . . ի հայրապետութեան (Ազթամարայ) տեառն Դաւթի :

Սրբ. հին Հայ. էջ 171 .

1396 . — ՊԽԵ .

Տարեգիր .

Որդի Լանկթամուրին Միրան շահ , (էր) յոյժ ողորմած և բարեբարոյ , որ և ընկալաւ զմեծ վարդապետն Գրիգոր սիրով իբրեւ զհրեշտակ Աստուծոյ⁽²⁾ : Եւ շարախօսէին նմա զԲաղէշ քաղաքի ամիրայէն Իբրահիմ անուն . որ նստաւ ամիրայ յետ եղբօր իւրոյ ամիր Շարաֆին . : Եւ եկն ի վերայ Բաղիշու յանկարծակի . և ամիրայն Իբրահիմ եկն առ նա . (Միրանշահ) և ըմբռնեալ զնա սպան Եւ տէրն Ոստանին Եզդին ամիրայն անկեալ ի մէջ նոցա , հաշտութիւն արար նոցա : Եւ զորդի ամիր Շարաֆին փոքր տղւղայն Շամշատին . եղ ամիրայ (Միրան շահ) և գնաց ի Թաւրէզ :

Թու. Մեշ. 69 .

Բազմութիւն յոյժ արանց և կանանց ապաստանեալ էին ի ձորս լերանցն Երիշատու գեղջ . ի հասանել Լանկթամուրայ ի Վասպուրական՝ հնգետասան հազարք ի զօրաց նորա եկեալ սլաշարեցին շուրջանակի զլեառն . և որսացան զամենայն ապաւինեալսն ի խորշս և ի ձորս իբրեւ զվայրի էրէս . զոմանս ի նոցանէ սպանին . և զոմանս գերեցին . և սակաւք եղեն որք ազատեցան , ընդ որս

[1] Զանուն գրոց չէր գրեալ Ինճիճեան :

[2] Մեծն Տաթեւացին ակնարկէ :

և թումա վարդապետ Մեծոփեցի . որ պատմէ զայնս . և ապա հրոյ ճարակ տուեալ զգլուզս և զուանս այնոցիկ կողմանց մեկնեցան անտի :

Չա՛ւ. Գ. հար. ԷԸ 427

1397. — ՊԽԶ .

Տարեգիր .

Կիրակոս Վիրապեցի , որ եղև յետոյ կաթուղիկոս յէջմիածին . ձեռնադրի քահանայ ի Պետրոս եպիսկոպոսէ առաջնորդէ Վանայ Առաքելոյն թաղէոսի :

Շահախանէան Ա. հար. ԷԸ 211.

Իսկ ի ՊԽԶ. թուականին առաքեաց (Լանկ) թամուրն զՇեխ Ահմատ անուն Չաղաթայն յաշխարհս մեր . և նա եկեալ ի խնդրոյ վարդապետացն մերոց մեծին Սարգսի Սորրեցւոյ⁽¹⁾ և Յովհաննէս վարդապետին՝ Մեծոփայ վանիցն առաջնորդի . շինեաց զաշխարհս մեր աստի և անտի ժողովելով , և յոյժ բարերարոյ և քրիստոնասէր գովով :

Թա՛ւ. ՄԷԷ. ԷԸ 49

Թիւ Տ մի հարցմանց գրոց ի բերանոյ Տաթեւացոյն .

Յիշատագիր .

Արգ ես վերջինս ի ծնունդս եկեղեցւոյ , և տրուպս բանասիրաց Գրիգոր Պիտակ անուն խնդրող բանի , բացայայտեցի զբանս հարցմանց ի լուսաւոր բանից վարդապետաց եկեղեցւոյ . ի խընդրոյ ումեմն բանասիրի Ատոմ ուղղափառի , որ ի վաղուց հետէ բազումս թախանձէր . և ես վասն իմոյ տկարութեանս , և ժամանակիս վրդովման զխնդիրն յապաղէի : Եւ ապա ի սէր և յանձուկ ժտելոյ նորին . ապաստանեալ ի Նայն՝ որ զօրացոյց զտկարս ձեռն ի գիծ արկեալ աւարտեցաւ բազում միջոցաւ և փախստեամբ ի տեղիս , և մեծ ջանիւ փոխացեալ . որ և ոչ ժամանեաց ի կատար բանիս վերոյ ասացեալ խնդրողն . այլ ի հասարակ գրոյս , և նա զկեանս առօրեայ հասեալ , ի գանձն իմաստից և յաղբերն գիտու-

[1] Էր սա վարժապետ ի վանս Սուխարոյ ի գաւառին Քաջբերունեաց :

թեանց, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի ամէն: Արդ՝ եղև զրաւ բանիս ի շրջակայութեան հայկազեան տումարի ՊՍԶ. թուի. ընդ հովանեաւ երկնահանգէտ մեծարգոյ ուխտի Սիւնեաց նահանգի. Առաքելական ատոյ Սուրբ Առաքելոյս, (Տաթեւոյ վանից) և այլ շրջակայ հրեշտակաբնակ սուրբ մենաստանացս. որոց խնամօք ամրացեալ փրկեսցուք յամենայն փորձութեանց ամէն: Իսկ լուծումն հարցմանց այսոցիկ ոչ ամենեւին օտարաձայն աւելորդս խուզեալ, և ոչ գեղջուկ իմն աշխարհական խօսից յարմարեալ. այլ զպիտանին եկեղեցւոյ և վարդապետաց սգեշահ խնդիր հոգ տարեալ: Որ և աղաչեմ զբարեմիտ հանդիսողս եղբայրական սիրով հաւանեալ զսրահասն ընուլ՝ և զաւելիսն կշռել՝ և պիտանեաց փառս վերընծայել՝ Այնմ. որ փառաւորեալ է ի սրբաբեւս իւր. իսկ զանպիտանս ներել մերոյ փոքր ընկալ անօթոյ և դանդաղիտ փութոյ: Դարձեալ յերես անկեալ արտասուալիր դիմօք հոգս և փոշի սուրբ դարչաբարաց ձերոց. աղերսեմ ի խորոց սըրտէ զհարազատ գութ հարց և եղբարց մէր հոգեւորաց⁽¹⁾. զի կաթիլ մի արտասուաց ի կաթիլ տուլէ ձերդ մաղթանաց ցօղեսցէ. ⁽²⁾. Այլ և վարժապետին իմոյ և մեծ հռետորի Հայոց՝ Յովհաննու Որոտանեցւոյ եղիցի ի սմա յիշատակ մաղթանաց մասին օրհնութեանց և վիճակի ժառանգութեան սրբոցն ի լոյս. զի ծնաւ զմեզ ըստ բանի բազմաջան երկօք կրթեալ ի մամուլս վարժարանի և ի յոյսն կենդանի . . . գրեսցի յայսմ տեղւոջ և հարցմունքն Գէորգեայ⁽³⁾ վասն բազում վկայութեանցն. որ առեալ է ի գիրս յայս. զի անտարակոյս լիցի:

1864. Դեկտ. 26 Ս. Կաթա.

(Նարեկ) գրեալ ի Լուու գաւառի ի գերահռչակ սուրբ ուխտըն Սանահին. ի դրան Սուրբ Աստուածածնի և սուրբ կաթողիկէի ի ՊՍԶ . . .

Բ. հար. Թորոս Արք. Էջ 386. [Գ. Կ. Ե. Ս.]

Թիւ 9. Աւետարանէ.

Զվերջին կազմող սորին, թվ. ՊՍԶ. բերաւ սա ի կիլիկիոյ գաւառէն ի յԱստուածապահ գղեակէն որ կոչի Մըլէվոն. ձեռամբ

[1] Զայս աղերսողն է մեծ վարժապետն Հայոց Սուրբ Գրիգոր Տաթեւացի:

[2] Թուղթ կարեալ էին:

[3] Եղնկացւոյ Պուէտ վարդապետին Հայոց:

Յովանէս նուիրակիս . և կազմեցաւ ի Սուրբ Անապատս . որ կոչի
Գուգարաց վանք . ընդ հովանեաւ Սուրբ Յովհաննու Մկրտչին և
մօր լուսոյ Սուրբ Աստուածածնին . աղաչեմ զի և սպասաւորք սուրբ
Անապատիս զՍերովբ կրօնաւորն և զՄկրտիչ կրօնաւորն . և զԿա-
րապետ հարպետն⁽¹⁾ և զայլսն յիշեցէք ի Քրիստոս :

68. հոյ. 17 է կարնոյ եկել :

1398 . — ՊԽԷ .

Տարեգիր .

Երանելի Թամար Գոհար նոր վկայուհին՝ վասն Քրիստոսի չար-
չարեալ կատարի քարկոծմամբ յՈստան քաղաքի Ռչտունեաց . . .
ի ՊԽԷ ամի յապրիլ 24 :

Ձեռագիր Յայտ.

Յետ վախճանի Կարապետ կաթուղիկոսին՝ Դաւիթ Դ. յաջորդէ
նմա :

Շահի. Ա. հոյ. էջ 210

1399 . — ՊԽԸ .

Տարեգիր .

Սուրբ վկայն Քրիստոսի՝ երանելի Սոսրով պատանին Փանձա-
կեցի . յաղաքս պայծառ և ճշմարիտ հաւատոյս մերոյ՝ քարկոծ-
մամբ կատարի ի Փանձակ քաղաքի Աղուանից . ի Թուին Հայոց
ՊԽԸ. մարդաց ամսոյ :

Ձեռագիր Յայտ.

Թիւ 10 ճառընտիրէ .

Յիշատագիր .

Գրեալ ի սուրբ ուխտան վարագայ , ձեռամբ Յովհ . գրչի . ընդ
հովանեաւ Սուրբ Նշանին վարագայ , ի գեաւղս Շուշանց , ի դու-
ռըն Սուրբ Գէորգայ զօրավարին . ի հայրապետութեան տէր Սա-
հակայ առաջնորդին վարագայ , եղբօր հօր Պօղոսի նախորդ ա-
ռաջնորդին⁽²⁾ . ի Թվ. Հայոց ՊԽԸ : Յիշեցէք զՏիրացու կրօնաւորն

[1] Փոխանորդ վանահօր կամ գործակատար ուխտին :

[2] 2 Թիւ ճառոցի անձանօթ գրիչն եւս յիշէ զսոյն Սահակ վանահայրն և
զեղբայրն նորին . ինձ Թուի Թէ երկու մատենից գրիչ մի և նոյն Յովհաննէս
գրիչն է :

և զՏէր Ատեփաննոսն և զԾնողսն . . . և զերիցս երանեալ Սիմէոն
բարունապետն , որ եղև պատճառ և ուսուցիչ գործոյս զբազրու-
թեան⁽¹⁾ . սուեալ նուէր Սուրբ Առաքելոյն Բարդուղիմէոսի :

Թարս Գեր+ Բ. 4-7. Էջ 429

Թովմաս Առաքելոյ վանքն որ կայ ի գաւառին Ռշտունեաց շինեալ ի
սիրտ անտառախիտ լերին Գանձակայ , և հայի բարձր դրութենէ անտի իւրոյ ի
վերայ զբօսայի ալեաց ծովուն Բզնունեաց . ունէր ի սմին ՊԽԸ . ամի . Թովմա
վարդապետ առաջնորդ , որպէս գրէ ինքն ի միում Ճաշոցի , որ կայ անդ : 1887
յուլ . 14 ի վանս Սրբոյն Թովմայի :

Մանգլիս-Բիւն հե-խուհին

1400. — ՊԽԹ .

Տարեգիր .

Պետրոս արեղայ ի Հիզան քաղաքի գրէ զթուղթս Պօղոսի Ա-
ռաքելոյն . ի հայրապետութեան Կիլիկեցւոց տէր Կարապետի , և
ի հայրապետութեան Ռշտունեաց՝ որ յԱղթամար կղզի Դաւթի
եղբօր տեառն Զաքարիայի⁽²⁾ :

Գեր+ Է յԷջի-ծին

Լանկթամուրն դայ անթիւ բազմութեամբ ի Վիրս . և արքայն
Վրաց Գորգի որդի Բագարատայ խոյս ետ ի քաղաքէն :

Զմէ. Գ. 428

1401. — ՊՄ .

Ի ՊՄ ամին հանգեալ ի Բրիտոս մեծ վարդապետն Սարգիս
(Սորբեցի) ալեւորեալ լի աւուրբք : Եւ եղաւ ի շիրիմ տապանի
մերձ առ եպիսկոպոսացն սրբազանից Սաշատրոյ և Զաքէոսի⁽³⁾ .

[1] Ինձ թուի թէ արժանայիշատակ Բախվանցի Սիմէոն տարեգիր վարդա-
պետն ակնարկէ . որ էր յոյժ երեւելի ի սմին ժամանակի . որ և նորոգեալ շինեաց
ի բազում ամաց հետէ զամոյացեալ վանս Սրբոյն Յակովբայ . որ կայ ի գաւառին
Ռշտունեաց . ըստ տկանատես վկայութեան Մինասեանց Թովմա տարեգիր վարդա-
պետի Աղթամարցւոյ :

[2] Որ նահատակեցաւ յՈստան քաղաքի յամի 1393 ՊԽԹ :

[3] Ի սուրբ ուխտն խարաբաստայ Սուխարայ վանք առձայնելոյ . որ կսոյ
մերձ ի գիւղն Սոսկուն յարեւելից կուսէ Ականից :

ի փառս Աստուծոյ մերոյ : Եւ յաջորդեաց զաթոռ նորա սքանչելի այրն Աստուծոյ աշակերտ նորին մեծ ճգնաւորն և վարդապետն Հայոց Վարդան զամս չորս . և լուսաւորեաց և պայծառացոյց զգաւառս Արճիշոյ զվերջինն առաւել պայծառ քան զառաջինն :

Թ. Մեջ . Էջ. 37 և 49 .

Ի ՊԾ . Թուակհանին շարժեցաւ վիշապն մահաշուենչ (Լանկ) Թամուր ի Սմրղանդայ և եկն ի վերայ աշխարհիս մեր , և գնաց ի տուն Շամայ . աւերեաց զՀալապ և զամենայն շրջակայս նորա : Եւ անտի գնացեալ ի Դամասկոս ի Դմշխ քաղաք աւերեաց զամենայն աշխարհն ներքին մինչ զի մերձ գնային վայրուց քաղաքին Երուսաղէմի : Եւ ձմեռն մի լման եկաց ի Դամասկոս : Եւ հոգեւոր որդեակն մեր Մխիթար ի քաղաքէն Վանայ , պատմէր զանցս աղետիցն և զմահ նոցին⁽¹⁾ , որ և ինքն մազապուրծ եղեալ ապրեցաւ ի ձեռաց նոցին : Այս եղեւ ի Դամասկոս : Դարձեալ առաքեաց զզօրս իւր գնալ ի Պաղտատ քաղաք և նոյն թուով համարաւ 700000 մարդ ի Պաղտատ մազէզ բերդ շինեցին : Եւ Մելիքն Ոստանայ և հոգեւոր որդեակն մեր Մխիթար էին ընդ նոսա : Եւ վասն այն ահին և երկիւղին Մխիթարն այն միակեաց եղեւ . և առ մեզ բընակեցաւ⁽²⁾ և ապա գնաց առ Քրիստոս :

Թ. Մեջ . Է Բւլթ . 62 . և 64 .

Նախ քան զայս ՊԾ . Թիւն . Աւետիք վարդապետ ոմն^(?) . որ է ի Արիմ ի սահմանս Գարատաղ (գեղջն) շինէ զտաճարն Սրբոյն Ստեփաննոսի . և ապա ՊԾ . Թվ . Ստեփաննոս վարդապետն նորոգէ զայն :

Պոռ . Անայ Է Բւլթ . 320

Երանաշնորհ Գրիգոր վարդապետ Խլաթեցի Մերենց կոչեցեալ ի սմին ՊԾ ամի . ճոխացուցանէ զՅայսմաւուր մատեան մեր , բազում նոր վկայից և երեւելի արանց պատմութեամբ :

Դաւրիթեցի Յուսուփ վկայն , որ յետ մկրտութեան իսահակ

[1] Բնակչացն Դամասկոսի :

[2] Ի վանս Մեծոփայ յերկրին Աղիովտայ . որ կայ ի հիւսիսային կողմանէ Ականց գիւղաքաղաքին մերձ ի գիւղն Յարութիւն :

[3] Գոռ . Է վանահայր ուխտին :

կոչեցաւ՝ հալածեալ ի Պարսից վասն Քրիստոսի . գայ յերկիրն Քաջբերունեաց ի վանս Մեծոփայ, առ Թովմա վարդապետ առաջնորդն ուխտին . որ է Թովմա Մեծօփեցի սրտամագիրն . և մնաց անդ ժամանակ ինչ . և ապա քարոզութեամբ գնացեալ յերկիրն Շրուանայ ի քաղաքն Շամախի . և քարկոծմամբ նահատակեցաւ վասն Քրիստոսի, յապրիլ 18 ի ՊկՁ ամի . և յետոյ այրեցին զմարմին սրբոյն . և ի գիշերի ծագեաց լոյս ի վերայ նորա :

Չմ. Գ. 420

Առաքել եպիսկոպոս Սիւնեցի քուերորդի Սրբոյն Գրիգորի Տաթեւացոյ և վիճակաւոր դէտ Տաթեւոյ ուխտին . նոյնպէս և Յակոբ վարդապետ Արիւնեցի տօմարագէտ և ճիւղահամար ծաղկին սրբութեամբ և մատենագրութեամբ :

Թիւ 11 ճաշոցէ .

Յիշատագիր .

Եւ արդ ես անպիտանս ի բարեաց . . . Աստուածատուր քահանայ . տեսի զփափաք Յոհաննէս աստուածասէր տանաիրոջ . և իմ տկար անձամբս յանձն առի, և ամենակարող զօրութեամբն Աստուծոյ կատարեցի զսուրբ գիրքս զայս . ի դառնացեալ և ի վըշտարեր ժամանակիս . յորում էր Թիւս Հայոց . ՊԾ . ի հայրապետութեան (Աղթամարայ) տէր Գաւթի : Եւ արդ գրեցաւ ի գիւղս Շատվան⁽¹⁾ . ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս . և Սուրբ Ստեփաննոսիս . և Սուրբ Գէորգայ զօրավարին, և Սուրբ Ոսկեանցս :

1866 է վ. ան յԼՂՅԱՅ Աստուածածնին .

Թիւ 12 ճառընտիրէ .

Եւ արդ ես անպտուղս ի բարեաց . . . Ծերուն քահանայ փրժուն գրիչս . . . Այլ և գրեցաւ սա ի քաղաքիս Ոստան . ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին, և սրբոյն Ստեփաննոսի նախա-

[1] Այս գիւղն կայ կանգուն և շէն ԺԲ. հոյ ընտանեօք ի գաւառին Արշտուէնեաց՝ մերձ վանից Սրբոյն Թովմայի Առաքելոյն՝ ի հիւսիսային կողմանէ նորին . Հ. Աուկաս Ինճիճեան ի ստորագրութիւն հին Հայաս. ի Թղթ. 533 շփոթեալ նոյնացուցանէ զայս գիւղն ընդ Գատուանայ՝ որ կայ յարեւմտեան կուսէ ծովուն Վանայ՝, երկօրեայ ճանապարհաւ հեւ. ի սմանէ ի Բզնունեաց գաւառի :

վկային . ի թուականութեանս Հայոց . ՊԾ . ի հայրապետութեան տէր Դաւթի Աղթամարայ . և ի կիլիկեցւոց տէր Կարապետի . ի դառն և ի վշտալից ժամանակիս . յաշխարհակալութեան Ամիր Թամուրի . որ յայսմ ամի աւերեաց զՀալապ . (Բերիա) զԴրմըշս՝ (Դամասկոս) և զԲաղդատ (Բարեղոն) և բաղում և անմխիթար սուգ եթող Տաճկաց ազգի :

1865 հ. 1 է վ. է Ա. Ռ. Պ. Պ. Պ. Պ.

Թիւ 13 Գանձարանէ .

Արդ գրեցաւ գանձարանս այս յընտիր և ի ստոյգ օրինակէ . . . յերկիրս Ռչտունեաց , և ի հրեշտակաբնակ յարգիս՝ որ կոչի Նըկար⁽¹⁾ . ընդ (հովանեաւ) սրբութեանս . և Սուրբ Աստուածածնին . և Սուրբ Ստեփաննոսին . ի հայրապետութեան (Աղթամարայ) տեառն Դաւթի⁽²⁾ յաշխարհակալութեան Թամուր Ղանին⁽³⁾ . և ի տեղասպահութեան սուրբ ուխտիս իմաստուն և հեղահոգի տէր Յովհաննէսի . որ կամակից եղեւ գրելոյ սորա մարմնաւոր սխիտոյիւք և այլ ամենայն սպասաւորութեամբ . և կան բնակեալ յայսմ անասպատիս բաղում կրօնաւորք⁽⁴⁾ . այլ և զմեծ Հռատորն զԳրիգոր վարդապետ զուսուցիչն մեր⁽⁵⁾ . որ զտօնականն սկսաւ ի գրել և ես զգանձարանս ի մարդաց ամիս⁽⁶⁾ :

ի կրոնաց

14. ի մի Նարեկէ հատուած .

ՊԾ . թուին , սաստիկ և թանձր մարտիս երեկ (եկն) ի Շամբէն . ի վեր տեղին և չորս թեւեան . ի գարնանային ժամանակն

[1] Մերձ ի գիւղն Հին առ ծովեզերք՝ ի հիւսիսային յարեւմտեան ծայրն Ռչտունեաց գաւառին . ի մէջ անտառախիտ լեռին Տաւայ պոյն կոչեցելոյ :

[2] Եղեւ սա յաջորդ նահատակ Զաքարիա կաթողիկոսին Աղթամարայ որ յամի Պիթի . կատարեցաւ արիւնաներկ մահուամբ վասն Քրիստոսի :

[3] Է սոյն ինքն աշխարհաւէր Ղանկթամուր :

[4] Այժմ աւերակ է սոյն երբեմն պայծառ և բաղմամարդ մենաստանն :

[5] Ինձ թուի թէ խլածեցին ակնարկէ :

[6] Սոյն գանձարանի թիւն անկեալ էր . բայց ոյսու ամենայնիւ գրեալ է յամի Պիթի . կամ ՊԾ . ամի . յետ երկրորդ գալստեան բռնաւորին Ղանկթամուրայ ի Հայս զի առաջին արշաւման Նորին ի Հայս յամի ՊԶ 1387 ըստ ականատես պատմութեան Մերենց Գրիգոր մատենագիր վարդապետի . դեռ Դաւիթ չէր նստեալ կաթողիկոս յաթուռն Աղթամարայ . այլ գահակալէր անդ Զաքարիա Բ . նահատակ կաթողիկոսն . որպէս ի վեր անդր յիշեցաք . և ահա ոյսու ի յոյս գայ անհետացեալ թուականն գանձարանիս :

ի Համբարձման աւուրքն : Եւ Ստուածային գթական ողորմութիւն հասաւ . և զամենեւեան կոտորեաց ի ծովս Ռչտունեաց . զոր ալիք ծովուն դէզադէզ իբր զշիղջս աւազաց յեզրն կուտեաց . և ի նեխոյն մարդիկ ձանձրանային յանցանելն : Ի սոյն ամի Թամուրբէկն (Լանկն) էառ զՍեւաստ քաղաք . և քանդեաց և աւերեաց , և սրախողխող արար զամենեւեան , եւ զբազումս գերեաց ի կանաց և ի տղայոց . և երեք հազար մարդ՝ զերկիր բացեալ և կենդանւոյն թաղել (ետ) զայնոսիկ՝ որ նետ արձակեցին ի նա : Եւ զայս արարեալ բազմութեամբ զօրօք գնացեալ ի շամբն ի վերայ Հալպայ և Դամասկոսի . . . և այնչափ կոտորումն արար ի Հալպայ քաղաք , որ երեք գլխէ մնիրայ (մզկիթի աշտարակ) շինեաց ի տաճկականաց : Եւ էանց ի վերայ Դամասկոսի և էառ . և երեսուն օր թալան արար զոսկի՝ զարծաթ՝ և զմարդարիտ և տասներկու հազար ուղտ իւրն հասայ (բաժին) երարձ : Եւ յեա այն հրաման եհան և հրով այրեցին զքաղաքն առ հասարակ մղեղեցին . և զմեծ մզկիթն քակել երեա՝ յորում էր գերեզմանն Անանիա առաքելոյն : Եւ զինչ՝ մնիրայ և զմզկիթ կայր յերկու քաղաքին՝ զամէն քանդել երեա և քակել . և զգերեղոց համարն որ էառ ոչ ոք կարէ ի թիւ արկանել՝ նոյնպէս և զսպանեւոցն⁽¹⁾ : Եւ եկեալ մեծաւ յաղթութեամբ ի վերայ Մէրդնայ և տապալեաց զքաղաքն ի հիմանց . եւ արար որպէս զհողս արտավարաց , բայց զբերդն ոչ կարաց առնուլ . այլ յերկրէն շատ գերի երեր ի քրիստոնէից : Եւ Թամուրցիքն եւ մարախն հեա իրաց (ի միասին) հասան յերկիրս մեր . այսինքն յՈստան եւ ի գաւառս իւր :

1867 թ. 25 է վ. ան յԱնանիայ գիւղ :

— Պրակնից Մեթեոս Լարդայեց :

15 . Ի մի Նարեկէ Գետարգել Սուրբ Նշանի առթիւ .

Ես Յովանէս կրօնաւոր , Թումաս կրօնաւոր , Կիրակոս կրօնաւորքս . վերստին թափեցաք զՍուրբ Նշանն Գետարգել . բերաք ի Սուրբ Եղիշէի ուխտն . ի Վարդապատրկէ վանքն⁽²⁾ . առ երջանկա-

[1] Ծերուն քահանայ գրիչ ի թիւն 12 հաստատէ զայս պատմութիւն Սիմեոն վարդապետի Բախվանցւոյ՝ վանահօրն ուխտին Կապուտկոզայ սրբոյն Յակոբայ :

[2] Ի ուխտս ի մէջ Ռչտունեաց գաւառին . շինեալ ի ստորոտս Առտոսայ լերին հզօրի ի ծառազարդ և ի զովասուն վայրի ի հարաւ կուսէ ողբացելոյն Ոստանայ Արծրունեաց դաստակերտի :

չնորհ կրօնաւոր առաջնորդն սուրբ վանից . եւ եղաք յիշատակ Սուրբ Գէորգայ եւ Սուրբ Եղիշէին⁽¹⁾ . ի կործանման . . . Թամուրին⁽²⁾ . ՊԾ թվին . եւ սպասու կացաք մեք սքանչելադործ Սուրբ Նշանին մինչ ի մահ . ով ոք հանցէ կամ գողացէ զՍուրբ կենսունակ Խաչն մասն եւ պատիժ կայէնին եւ Յուդային առցէ . ամէն :

1866 Նոյ. 1 Նորեմբ

Ի ՄԱՏԹԷՆՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԱՌՅԱԿՈՒ ՀԱՅՐԱՊԵՏ ՄԾԲՆԱՅ

«Աստանօր վտանգ հասեալ, Ով սուրբ Հայրապետ ընտրեալ .
«Զորդիք» քո գերի առեալ, Զտօն քո հանդիսի ցըրուեալ :
«Եկեղեցիք աւեր կացին»⁽³⁾

1402 . — ՊԾԱ .

Արձանագիր .

Ես Վարդապետի Անանիա վարդապետս՝ կանգնեցի Սուրբ Խաչաբարեխօս եղբօրն իմոյ Եղիա կրօնաւորին որք երկիրապառանդէք յիշեցէք ի Քրիստոս :

Սեպտեմբ 1866 Սեպտեմբեր 11

Ճառընտիր գրեալ նախ ի Յովհաննէս քահանայէ արդեամբ Հայրապետ կրօնաւորի՝ ի սահմանս Վասպուրականի . ի ժամանակի հարուածոցն Լանկիթամուրայ . եւ մնացեալն ի սարկաւազ Աւետիքեայ ի ՊԾԱ թուին :

Եղիշէին .

[1] Այն է սեկեղէն գրիչ և պատմագիրն Հայոց մեծաց .
[2] Արիւնարբու և աշխարհաւեր Լանկիթամուրն ակնարկէ :
[3] Զսոյն ողբերկն Մատթէոս վարդապետն երգեալ է . մինչ էր պաշարեալ ընդ բաղմաց ի ՍԱԼԸՆՉՈՅ . (որ է Երնջակ) ըստ վկայութեան անծանօթ գանձագրին . և սյս է ահա՝ բանք նորին : «Թամուրի տարին ի ՍԱԼԸՆՉԱ ի խսար են եղել : Անդ է ասացել Մատթէոս վարդապետն զտաղս ողբական բանիւ» : (Թամուրն է նոյն իսկ արիւնարբուն Լանկիթամուր . որ եղել պատուհաս բաղում աշխարհի . . . իսկ Մատթէոս վարդապետն էր մինն յերեւելի վարդապետաց Հայոց՝ աշակերտ մեծին Գրիգորի Տաթևացոյն . որ ունի բաղում գանձս ի տօնս Տէրունականս և ի սուրբս Աստուծոյ . յորոց տան գլուխս յօղեն զանուն նորին . որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի :

Արշ. — Սկիզբն նորոգութեան վանուցն Մեծուխայ, ձեռամբ Յովհաննէս վարդապետի բարեջան վանահօր տեղւոյն :

Տար. — Մեռաւ Պոյգաղիտ և թագաւորեաց Մահմէտ որդի նորա :

Արտեւ. ԵԼ 552.

Կարապետ Բ. յաջորդէ Դաւթի ի հայրապետութիւն Հայոց :

Շահ. Հարս. Ա. ԵԼ 210

Թիւ 16, յԱգաթանգեղոսէ .

65
2864
4982

Յիշ — Փառք . . . որ ետ կարողութիւն տկար անձին իմոյ գրեւ զպատմութիւն երիցս երանեալ և երջանիկ Հօրն մերոյ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին . ի սուրբ ուխտս, որ Սուրբ Խաչ յորջորջի . յերկիրս Հիզան քաղաքի, ի թուին ՊԾԱ. ևս Յովհաննէս (վարդապետ) գծագրեցի ձեռամբ իմով՝ որ յետինս եմ ի շարս բանասիրաց, անուամբ Հռետոր կոչեցեալ՝ և հանձարով եւ վարուք վերջնտանեալ⁽¹⁾ . յիշեւ . . . և զծնողս իմ զԱլեքսան քահանայն . . . Եւս առաւել գրազմերջանիկ հարքն մեր զՅովհաննէս և զԿիրակոս վարդապետք . որ էին առաջնորդք սուրբ ուխտիս և մեզ տածողք հոգւոյ և մարմնոյ . . . և զմիեղէն եղբարքս մեր, որ ի Սուրբ Խաչի դուռս հաւաքեալ կան : զՄկրտիչ հայրապետ, և ինձ արեանառու զհօր եղբարսն զՊետրոս և զՍտեփաննոս կրօնաւորք . և զայլ եղբարք զԲարսեղ, զԱւետիս, զՆերսէս և զԿիրակոս վախճանեալ . զՊետրոս, զՅովհաննէս, զՍտեփաննոս, զՄարտիրոս, զԳրիգոր սարկաւազ, որ զթուղթ խաղէր . և զՅակոբ դպիր և աշակերտ, և զայլ ամենայն միաբան եղբարքս, որ մեզ կամարար են և ձեռնատու ի գործս բարիս⁽²⁾ :

Ի վերջ Դաշանց Թղթոյն .

Ես Յովհաննէս վարդապետս . . . գրեցի զՊատմութիւն Սուրբ

[1] Թուի ինձ թէ սոյն Յովհաննէս վարդապետն՝ է նոյն իսկ առաջնորդ Հիզնայ Սուրբ Խաչի ուխտին :

[2] Հիզնայ Սուրբ Խաչի ուխտն, որ երբեմն այսչափ միաբանութեամբ փայլեալ ճոխանայր զարդիս կոյ գո՛գթէ ի հոգեկարք վիճակի :



կաթուղիկոսացն և թագաւորացն . . . (յիշեցէք) զԵպիսկոպոսն Տարօնոյ՝ զՏէր Աստուածատուրն , որ օգնական եղեւ ի նիւթ տառիս . պատահողք մատենիս յիշեցիք զնա :

1867. Յունիս 16. է վ. ան. է Գեղի Բեւ. :

17. ի մագաղաթեայ Աւետարանէ . (Գրիչն անծանօթ) :

Ի մեծ թուականութեան Հայոց , ՊԾԱ. յայս դառնացեալ ժամանակի , նեղութիւն ազգի ազգիս խնամքն Աստուծոյ և Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի պահեսցէ զազգս մեր մինչեւ ի գալուստն միւսանգամ անսասան . ի կաթուղիկոսութեան Հայոց տէր Կարապետի :

Ստեփն Լարդապետի . է Մշա Ղալալա՞ Գեղա . . . Գեղա Գեղեկ :

18. յԱւետարանէ .

(Գրեցաւ Աւետարանս) ի մեծի թուականիս Հայոց . ՊԾԱ. և ի կաթուղիկոսութեան Հայկազեան սեռի տեառն Դաւթի Աղթամարցւոյ , որ և (է) եղբայր տեառն Զաքարիայի վկայեցելոյն ի տեառնէ մարտիրոսական արեամբ (1) : Եւ ի թագաւորութեան այլասեռից Թամուր Լանկի , որ և յաղթող անպարտելի : Եւ յայսմ ամի եմուտ ի տունն Հոռոմոց և նուաճեաց զամենեւեան ընդ իւրով . և զամիրապետն աշխարհի Եւրոմմ անուն . ըմբռնեաց և կապեաց որդւովք հանդերձ(2) . Եւ արդ գրեցաւ Սուրբ Աւետարանս ի քաղաքիս որ կոչի Հիզան , ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի և Սուրբ Սարգսի և Սուրբ Գէորգայ զօրավարաց . ի վայելումն Յովհաննէս և Սուքիաս քահանայից և քեռորդւոց նորա :

Ղ. Պ. Նահապետեանց . Գեղ 3852 Բեւ. Մտեմ . էլ 309 և 310 :

19. ի Գանձարանէ . (Անթուական)

Եւ արդ գրեցաւ սա ի սուրբ քաղաքիս Երուսաղէմ . ընդ հո-

[1] Նահատակութիւն երանելոյս լեալ է 1393 ամի 26 յունիս . յԱստան քաղաքի Ռշտունեաց

[2] Այն է Սուլթան Պայազիան՝ որդի Ա. Մուրատայ , որ եղև յաջորդ հօրըն իւրոյ ի 1389 ամի , և այսպիսեօք վախճանեալ եթող զթառն որդւոյ իւրում Մէհեմէտի առաջնոյ :

վանեալ Յարու թեանս Քրիստոսի Աստուծոյ մերոյ . և Գողգոթա-
 յի , և Սուրբ Յակոբայ . և Յովհաննու Առաքելոյն Քրիստոսի , և
 Սուրբ Սարգսի զօրավարին , և Սուրբ Առաքելոցս և Հրեշտակա-
 պետացս , և Սուրբ Փրկչին , և Սուրբ Ծննդեանն , և Սուրբ Աստ-
 ուածածնին , և Սուրբ Համբարձմանն , և Սուրբ Տեառն Եղբօր .
 և Սուրբ Լեռնակոզմանն և այլ ամենայն Տնօրինականացս Քրիս-
 տոսի Աստուծոյ մերոյ : Ի կաթուղիկոսսւթեան Հայոց Տեառն Կա-
 րապետի⁽¹⁾ . և յեպիսկոպոսութեան սուրբ քաղաքիս Երուսաղէմայ
 Տէր Մեսրոպայ և Տէր Արրահամին , և այլ ամենայն միաբանացս
 Սուրբ Յակոբայ ամէն . . . Յիշեցէք . . զանարհեստ գրիչս զՆերսէս
 էրէցս . և զճնողսն իմ . . Յետկար և զՄարթայ . . .

1870 շայ. 11 է կ. Պօլէ . . է Գլուխէն Սուրբ Լուսաւորէլ Եկեղեցին,
 Քիչ անարհեստ-իւմիւթ Կարգիւ էի անդ :

1403. — ՊԾԲ .

Տար. — Վանեցի Մելքիսեդ և Կարապետ փառաւոր վկայք կա-
 տարին վասն Քրիստոսի . սուրբն Մելքիսեդեկն ի Վան քարկոծմամբ .
 և երանելի Կարապետն յՈստան քաղաքի Ռչտունեաց , յետ կա-
 տարմանն զերկոցունցն եւս զոսկերս հրով այրեցին . . . զսրճե-
 ցաւ այս ի թուականիս մերում ՊԾԲ . ի յուլիս 10 . ի փառս Քրիս-
 տոսի :

Ի յերազիւր Յայտաւորս :

Հրով կատարուին Չմշկածագցի տէր Յովհաննէս սրբակրօն քա-
 հանայի ի նմին քաղաքի ի սեպտ. 10. ՊԾԲ, ըստ ական-
 նատես պատմութեան Դաւիթ եպիսկոպոսի :

Մեծն Գրիգոր Տաթեւացի ի վանս Տաթեւու գրէ զՔերակա-
 նութիւն Մովսէսի քերթողին :

Յիշեցէք

Լանկթամուրն էսոս զՍերաստիա և բազում աղէտս հասոյց բը-
 նակչաց նորին :

Թիւ 20. յԱւետարանէ .

Յիշ. — Փառք . . . Արդ գրեցաւ Սուրբ Աւետարանս յԱստուա .

[1] Ա. Կարապետ 1394 ին և , Բ. 1402 նստեալ են :

ծարնակ կղզիս Աղթամար . ընդ հովանեաւ Սուրբ Խաչիս , ի հայ-
րապետութեան Տէր Դաւթի . ի թուականիս Հայոց , ՊԾԲ . ձեռամբ
Դանիէլի . . . կենօք տառապանօք և բազում պանդխտութեամբ . . .
Ընդ նոսին և զիս զԴանիէլ գրիչս և զհայրն իմ զկարապետ քահանայ
. . . զվարպետն իմ և զհոգեւոր հայրն՝ և ըստ մարմնոյ հօր եղբայրն
զԶաքարիա փիլիսոփայն⁽¹⁾ . որ բազում աշխատեցաւ ի ծաղկել
զՍուրբ Աւետարանս :

1867. փետր. 23. Հինգշաբթի է վ. և. է Սուրբ Վարդան
Էկեղեցին . յառաջ Առաջ . Ի Բնասրիստի Արտ Եղեմիոսի :

1404 . — ՊԾԳ .

Արշ. — Ես կարապետ վարդապետս⁽²⁾ կանդնեցի զՍաչս բարե-
խօս առ Աստուած . (հօր եղբօրն իմոյ) Տէր Զաքէոսի⁽³⁾ (եպիսկոպոսի)
առաջնորդի ուխտիս՝ որք երկիրսպագանէք յիշեցէք ի Քրիս-
տոս :

Արճեւ է Լան Արշաթեր .

Թիւ 21 . յԱւետարանէ .

Յէշ. — Օրհնեալ է հօրն Աստուած ամենակալ . . . կին ոմն
աստուածասէր՝ անուն նորա Հնազանդ գնեաց զՍուրբ Աւե-
տարանս զայս յիշատակ իւր և ծնողաց իւրոց . . . ի թուին
ՊԾԳ . . .

Ի վերջն Մատթէոսի .

Յիշեցէք զՍէթ Աբեղայս . որ զՍուրբ Աւետարանս կազմեցի .
յիշեցէք զՀնազանդ անուն հաւատարիմ կինն , որ գնեց և կապել
երես (եա) և Աստուած զձեզ յիշէ ամէն :

[1] Թիւ 1 Աւետարանի գրիչն է .

[2] Առաջնորդ խորաբաստոյ վանիցն Արճիշոյ :

[3] Զայն Զաքէոս եպիսկոպոսն յիշատակէ Թովմա Մեծօփեցի բարուն պատ-
միչ ի թղթ . 35. և 37. և էր նա ի ՊԼԸ . 1389 ամի առաջնորդ ի վանս խառա-
բաստոյ ըստ նորին Թովմայի :

Քակեցին զեկեղեցիքն յԵզնկան և ի Սայինքն . հազար վայ
ինձ մեղաւորիս :

1864. դեկտ. 18. «—բեմբ. յԱՄստիայ Ս—բե Աստուածածին .
յԱ—Չնարդու—բեմե շինիին Գեորգիայ Սրբ եղևկայսին և :
Պօլեցայ :

ՁՁ. ի Գանձուց Առաքել վարդապետի .

Յէւ .

Տառապեալ հոգին՝ էկեալ առ մարմին ,
Բամ գործոց չարեացն յայտնեացին :
Անձամբ եղկելին Ռամիկ և գերին ,
Առաջի կացեալ դողալով՝ մեծ դատաստանին .
Քննէ զգործք նորին , Եւ զբարբառ լեզուին ,
Անձամբ հառաչեն կալազին յայն հրապարակին :
Թիւ Հայոց մեծի
Ութ հարիւր տարի ,
Եւ յիսուն երեք էր մտեալ ,
Որ զբանս ասացի :

[1865. յունի 29. յԵրուսիւայ . յաւարս դեռու—բեմե
Ճփն—սրբեմե Յ—իւբ Մ. Էրդուպեթի Երուսիւայ—այ] :

Թիւ ՁՅ. ի Տօնականէ .

Փառք եղակի անձառելոյ . . . տեսեալ զայս ամենայն վայել—
չութիւն հրաշից՝ երիցս երանեալ հարազատ եղբարքն Յովհան—
նէս կրօնաւորն և Եզեկիէլ և Սիոն քահանայ . և բորբոքեալ ի սէ—
րըն Աստուծոյ , ցանկացան այսմ Աստուածային գրոցս , որ կոչի
Տօնական . . : Եւ արդ՝ ես ամենամեղ և անարժան ծառայ ծառա—
յիցն Աստուծոյ Ստեփաննոս անարհեստ գրիչ⁽¹⁾ . որպէս ծառայ
հրաման առեալ ի տեսանէ . զի յայսմ ամս (ՊԾԳ) յորում զսա գը—
րէաք , հայրն մեր փոխեցաւ առ Քրիստոս Աստուած . քանզի եղեւ
մահտարածամ սաստիկ ի վերայ երկրի , և ոչ աւարտեցաւ Սուրբ
Գիրքս և ես յանձն առի տկար անձամբ . . . բազում և մեծ աշխա—
տանօք հասուցաք զսա յաւարտումն ի նոյն գեաւղս որ Տշող կո—
չի . ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս , և Սուրբ Ստեփան—

[1] Մինն յերեւելի և յաջողակ գրչաց Հայոց , և պարծանք գեղջն Տշողսս ,
որ կայ ի գաւառին Ռչտունեաց :

նոսի նախապիայիս, և սուրբ Սիօնիս և Վուրբ Կիրակոսիս⁽¹⁾ . ի թուականիս Հայոց ՊԾԳ. ի հայրապետութեան (Աղթամարայ) Տէր Դաւթի, և ի բռնակալութեան աշխարհիս Թամուր Ղանի . . (Լանկի), նաեւ զանարժան գրիչս զՍտեփաննոս, և զճնողքն մեր զԳրիգոր քահանայ⁽²⁾, որ տարածամ փոխեցաւ առ Քրիստոս, և սուգ անմխիթար մնայ ի վերայ մեր . . . և զեղբարքս մեր զՔոչքէկ և զԱռաքել սլաւոտական սարկաւազունքս, որ աշխատեցան ի կոկել թղթիս . տացէ սոցա Տէր վարձս ըստ վաստակոց . և զհօր եղբայրըն մեր զՄարտիրոս կրօնաւորն, որ . . . մարտիրոսացաւ⁽³⁾ :

Թիւ 24. ի ճառընտիրէ անթուական .

Ստացողք սուրբ գրոյս զպատուական քահանայք զՂազար և զՍտեփաննոս կրօնաւորն և զճնողսն նոցա . . . Ընդ նոսին և զիս զմեղաւոր Ստեփաննոս գրիչս⁽¹⁾ . և զճնողսն մեր զԳրիգոր քահանայ, որ տղայ հասակաւ առ Աստուած փոխեցաւ . և մեզ սուգ և կսկիծ եթող . քանզի մահ սաստիկ էր ի վերայ երկրի (ՊԾԳ ամի), որ կոտորէր զամենայն առ հասարակ . և զաղիս ծընողացն գալարեցուցանէր . և զաւակացն՝ ի վերայ հարցն և մարցն խարչէր առաւել . այլ Աստուածածին մխիթար և բարեխօս լիցի ամենայն սգաւորաց և ննջեցելոց . . . :

Եւ ինձ մեղապարտ Ստեփաննոս գրչի, և իմ ծնողացն Գրիգոր քահանային, որ առ Աստուած փոխեցաւ . և խաթուն Մէլէքի մօրն իմոյ, և եղբօրն իմոյ Առաքելի, որ աշխատեցաւ ի կոկել թղթիս . և երկուց վկայիցն՝ որք մարտիրոսացան . . . Մելքիսեդէի և Կարապետի⁽³⁾ : և քեզ փառք յաւիտեանս :

[1883 . եղ . 27 . է վ . ա . Ա . ընդդրարաւէ] :

Թիւ 24. ի մագաղաթեայ Աւետարանէ .

Փառք սկզբանն ամենայնի . . . : Ուստի և տեսեալ զսորայս ան-

[1] ի պակասիլ բազմութեան Հայոց, մի եկեղեցի եւեթ ունի գիւղս :

[2] Սա եւս ի լաւ ք . բտուղարաց մինն էր ի նմին ժամանակի :

[3] Նահատակութեան սորին թուական գտանի ի մի արծաթապատ Նարեհի երկտող գրութեամբ գրեալ այսպէս : « Յայսմ տարւոյս Մարտիրոս կրօնաւոր բազում չարչարանօք մարտիրոս եղև ի Պէ . թղին » :

[4] 23 թիւ Տօնականի գրիչն :

[5] Կատարուեալն սոցին լեալ է ՊԾԳ ամի . ի Ժ . յու լիսի :

ճառ փրկագործութեան խորհուրդն . բարի արմատոյ շառաւիղն , ողջախոհ և կուսակրօն քահանայն Մովսէս , և հայր վանիցն որ կոչի Խնձուրուտի վանք⁽¹⁾ . զոր ի վաղուց հետէ ցանկայր այսմ աստուածախօս Սուրբ Աւետարանիս . և ետ գրել զսա յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն իւրոց :

Այլ և գրեցաւ Սուրբ Աւետարանս ձեռամբ Ստեփաննոս սուտ անուն քահանայի անխմատ և ախմար գրչի . . . գրեցի անարժան ձեռօք խնովք յընտիր և ստոյգ օրինակէ կենօք տառասլանօք և բաղում պանդխտութեամբ . . . իսկ ըստ թըւոյ Խոսրովային Յարէթեանս տումարի ՊԾԳ . ի կաթողիկոսութեան Հայկազանց սեռի տեառն կարապետի կիլիկեցւոյ : Եւ ի մերոյ հայրապետութեանս տեառն Դաւթի Աղթամարայ : Զոր Տէր Աստուած պահեցէ անտասանելի զաթոռ Հայրապետական զի յիշել զանունս նոցա սասանել սաքրին . և ոչ եւս երեւին թշնամիք ճըշմարտութեան : Եւ գրեցաւ Սուրբ Աւետարանս ի քաղաքիս Հիւզան . ընդ հովանեաւ Սրբուհոյ Աստուածածնին , և սուրբ զօրավարացս Սարգսի և Գէորգայ : Յիշեալիք ի սուրբ աղօթս ձեր զիս զանարժան գրիչս Ստեփաննոս , և զհայրն իմ զՏէր Մելքիսեթ և զմայրն իմ զՏիրանց :

1881. յօֆ. 3. է վ. ան. է Մանօղլանց րան :

1405. — ՊԾԴ.

Տար . — Մահ Մարեմայ թագուհւոյն Հայոց :

Չաւ. հար. Գ.

Գրիգոր գրիչ գրէ զՍազգիրք մի ի յԱնապատն կոչեցեալ յԱւագ վանք :

Եղեմի

Թիւ 25. Գրիգոր Տաթ. Մեկն. Սաղմոսաց .

Յիշ. — Ընդ որոց վերջինս բանասիրաց և արուպս խնդրողաց բանի , պիտակ անուն կոչեցեալ Գրիգոր մեղսաներկ անձամբ և տըխեղձ մատամբ հաւաքեցի զքաղուածոյս մեկնութեան Սաղմոսաց Դաւթի , ի նեղ և ի ստորասուզեալ ժամանակի , որում բռնակալն

[1] Է ի վիճակին Աղթամարայ :

Թամուր թոյլատուութեամբ վերին խնամոց տիրեալ բազում աշխարհի և աւերեալ և կործանեալ յայսմ ամի . ՊԾԴ . թուի : Եւ պատճառ շարժութեան վերստին քաղուածոյս նախ մեծին վարդանայ համառօտ և խորին տեսութիւն , որ անյայտ մնայր միշտ . հոգացայ յայտնի և ընդարձակ ցուցանել : Երկրորդ զի զառաջին քաղուածոյն կարի կարճ ու պակաս թուէր : Այլ և վարժապետին իմոյ , Յովհաննու Որոտնեցւոյ յիշատակ բարի ի Տէր արձանատոյի :
Ա՛ւ Ա՛րեւն Լորդ . Թօթմտեան , է Լինս Ա՛ւտեւոյ Մշոյ :

Թիւ 36. է Յայսմաւուրէ .

Գրեալ ի թվին Հայոց ՊԾԴ . յԱնապատիս Անձղնապատ⁽¹⁾ ի հայրապետութեան (Աղթամարայ) Տեառն Դաւթայ , և ի թաղաւորութեան ազգին Մարաց Եէզտինչէրի⁽²⁾ : Յայսմ ամի մեռաւ Թամուր Դան . որ ի մի ամ իբրեւ զբաժակ բարկութեան առեալ էր զնա Աստուած ի ձեռն , և ում կամէր արբուցանէր . զի յարեւելից մինչեւ ի մուտս արեւու զամենեսին հասարակ գերեաց զամենեսեան սրախողխող արար , և զԴմբըչխ՝ այնպէս արար որպէս Ներսէս Հայրապետն էր ասացեալ ի յողբն Ուռհայոյ : Յայսմ ամի շարժն Ժ . գիւղ ի Հէշատայ երկիր յիրար խառնեաց : Յայսմ ամի ջուրքն յէնց պակասեցան որ բազում գետաղաց ջաղացք խափանեցան :

Բ : հար . Թարս Աղբ . ԷԸ . 391 :

1406 . — ՊԾԵ .

Տար . — Յետ մահուան սորա⁽³⁾ յաջորդեաց զաթոռ վարդապետութեան երջանիկ և աստուածամերձ այրն ցանկալին հրեշտակաց և մարդկան՝ պատկառելի քաջ վարդապետն վարդան՝ գոլով ի սուրբ ուխտէն Հոգւոց վանաց , Եւ չորս ամ լուսաւորեաց ճշմարիտ վարդապետութեամբ և դասիւ զսուրբ ուխտն (Սառարատայ) և զամենայն երկիրս Քաջբերսեանեաց : Որ և աղօթիւք սորին և եղբօր իւրոյ Եղիա ճգնաւորին . . . աղբերացաւ մարմնական ընչիւք և ողորմութեամբ մայրաքաղաք վանքն Աստուածածնի և ամենայն երկ-

[1] Նկարէն կոչեցեալ , յՈչտունեաց գաւառի , որ կայ մերձ ի գիւղն Աղին :

[2] Նստէր սա ի քաղաքն յՈստան :

[3] Սարգիս վարդապետի Սորբեցւոյ :

իրա Արճիշոյ։ Եւ ի հալածմանէ . . . ելեալ գնաց աշակերտօքն իւրովք յերկիրն Տոսպ և անդ հանդեալ ի Քրիստոս, յուխտ Սալնապատին, ի ՊԾԵ, թուականիս մերում, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։

Թ.Վ. ՄԷՆԲ. Թ.Վ. 40. և 41։

Ղարա ՈւսուՓ որ ի (Լանկ) Թամուրէն փախաւ, և էջ ի Շամբ, և կասլանօք տարան ի Մօրբ (Եգիպտոս) և անտի եկն ի Կարբոյ երկիրն՝ (յետ մահուան Լանկթամուրի) և գնաց ի Դավրէժ, և էառ մինչ ի Սուլթանիա։

Յետ մահուան Պետրոս կաթողիկոսին Աղուանից, յաջորդէ նմա Տէր Կարապետ ի թվ ՊԾԵ։

Շահ. Բ. 342. և 343։

Ի սոյն թուին Կարապետն էր կաթողիկոս Աղուանից։

Շահ խոսնանեան Ա. հոդ. 210 էջ։

1407. — ՊԾԶ.

Արշ. — Կամաւն Աստուծոյ ես Ուլուբէկս որդի Մէճլիսին, տուի զիմ հայրենի հողն Ղուղտանոսի կառւրն . . . ի սուրբ ուխտս Գանձասարայ իմ հողւոյ յիշատակ յառաջնորդութեան Մաաթէոս վարդապետին, և իշխանութեան Չազին։ Արդ որք զհողն հանել ջանան ի սուրբ ուխտէս . . . ՊԾԶ։

Շահխոսնանեան Ա. հոդ. 210 էջ։

Տար. — Յովհաննէս գրիչ գրէ վարդան վարդապետի Երգ Երգոցի մեկնութիւն. և Մեկնութիւն Յայանութեան՝ Աթանաս Պատրիարքին, զոր թարգմանեալ է ի լեզու Հայոց Կոստանդին Մետրապօլիտան Երապօլսոյն (Չմէկաճադու)։

Մարտան եւ այժմ յէջնանին։

Նախ քան սոյն ՊԾԶ թուական Դաւիթ կրօնաւոր քահանայն, և էրէց մի այլ յաշխարհէն արեւելից վասն Քրիստոսի վկայական մահուամբ նահատակեալ են ի Սերաստիա. որպէս գրէ զվարս նոցին Յովհաննէս քահանայ Սերաստացի ժամանակակից յիւրում Յայամաւուրի առանց թուականի, որ կայ այժմ ի Սուրբ Նշան եկեղեցին վանայ։

Կարապետ արեղայ գրէ զՀարցմանց գիրք մի սրբոյն Գրիգորի Տաթեւացոյն ի սուրբ քաղաքն Երուսաղէմ :

ԵԷԷԷԷԷԷ

Թիւ 27. Յայտնաւորէ .

Յէշ — Փառք . . . Լիրդ գրեցաւ տառս այս ձեռամբ յողնամեղ և անարհեստ գրչի Յովհաննէս քահանայի ի Հիզան քաղաքի , ընդ հովանեաւ Սրբուհւոյ Աստուածածնիս . և քաջ զօրավարացն Սարգսի և Գէորգայ . ի Թուականիս Հայոց ՊԾԶ . ի հայրապետութեան տեառն Դաւթի Աղթամարցւոյ , և ի խանութեան Ղարայ Յուսուֆի թուրքի . ի խնդրոյ Պօղոս Կրօնաւորի պատուական արեղայի . . . Ես Պօղոս կրօնաւոր որդի Քօչքէկի , ետու զՅայտնաւորքս ի սուրբ ուխտս՝ որ Գամաղիէլ կոչի⁽¹⁾ , որ է ի գաւառիս Հիզանայ և ի վիճակ սորա՝ յորում և բնակութիւն իմ աստ է : Յառաջնորդութեան սուրբ ուխտիս Ներսէս վարդապետի , և Ստեփաննոս եպիսկոպոսի և Դաւթի . . . յիշատակ մեզ և ծնողաց մերոց , վկայութեամբ սիրելի հօրս մեր ծերունի վարդապետիս Ներսէսի և առաջին պաաճառի բարեացս այս հոգեւորի Ստեփաննոս եպիսկոպոսի և Դաւիթ եպիսկոպոսի , որ կարդան և յիշատակեն զմեզ . և զմերսն ի դուռն սուրբ եկեղեցւոյս Գամաղիէլի :

.

Գարձեալ ի Յունվար 5 Յայտնաւորի վերջէն , ի Յովհաննէս քահանայ գրչէն է յետագայն :

- Եւ զառաջնորդս այս սուրբ ուխտի (Գամաղիէլի վանից) ,
- Կցորդ փառացի արա մեծի :
- Զվարդապետս մեր բարի ,
- Որ և Ներսէս անուն կոչի :
- ԶՍտեփաննոս ընդ Տէր Դաւթի ,
- Զեպիսկոպոսքս նազելի .
- Եւս և զստացող այս սուրբ տառի .
- Որ և Պօղոս անուն կոչի :

[1] Զամէլեանն յիւրում աղիւսակի սխալմամբ այն Գամաղիէլի ուխտն դնէ ի սահմանս Խլաթայ . որ երեքօրեայ ճանապարհաւ հեռի է ի նմանէ :

Եւ զիւր ծնողսն որ ըստ մարմնի ,
ԶՀայրն Քօչիկ ընդ Զօհարի . . ,

1868. հ. 17. 30. արեւելիկ . է վ. ան . է Ս. արեւելիկ Եւսեփէն :

(Սոյն Յայսմաւուրի գրիչ Յովհաննէս Հիզանցին է մինն ի ճարտար քարտուղարաց Հայոց . և պարծանք իւր հայրենեաց . և Պօղոս արեղայ լաւ ընտրութիւն արարեալ է , այնպիսի անսխալ մի գրչի , զիւր Յայսմաւուր գրել տալով . Պօղոս արեղայն եւս ըստ բաւականին գրագիտութեան ծանօթ ոք լեալ է . որպէս տեսանի յիւր եղերգութենէն . որոյ սկզբնատառք յօդեն զանուն նորին (բարձեալ ի գրաքննչէ) զոր գրեալ էր յետ մահուան աշխարհաւերին Լանկթամուրայ պատուհաս դարձաւ աշխարհի . Քանի դժբախտութեան հանդիպեալ են մեր խեղճ նախնիք . մեք այժմ շնորհիւ Օսմանեան հայրախնամ կառավարութեան կամք խաղաղ և յապահով վիճակի .)

Թիւ 28. Ոսկեփորէ .

Ես տարտամս յուսումնասիրաց Գրիգոր պիտակ անուն խընդրող բանի⁽¹⁾ . հաւաքեցի զգիրս Աստուածարանութեան , որ անուանեալ կոչի Ոսկեփորիկ : Արդ գրեցաւ սա ընդ հովանեաւ Սուրբ Առաքելոցս , առաքելական Աթոռոյն Եւստաթէի , և այլ բազմահաւաք սրբութեանց . ի նեղ և ի նուաղեալ ժամանակի . թուականութեան մերոյ ազգի ՊԾԶ . երորդի : Ի խնդրոյ ումեմն բարեպաշտ Խոճայ Մասուդչահի , բնակութեամբ ի սեպուհ արանց Դաւրէժ քաղաքի : Զոր խնդրեաց բազում անգամ գրով և բանիւ , գրել յաղագս Սրբոյ Երրորդութեան . և յաղագս Քրիստոսի Աստուածութեան : Եւ ես տկարս ոգւով և ծիւրեալս մարմնով՝ գրեցի և հաւաքեցի ի սրբոց զճշմարիտն և զուղիղն կարճառօս բանիւք . և ի չորս հատոր բաժանեցի վասն դիւրութեան ընթերցողաց : Յիշեցէք ի Քրիստոս զվերոյ ասացեալն բարեպաշտ զԽոճայ Մասուդչահն հանդերձ ծնողօք իւրովք . զհայր նորա զՅակոբ Շահն և զմայրըն էլխութլուն :

Ա. Արեւելիկ . Թեփեփեան . է վ. ան . Ա. արեւելիկ է Տարմն :

[1] Ի 25 թիւ վերագոյն յիշատակեալ մեծ վարժապետն Հայոց Գրիգոր Տարթեւացին է :

1408. — ՊԾԷ .

Տար. — Իսկ թուրքմանն (Ղարայ) Յուսուփ յետ սատ . . . (մահուան Լանկ) թամուրին⁽¹⁾ . առեալ զսակաւ զօրս իւր տառապեալ և անդէն , ելեալ ի բանտէն Դամասկոսի եկն վերստին յաշխարհս մեր . նախ ի քաղաքն Բաղէշ : Եւ որդի Ամիր Շարաֆին ամիրայն գնացեալ ընդ առաջ նորա , յոյժ մեծարեաց զնա հացով և ջորեօք , ճիովք . զինուք և ամենայն զինուորական և պատերազմական պատրաստութեամբ : Եւ առեալ եկն ի վերայ աշխարհին Ռշտունեաց և վանակերտին Վարազայ : Եւ նոքա պատրաստեալ զզօրս իւրեանց՝ ելին ընդ առաջ նորա աւելի քան երկուտասան հազար . և խաբեալ զՄելիք (Ահմատ տէրն Ոստանայ) բարեբարոյ և սիրողն և ողորմածն քրիստոնէից՝ նենգաւոր ազգն Մարաց , խոյս ետուն և փախեան : Եւ նորա աւերեալ զաշխարհն հրով՝ կողոսպտելով՝ սպանութեամբ և սպականութեամբ : Եւ ապա եկեալ ի հնազանդութիւն (Ղարայ Իւսուփի) Եզդին ամիրայն (Ոստանայ) և Մելիք որդին : Եւ ի նոյն (1408 ՊԾԷ) ամի եղեւ վախճան երկու վարդապետաց մերոց մեծին Վարդանայ սուրբ վարդապետին , և բարունւոյ սուրբ ուխտին Աստուածածնին Սառաբաստայ , աշակերտի մեծին Սարգսի⁽²⁾ . և Յովհաննու ճգնաւոր վարդապետին Ռշտունեաց , որ աւելի քան զյիսուն ամ իբրեւ անմարմին հրեշտակ կայր կանգուն ի վերայ ոտից իւրոց յաղօթս և ի սլաղատանս , զոր և աեսաք աչօք մերովք և վայելեցաք յաղօթից նորա : Եւ էր սա ի Քաջբերունեաց ի Սուրբ Ուխտէն Յարութեան⁽³⁾ . որ Ասպսնիկայ վանք վերակոչի⁽⁴⁾ . ի գեղջէն Վախանից⁽⁵⁾ . որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի :

Թուլ. Մէշ. է ԲղԷ 70. և 71 :

[1] Մահ բռնաւորին դիպեալ է ի ՊԾԵ 1406 ամի :

[2] Վախճան սոյն Վարդանայ՝ Մեծօփեցին ի թուղթ : 40. 41 գնէ ՊԾԵ 1406 ամի . իսկ սատ երկու ամ յետոյ , ինձ թուի թէ օտար տպագրողն է տառն է տառէն չզանազանելով՝ փոխանակ Յ տառին է տառն շարեալ է . և արժանաշիշտակ կարապետ վարդապետ Շահնազարեան յիւր բազմազբաղ կամ հիւանդագին միջոցին չիցէ ժամանեալ ուշադրութեամբ սրբագրել :

[3] Սոյն ուխտն այժմ գիւղ լեալ է ի դարաւոր ժամանակաց հետէ և կայ ի հարաւային կուսէ Մեծօփայ ուխտին :

[4] Թերեւս մերձ գոլով ուխտն շինին Ասպսնիկայ , զանուն նորին ընկալեալ է :

[5] Այս գիւղն է այժմ ի կարգէ անբնակ գիւղօրէիցն Քաջբերունեաց աշխարհին :

Թիւ 29 . Լուծմանը Յորայ գրոց յիշատակարանէն .

Յէշ. — Եւ ժողովողնմ եկնութեանս է վանական վարդապետն , աշակերտ Մխիթարայ վարդապետի , որ Գոշ անուանի : Եւ է սա վարդապետ⁽¹⁾ . վարդանայ (Բարձրբերդեցւոյ պատմագրի) , և վարդան Ներսէսի (Տարօնեցւոյ) , և նա (Ներսէս Տարօնեցին) Եսայեայ վարդապետին Նչեցւոյ , (մեծի վարժապետին Հայոց) ⁽²⁾ . . . որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի ամէն : Արդ՝ Ես վերջինս ի ծնունդս եկեղեցւոյ Գրիգոր⁽³⁾ մականունն խնդրող բանի , որ ի վաղուց հետէ փափաքէի բոլոր մեկնութեան Յորայ , և ի թուականութեանս Հայոց ՊԾԷ ամի . եկեալ մեր յերկիրս Քաջբերունի , և ձմերեալ ի հըրեշտակաբնակ վանքս Մեծոփայ , ի սպասու դամբարանայ վարդապետացն սրբոց⁽⁴⁾ . և ընթերցմամբ հաւաքեցի զդժուարալոյծ բանքս Յորայ , և զմեկնողայ նորա , և այլ սակաւ ինչ լուծումն Արիտակէսի և Գէորգայ ի խրատս դրչութեան : ընդ նմին և զքաղուածոյ մեկնութեան Յովհաննու Աւետարանչի , և ընծայեցի ի պատիւ սուրբ տեղւոյս ուսումնասէր անձանց⁽⁵⁾ : Որ և լուսաւոր վարժապետին մերոյ Յովհաննու Որոտնեցւոյ⁽⁶⁾ . ի սմա մասն բարեայ յիշեալ եղիցի :

1865. սեպտ. 15. ի Կրոնց Անուպարի :

1409 . — ՊԾԸ .

Տար. — Կարապետ Բ. վախճանի և նստի Յակոբ Գ. կաթուղիկոս ի Սիս :

Շահի . Ա . հար . 210 .

[1] Բարունին վանական , որոյ վախճան լեալ է ի Չ . 1251 ամի :

[2] Սորա եղեն բազում աշակերտք , զոր ոմանք թուեն երեք հարիւր վաթսուեն և երեք : Չամ . Գ . էջ 325 . տող 10 :

[3] Մեծ վարժապետն Հայոց և արդիւնական մատենագիրն երանելի Տաթեւացին է :

[4] Թերեւս Աստուածատուր վարդապետի Աղբերկան որդւոյ : զոր յիշէ Կիրակոս պատմիչն ի թղթ . 106 . և Մխիթար վարդապետի Սասնեցւոյ . որոյ վախճան լեալ է . ի 229 1338 ամի անդ . անս զամանէ ի փետր . 11 Յոյսմաւուրն :

[5] Շնորհիւ Յովհաննու վարդապետի վանասօր նոյն սուրբ ուխտին ի սմին ժամանակի Մեծոփայ ուխտն էր ի բարգաւաճ ծաղկեալ վիճակի , ըստ պատմութեան Թովմա վարդապետի Մեծոփեցւոյ :

[6] Էր մեծ բարունիս սյս աշակերտ արդիւնական վարդապետին Հայոց Եսայեայ Նչեցւոյ և վարժապետ հանրահաշակ հօրն մերոյ Տաթեւացւոյ մեծի պուէտին :

Սարգիս գրիչ գրէ զՀարցմանց գիրք մի ի վանս Մեծոփայ :
Նոյնպէս և Առաքել գրիչն ի գիւղն Աստապատ առ դրան
սրբոյն Վարդանայ գրէ զԱւետարան մի :

Եւ ընդ իսկ :

Յակոբ կաթուղիկոս կոնդակ գրէ առ Լեհացի Հայս :

Թիւ 30 . Վերաշինութիւն Մեծոփայ ուխտին .

Արշ . — Թուին ՊԾԸ ես Յովհաննէս վարդապետս վերջինս ե-
կեղեցւոյ և առաջնորդ Աստուածարնակ սուրբ ուխտիս Մեծոփայ՝
միաբանութեամբ ամենայն եղբարցս ապաստան եղեալ ի նոյն , որ
զօրացոյց զտկարս , ձեռն ի գործ արկեալ շինեցաք զսուրբ տաճարս
Մարիամայ Աստուածածնին , յիշատակ հոգւոյ իմոյ մեղապարտի և
ծնողացս կրկնակի . (հոգեւորի և մարմնաւորի) , և որք մասն ինչ
տրոց նուիրեալ են ի սուրբ եկեղեցիս : Արդ յերես անկեալ պա-
ղատիմ մանկանցդ Սուրբ Սիովնի՝ որք ընծայէք զսուրբ հացն կե-
նաց յիշեսջիք զմեզ առաջի անմահ գառին Յիսուսի Քրիստոսի . զի
և ձեզ յիշողացդ , և մեզ յուսացողացս , և համօրէն միաբանիցս
առ հասարակ աշխատաւորացս ողորմեսցի Քրիստոս Աստուած : Ի
կաթուղիկոսութեան Տէր Յակոբին , ի վարդապետութեան (Հայոց)
քաջ Հռետորին Գրիգորի Տաթեւացոյն⁽¹⁾ . յորմէ ազատեցաք ի
կապանաց և անիծիցն Աղթամարայ : Ի բունակալութեան Լանկթա-
մուրին հիմնարկեցաւ . և ի պարոնութեան (Ղարայ Ուսուֆին⁽²⁾)
աւարտեցաւ⁽³⁾ ձեռամբ ութայ (վարպետ ճարտարապետ) Փարա-
ճին⁽⁴⁾ Ատոմին , Սիրունին , Դաւթին , Տիրատրուն , Մկրտչին ,
Յովաննէսին , Յովսէփին , Ղազարին , Ատոմին , Մարտիրոսին ,
Զաքար բէկին , Կիրակոսին և այլ ամենայն աշակերտաց նոցին⁽⁵⁾ :

[1] Էր սա ի սին ամի ի վանս Մեծոփայ առ աշակերտն իւր և վանահայրն
ուխտին Յովհաննէս վարդապետ :

[2] Յետ մահուան Լանկթամուրայ ազատեալ ի նժդեհութենէն իւրմէ , ել-
եալ ի Դամասկոսէ եկն ի Բաղէշ առ Շամշատին ամիրոյն տեղւոյն և յօգնու-
թիւն գտեալ ի նմանէ տիրեաց բազում աշխարհաց և քաղաքաց նոցին 1045 ամի
տեառն . . . :

[3] ՊԾԱ 1402 ամի ըստ թումայի Մեծոփեցւոյ ի թղթ . 58 . և ի պարոնու-
թեան (Ղարայ) Ուսուֆին աւարտեցաւ :

[4] Ըստ թում . Մեծոփեցւոյն Յոյն էր սա ի թղթա . 28 :

[5] Այս արձանագրութիւնն կայ յարտաքուստ յորմն եկեղեցւոյն յարեւմը-

Թիւ 31 . Վերաշինութիւն խարաբաստայ ուխտին .

Ի Ղանութեան Ղարայ Ուսուֆին⁽¹⁾ . և ի պարսնութեան Իսպանին⁽²⁾ . և յառաջնորդութեան սուրբ ուխտիս⁽³⁾ Կարապետ վարդապետի , տուաւ նալաթլամով (անդարձ վճուաւ) մուլք (կալուած) Ի . մութ (անուն չափի) սատին անջրդի գետին) ի Կտրածքար⁽⁴⁾ . Սուրբ Աստուածածնիս ի գիւղն Անիչատ . (այժմ աւեր) , ի Շինամէջ երեսուն մութ տեղ ջրով քսան մութ սատին . ի Կտրածքար Ժ . մութ ջրով . Ի . սատին . ի Փակած⁽⁵⁾ ԺԵ . մութ տեղ . ի Հայրիկէ⁽⁶⁾ ԺԵ . մութ տեղ , ի Վառնջիկն⁽⁷⁾ երկու խաչարտն , երկու ակն ջաղաց ի Բոլորմարգն⁽⁸⁾ Ա . արտ : ի Բլուրն⁽⁹⁾ Ա . արտ : յԱկանց Դ . արտ⁽¹⁰⁾ : յԻրիչատ Ա . Արտ⁽¹¹⁾ ի Մկնաւերն Բ . արտ⁽¹²⁾ : ի Սառարատ Զ . արտ , Բ . Ջաղաց⁽¹³⁾ իՍոսկուն Բ . արտ⁽¹⁴⁾ : ԻԳան-

տից կողմանէ , զոր ի գիր առ ի 1860 ամի յամսեան հոկտեմբերի յաւուրս վանահայրութեան ուխտին Տէր Միքայէլ ծայրագոյն վարդապետին , որ ի քառասուն ամաց հետէ կայր ի նմին պաշտօնի վանահայրութեան .

[1] Անուն սորին յիշի ի միջի արձանագրութեան Մեծոփայ տես ի ՊԾԸ ամի արձանագիրն .

[2] Թերեւս էր սա Ասպահան որդին Ղարայ Ուսուֆի , զոր յիշատակէ Թովմայ Մեծոփեցին ի Թղթա . 70 և 81 .

[3] Վանիցն խառաբաստայ՝ որ այժմ Արծուաբեր կոչի .

[4] Այս գիւղն կայ շէն և կանգուն առջնութեւր Արծուաբերու ի հարաւ կուսէ նորին . և ունի այժմ վեց Հայ երգ .

[5] Չէ յայտ ինձ աւեր սորին .

[6] 24 տամբ կայ շէնս կանգուն .

[7] Այս անուամբ գիւղ չիք ի սահմանս Արճիշոյ . բայց կայ ի ծայր արեւմտեան սահմանի վիճակին Քաջբերունեաց և յարեւելիցն Արճկոյ , Առնջկուս անուամբ Հայ . գիւղ մի 25 տամբ . գուցէ յոյն գիւղն ակնարկէ արձանագիրս .

[8] 25 տամբ Հայ ընտանեօք կայ կանգուն շէնս , ոչ իսկ հեռի յԱկանց գիւղաքաղաքէն .

[9] Մերձ ի Բլուրմակ այժմ տաճկաբնակ .

[10] Յետ աւերման Արճէշ քաղաքին ի բանութենէ ակեաց ծովուն վանայ՝ Ականցն եղև վաճառատեղի նոյն երկրի գիւղորէիցն .

[11] Այս շէնս որ երբեմն իբրև քաղաք ճախանայր բազում բնակչօք , որպէս տեսանի յաւերակաց նորին , ի ներկայիս կայ ԺԴ . տամբ միսյն , և յերկուս բաժանի վերին և ներքին իրիչատ կոչմամբ .

[12] Չէ շէնս այժմ ի միջի և անցեալ է ի շարս շարաթացեալ գիւղորէից .

[13] Էր սա երբեմն քաղաք և հայրենիք Կիրակոս կաթողիկոսին Վիրապեցւոյ , որ զկնի նորոգման Սուրբ Աթուռոյն Էջմիածնի նստաւ անդ կաթողիկոս ի ՊՂ 1441 ամի . բայց այժմ աւերակաց կոչաք նորին ելանն հանդէպ այցելուաց նորին .

[14] Շէն է գիւղս բայց ի հոգեվարք վիճակի Ե . տուն Հայ երգիւ .

ձակ այդի մի⁽¹⁾ : Ով որ հակառակ լինի զանէ՛ծքն Ուղային առնու, և որ կամակից լինի օրհնի յԱստուծոյ և յամենայն Սրբոց ամէն :

1866 թ. 8 հինգշաբթի ընթացիկն է վանքի Արժամբէր Սարգստեանի, յառաջ Վանահայրանի Տէր Սողոման պարթևահասակ տահանային .

Տար . — Եւ որք մնացեալ աշակերտաց նորա⁽²⁾ : Թողեալ զնացաք ի գաւառն Սիւնեաց առ Մեծն Գրիգոր վարդապետն ամենայն Հայոց, երկրորդ Լուսաւորիչն և Աստուածարանն գեր ի վերոյ գոլով ամենայն իմաստասիրաց և վարդապետաց հնոց և նորոց : Որ և նա ուրախացեալ յոյժ՝ սիրով ընկալաւ զմեզ իբրեւ զորդիս իւր սիրելի հոգեւոր և բաղձալի . զի հայր նորա էր ի գաւառէն Քաջբերունեաց ի քաղաքէն Արճիշոյ : Եւ նորա ժողովեալ զբազումս յաշակերտաց իւրոց, զՄխիթարն ի Տաթեւոյ : զՅովհաննէսն ի յեկեղեաց ի Վանաց Հերմոնի, զՔալուստն՝ ի Վաղանդնու Սիւնեաց Սուրբ Կարապետէն, զՍիմէօնն ի Սիւնեաց, զՅակոբն Բոստացի, զԳրիգորն Արարատեան, զԳրիգորն և զՄատթէոսն Ջուղայեցի, զԱլեւտիսն ի յԱստապատէ, զԵղիայն ի յՈճփայ, զՅովհաննէսն ի Վաղանդու վանացն, զՈւնան ի Շամախոյ, զՅովհաննէս կարմիրն ի Կապանայ : Եւ էին երեք յաշակերտացն յայլ տեղիս Մատթէոս Ալխտեցի սուրբ ուխտին Քանձասարու . Մկրտիչն ի Փայտակարանէ : Ստեփաննոս ի Թաւրիզոյ : Եւ քահանայս բազումս աւելի քան զվաթսուն ոգի . և սկսաւ ուսուցանել զգիրս արտաքին իմաստասիրացն . . . Եւ էր սուրբ ուխտին (Սիւնեաց Տաթեւոյ) առաջնորդ հեղահոգին և ընտրեալն յորովայնէ սուրբ եպիսկոպոսն Տէր Առաքել և մեծ իմաստասէրն քուերորդին մեծ վարժապետին, որ ունէր զմիտքն իբրեւ զհրեղինաց, և էր սիրող ամենայն առաքինութեանց : Եւ ի հալածմանէ բռնաւորաց շարժեցաւ ի գաւառէն Սիւնեաց . (Տաթեւացին) առեալ զմեզ եկն ի գաւառն Արճիշոյ : Եւ արարեալ իւր բնակութիւն զաստուածահաճոյ ուխտն Մեծօփայ առ հեղահոգի և աստուածարան և երջանիկ այրն Աստուծոյ վարդապետն Յովհաննէս, և յոյժ ուրախացաւ . վասն զի ի նոյն ամին ՊԾԸ, աւարտեալ էր զնորաչէն Տաճարն Սուրբ Աստուածածնին⁽³⁾ : Եւ ժովովեցան առ նա բազումք

[1] ԺԸ. տամբ կայ շէնս մինչ ցարդ կանգուն :

[2] Մեծին Վարդանայ վարժապետի վախճանելոյն ի թուին ՊԾԵ ամի :

[3] Զարձանագրութիւն նորոգութեան սորին տես ի վերոյ 1409 ամի :

ի վարդապետացն , Գրիգոր Նահատակն և սուրբ այրն Խլաթեցի⁽¹⁾.
 Յակոբ Ովսաննային ի Ռչտունեաց , Մարգարէն ի Վարազայ , Յա-
 կոբ ի յԱսպիանկու , Յովհաննէս Փափշինոյ , Ստեփաննոս ի Բերկ-
 րոյ , Մկրտիչն ի Հիզնայ , Յովհաննէսն ի Բաղիչոյ , Սարգիս վար-
 դապետն ի Յարութենէն . Մելքիսեդն ի յԵզնկու . և ի քահանա-
 յից և յաշակերտաց աւելի քան ութսուն արեղայ : Եւ զամ մի լը-
 ման մխիթարեաց զամենայն եղբարսն անձառելի ցնծութեամբ , և
 զերիս գիրս մեկնեաց դասիւ զԱւետարանն Յովհաննու Աւետա-
 րանչին , զգիրս Յորայ Նահատակին , և զգիրս գրչութեան երկո-
 քին վարդապետացն Գէորգայ Լամբրոնացւոյն և Արիստակէսի : Եւ
 ի սոյն ժամանակի (ՊԾԸ ամի) ի խնդիր ելեալ վասն կապանաց
 Աղթամարայ , և մեծահանգէս ժողով արարեալ արձակեաց զամե-
 նեսեան (ի կապանաց) հնոց կաթուղիկոսաց մերոց :

Թ.Վ. ՄԷԷ. 50. 51 :

Այր մի ի գերութենէ Թամուրին⁽²⁾ . ազգաւ Հոռոմ Ֆարաճ
 անուն եկեալ էր ի Մէրտին քաղաք՝ յոյժ իմաստուն և ճարտար
 շինող⁽³⁾ : Յղեաց և կոչեաց զնա⁽⁴⁾ և սկիզբն արար շինութեան
 սուրբ եկեցեցւոյն յաւուրս Չաղաթային⁽⁵⁾ . յորմէ ամենայն եկեղե-
 ցիք Հայոց ի հիմանէ քակեալ լինէին : ՊԾԱ ամին սկսաւ և ի ՊԾԸ
 ամին աւարտեցաւ յեօթն ամին ի փառս Քրիստոսի Աստուծոյ մե-
 րոյ ամէն : Ի սոյն (ՊԾԸ) ամի եկն վարժապետն Գրիգոր⁽⁶⁾ վարդա-
 պետօք և աշակերտօքս⁽⁷⁾ և գնացեալ⁽⁸⁾ ընդ առաջ նորա հոգե-
 ւոր ծնողին իւրոյ , և բերեալ յԱնապատն իւր (ի Մեծոփ) հան-

[1] Այն է Ծերենց Գրիգոր գանձասացն և տարեգիրն , որոյ վախճան գիպ-
 եալ է ի վանս Յիպանայ ՊՀԳ. 1425 ամի

[2] Լանկթամուրն ակնարկէ , որոյ մասն եղեւ ՊԾԵ. ամի :

[3] Անուն սորին յիշատակի ընդ այլ երկոտասան Հայ ճարտարապետաց , որք ի
 միասին համախմբեալ ի ՊԾԱ ամի սկսան վերանորոգել զտաճարն Տիրածին Աու-
 սին հռչակաւոր սրբոյ ուխտին Մեծոփայ , որ կայ ի գաւառին Աղիովտայ ի հիւ-
 սիսոյին կողմանէ Ականց գիւղաքաղաքին , և ի ՊԾԸ ամի աւարտեցին զսոյն ,
 զԱրձանագրութիւն նորոգութեան նորին տես ի վերոյ :

[4] Յովհաննէս վարդապետ , վանահայրն Մեծոփայ :

[5] Ի ժամանակս Լանկթամուրայ կամի ասել :

[6] Մեծն Տաթեւացին ակնարկէ :

[7] Յերկիրն Արճիշոյ ի Մեծոփ :

[8] Յովհաննէս վարդապետ հայրն ուխտին Մեծոփայ :

գոյց զնա ի բազում աշխատութեանց իւրոց : Եւ ժողովեցան առ նա բազում վարդապետք և աշակերտք ևն :

Թովմ. Մեհ. 58. և 59 :

1410. — ՊԾԹ.

Տար. — Իսկ յետ միոյ ամի (ՊԾԹ) եկեալ աշակերտք նորա⁽¹⁾ կացին ժամանակս ինչ (ի Մեծոփ) և դադտագողի առեալ գնացին ի գաւառն Արարատեան առ մեծ վարդապետն Յակոբ Սաղմոսավանից, հոգեւոր հարազատն իւր⁽²⁾ : Եւ մեք ամենեքին վարդապետք և աշակերտք գնացաք առ նա : Եւ եկեալ դարձեալ աշակերտք նորա ի Սիւնեաց ի Սուրբ Առաքելոյն Ստաթէոյ իմաստասէր եպիսկոպոսն և վարդապետն՝ Տէր Առաքել⁽³⁾ տարաւ զնա : Եւ յետ ութն աւուր գնալոյ նորա հիւանդացաւ և փոխեցաւ յաստի կենացս ի հանդերձեալն, որոյ յիշատակն օրհնութեամբ, և աղօթիւք նորա Քրիստոս մեզ ամենեցուն ողորմեսցի : Իսկ սքանչելի այրն Աստուծոյ Յովհաննէս վարդապետն մեր. (վանահայրն Մեծոփայ) ի սոյն աւուրս⁽⁴⁾ հանգեաւ ի Քրիստոս, և տարեալ եղաք ի մեծահանդէս ուխտն Հայոցթառ որ չէ հեռի ի Գառնոյ գերեզմանակից նոր վկային Յովսեփայ⁽⁵⁾ : Եւ Եղիա վարդապետի նոցա⁽⁶⁾ :

Թովմ. Մեհ. է Բղև. 43 :

Իսկ մեծ վարդապետն Գրիգոր (Տաթեւացին) օրհնեաց զաշ-

[1] Սրբոյն Գրիգորի Տաթեւացւոյն :

[2] Էր սա յաշակերտաց Մեծին Յովհաննու Որոտնեցւոյ :

[3] Էր սա վանահայր Տաթեւու հռչակաւոր ուխտին և քուերորդի մեծ վարժապետին Սրբոյն Գրիգորի :

[4] ՊԾԹ ի տօնի Զատիկի Յարութեան կիրակի աւուր :

[5] Սուրբս սյս էր յազգէն Պարսից ի գաւառէն Գունայ, և ի գեղջէն՝ որ կոչիւր Նորաշէնք. և էր սա յաւուրս Ներսէսի Ալայեցւոյ Շնորհալի հայրապետին մերոյ, որ և յետ քրիստոնէութեան և կրօնաւորութեան վասն Քրիստոսի կատարի ի Գուին, յամի Տեառն 1170 և ի թուին Հայոց ՈժԹ. ի յունիս 19. և զմարմին երանելւոյն բարեպաշտ ոմն Սարգիս առեալ բերէ ի վանս Ամենափրկչին որ ի Հայոցթառ. և անդ տայ ամփոփել սաղմոսիւք և օրհնութեամբ ի պատրաստեալ տապանի. իսկ Շնորհալի հայրապետն մեր ըստ պայմանին իւրոյ, զոր արարեալ էր ընդ սրբոյ վկային՝ մինչ գնացեալ էր նա ի Հռոմկլայ՝ կարգէ զնա ի շարս նահատակաց Հայոց ի փառս Աստուծոյ :

[6] Էր սոյն Եղիա վարդապետ յաւուրս Գօշ Մխիթարայ և Զաքարիա Սպասալարին Հայոց, որ և դտաւ ի ժողովն Լոռոյ 1205 ՈՒԳ. յամի. և էր սա կարի բաջ և ընտիր երաժիշտ ըստ պատմութեան Աիրակոս վարդապետի Գանձակեցւոյ :

խարհս մեր, (երկիրն Քաջբերունեաց) և առեալ զաշակերտս իւր (ի վանուցն Մեծոփայ) ելեալ գնացաք ի գաւառն (նահանգն) Արարատեան: Եւ վարդապետն Յովհաննէս (հայրն ուխտին Մեծոփայ) և ամենայն աշակերտքս զհետ նորա ընթացաք: Եւ անտի (ի Սաղմոսավանից) ելեալ գնացաք ի շնորհալից Աթոռն իւր Սուրբ Առաքելոյն Ստաթէոսի: Եւ աւուրս ութ առողջ մնացեալ՝ և ապա կոչեաց զնա առ ինքն Վերին Կոչողն տալ նմա զաշխատութեան վարձըն՝ յաւուր տօնի նախավկային Ստեփաննոսի մեծի Սուրբ Եղիշի: Իսկ սքանչելի այրն Աստուծոյ Յովհաննէս վարդապետն մնաց ի գաւառն Արարատեան, և հասեալ ի Զատիկի Յարութեան տօնն, ի նոյն յօրն որ ասի անսկիզբ Աստուած, ի Յարութեան օրն գընաց առ Քրիստոս: Վասն այնորիկ անդ եղեւ վախճան կենաց նորա զի գնաց երկիրպագանել Աստուածամուխ Գեղարդեանն առաջի պատկերի Ամենափրկչին, որ և դրոշմեալ եղեւ աղօթիւք Սուրբ Աւետարանչին Յովհաննու ի վերայ Սրբոյն Գողգոթայի ի խնդրոյ Տիրամօր Աստուածածնին¹: Եւ յետոյ պարգեւօք տուաւ Աշոտոյ թագաւորին ի Հոռոմոց թագաւորէն, և բերեալ եղեւ ձեռամբ Կիւրապաղատ իշխանին: (Ի սուրբ ուխտն Ամենափրկչի): Եւ անդ երկիրպագեալ՝ հասեալ վախճան կենաց նորա վերափոխեալ եղեւ ի կեանս անպատուսն առ Տէր Յիսուս, որում բաղձայր հասանել:

Եւ մեք աշակերտք գոլով նմա և հոգեւոր սրդիք Մկրտիչ և Թովմա² և նահատակն մեծ վարդապետն Ռշտունեաց Յակօբ Ովսաննայ մականուանեալն և վարդապետ Մկրտիչն ի Բերկրոյ³, ժողովեցաք և բազում եղբարս, և եղաք զնա ի հանգստարանի նոր վկային Յովսեփայ և Եղիա վարդապետին ի մեծահանդէս ուխտըն Հայոց թառ: Եւ բազում բժշկութիւնք լինին ի սուրբ ոսկերաց նորա ի փառս Քրիստոսի:

¹Թովմ. Մեծ. 60 և 61:

Աբէլ արեղայն ի վանս Սարկաւազայ⁴, գրէ զՄատթէոսի Աւետարանի մեկնութիւն արարեալն ի Գրիգորէ Տաթեւացոյն:

Եղիշի

[1] Սոյն թանկագին գանձն, Սուրբ Գեղարդն Փրկչական, զկնի ամայութեան Ամենափրկիչ ուխտին Հայոցթառայ պահի ի Սուրբ Եջմիածին:
 [2] Է նոյն իսկ Թովմայ Մեծփեցի պատմագիր վարդապետն, որ զկնի Յովհաննու՝ նստաւ վանահայր ի վանս Մեծփայ մինչ ի վախճան կենաց իւրոց:
 [3] Է նշանաւոր գէան երկրին Տարբերունոյ:
 [4] Թերեւս Հաղբատոյ վանացն ասէ. ս'ւր է շիրիմն մեծիմաստ Սարկաւազ վարդապետին Յովհաննու քաջ տօմարագիտին Հայոց. որոյ վախճան լեալ է յամի 1129 ի Թուին Հայոց ՇՀԸ:

Սիմէօն կրօնաւորն ի Ղուիմ յԱնապատին Լուսաւորչին⁽¹⁾ գրէ զՀարցմանց գիրք մի .

Մտրեան ե այժմ յԷջիտին :

Իսկ թումայ վարդապետ յերկիրն Քաջբերունւոյ ի սուրբ ուխտըն Մեծութայ : Ի թվին ՊԾԹ գրէ զքարոզ գիրս մեծին Գրիգորի Տաթեւացւոյն :

Թիւ 33 . Ի վարուց Սրբոյն Գրիգորի Տաթեւացւոյ .

Սուրբն Գրիգոր մեծ բարունապետն էր ի գաւառէն Քաջբերունւոյ . ի քաղաքէն Արճիշոյ . անուն հօր նորա ամիր Սարգիս . և մայր նորա էր ի գեղջէն Փարսոյ բնակեցան ի գաւառն Սիւնեաց Վայոցձոր : Եւ երթեալ ի Տփլիս քաղաք (ծընողք Տաթեւացւոյն) և հանդիպեալ մեծ վարդապետին Հայոց Յովհաննու Որոտնեցւոյ՝ (վախճան սորին լեալ է ի ՊԼԵ . 1386 ամի ի 6 յունվարի . ըստ Գրիգոր Ծերենց ժամանակակից տարեգիր վարդապետի , որպէս ինքն գրէ այսպէս :

- « Ի յութ հարիւր Հայոց թուական ,
- « Ընդ որս և հինգ եօթն յաւելան (ՊԼԵ 1386)
- « Յունվարի մին պահք Յայտնութեան ,
- « Լոյս արեւուն խաւարեցան .
- « Մեծ վարդապետն անուն Յօհան .
- « Որ և Կախիկ անուն ծննդեան ,
- « Յետ վեց աւուրըն խաւարման .
- « Փոխի առ Տէրն իւր անձկական : ևն . »

Սա էր աշակերտ մեծին Եսայեայ (Նչեցւոյ) , էառ զնա յաշակերտութիւն իւր . հանապազորդ վարդապետական ուսմամբ վարժեալ կրթէր զնա ամս ԻԸ⁽²⁾ Եւ առեալ տարաւ ընդ իւր յաստուածակոխ քաղաքն յԵրուսաղէմ , և անդ ընկալաւ զաստիճան կուսակրօն քահանայութեան : Եւ եկեալ ի գաւառն Եկեղեաց՝ որ է յԵզնկան , և ետ նմա գաւազան վարդապետական : Եւ յետ վախճանի նորա (Որոտնեցւոյն) հաւանութեամբն ամենեցուն , եղին յաթոռն վարդապետին զՄեծն Գրիգորիոսն , որ զհրեղէնսն հիացուցանէր անտանելի ճգնութեամբն

[1] Զկնի աւերման մայրաքաղաքին Անւոյ , բազմութիւնք Հայոց յոյժ գաղթեալ էին ի Ղուիմ , և ընդ բազմութեան գաղթականին Հայ կրօնաւորք եւս գընացեալ էին անդ . և շինեալ էին բազում վանորայս ի հոգեւոր մխիթարութիւն նոյն գաղթականաց , յորոց մինն էր Անապատն Լուսաւորչի :

[2] Ի ՊԸ ամէ մինչեւ ի ՊԼԵ ամ :

և գերազանց իմաստութեամբն , և յորդառատ վարդապետութեամբն : Եւ երկու դասատունք էին յերկիրն Երնջակայ վարժապետին Գրիգորիսի . և երկու ամ էր՝ որ նստեալ էր յաթոռ վարդապետութեան ուսուցանելոյ : Եւ յետ այնորիկ ելեալ աշակերտօքն իւրովք գնացեալ ի սուրբ ուխտն . և ի շնորհալից գերահռչակ Աթոռն Ստաթէի Առաքելոյն , և ի տուն Որբէլեանց առ իշխանն Հայոց Սմբատ , որդի Իւանէի թոռն Բուրթելի . և անդ եւս ժողովեաց բազում աշակերտս . . զՄխիթար ի Տաթեւու . . : Զայս իբրեւ ասաց (Տաթեւացին) աւանդեաց զպատուական հոգին իւր առ Աստուած . երանելի վարդապետն Գրիգոր Տաթեւացին , յաւուրս տօնի նախավկային Ստեփաննոսի և ի թուականիս մերոյ ՊԾԹ . ամին : Եւ բարձեալ զսրբասնեալ մարմին նորին սաղմոսիւք և օրհնութեամբ , և եղին ի շիրմի ի շնորհազարդ և յամենագով Աթոռն Ստաթէի Առաքելոյն՝ ի դրան հարաւակողմն մեծի տաճարիս . և առնէ բազում սքանչելիս մինչեւ ցայսօր ժամանակի :

ՅԱՊԵԼ 27. է Յեւթիւր Յայտնաւոր :

Թիւ 33. ի Քարոզ գրոց յիշատակարանէ .

Յիշ.— Եւ արդ ես . . Մելքիսէդ պիտակ անուն խնդրող բանի , գծեցի ձեռամբ իմով զգիրքս քարոզողաց յիշատակ ինձ և ծընողաց իմոց . հօրն իմոյ Տիրացու քահանայի և մօրն իմոյ Մեծտիկնայ , ի թուարբերութեանս մեծի ՊԾԹ ամի . յաստուածապահ գաւառս , և ի քրիստոսաշէն քաղաքս Բաղէշ կոչեցեալ . ընդ հովանեաւ ամենազօր Աջոյ ձեռին Աստուծոյ , և պահպանութեամբ աստուածընկալ Սաչին Քրիստոսի ,

1866 յունւ . 19 է վ . ան է Ստեփ Նշան մեհարանիս Էկեղեցին . յաստուածաբանութեան քերական իգնարեստ Արտեմիսիսի կ . Պօլսեցայ :

Թիւ 34 . յԱւետարանէ .

Փառք անսկզբան , . . յիշեցէք և զվերջին նորոգող Սուրբ Աւետարանիս զՏէր Գրիգոր կրօնաւորն : Եւ արդ ես անպտուղս ի բարեաց . . Աւետիս արեղայ . . կատարեցի զՍուրբ Աւետարանըս . . յաստուածաբանակ ուխտ ի վանքս որ կոչի Կաւալու . ընդ հովանեաւ Սուրբ Տիրածին Աստուածածնի . (որ) յանուն Սուրբ Կարապետին և Սուրբ Սաչին է կառուցեալ . ի յառաջնորդութեան Տէր Սահակ եպիսկոպոսին . և է ինքն բարի և հնազանդ օրինացն

Աստուծոյ . . . և վանից միաբան տնտես մահտասի Ազ . . . որ է մարագութ խնամ տանի ի վերայ մեղաւորիս, հալաւ վլանալ⁽¹⁾, թափելով և կերակրելով, Գրիգոր ամուլավար⁽²⁾ որ աշխատէ բազում ջանիւ ի դռան Աստուածածնին, և Գալալին . որ է աւելածու տան և դռան . Աստուած ողորմի ասացէք : Թուլին ՊԾԹ :

1866 հ. 15 է վ. ան, յերեւն Տարբերանեաց է Լին Տէր Յաննիս սրբայն, յաստիւ վանահայրութեան րեղայն Գաբրիէլ Կահանայի :

Թիւ 35 . ի Յայսմաւուրէ .

Փառք եղակի անճառելոյ . . . դրեցաւ սուրբ տառս ի թուականիս Հայոց ՊԾԹ . ի հայրապետութեան (Աղթամարայ) տեառն Տէր Գալալիս սուրբ և անրիծ քաւչապետի, ի խնդրոյ աստուածասէր Յովհաննէս քահանայի . . . որ պաղարեբեաց զսուրբ Գիրքս, և շնորհեաց Աստուածածնին Ոստանի նոր քաղաքին⁽³⁾ . ընծայ յաւիտենական . . . դրեցաւ սուրբ տառս ի դառն և ի վշտաբեր ժամանակիս . . . աշխարհիս Ղարայ Յուսուֆին, և երկրիս մերում Ամիր էզտընի⁽⁴⁾ . յանուանի և ի հռչակաւոր գեաւղ՝ որ Տշող կոչի (է ի գաւառին Ռշտունեաց) ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, և Սուրբ Ստեփաննոս Նախավկայիս, և Սուրբ Կիրակոսիս, և Սուրբ Սիոնիս : Եւ արդ ես լունայնացեալս ի գործսց բարեաց . . . յիշեցէք զանյիշելիս ի գրչաց զՍտեփաննոս գծողս⁽⁵⁾ ի Տէր Քրիստոս յոյսն ամենեցուն . . . և զճնողսն իմ զԳրիգոր քահանայն Հռետոր գրիչ⁽⁶⁾ . . . և զհօրեղբայրն իմ զՄարտիրոս կրօնաւորն, որ . . . նահատակեցաւ :

1866 հ. 15 է վ. ան . է Սարգիս Սահակ եկեղ .

[1] Բառս է մինն յաշխարհիկ բառիցն վ. անայ, այսու թուի ինձ թէ, վերոյիշեալ կաւալու վանքն էր ի թուոց վ. անայ վանօրէից, յորոց բազմաց այժմ հետք հազիւ տեսանին ուրեք ուրեք :

[2] Այսպիսի Գաւառական բառից հաւաքածոյն ունիմ առ ձեռն պատրաստի վասն տպագրութեան՝ եթէ Տէրն յաջողեացէ ինձ զայն :

[3] Նախկին հիմնադիր Ոստան քաղաքին Ռշտունեաց, էր Գագիկ թագաւորն Արծրունի, ըստ պատմութեան թովմայ վարդապետի Արծրունոյ :

[4] Թովմայ Մեծօփեցին ի թղթ. 92, բարեբարոյ և աշխարհաշէն անուամբ կոչէ զայս էզդին Ամիրայն . որպէս ի թղթ. 70 վասն որդւոյ սորին Մելիքի՝ կոչէ բարեբարոյ սիրող և ողորմած քրիստոնէից :

[5] 23 թիւ Տօնական մեծ մատեան եւս սոյն Գրիչն գրեալ է, տես ի վերոյ :

[6] Աչ եմ հանդիպեալ ընդօրինակեալ մատենից նորին դեռ . վախճան սորին լեալ է ի ՊԾԳ. ամի, ի մեծի մահտարածամին որպէս յիշէ ի թիւն 23 և 24 ի վերոյ սոյն Ստեփաննոս քաջ գրիչ որդի Գրիգոր հանգուցեալ նօտար քահանայի :

1411 . — ՊԿ .

Աբ) . — Յանոււն Աստուծոյ ես կարապետ կաթուղիկոս (Աղուանից) շինեցի զեկեղեցիս (Ճալէթու վանից) ի թուին ՊԿ . յիշատակ հոգւոյ իմոյ յաղօթս յիշեցէք :

Շահի . Բ . հար . էջ 379 :

Այս է հանգիստ Դաւիթ կաթուղիկոսին (Աղուանից) ՊԿ :

Շահի . Բ . 343 :

Տար . — Գրիգոր կրօնաւոր գրէ զՀարցման գիրս ՊԿ . թվ . մեծին Գրիգորի Տաթեւացւոյն ի գիւղաքաղաքն Նղեվարդ⁽¹⁾ ի վանս սրբոյն Յակոբայ :

Ելջէմէն :

Մատթէոս քահանայ գրէ զվեցօրէից գիրս Մատթէոս վարդապետին :

Ելջէմէն :

Զկնի Գ . Յակոբայ Գրիգոր Ը . Սանձողատ նստի կաթուղիկոս ի Սիս :

Շահի . Ա . 210 :

Թիւ 36 . ի ճաշոցէ .

Յիշ — Փառք . . : Գրեցաւ և գրաւ առեալ աւարտեցաւ տօնազարդ և աստուածամեծար սուրբ Գիրքս ի թուարերութեան հայկազեան տօմարիս ՊԿ . ի թագաւորութեան (Ղարայ) Յուսուֆին . ի հայրապետութեան Հայոց Տէր կարապետի , և յԱղուանից նորին անուանակցի Տէր կարապետի , և յեպիսկոպոսութեան նահանգիս Աթուոյն Ադդէի (Դատի վանից) Տէր Զաքարիայի , և յիշխանութեան տեղւոյս պարոն Վահրամայ , պարոն Տուրսունին , պարոն Շրուանին , պարոն Սատոյին , պարոն Պաօշին , պարոն Գրիգորին . յաստուածաշէն երկիրս Մար կոչեցելոյ , ի վանս Գետամէջ . ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և այլ սրբոց նշանացս . զոր սօքօք ամրացեալ փրկեսցին յամենայն որոգայթից հոգւոյ և մարմնոյ ամէն : Յիշատակ եղիցի և ի սմա հանգուցեալ իշխանացն այսմ նահանգի նախ մեծաշուք իշխանին Հասանայ որդւոյ Դաւրին և ամուսնոյն իւրոյ Սոնձային , և զաւակացն իւրոց քաջ և արի պա-

[1] Է սա ի մէջ կոտայք գաւառի , կոտէից գաւառին այժմ՝ Ղրիբուլախ անուն տան :

րոնացն Գրիգորայ , Սարգսի , Շանչի , Ջհանչի , Աղբուղին , Շրվանին , նա և թագազարմ իշխանին Սաղունին , զոր Տէրն տէրանց և թագաւորն թագաւորաց ընդ սրբոց թագաւորացն և բարեպաշտ իշխանացն դասեսցէ և պսակեսցէ զնոսա ամէն : Յիշատակ եղիցի և ի սմա ազատացն տանս Դաւրեան , նախ ամենայն օրհնութեանց արժանաւոր պարուն Աթապակին և այլ ամենայն ազատաց . նաեւ յիշել ի Տէր զամենայն տանուտեարան աստուածաշէն երկրիս Մարայ . նախ Զազիկ . . (թուղթ պակաս էր) գրեցաւ սուրբ տառս ձեռամբ Ալունեցի Թովմա գրչի ի խնդրոյ Յովհաննէս քահանայի :

1866 Գեոր 22 Էրեւանի է վ. ան , է Հայաստանի Եկեղեցին յառաջ
 աստի Կահանայութեան Դեղնայն Տէր Յովհաննէս :

1412 . — ՊԿԱ .

Տար. — Արիստակէս գրիչ յԱնապատն Աւագ վանք օրինակէ զՏաթեւացոյ Պորփիրի ներածութեան վերլուծութիւն :

Արչ. — Թվ. ՊԿԱ. շինեցաւ սուրբ եկեղեցիս⁽¹⁾ .

Թիւ 37 . յՈսկեփորէ .

Յիշ. — Փառք ներող և զարմանահրաշ արարչագործ Փրկչին է . : Արդ՝ գրեցաւ քաղուածոյս աստուածաբանութեան ի հաւաքմանէ առն մեծի վարժապետի , անուն արթուն զուարթնոյն Գրիգորի (Տաթեւացոյն) , ձեռամբ եղկելի և կրկնամեռիկս անձին Սեբաստացի Ռատակէսի , ի գերահռչակ անապատս , Աւագ վանք . ընդ հովանեաւ Տիրամօր Աստուածածնին , և սրբոց Առաքելոցն , և այլ բազմահաւաք նշխարաց , և սրբոյն Կարապետի , և ի յառաջնորդութեան նորին հարազատի Գէորգէոս Փաղերայի⁽²⁾ : Ի Թուակահանութեանս ՊԿԱ :

1865 Նոյ. 29 Էրեւանի է Լէվ Կղզին , որ էր է Զուլե վ. անայ . է վանահայ .
 Կահանայութեան Դեղնայն Տէր Յովհաննէս Պորփիրի Կրկնայն վ. անեցոյ :

[1] Այն հակիրճ արձանագիրն է ի քարուկիր տաճարին Աթանանց հայ գեղջն որ կայ շինեալ յարեւելից կուսէն Ռատանայ ի ներքոյ շղթայիցն Աւասոսայ լերին հզօրի . մինչ յամին 1881 յունիս 4 հինգշաբթի ընդ Արժ . Արիստակէս վարժապետի Տէվկանց գնայաք ի Բաղէշ աստ հանդիպեալ ի գիր առ ի զփոքրիկ արձանագիրս :

[2] Էր սա յաշակերտացն Յովհաննու Որոտնեցոյ մեծիմաստ Գեորգ Եղնկացին , յիշատակէ զսա Թովմայ Մեծփեցին ի թղթ . 17 . 33 . և 45 :

Թիւ 38 . Հատուած ինչ բանից Յակոբ վարդապետի Ղրիմցւոյ աշակերտին
Գէորգայ .

Հարցումն Գէորգայ ընդունապետի⁽¹⁾ և ծառայաբար կատարումն Յակոբայ (վարդապետի Ղրիմցւոյ) աշակերտի⁽²⁾ . . : զՀրաման հարկի ընդունոյ՞ իմոյ հրաշալի , և զվարդապետաց պետի , քաջ փաղերայի Գէորգ վարժապետի , Թորգոմեան տոհմի և Հայկազեան սեռի , մանաւանդ Եկեղեցացս գաւառի , և Դարանաղեացս նահանգի . ընկալայ սիրով հնազանդ ծառայս և աշակերտս Յակոբս Ղրիմեցի , և ներգեւեալս ոգի⁽³⁾ :

Տար. — Փիր Ստեփաննոս վարդապետ որ էր յերկրէն Ռշտունեաց ի գեղջէն Բախվանից , և էր սա յաշակերտաց Յովհաննու Որոտնեցւոյ Կախիկ մականուանելոյ , սա ի Թուականութեան Հայկազեան տօմարիս ՊԿԱ ամի ի Թագաւորութեան Թաղթին (Պարսից աթոռոյն) Ղարայ Յուսուփին և ի կողմնապետութեան մերոյ աշխարհիս Ամիր Էզդնին և որդւոյն իւրոյ Մելիքին : որ էր յոյժ խընամածու և բարեկամ քրիստոնէից . և ի կաթուղիկոսութեան մերոյ վիճակիս տեառն Դաւթի . սա (Ստեփաննոս վարդապետ) խորհրդակից և գործակից ինքեան արարեալ կրօնաւորս աստուածասէրս , որոց անուանք յորջորջեալ կոչին Մկրտիչ և Կիրակոս , Յովանէս և Յոհաննէս , Սիմէօն և Գրիգոր , և եկեալ ի մեծահաջակ Թագաւորաշէն ուխտս , որ կոչի Սուրբ Յակոբ , որ էր ի բազում ժամանակաց աւերակ լեալ և անմարդաբնակ իբր երկու հարիւր ամաց հետէ , և սկիզբն առնէ շինութեան տեղւոյս . . և շինեն զվանքս ծագէ ի ծագ . նորոգեն կրղմնդրաշէն և կրամած զՍուրբ Յակոբայ գումբէթս , որոյ ճարտարապետ և շինող էին սրբասէր կրօնաւորքն Գրիգորն և Յոհաննէսն . որք մաքրական վարուք զկրնի ամաց ինչ անցելոց փոխեցան յաշխարհէս :

Ի Կաթուղիկոսութեան Մեծոփեցւոյ Թագաւորի
Ժամանակից պարմաբրի Աղեմարցաոյ :

[1] Այն է Գէորգ Եզնկացի մեծ վարդապետն Հայոց . սա արար ըստ առաջ բերիլոյ Չամչեան Գ. հատ. էջ 452 զլուծմունս գրոց Աստուածաբանին որ ասի Առորս . եւս և քարոզս պէսպէս և այլն . և մինչ ՊԿԱ. 1394 ամի յԵզնկայ էր լանկթամուրն և հրամայեաց զեկեղեցիս կործանել . սա գնաց ինդրել ի բունաւորէն չառնել զայն եղեռն , և այլն Չամչեան Գ. 426 :

[2] Սա արար զլուծմունս կաղմութեան մարդոյ , և զԱզգագրութիւն ի ինդրոյ Թովմայի Մեծոփեցւոյ , և զՄեկնութիւն տումարի : Չամչ. Գ. 452. և 453 :

[3] Սոյն հատուած անթուական էր , և ընդ 37 թիւ Ոսկեփորի կազմեալ էր :

1413. — ՊԿԲ .

Տար. — Սամուէլ արեղայ գրէ զԿաթուղիկեաց Մեկնութիւն յեկեղեաց գաւառի ի Հայրապետութեան Տեառն Գրիգորի :

յԷջ. 107.

Յովհաննէս գրիչ Եզնկացի գրէ զՄեկնութիւն Սաղմոսաց մեծին Գրիգորի Տաթեւացւոյն ի Թվ. ՊԿԲ :

յԷջ. 107.

Ղարա Յուսուֆն յետ առման Բաղդատայ , և յետ խեղդամահ սպանման ամիրայի տեղոյն Ահմէտ Սանի . գայ ի Հայս և բընակի ի Վաղարշակերտ (Ալաշկերտ) ի Բագրեւանդ գաւառի :

Չմ. Գ. 458.

Թիւ 39 . ի քարոզ գրքէ Տաթեւացւոյն .

Յէշ. — Փառք համագոյ . Սուրբ Երրորդութեան . և Եւարդ ես . վերջինս ի մանկունս եկեղեցւոյ . Յովհաննէս պիտակ անուամբ սպասաւոր բանի , գծեցի ձեռամբ իմով զգիրս սուրբրս յիշատակ ինձ և ծնողաց իմոց , հօրն իմոյ Ալեքսան քահանայի , և մօրն իմոյ (անուն չէր գրեալ) և հաւուն իմոյ Յովանէս քահանայի , և եղբարց իմոց ըստ մարմնոյ Յակոբի և Պետրոսի կուսակրօն քահանայից : Բայց գրեցաւ (սա) ի ՊԿԲ ամի . յաստուածապահ և մեծափառ և գերահազակ ուխտն . որ Սուրբ Սաչ յորջորջի , ի գաւառիս Հիզան քաղաքի : Եւ կամք մեք ընդ հովանեաւ ամենազօր Աջոյ ձեռին Աստուծոյ և պահպանութեամբ աստուածընկալ Սուրբ Սաչիս Քրիստոսի : Նաեւ զյիշատակի արժանաւորսն զհոգեւոր հարքն մեր՝ զՅովաննէս և զԿիրակոս բարունիք , որ էին մեզ տածողք հոգեպէս և մարմնապէս . և վարժիչք Աստուածային պատուիրանացն՝ բարեաց յիշման ի Տէր արժանի առնել : Այլ և զմերս միաբան եղբարքս , որք կան հաւաքեալ ընդ հովանեաւ Սուրբ Սաչիս , կուսակրօն և սրբասնեալ եղբարքս մեր . նախ և առաջին գրոց որդիքս , Աւետիս , Բարսեղ և ապա այլքն ամենեքեան , Ներսէս , Պետրոս . Յակոբ , Գրիգոր , Յովհաննէս , Ստեփաննոս , Յոհաննէս , Մարտիրոս , Առաքել , Դաւիթ , Յակոբ⁽¹⁾ :

[1] Ի նմին ժամանակի Հիզնայ Սուրբ Սաչի ուխտն էր ձօխ և ի պարգաւած վիճակի որպէս ցուցանէ ի վերոյիշեալ անուանց ցանկէն : Իսկ ներկայս մի եւեթ

Եւ հանգուցեալքն Կիրակոս կրօնաւորն , և Յովաննէս միակեցն , և աշակերտն մեր Գրիգոր , որ յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս Աստուած : Նաեւ այլ միաբանք , որ կան ի դուռն սուրբ եկեղեցւոյս մեծաւ յուսով , և սպասեն անճառ խոստմանցն Աստուծոյ . . . : Նաեւ Կիրակոս Շիրինի որդին ի Տիոյ(1) . և իւր կողակիցն Նազխաթունն . որ օգնական եղեն ի սուրբ գիրս : Գծագրեցաւ սուրբ մատեանս ի դառն և ի բազմավրդով ժամանակիս , որ մահտարածամէ անկեալ վասն մեղաց մերոց յաստուածասաստ բարկութենէն . և կոծոպէ և յափշտակէ զմատաղ մանկունս ի գրկաց ծընողացն , և մորմոքեցուցանէ զծնողս և զեղբարս , ի թուականին ՊԿԲ :

Ի սկիզբն Աւետեաց քարոզին .

Զյետինս ի շարս բանասիրաց զՅովաննէս գրիչ պիտակ անուամբ և զծնողսն իմ և զեղբարսն . . . : Եւ զՄկրտիչ կրօնաւոր առաջնորդ սուրբ ուխտիս . (Հիզնայ Սուրբ Սաչի վանից) , որ զնամակս շնորհեաց և զծնողսն իւր պատահողք սմա ինչ կերպիւ և իցէ , յիշման արժանի առնէք . և Աստուած զձեզ յիշէ . ՊԿ . Թվ . սկսաք (ի գրել) Աստուծով :

Ի վերջ Մկրտութեան քարոզին .

Զերջանիկ և զփառաւորեալ բարունիք մեր զՅովաննէս և զԿիրակոս զվերափոխեցեալսն ի Քրիստոս ուղիղ հաւատով , և զնոցին ծնողսն և զիս զանարժան գծողս , յիշման արժանի առնէք ի բարին Քրիստոս , և Աստուած զձեզ յիշէ :

Ի վերջ քարոզին Յորայ .

Զառաջնորդ սուրբ ուխտիս զՄկրտիչ կրօնաւոր և զծնողսն իւր , և զհոգեւոր եղբարքս մեր և զորդիքս , զԲարսեղ , զԱւետիս , զՆերսէս , զԱտոմ , զՊետրոս , զՅոհաննէս , զՍտեփաննոս , զԳրիգոր , զՅակոբ , զՄարտիրոս , զՅոհաննէս , զԱռաքել կրօնաւորք . և զայլ միեղէն միաբան եղբարքս . և զծնողք նոցին առ հասարակ : Եւ զյետնեալս ի շարս բանասիրաց զՅոհաննէս ծրողս և զեղբարսն և

վարդապետիւ կառավարի , որ է ի միաբանութենէն Աղթամարոյ . Սահակ անուամբ :

[1] Գիւղ ի Հիզան , ՅՊ տամբ մերձ ի գիւղն Բարս . որ կայ կանգուն մինչեւ ցոյսօր ժամանակի :

զծնողսն մեր, պատահողք սմին ինչ կերպիւ և լինի, յիշեցոյ արժանի առնէք . . .

1881 յուլ. 6 է Բողեշ Արքեպիսկոպոսի յառաջին Առաջ. Տեղապահ Արեւմտեան Լորդապետի Տեղեանց Վանեցոյ .

1414. — ՊԿԳ .

Տար. — Ստեփաննոս եպիսկոպոս յերկրին Հիզնայ, ի հռչակաւոր ուխտան Սուրբ Խաչի, օրինակէ զԲարող գիրս Մեծին Գրիգորի Տաթեւացոյ :

Ելեւթին :

Ղարայ Յուսուֆն դրդմամբ Պարսից գնացեալ յԱխլցիսա քաղաք զօրօք իւրովք որ կայ ընդ իշխանութեամբ Վրաց, յաշխարհին Տայոց . և առեալ զքաղաքն, գործեն բազում արեան ճապաղիս ի նմա . և յովով գերութեամբ դառնան ի տեղիս իւրեանց : Ըստ Թովմայի Մեծոփեցոյ :

Թիւ 40 . յԱւետարանէ .

Յիշ. — Յետին ստացողի Յովաննէս անարժան քահանայի . . . Թվին ՊԿԳ : Եւ արդ ես Խնդուբէկ դերձակս ի յնստան քաղաքի գնեցի ի քրդէ, զի էր գերի բերած . յիշատակ ինձ . . . յետոյ տէրն (Յոհաննէս քահանայն) եկն և գտաւ առիս, և իմ յօժար սրտիւն ի տէրն տուի . որ յիւր սուրբ աղօթքն յիշեացէ զիս . . .

1866 է Նոյ. 7 երկուշաբթի է Սուրբ Անտան Աղեմաբոյ, է կաթողիկոսական իեան կղզոյն Գ. Խաչարբոյ :

1415. — ՊԿԴ .

Թիւ 41 . Ճառընտիրէ .

Յիշ. — Փառք եղակի անճառելոյ . . . Եւ արդ ես անպատուս ի բարեաց . . . Ստեփաննոս (քահանայ) գրիչս⁽¹⁾, տեսի զսէր և զվատ-

[1] 23 թիւ Տօնական, 24 թիւ Ճառընտիր, և 35 թիւ Յայտնաւորն եւս սոյն բեղմնաւոր գրիչ արժանայիշատակ քահանայն գրեալ է, տես ի վերոյ :

փառք բարի ծառային Քրիստոսի Ստեփաննոսի, և իմ տկար անձամբս յանձն առի և ամենակարող զօրութեամբն Աստուծոյ կատարեցի զՍուրբ Գիրքս ի դառն ժամանակիս . յորում էր թիւս Հայոց ՊԿԴ : Եւ արդ՝ գրեցաւ սա ի գեաւղս որ կոչի Տշող . ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Ստեփաննոսիս, և Սուրբ Սիօնիս, և Սուրբ Կիրակոսիս և այլ սրբոց առ հասարակ, Ստեփաննոս քահանայ (գրիչս) յիշման արժանի առնէք, և զծնողսրն իմ . . (Գրիգոր քահանայ) և զհօր եղբայրն մեր Մարտիրոս կըրօնաւորն . . . որ մարտիրոսացաւ . . (Պէ 1358 ամի) և զօրինակի տուողքն զՅովհաննէս փիլիսոփայն զսրբասէր քահանայն, և զՊօղոս քահանայ . . :

1865 դեկ. 14 երեգոթի է շուք Վանայ է կրոնոց կղզի, է Սուրբ Կորապետ . է Վանահայրաբեան Մելիթեան Պօղոս Վարդապետի :

Թիւ 42 . Ի Յոյսմաւուրէ :

Փառք հզօրի անմահի . . Արդ՝ գրեցաւ աստուածապատում տառս ի գեղս որ կոչի Իւոյ վանք . ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս . . ձեռամբ Ղազար գրչի . ի խնդրոյ տանուտէր Յոհաննու . ի հայրապետութեան (Աղթամարայ) Տէր Դաւթի . . ի թուականիս Հայոց, ՊԿԴ . ի ժամանակիս զանութեան Ղարայ Ուսուֆիս . ի յամիրութեան⁽¹⁾ Եզդինչէրին, և որդւոյ իւր Մելիթին : Եւ կատուք զսա նուէր և ընծայ ի դուռն Սուրբ Յակոբայ⁽²⁾ և Սուրբ Աստուածածնին, և Յոհանայ (Յոհաննու) որ ի տեղն կենայ :

1867 յունիս 15 կերէ է Վան . է գիւղն Բեւու . որ կոչ է ծայրն արեւորեան Ուլտանեայ գաւառին է հարաւային կառն . է սին սի, սին կէ անդ է Բեւու, կոյր անդ յեկեղեցւոյ գեղն է Սեճ արեւ ի յերագիւր հարեան . և ապա ըստ պարտաբեան Տեւման Արեւորակն Վարդապետի որ գնացեալ էր անդ զին է յամի 1881, և բոց է ի Յոյսմաւուր հարեան զայլ յերագիւր շեր արեւու անդ . Ասոց Սեճի կըրչորեան :

Թիւ 43 . յԱւետարանէ :

Եւ արդ ես մեղուցեալ Մերուն սոսկ անուամբ արեղայս, որ ի նարդեան ժամանակիս Հէրպետ կոչիմ . . հռչակաւ որ մենաստա-

[1] Երկրին Ռշտունեայ և քաղաքին Ռստանայ :
 [2] Ըստ Մինասենց թովմոյ տարեգիր վարդապետին Աղթամարցւոյ, նորոգեաց զսոյն ուխտն ի դարաւոր ամայութենէն ի ՊԿԱ ամի . արժանայիշատակ Փիր Ստեփաննոս վարդապետն, վանահայրն կապուտկոզայ . տես ի ՊԿԱ ամի զրանս նոյն թովմոյի :

նիս՝ Սուրբ Վարդանայ զօրավարիս⁽¹⁾ . և հարազատ եղբայրն իմ
Թումայ վաճառական⁽²⁾ . որ ստացողն է Սուրբ Աւետարանիս ,
տուարք զսա ընծայ և նուէր ի յանուանի դեօղս Գաւաշ⁽³⁾ . սուրբ
տաճարաց Ամենափրկչին և Սուրբ Կիրակոսին . . . Այլ և զպատ-
ուական կրօնաւորքս յիշեցէք ի Քրիստոս զհարքս մեր և զեղբար-
քս որք են միարանք և սպասաւորք հրեշտակարնակ սուրբ ուխ-
տիս , Սուրբ Վարդանայ զօրավարիս . . . ծերունի հայրս մեր պատ-
ուական Տէր Թումայ . . . և ի սորա առաջնորդութիւնս շատ ար-
դիւնք յաւելցաւ վանացն . . . Մկրտիչ մահաւեսին և Ստեփաննոս
սրբահոգին , Բարսեղ և Վարդան , և ես Ծերունս տրուպ քան զա-
մենեսեան , և սպասաւոր սոցին : Արդ՝ ի հէրպետութեան Տէր Թու-
մային . մեր ամենեցուն օգնականութեամբս , և կամօք աստուա-
ծասէր տանուտէրացս՝ որք կան այժմ՝ կենդանի . Մանկասարենց
Թումայն , և Հիւս Կիրակոսն՝ Խոջայ Ստեփաննոսն և Յիթկաց Կի-
րակոս , և Ռէս Աղուպչէն . . . սոցա և մեր ամենեցուն կամօքս և
օգնականութեամբս , և տրօք և ողորմութեամբ քրիստոնէից , և
յորդորմամբ Սուրբ և Աստուածարան վարդապետացն Յակոբայ⁽⁴⁾ .
և Յովաննէս Պուտրլկեցւոյ⁽⁵⁾ . շինեցաւ ի հիմանց Սուրբ Վարդան
զօրավարի գումբէթաձեւ և երկնանման տաճարն ի հէրպետու-
թեան վանիցն Թումայ արեղային , և ի դանութեան Ղարայ Յու-
սուֆին , և յամիրապետութեան Ոստան քաղաքի Ամիր էգդնին ,
և որդւոյն իւրոյ Մէլիք Մահմատին , կտրվաւ (հաստատեցաւ) և
նոյն իսկ Թումայ վանից հօր ձեռօք նաջրադնի վեցքու⁽⁶⁾ հողն
արտ՝ ամիրաց մլքաթղթովն և նշանովն , Սուրբ Վարդանայ մուլք
(սեպհականութիւն) գնուաւ . և կաթողիկոսենց արտերն , և Պէշ-
գենի դրախտն . . շինեցաւ և ձիթահանքն ի Գաւաշ գեաւղս :

[1] Ապավանք կոչեցեալ ի մէջ Աշտուենեաց , որ է այժմ անբնակ , և կայ
շինեալ ի գլուխ բարձր բլրոյ միոյ յարեւելից կուսէն ուխտին Նարեկայ , և հայել
ի բարձրութենէ անտի իւրոյ ի վերայ ծիծաղախիտ ալեաց ծովուն Բզնունեաց :

[2] Երանի թէ արժանայիշատակ Ծերուն արեղայն զիւր հարազատ եղբօրէ
Թումայ վաճառականէ , աւելի ընդարձակ տեղեկութիւն գրէր :

[3] Այս երեւելի գեղջս շայժմ հոգակոյտք աւերակաց միայն տեսանին յերթ
և եկող ճանապարհորդացն . իսկ գաւառն Աշտուենեաց ի դարաւոր ամաց հետէ
անուամբ խոպանացեալ գեղջս կոյ մկրտեալ ի յեանոցն Գաւաշ յորջորջմամբ :

[4] Է սա Յակոբ Ալսաննացին ի Աշտուենեաց յուխտէն Անձղնապատի , նահա-
տակ , զոր յիշէ Թովմա պատմագիրն Մեծօփեցի . ի թղթ . 43. 52 և 61 :

[5] Վերջինս մի քանի լու գանձ ունի ասացեալ , զՊուտրլկ վանքն յիշէ
Թովմայ Մեծօփեցին ի թղթ . 44 :

[6] Զոյգ եղամբ ամուլի անուն է :

Այսքան բարութիւնքս և առաւել քան զսոյն, կամօք և օգնականութեամբ Գաւաշից Աստուածասէր տանուտէրացն և. . . (Թուղթ պակաս էր .

1866 Նայ. 8 յԱղետար էղղին :

1416 . — ՊԿԵ .

Տար .— Իսկ յաճախել մեղաց ատին ,
Մարդկան ազգիս քրիստոնէին .
Եղեւ գնալ Սան (Ղարայ) Ուսուֆին ,
ՅԱխլժիսէ քաղաք Վրացին .
Արար զազայ և գերութիւն ,
Անթիւ վասս
Այս էր ի թիւ ութ հարիւրին ,
Այլ և վաթսուն և հինգ ամին .
Իսկ զգերիան զոր առին ,
Յօտար երկիր վտարեցին .

Ի շուրճերսն իսլամեցի Ծեբեց Գրեթու Լարուպետի

Գրիգոր գրիչ ի մենաստանին Կափոսի (յնզնկայ) ընդ հովանեաւ Սրբոյն Յակոբայ սքանչելագործ հայրապետի , գրէ զՔարոզ գիրս մեծին Տաթեւացւոյ :

Մովսէս գրիչ ի վանս Տաթեւու գրէ զմեկնութիւն Մատթէոսի Աւետարանչին :

Նոյնպէս և Ծերուկ գրիչ զԺողովածու մի ի Կտուց Անաստատ :
յնզնեմն :

Ի վարուց Յիմար վկայուհւոյն .

Երանելի կինս այս Յիմար էր ի քաղաքէն Վանայ , յորժամ առաւ Վան ի զօրաց Լանկթամուրայ , սպանաւ ընդ այլ բազմութեան մարդկան և այրն Յիմարայ , և նա մնաց անայցեղու և անտէր , ապա հանդիպեալ նմա քուրդ ոմն , ասէ եկն ի տուն իմ և ծառայեա ինձ . և կերակրեսցիս ընդ ընտանիսն իմ : Եւ ի մեռանել կնոջ այլազգւոյն՝ Յիմարն եղեւ նմա կին . յորմէ և եղեն որ-

դիք քանի մի : իսկ ազգականք Քրդոյն ստիպէին զնա դարձուցանել զՅիմարն ի հաւատոց . այլ նա ասէ ես ի նա հաւան եմ . նա զիւր հաւատն պաշտէ՝ և ես զիմ . բայց նոքա ոչ անսացեալ նմա կալան զՅիմար և բռնադատէին ուրանալ զհաւատս իւր : Ասէ ցնոսա կինն . ես զՔրիստոս ոչ ուրանամ . զի նա է Աստուած իմ և Փրկիչ իմ . . . Եւ ապա զղջացաւ կինն այն և գնաց ի Մակու (յԱրտաղ գաւառի) վասն զՔրիստոս համարձակ պաշտելոյ . զի տեղին ընդ իշխանութեամբ քրիստոնէից էր յայնմ ժամանակի⁽¹⁾ : Եւ լուեալ անդ թէ ո՛ւր կարծիք ուրացութեան լինի , անդ և հաստատութիւն հաւատոցն երեւեսցի . վասն որոյ և դարձեալ ի Մակուայ եկն ի վան քաղաք առ քուրդ այրն իւր և ստէպ երթայր յեկեղեցին . . . Եւ նոքա եւս ի բարկութիւն շարժեալ ասեն . վասն է՞ր երթաս յեկեղեցին . ասէ Յիմարն որ զերեք քարինսն որ յաղօթարանն ձգեսցի ես , ի կառափս իմ առնում : Յայնժամ եհար Մուղրին զգլուխ նորա , և նա ասաց ի հետս եկէք և ի տեղի սերեւելիս քարկոծեսցէք զիս . և Մուղրին այն ձայն տուեալ որոց մերձ կային ի Քարափոսն⁽²⁾ . և գրոհ տուեալ ի հետ գնացին . և զկինն ի տեղին քարկոծեսցին . և նա բերկրալից սրտիւ իբրեւ զվարդս ընդունելով յինքն զքարինս , և օրհնելով զՔրիստոս Աստուած աւանդեաց զհոգին : Գործեցաւ այս ի թվականիս Հայոց , ՊԿԵ . ի փետրվարի ժն :

Է Յեռոֆիլ Եպիսկոպոս :

.....

Թիւ 44. ի Հարանց վարուց .

Արդ եղեւ զրաւ գրչութեանս ի թուին Հայոց , ՊԿԵ . յաշխարհս Հոնաց . որ կոչի այժմ Ղրիմ . ի վանս որ է անուն Սուրբ Լուսաւորչին . ի հայրապետութեան Տեառն Պօղոսի⁽¹⁾ . և Արհի ե-

[1] Էր որջ Հայ անբարիշտ Ունիթոսաց , զոր յիշէ Թովմայ Մեծոփեցին ի թղթ . 68. և 83 վասն Սուրղաթմիշ անուն իշխանին Մակուայ , ասելով թէ «Եւ զտէրն Մակուայ հանին զօրքն Լուսի Թամուրայ ի սուտ և յերկարնակ աղթարմայութենէն .»

[2] Կայ գիւղս առընթեր բերդին վանայ . յարեւելից կուսէ Աւանց աւանին :

[3] Զամչեան երկու տարի յետոյ դնէ զկաթուղիկոսութեան թիւն սորին :

պիսկոսոսութեան ամենայն Հիւսիսայնոցս . Տէր Կիւրղի , ձեռամբ
անարժան և պիտակ անուն կրօնաւորի Յակոբ մեղապարտի . . .

1865 թուար. 14. է կրօն .

Թիւ 45 . ի Գանձարանէ .

Որք նուագէք զգանձս Աստուածային անուշաձայն եղանա-
կաւ , առ դրան Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Սարգսի զօրա-
վարիս . Յիշեցէք . . . գրիչս Յովհաննէս . . . քահանայ . հօրն իմ
(գրչին) Մկրտիչ քահանային . . . այս է առաջին գիրն . զոր գրեցի
ի Թուահանիս Հայոց ՊԿԵ :

1881 թեր. 25 է վարագ . է լան-հայրու թեան Կիւրղի . խրատան
Տեւ Մերէւ Ար+ Եղի-Կոստ , որ է 1857 տնայ հերթի Կիւրղի
նշանարի :

Թիւ 46 . յԱւետարանէ .

Փառք ներող արդարութեան Աստուծոյ . . . Արդ գրեցաւ սա
ձեռամբ Յովհաննէս սուտ անուն քահանայի . . . ի մեծափառ և ի
գերահրաշ աստուածակոխ քաղաքս Երուսաղէմ . ի Թուահանիս
Հայոց ՊԿԵ . ի մէջ Յարութեանս , ի դուռն Սուրբ Գերեզմանիս , և
ընդ հովանեաւ Սուրբ Գողգոթայի⁽¹⁾ . և այլ անօրինականացս Քր-
իստոսի Աստուծոյ մերոյ : Դարձեալ ես նուաստս ի բանասիրաց և
վերջինս ի վարդապետաց , Կարապետ կարօտ բանի⁽²⁾ փափաղող
էի Աստուածաբնակ քաղաքին Երուսաղէմի , որ բազում անգամ
ջանայի գնալ և ոչ յաջողէր . . . զի բուն էր հարկապահանջու-
թիւն Ղարայ Ուսուֆ Սանին ի վերայ մեր . . . և ի միւսում տա-
րին գութ մարմնական ծնողաց նեղեաց զմեզ , և բնական աշխար-
հի սովորութիւն . և խնդրեցաք յԱստուծոյ հասուցանել զմեզ
(յերուսաղէմէ) յերկիրս Քաջրերունի ի վանքս Սուխարայ , որ այ-
ժրմ Սառաբաստայ վանք կոչի⁽³⁾ . ընդ հովանեաւ Սուրբ Աստուա-

[1] Ի սմին ժամանակի դեռ Գողգոթայն կայր ի ձեռս Հայոց , և չէին առ-
կալ վերջն զայն ի մէջ :

[2] Էր սա եղբորորդի Չաքեոս եպիսկոպոսին , վանահօրն Խառաբաստայ ուխ-
տին , որ կայ յերկրին Քաջրերունեաց և անուն սորին Կարապետի յիշի ի ՊԵՂ .
ամի յարձանագրութեան նոյն ուխտին . տես ի վերայ զայն արձանագիրն :

[3] Չէ հեռի Խառաբաստա աւերակ գիւղաքաղաքն ի Սուխարայ վանից , որ
այժմ Արժուարեք կոչի ի բնակչաց գաւառին :

ճածնի տաճարիս : Եւ տեսեալ իմ զՍուրբ Աւետարանս ի յերուսաղէմ . քրեալ ձեռամբ Յոհաննէս կրօնաւորին որ փակեալ էր Աստուածային Սուրբ գերեզմանին , և ջահալառ Սուրբ Գողգոթային . և գրեալ ի մէջ Սուրբ Յարութեան . վասն որոյ ցանկացող եղէ ես կարապետ վարդապետս⁽¹⁾ . զի յայն աւուրն էր գըրեալ զԱւետարանս , որ Աստուածային խորհուրդ մատուցեալ էր ի Սուրբ Գողգոթայ . և գնեցի զսա ի հալալ վաստակոց իմոց . յիշատակ ինձ և ծնողաց իմոց , հօր եղբօրն իմում տէր Զաքէոսի⁽²⁾ . . . Եւ դառնալն իմում ոչ եղէ արժանի տեսանել զեղբայրն իմ զՅոհաննէս (արեղայն) , զի փոխեալ էր առ Քրիստոս , ի չար և ի դառըն ժամանակիս , որ վերջացեալ էր Ղարայ Ուսուֆն Եւ իմ այրեցեալ սրտիւ նուիրեցի զՍուրբ Աւետարանս դռան Սուրբ Աստուածածնի տաճարիս . . . Եւ զիս զՀայրապետ կազմողս յիշեցէք ի Քրիստոս . ի թուականութեան Հայոց ՊՀ :

1866 , յերեւելի Արժեւ . ի վնս Արշաքեի Սուրբ Աստուածածնի :

1417 . — ՊԿԶ .

Տար . — Եւ միւս ամին Օթմանն՝ տէր Ամթայ , էառ զերզնկայ , և զՓիր Օմարն սպան :

Մէջ . ԲՊ . 78 :

Թիւ 47 . ի Մաշտոցէ .

Յիշ . — Փառք եղակի անճառելոյ . . . յիշեցէք . . . զՍտեփաննոս . . . քահանայնոր գրեցի զսա⁽³⁾ , և զհայրն իմ զԳրիգոր քահանայ , և զմայրն (իմ) . զԽութլումէլիք , զհօրեղբայրն (իմ) զՄարտիրոս կրօնաւորն՝ որ . . . մարտիրոսացաւ⁽⁴⁾ . և զհարազատ եղբարսն իմ զՅովհաննէս և զԱռաքել սրբասէր քահանայք⁽⁵⁾ . գրեցաւ ի գեաւ-

[1] Սա զկնի մահուան հօր եղբօրն իւրոյ Զաքէոս եպիսկոպոսին , յաջորդեալ էր նմա ի վանահայրութեան պաշտօնի :

[2] Զայս Զաքէոս եպիսկոպոսն յիշէ Թովմայ Մեծոփեցին . ի թղթ . 35 . և 37 :

[3] Թիւ 23 , 24 , 38 և 44 մատենից նշանաւոր և ոսկեշար գրիչն է :

[4] Տես ի վերոյ 23 թիւ Տօնականի ծանօթութիւն վասն սորա :

[5] Ի թիւն 23 Ստեփաննոս քահանայ ճարտար գրիչս այս , վասն եղբարոյ իւրոց կոչէ յանաւանէ Քօչպէկ և Առաքել , մինչդեռ էին սարկաւազ . իսկ զկնի ձեռնագրութեան զՔօչքէկն փոխեալ են ի Յոհաննէս , որ եղին յետ հօր և հաւուն իւրեանց Գրիգորի և Ստեփաննոսի , երեւելի նօտարք ի դարուն յայնմիկ :

ղըս, որ կոչի Տշող. ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և Սուրբ Սիոնին և Սուրբ Կիրակոսին և Սուրբ Ստեփաննոս Նախավկայի⁽¹⁾, ի հայրապետութեան (Աղթամարայ) Տէր Դաւթի. յոր էր թիւս ՊԿԶ. ի խնդրոյ կոչկակար բարեպաշտ Թովմայի:

1866. յԱղթամար:

Թիւ 48. յԱւետարանէ.

Փառք անակղբանն . . . և ողորմութեամբ նորին կատարեցաւ Սուրբ Աւետարանս, ի յերկիրս Ջերմածորոյ⁽²⁾, ի վանքս Ակոռոյ. ընդ հովանեաւ Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, յիշատակ ինձ (գրչիս Յոհաննու) և եղբօրն իմոյ Մարտիրոս քահանային . . . Արդ գրեցաւ Սուրբ Աւետարանս ի լաւ և յընտիր օրինակէ ի թուարեւորութեանս Հայկազեան տումարի. ՊԿԶ. ի հայրապետութեան Հայոց (մասին Աղթամարայ) Տէր Դաւթի:

1866. Կայս. 13. է վ. ան. է Սուրբ Սահակ Եկեղեցի. յաստի Կահանայութեան արժանայիշատակ Տէր Թովմայ:

Թիւ 49. յԱւետարանէ.

Այլ և գրեցաւ սա ձեռամբ . . . գրչի Յովհաննիսի. ի քաղաքս Հիզան կոչեցեալ. ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի, և Սրբոյն Սարգսի զօրավարի, և Սրբոյն Գէորգեայ՝ որ է սակաւ մի հեռի, կենօք տառապանօք և բազում պանդխտութեամբ. ի թուականիս Հայոց, ՊԿԶ. և ի մերոյ հայրապետութեան Տեառն Դաւթի Աղթամարցւոյ, (որ է) հեղահոգի և հացատու ամենայնի. և բարի ընդդէմ չար հատուցանողաց . . .

Ի նոյն Յովհաննէս գրչէ եղերգ՝.

Ի յիշատակ մերոյ բանիս,

Պարտիմք խառնել զբան աղէտիս.

Թէ որպէս յայժմ . . . դառնա . . . իս . . .

Եղբայրն եհան եղբօրն ի վի . . . (այս քանի բառք մաշեալ էին).

[1] 1887 յՕգոստոս ամսոյ մինչ ընդ Սրսէն վարդապետի Թօխմախեան Գր. նացաք ի Մոկս. մի գիշեր օթեցաք սոյն Տշող գիւղն. և միայն Սուրբ Աստուածածնի քարուկիր եկեղեցին էր ի գործածութեան:

[2] Թովմայ Արծրունին ի թղթ. 314 զայս Ջերմածորն կացուցանէ մասն երկրին Մոկաց, ասելով այսպէս. «Եւ տուեալ (Գուրգէն եղբօրն իւրոյ) Գաղկայ «Վասպուրական իշխանի զբերդսն Ագարակայ և զգաւառն ճախուկ, ասնու «զբերդն Զուէլ, և զգաւառն կոչեցեալ Ջերմածոր, որ է մասն երկրին Մոկաց»:

Զարիւն ջուր եցոյց վա՛յ զիս :
 Ուստի և նոյն չար յայս տարիս .
 Տարածեցաւ ի յօր վերջինս ,
 Յարոյց սոյն չար մերոյ ազգիս .
 Զյետինս չար քան զառաջինս .
 Վկայելով Պօղոս բանիս .
 Թէ վիշտ յազգէ եհասս առիս :

.....

1869. է վ. և . է Սուրբ Նշան էիւն

Թիւ 50 . ի Շարականէ .

Փառք անհաս վեհի . . : Արդ գրեցաւ գիրքս այս՝ որ կոչի Շարականոց ի թուականութեանս Հայկազեան ՊԿԶ. ամի . ի սուրբ ուխտըս Հաղթատայ , ընդ հովանեաւ Սուրբ Նշանիս և Սուրբ Կաթողիկէիս և Սուրբ Գերեզմանիս Սարկարազ վարդապետիս⁽¹⁾ . և Շուշանայ սուրբ վկային⁽²⁾ . ի վարդապետութեան մեծ բարունոյս և քաջ Հռետորիս Յովհաննէս վարդապետիս . ի յառաջնորդութեան Տէր Զաքարէի , ձեռամբ փծուն գրչի Մարտիրոսի սուտ անուն արեղայի . ի վայելս անձին . և յետ մահուն յիշատակ հոգւոյ կրկին ծնողաց և եղբարց . . յիշեցէք . . և զհօր եղբայրն իմ (գրչին) զՏէր Յունան . զհայրն իմ զՍոցատեղ , և զմայրն իմ զՍոնդիկ , զեղբայրրն իմ զՍարգիս և զամուսինն զՄամքան և զաւական իւրեանց . զքոյրն իմ զՈւստիանէ . որ միամտութեամբ սպասաւորեաց մեզ . . :

1877. Նոյմ. 24. յԱնգղիս է Լոնդոնի ճոխ Թանգարան , — Բնացեալ էի հովտական այցելութեամբ է Մանչեսթըր վանքաւանդ Կաթողիկէ :

Թիւ 51 . ի Քարոզ գրքէ .

Օրհնութիւն . . Ամենասուրբ Երրորդութեան . . ի թուականութեանս . . ՊԿԶ. ի հայրապետութեան տեսուն Դաւթի . Եւ թագաւորութեան . . , Ղարայ Յուսուֆի
 Իսկ յիշխանութեան գաւառիս մերոյ Մելիք Մահմատի : Լաւ սրա-

[1] Այն է մեծ բարունապետն Յովհաննէս Սարկաւազ , որ վախճանեցաւ ՇՀԹ. թվ. և թաղեցաւ ի Հաղթատ ըստ պատմութեանց Սամուէլի , Վարդանայ և Արապի :
 [2] Եթէ չէ դուստր Մեծին Վարդանայ քաջ զօրավարին . . . է այլ ոմն Շուշան որ մնաց առ այժմ անճանաչ ի նուտտէս :

հէ զմեզ⁽¹⁾ . Աստուած զինքն հետ իւր առաջնորդին դասէ . ամէն :
 Արդ աւարտեցաւ սուրբ տառս զոր արարեալ է եռամեծին Գրի-
 գորի , (Տաթեւացոյ) , քաջ Հռետորի և անյաղթ փիլիսոփայի : Գը-
 րեցաւ ի վանս Նարեկայ⁽²⁾ . Ընդ հովանեաւ Սրբոյն Վարդանայ զօ-
 րավարին : Եւ աւարտեցաւ ի մեծ և հռչակաւոր սուրբ ուխտս ,
 Սուրբ Յակոբ⁽³⁾ . Ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի , և Սուրբ
 Յոհաննէս Աւետարանչիս և Սուրբ Յակոբ Հայրապետիս և Սուրբ
 Երից Մանկանց : Առ Սուրբ Աղբերս զոր բղխեաց (բղխեցոյց) Սուրբն
 Յակոբ⁽⁴⁾ . ձեռամբ գրչի Աստուածատուր կրօնաւորի :

Մարտն է այժմ է Մայ 10 . կարգեալ . ըստ պարտաւիտեան Արեւն Վարդապետի :

Թիւ 53 . Ոսկեփորէ .

Փառք . : Աւարտեցաւ ճառս որ կոչի Ոսկեփորիկ . ի վանքս
 Յիպնայ . Ընդ հովանեաւ Կաթողիկէիս Սուրբ Ստեփաննոսի⁽⁵⁾ . և
 Սուրբ Նշանիս Վասիլ Թագաւորի . . ի Թուականութեան Հայոց
 ՊԿԶ . ի Ղանութեան (Ղարայ) Ուսուֆին , և ի կաթողիկոսու-
 թեան Աբսայ Գրիգորի , և յԱղթամարայ կաթողիկոսութեան Տէր
 Դաւթի , ի չար և ի դառն ժամանակի . . . առ ոտս մեծ բա-
 բունապետիս մերոյ Գրիգորի , սր մականունն Ծերեկնց կոչի⁽⁶⁾ : Սա
 բազում աշխատութեամբ ուսոյց ինձ զգիրս . . :

Սոյն Ոսկեփոր գիրտ , ըստ պարտաւիտեան Արեւն Վարդապետի Թարգմանեան
 է այժմ է Հոսան ամիս , յիւլիսին :

[1] Թովմայ Մեծոփեցին ի Թղթ . 70 . բարեբարոյ , սիրող , և ողորմած քրիս-
 տոնէի կոչէ զսա :

[2] Կայ հոյակապ և մեծաշէն սուրբ ուխտ : շինեալ ի գաւառին Ռշտունեաց
 յարեւելից կուսէ Փայխներ գեղջն . աստ փայլեցաւ առաքինի և սուրբ վարուք
 հրեշտակն ի մարմնի , և քաջ Հռետորն Հայոց՝ Սուրբն Գրիգոր Նարեկացի , և ի
 սմին կնքեաց զինկելի կեանս իւր . և կայ ամփոփեալ ի մատրան սրբոյ տաճա-
 րիս , պատուեալ միշտ խուռն ուխտաւորաց այցելութեամբ :

[3] Որ կայ շինեալ ի ծործորս Բնձաքիսար Լերին , ի հարաւային արեւմտեան
 ծայրն Ռշտունեաց :

[4] Ո՛հ , ո՛ տայր ինձ նուաստիս ի սմին նշդեհութեանս զմի բաժակ ցուրտ
 Ըուր ի վերոյիշեալ վտակէն :

[5] Այս վանք կայ ի գաւառին Բղնունեաց հիւսիսային յարեւելեան կողմն
 նորին , շինեալ ի սիրտ Մասիք հսկայ և լայնատարած փառասէզ Լերին , հզօրի ,
 որ այժմ անուանի Սիփանայ սար ի բնակչաց :

[6] Է նոյն ինքն Գրիգոր Ծերեկնց Խլաթեցի նշանաւոր բարունին , մինն յե-
 րեւելի օգտակար և բազմածամօթ վարդապետաց յայնմիկ դարուն , որ ունի
 բազում գրաւոր աշխատութիւնս , և էր վանահայր ի վանս Յիպնայ . նոյնպէս
 և վարժապետ անդրէն աշակերտելոց . այժմ նոյն վանքն անցեալ է ի շարս շա-
 բաթացեալ վանօրէից երկրին Բղնունեաց :

1418 · — ՊԿԷ ·

Տար. — Կարապետ դրիչ ի վանս Տաթևուս գրէ զՔարոզ գիրք Մեծին Գրիգորի Տաթևացւոյն :

Ելիմի :

Պօղոս Բ. Առաջնորդ Երուսաղէմի յետ աքսորման Գրիգորի ընտրի կաթուղիկոս :

Շահաբնեան Ա. հար. 210 :

Թիւ 53 · ի Մաշտոցէ ·

Յէշ. — Փառք համագոյ և անբաժանելի Սուրբ Երրորդութեան . Գրեցաւ սուրբ տառս Աստուածային ի թուականիս Հայոց ՊԿԷ . ձեռամբ պարտաւոր դրչի , սուտ անուն Կարապետ արեղայի . . յարքունական յերկիրս Մոկաց , ի յԱնապատիս Սուրբ Գէորգ(1) . և առաջնորդիս մերոյ որ (որոյ) անուն Տէր Ստեփաննոս յորջորջած (յորջորջի) ի խնդրոյ Մարգարէ պատուական քահանայի , որ մականուն Յակոբ Ասորի կոչի . . :

1865. նոյ. 5. սուրբ. ի վան. ի Տերաճոյր Ելեղեցին . յառաջ տահանայաբնեան Տէր Մարգարէ տահանայի ի Տէր հանգուցելցն . որ էր Բնահայր ինչ նասանդի . Բնչ ճնայ ի 1830 տի Սուրբ Աստուած . ի Քրիստոս :

Թիւ 54 · ի Ծաղկազարդ Աւետարանէ ·

Փառք Ամենասուրբ Երրորդութեան . . : Արդ գրեցաւ քարոզութիւն Սուրբ Աւետարանիս Քրիստոսի Աստուծոյ մերոյ . . և ի թուականութեան Յարեթական տոհմիս տուամարի ՊԿԷ . երրորդի . ի լուսազարդ . և քրիստոսարնակ Անապատիս Տէր Յուսիպ որդւոյ(2) ,

[1] Այն է փութկայ Սուրբ Գէորգայ ուխտն , որ կայ ի խոխոմն ձիւնապատ լերին հզորի Եղեղով կոչեցելոյ , ի հարաւ կուսէ նարին . և է սա մի միայն պաշտպան և պատասպարան երթեւեկ ուղեւորացն ի ձմեռնային եղանակի Մոկաց ի վան գնացողացն , յանցելումն ամի 1887 խաչատուր Գ. կաթուղիկոսն Աղթամարայ . քաց ի տաճարէն վերանորոգեաց զբոլոր շինուածն ուխտիս սքանչելւոյ . ի փառս Աստուծոյ և ի մխիթարութիւն Հայ և Քուրդ բնակչաց երկրին :

[2] Այն է Արտամետցի նշանագործ Ստեփաննոս առաքինի վարդապետն , որ էր որդի Տէր Յուսիպ սրբակրօն քահանային :

• • • • • ի գաւառիս Տարբերունեաց, որ այժմ կոչի Բերկրի⁽¹⁾ .
ընդ հովանեաւ սուրբ եկեղեցեացս, սուրբ մօրս լուսոյ Տիրամայր
Աստուածածնի կուսին. և Սուրբ Կարապետին և Սուրբ Յարու-
թեան. ձեռամբ յողնամեղ գրչի, Յակոբայ սուտ անուն կրօնաւո-
րի, ի խնդրոյ սրբասէր Մկրտիչ քահանայի. որ է կարգեալ ի
սպասաւորութիւն ժողովրդեան Քրիստոսի. յիշատակ բարի իւր և
ծնողաց իւրոց հօրն Օգրէկին և մօր իւրոյ Խութլու խաթունին,
և ծաղկեալ զաւակաց իւրոց Պետրոսին և Թումային. . . ի հալալ
արդեանց մօր եղբօր իւրոյ և քեռոյն Ստեփաննոսին և Մարտի-
րոսին, քրիստոսասէր և բարեպաշտ տանուտէրացն Բերկրոյ. . . (յի-
շեցէք ի Քրիստոս) զերջանիկ և զերանաշնորհ քարոզն կենաց, զար-
ժանին յիշման՝ զերախտաւոր հայրն մեր զՄկրտիչ վարդապետ
զառաջնորդ սուրբ ուխտիս. (վանահայրն Տէր Յուսկան որդւոյ), որ
բազում բարութեան մեզ պատճառ եղեւ⁽²⁾. որ և պահեսցէ զսա
Քրիստոս Աստուած անխորձ և անբասիր կենօք մինչեւ ի խորին
ծերութեան, ամէն :

1866. հոկ. 14. է Բերկէ յԱրքեպիսկոպոսի, է Լուս Տէր Յուսկան որդւոյ
այն. զոր հինքն Արքեպիսկոպոսին :

Թի. 55. ի Յայամաւուրէ .

(Սկիզբն պակաս էր). . . Ըստ որում և սրբազան և մաքրամիտ
կրօնաւորն Մարտիրոսն՝ խնդիր եղեալ եռօրօրեայ սրտիւ, և ըս-
տացաւ զկարմրեալեանց և զլուսաբորբոք կտակս, զպայծառութիւն
սուրբ եկեղեցւոյ. . . ի վայելումն անձին իւրոյ. . . յիշատակ բարի
ծնողաց իւրոց Աբրահամուն և Քամալին և եղբարց իւրոց Կիրա-
կոսին և Մկրտչին. . . Եւ ես. . . մեղսամած և տարտամ ոգի Մկրտ-
տիչ գրիչս. որ կոչիմ սարկաւազ. բայց բացասութեամբ և ոչ ստո-
րասութեամբ. զի գործով և խորհրդով եւս վատթարագոյն գտա-
նիմ քան զամենայն ոք ի ռամկաց. և զարտուղի մարմնական զը-
նացիւքս. քանզի շնչմունք զանազան տալախառն յիորձութեանց

[1] Յանուն հին քաղաքի նորին, որ շինեալ կայ ի սմին Տարբերունեաց գաւառի
ի ներքոյ վանիցն Արքեպիսկոպոսի, որ անկանի ի ծայրն հիւսիսային արեւելեան
կողմանէ ծովուն վանայ, և գետն Պանտիմազու որ յորդագոյն է քան զամե-
նայն գետակս, որք թափին ի նոյն ծով, խոչ հանդիսանայ քաղաքին և ուխ-
տին, և չթողու գրկախառնիլ նոցա ընդ միմեանս :

[2] Թովմայ Մեծոփեցին ի թղթ. 61. յիշատակէ զայս Մկրտիչ վարդապետ,
որ էր յաշակերտաց Յովհաննու Մեծոփեցւոյն :

շուրջ զմեզք մածեալ կայ . և ախտք անհնարինք և հեշտութիւն ճգիչ, կարիք ի ձեռին, և անմտութիւն մերձ, ծուլութիւն խաւարեցուցիչ և անարիութիւն պատեալ զինեւ : Արդ՝ թէ սխալանաց հանդիպիք վասն այսր ամենայնի անմեղադիր լերուք . . ի մեծ տարակուսանս կայի, վասն դառնութեան ժամանակիս և աւերման աշխարհիս : Այլ զազգիս մերոյ զտառապանս ո՞վ կարէ ընդ գրով արկանել . քանզի ի բազմանալ մեղաց մերոց, փակեցաւ դուռն ողորմութեան Աստուծոյ, և պատուհանք բարկութեան բացան . և ի մերում ժամանակիս գրեցաւ սա ի գաւառն Բաղիշոյ ի գեաւղս որ կոչի Պոռ⁽¹⁾ . ընդ հովանեաւ մեծաշնորհ և տիեզերահամբաւ սուրբ և գերապատիւ Առաքելոյն Անանիայի և Սուրբ Գէորգայ ի կաթուղիկոսութեան մեր աթոռոյն Տէր Պօղոսի . յամի ՊԿԷ . Հայոց թուականիս⁽²⁾ . բայց եղև կատարունն գրոյս Արաց ամսոյ ԻԱ . յաւուրն հինգշաբթի :

1868. սեպ. 19. ի վ. ան. ի Սուրբ Նշան Էկեղեցին . յառաջս արարեալսն արեղապահութեան Պօղոս վարդապետի :

Թիւ 56 . յԱւետարանէ .

Ի թուարերութեանս Հայոց տուժարիս ի ՊԿԷ . ի կաթուղիկոսութեան Տեառն Գրիգորի, որ մականունն Սանձողատ կոչի . ի վիճակիս Առաքելոյս Բարթուղիմէոսի . ի հայրապետութեան Տէր Մեսրոպի⁽³⁾ ի յերկիրս՝ որ Գաւառս կոչի . ես ցանկացող եղէ այս Սուրբ Աւետարանիս Շաքար . և ստացայ զսա յիշատակ ինձ և կողակցին իմոյ Մարեմի⁽⁴⁾ :

[1] Գիւղս այս անկանի ի հիւսիսային յարեւելս բաղաքին Բաղիշոյ առ ըն. թեր Սուրբ Յոհանու ուխտին որ կայ շինեալ ի սիրա բարձր լերին Պոռայ, մերձ ի ճանապարհն, որ տանի Գեղեցիկ ձորով և բստ տաճկաց՝ կիւղէլ տարայով, ի վ. ան :

[2] Ինձ թուի թէ Յայսմաւուրիս գրիչ Մկրտիչ սարկաւազն, է նոյն իսկ երեւելի Մկրտիչ Նաղաշ մատենագիրն, որ յիտ ժամանակաց եկաց արք եպիսկոպոս վիճակին Յամթայ . յիշատակէ զայս Մկրտիչ արհին Չամչեան ի հատոր Գ. 466 . 474 . 483 և յայլ էջս :

[3] Էր սա գէտ Աղբակու վիճակին և վանահայր Բարդուղիմէոսի Առաքելոյ սրբոյ ուխտին :

[4] 1869. հոկտ. 15 ի վ. ան . Մանգան գիւղն . 24 տամբ կայ շէնս կանգուռն ի Տոսոյ գաւառի . և է սահմանակից Տիպաքլու, կարթալան . Ասպստան, Պօղաղքեսէն և այլ գիւղորէից, որք անկանին ի մէջ Մահմուտանայ, յարեւելից կուսէ ծովակին Արջակու :

Թիւ 57 . յԱւետարանէ .

Փառք անսկզբանն . . . բարեպաշտ տանուէրն Ղազար . . . և ետ
 գրել զսա յիշատակ իւր և բարի ծնողացն իւր , Հօրն Շամօին և
 մօրն Մարեմայ՝ և եղբարցն Մովսէսի և Խաչկայ և Մանուկի և
 քուրոջն Սուրաթի . : Արդ յանկ եղեալ կատարեցաւ Սուրբ Աւե-
 տարանս , ի քաղաքիս Վան . ընդ հովանեաւ Սուրբ Առաքելոցս
 Պետրոսի և Պօղոսի . և Սուրբ Հայրապետին Սահակայ . և Սուրբ Տի-
 րամօր Աստուածածնին , և Սուրբ զօրավարացն Վարդանեանց : Եւ
 ես թափուրս ի բարեաց դործոց . . կարապետ անարժան քահանայ
 որ զանունս ունիմ և զգործս ոչ . ընդ հովանեաւ սրբոցս կատա-
 րեցի զՍուրբ Աւետարանս , ի թուական Հայկազեան տուամարիս ,
 ՊԿԷ . ի Հայրապետութեան Տեառն Պօղոսի և յաշխարհակալու-
 թեան Ղարայ Ուսուֆին : Յիշեցէք ի Քրիստոս . զծողս զկարապետ
 . . . քահանայ և զծնողսն իմ , զհայրն իմ զՍտեփաննոս քահանայ .
 և զմայրն իմ զՄինայ և զհօրեղբայրն իմ զՄովսէս և զեղբարքն իմ
 զՅովհաննէս քահանայ և զՄելքիսէթ զհանգուցեալքն ի Քրիստոս .
 և զՅակոբ քահանայ և զՅովհաննէս քահանայ զերախտաւորք մեր :

1887. յօգոստ. 22. շաբաթ. է Մին + աղ+ է Ռոն Անճալնց . է Սուրբ Առա-
 քաւորին էկեղեցին . որ իւր զնեւ է իւր զաւելիւր լիւրն . և հայ է լիւրս
 լիւր քերտն բարացող է . և իրաւայ Մինայ որ է ին է ներայ որ է իւրս :

1419 . — ՊԿԸ .

Տոր . — ՊԿԸ . թուականին եկն մարախ (ի Վան) ըստ անչափու-
 թեան աւազոյ ծովու բայց ի յաւուրս հնձոցն եկն . և իրք մի կերաւ
 զվաստակն . և իրք մի մնաց . և ձգեաց զսերմն իւր յերկիր . և միւս
 այլ տարին . (1420 ՊԿԹ) յամին ելաւ և խիստ աւեր էած . բայց
 ի յԱստուծոյ խնամոցն ի դուր շարժեալ իշխանն աշխարհիս մերոյ
 (երկրին Ռչտունեաց) Ամիր Էզդինն⁽¹⁾ . սուաքեաց մարդ՝ և երեր
 ջուր (յԱկոսոյ Ս . Յակոբայ աղբերէն) . և հաւն եկն զկնի ջրոյն ,
 և սատակեաց զմարախն , և ազատեցաւ երկիրս :

Ի որդեգրութենէ Մինանց թուայ լարդպետի Աղեմարցոյ :

Թիւ 58 . ի ճաշոցէ .

Յէշ . — Փառք եղակի անճառելոյ . . . Փափագմամբ ստացաւ զսա

[1] Յիշատակեն զայս ամիրայն Ղազար գրեչ , և Յերուն արեղայն , տե՛ս ի
 վերոյ 42 և 43 :

(Մկրտիչ քահանայն) յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն՝ Ապրիլ-լուսի և Մարթայի, և եղբարցն Աբրահամու և Մարտիրոսին, և կենակցւոյ նորա Բաղդատին և որդւոյն Յորդանանու: Եւ ետ զսանուէր և ընծայ ի դուռն Սրբոյն Սանդխտոյ ի գերեզման սուրբ և սքանչելագործ վարդապետին Գրիգորի Նարեկացւոյ . . անկարգս ի կարգաւորաց . . Թումայ մեղօք դառնացեալ կրօնաւոր . . գծագրեցի զՍուրբ Գիրքս զայս . . ի յաստուածարնակ կղզիս Աղթամար . ընդ հովանեաւ Սուրբ Խաչիս, և այլ սրբութեանց, որ աստ կան, ի հայրապետութեան Տեառն Դաւթի, ի թուականութեան Հայոց ՊԿԸ:

1886. է վ. ան. օգոստ. 25. է Սուրբ Աստուածածին կարգաւոր լինա, որ էս շինեալ է Գրիգորի լեռնակին, և հայ է ի Բարձանց ոմար է վերայ այգետարանեայ շինաչ տանին, նայնպիս և է վերայ հանրիկ տխայ շուան վանայ:

Թիւ 59 . ի Մաշտոցէ .

Փառք Ամենասուրբ Երրորդութեան . . : Արդ՝ գրեցաւ Հայր Մաշտոցս ձեռամբ անարհեստ գրչի. Աթանագինէ Սեբաստացւոյ, ի քաղաքս որ կոչի Սամիսոն(1). ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին(2). ի Հայրապետութեան Տէր Յակոբայ(3), հեզի և ճշմարտախորհի, որ կարգաք կամ օրինակէք. յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զմեղուցեալ գրիչս զԱթանագինէ կրօնաւորս . . գրեցաւ Մաշտոցս ի թուին ՊԿԸ:

1864. դեկ. 8. երեւելի է Մարգարէն Սուրբ Աստուածածին հայտնայ է է. շին, զոր նորոգեաց ընդ այլ Բաղդաւ է կեղեցեաց արժնայելաբար դեր Գրիգոր Յակոբ Արտիստոս կ. Պօլեպէ, որ էսայ երկնայ էս Պարբերէ կ. Պօլոս և լաւ ճանեցաւ է 1863 թին է Սուրբ Բաղդաւ Երեսուղէ:

[1] Հին քաղաքս այս է առ արին ծովուն Պոտոսի և է նաւահանդիստ Ամասիոյ, Մարգուանայ, Եւգոկիոյ, Սեբաստիոյ և այլ քաղաքաց Փոքր Ասիոյ:

[2] Այժմեան Հայք Սամսոնի են նոր գաղթականք ի սին իսկ մերս դարու եկեալ յայլ և այլ քաղաքաց. շինելով զնոր եկեղեցի և զտուն ինքեանց:

[3] Ի թիւն 55 Մկրտիչ սարկաւագն Պառեցի զՊօղոսն յիշէ կաթուղիկոս ամենայն Հայոց, և ի թիւն 56 Շաքար Գաւառացին զԳրիգոր Խանձողատն յիշէ. իսկ աստ Աթանագինէ Սեբաստացին զՅակոբն յիշատակէ. երեւի թէ ի կենդանութեան Յակոբայ, Գրիգոր Խանձողատ և Պօղոս վարապեցին եւս կաթուղիկոս էին ի մի և նոյն ժամանակի:

Թիւ 60 . Ի Ճառընտիրէ .

Փառք եղակի անճառելոյ . . . Եւ արդեւ անպատու ի բարեաց . . . սուտ անուն քահանայ Ստեփաննոս գրիչս⁽¹⁾ . տեսի զսէր և զփափաք սրբասէր քահանային Յովանիսի , և իմ ակար անճամբս յանձն առի՝ և ամենակարող զօրութեամբ Աստուծոյ կատարեցի զՍուրբ Գիրքս ի դառն ժամանակիս , որ և ի ծովացեալ մեղաց մերոց , և ի չար գործոց՝ եկն ազգի ազգի պատուհաս ի վերայ երկրի սով , . . . մահտարածամ , եւ յայսմ ամի եկն մարախ բազում ի յաշխարհս մեր . և եկեր զամենայն բոյս դալարի , և եղեւ նեղութիւն մեծ , յորում էր թիւս Հայոց ՊԿԸ⁽²⁾ ի Նաւասարդի ամսոյ Ի . (յօգոստոս 30) , ի հայրապետութեան (Աղթամարայ) Տէր Դաւթի⁽³⁾ . և փոքր Զաքարիայի⁽⁴⁾ . և ի բռնակալութեան աշխարհիս Ղարայ Յուսուֆի , և Ամիր Էզդընի⁽⁵⁾ : Արդ գրեցաւ , յերկիրս Ռշտունեաց , յանուանի և հռչակաւ որ գեաւդս . որ կոչի Տայշող . (այժմ Տրշող) , ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի , և Սուրբ Ստեփաննոս Նախավկայի և Սուրբ Սիօնի և Սուրբ Կիրակոսի : Ի խնդրոյ երիցս երանեալ պատուական քահանային Յովաննիսին , յիշատակ բարի հօրն իւրոյ Ստեփաննոսին և մօրն Մաջանին և եղբորն Յուսէփին և քուերն Փաշմելեքին և քեռացն Մարկոսին և իւր կենակցին Շաքար Խաթունին : . Նաեւ զիս յիշեցէք զՍտեփաննոս քահանայ գրիչս , որ գրեցի զսա , և զհայրն իմ զԳրիգոր քահանայ . որ առ Աստուած փոխեցաւ⁽⁶⁾ . և զմայրն իմ զՍուրբ Լու Մելիքն . և զհարազատ եղբարքն իմ զՅովաննէս և զԱռաքել սըր-

[1] 23. 24. 35. և 41 թիւ մատենից նշանաւոր և անզուգական գրիչն է :

[2] Սմին նմա վկայէ ճոխաբար . արժանայիշատակ Մինասենց Թովմայ վարդապետն Աղթամարցի յիւրում տարեգրութեան տես ի վերոյ զբանս նորին :

[3] Ըստ իմ գիտութեան սոյն Դաւթիթն է Գ. Դաւթիթ ի շարս կաթուղիկոսացն Աղթամարայ . զառաջինն Դաւթիթ Թոռնիկեան ապրտամբն . և զմիւս սյլ Բ. Դաւթիթս յիշատակէ անձանօթ շարունակողն Թովմայի Արծրունւոյ . տես ի տպագրեալ պատմութեան նորին . որ ի լոյս եկն ծախիւք Միջագիւղի Թանգարանի Ընկերութեան . իսկ սոյն Գ. Դաւթիթն է եղբայր Զաքարիա նահատակ կաթուղիկոսին Աղթամարայ . որ կատարեցաւ վասն Քրիստոսի ի 1393 ամի . յԱստան քաղաքի . . . բաց ի սոցանէ երկու Դաւթիթ եւս կան . որք յետ ժամանակաց նստան կաթուղիկոս ի նոյն կղզւոջն :

[4] Է սա սոյն Զաքարիայն , որ յետ ժամանակաց հրամանաւ Չհանշահի որդւոյն Ղարայ Յուսուֆայ . նստաւ նաեւ կաթուղիկոս ի Սուրբ Էջմիածին . ի կենդանութեան Գրիգորի Մակուեցւոյ :

[5] Էր սա Ամիրոյ Ոստանայ :

[6] 1404 ամի . ըստ ստութեան իսկ սոյն Ստեփաննոս քահանայի :

բասէր քահանայքն⁽¹⁾ , և զհօր եղբայրն մեր զՄարտիրոս կրօնաւորն⁽²⁾ . . . և զկենակիցն իմ զՄինա թագուհին , որ սպասաւորէր մեզ ի մարմնաւոր պիտոյիցս : Յիշեցէք և զսրբազան քահանայքն զԱւետիս և զՅովանէս , որ զօրինակ գրեւ կտուն զհանգուցեալքն առ Աստուած⁽³⁾ . :

1880 . Նոյ . է Վարաժ :

1420 . — ՊԿԹ .

Տար . — Գրիգոր վարդապետ Ծերենց Սլաթեցի , գրէ զԳանձս ի վերայ Մեծ ի Յովհաննու Մկրտչին , ըստ անուան իւրոյ :

Մուրատչայ Վաղին նահատակի : Չաճ . աղի . . . 31 :

Թիւ 61 . յԱւետարանէ .

Յիշ . — Աստանօր իրաւապէս հատուցուք փառս ի սկզբան և ընդ անսկզբան , եռակի և եզական և եռափափազ փառաւորեալ Սրբոյ Երրորդութեան , նմա փառք յաւիտեանս ամէն : Եւ արդ ես յետինս ի կրօնաւորաց , և անպիտանս ի բանասիրաց , անարժանս ի մանկունս եկեղեցւոյ , և անխմաստս ի քարտուղարաց⁽⁴⁾ . շնորհիւ Տեառն սկսայ , և ողորմութեամբ նորին կատարեցի զՍուրբ Աւետարանս , ի թուականիս շայոց մեծաց . ՊԿԹ . ի հայրապետութեան Տեառն Պօղոսի , արի և քաջ ախոյանի , և ճշմարիտ ուղղափառի , ի գաւառիս Տարբերունի , որ այժմ կոչի Բերկրի , ի սուրբ ուխտս , որ կոչի Տէր Յուսկան որդի , ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Յարութեանս և Սուրբ Կարապետիս և սքանչելագործ Սուրբ Նշանիս՝ որ կոչի Կարմիր Ակն⁽⁵⁾ . ի յառաջնորդութեան

[1] Սոյն արժանայիշատակ քահանայք և հայր սոցին Տէր Գրիգորն էին յոյժ նշանաւոր ի պաշտօն քարտուղարութեան , որոց մատանց ծնունդք մրցեալ ընդ կլանող ժամանակի տակաւին մինչեւ ցոյսօր տեսանին ի տեղիս տեղիս :

[2] Նահատակութիւն սորին լեալ է ի 1358 ամի :

[3] Չայս յիշատակարան օրինակեցի ի Տէվկանց Արեւիա եպիսկոպոսէ . ճոխիմաստ քարոզէ և բեղմնաւոր մատենագրէ Վանեցւոյ Լմայ միաբանէ և մասամբ իւրք հեգ Տոսպեցւոյս դաստիարակէ . որոյ մահուամբ որ գիպեցաւ 1885 ամի , ի Վարազ . բթացաւ բեղմնաւոր գրիչ նորին ի գործելոյ :

[4] Է նոյն իսկ նշանաւոր Մկրտիչ վանահայրն Տէր Յուսկան որդւոյ ուխտին , զոր յիշատակէ Յակօբ կրօնաւորն ի թիւն 54 ի վերոյ :

[5] Թերեւս է այն՝ որ կայ այժմ ի քաղաքն Բաղէշ :

սուրբ ուխտիս Մեղքխէթ հեղահոգի և աստուածարան վարդապետի⁽¹⁾, Եւ այլ միեղէն եղբարցս, հոգեւոր հօրս իմոյ Կարապետ խաչընդուս կրօնաւորի և հոգեւոր եղբօրս իմոյ, որ բազում պիտոյիւք սպասաւորէ մեզ, Յակոբայ Խօյեցւոյ. Կիրակոսի և Յովանիսի, Մկրտչի և Վարդանի, համարուեստակից եղբօրս Յակոբի⁽²⁾, Սիմօնի և Կիրակոսի, Ստեփաննոսի և Յովանիսի, նաեւ սպասաւորաց մարմնաւոր պիտոյից մերոց, հայր Սարգսին և Գորգի տընտեսին և Մկրտիչ մաճակալին և Աստուածատուր միայնակեցին և Մեծատուր հովուին. և զամենայն միարանքս սուրբ ուխտիս, Տէր Աստուած հանգուցանէ զսոսա յարքայութեան իւրում ամէն: Եւս առաւել աղաչեմ յիշել զՅակոբ Խօյեցի արեւայն. որ զօրինակն շընորհեաց. յիշեսցիք յաղօթս ձեր (զստացող սորին) զբարեպաշտ տանուտէրն զՆասրատին, և զճնողսն իւր (զՍեւինջբէկն և զՍուրաթ Մէլիքն), ընդ նոսին աղաչեմ յիշման արժանի առնել զանպիտան դրիչս և զճնողսն իմ զՕրպէլ և զԴօվլաթ, և զմամն իմ⁽³⁾ զԲաղդատ. յիշեցիք զԱբրահամ սրբահոգի կրօնաւորն, որ զարդարեաց և ծաղկեցոյց Սուրբ Աւետարանս և երկու Քլօրի (անուն դրամի Աւստրիացւոց) եթող ի վարձէն. վարձատուն Բրիտոս տացէ նմա զիւր ողորմութիւն. ամէն: Աղաչեմ յիշել զարժանին յիշատակի՝ զպատուելի քահանայն զՄկրտիչ, առաջնորդ քաղաքին Բերկրոյ⁽⁴⁾ որ բազում գութ և խնամ տանի մեզ:

1866. հոկ. 14. է վ. շ. է Բերկեր. է Է. շ. Տէր Յովանիսի սրբայն:

Թիւ 63. յԱւետարանէ.

Յիշ. — Փառք անսկզբան և անվախճան թագաւորութեան, Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. Ուստի և տեսեալ սորա փրկագործութեան խորհուրդ, ոմն աստուածասէր և բարեպաշտ տանուտէր Թաթար բէկ կոչեցեալ. եւս դրել զՍուրբ Աւետարանս յիշատակ և բարեխօս առ Բրիտոս Աստուած վասն Հոգւոյ իւրոյ և ճնողացն իւրոց Մովսէլէնի և Նորտիկնայ. Եւ արդ ես յետինս

[1] Թերեւս է սա աշակերտ Սարգսի Սորբեցւոյն մեծ վարժապետին Հայոց, և կամ է Մեղքխէթ Արշակացին, որ էր ձեռնասուն Տաթեւացւոյն Գրիգորի մեծի բարունապետին Հայոց. զորս յիշատակէ Թովմա վարդապետ Մեծօփեցի պատմիչն ի թղթ. 51. և 52:

[2] 54 թիւ Աւետարանի գրիչն է:

[3] Հօր մայրն կամի ասել, որ է Հանիկ:

[4] Յիշատակեալն վերագոյն ի թիւն 54 Օղբէկի որդի Մկրտիչ քահանայն է:

ի կրօնաւորաց Իզիտ անուն . քանզի խորշեցայ ի Պսակ անուանէ՝ որ Նախավիային միայն վայելէ . . . Գրեցաւ սա ի գեաւզըս որ կոչի Նարեկ . ձեռամբ սուա անուն կրօնաւորի Իզիտի . ընդ հովանեաւ սուրբ եկեղեցեացս Յարութեանս , Աստուածածնիս , Առաքելոյս և Սուրբ Գրիգորիս . և առ գերեզմանի տիեզերալուր Գրիգոր վարդապետի Նարեկացոյ . ի թուահանութեանս Հայոց . ՊԿԹ . ի հայրապետութեան (Աղթամարայ) Տեառն Դաւթի . և . . . նահանգիս մերոյ (երկրին Ռչտունեաց) բարձր անուն Մէլէքի : Ընդ նոսին և զմեղուցեալ դժուր և զճնողսն իմ զԱմիրբէկ և զԴուռն Մէլէք և զեղբայրսն իմ զԹովմայ քահանայ , զՂազար և զՍաեփաննոս . . . Ես թաթար Բէկս առերեմ զՍուրբ Աւետարանս ի գեաւզս որ կոչի Ծաւկու ի դուռն Սուրբ Փէորգայ զօրավարին , յիշատակ ինձ և իմ ծնողացն . . (Սոյն Աւետարան ի գերութենէ ազատողի բանս թիւ շունէր) , Յիշեալիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՆաւհօշն և զեղբարքն զԱսքանտարն և զՆապետ . . զի սոքա ազատեցին զՍուրբ Աւետարանս . . . և ետուն ի դուռն Փէորգայ զօրավարին , ի գեաւզն որ կոչի Ծաւկու , որք հանդիպիք . . Աստուածողորմի ասացէք Նաւհօշին և Աւետիսին , որ են սոքա ի Բէսաւանից⁽¹⁾ , որ ազատեցին զԱւետարանն . . . Աստուած . . . :

1880. Յոյ. 7. է վ. ն. է վ. ն. վ. արագայ :

Թիւ 63 . Աւետարանէ .

Փառք . . . Ոմն ի լուսածնեալ զարմից Սրբոյն Սիոնի . քահանայ անուն կոչեցեալ Ծերուն . զոր ի վաղուց հետէ ցանկայր այսմ մեծախօս Սուրբ Աւետարանիս , և ես գրել զսա յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն . ի մեծ թուիս Հայոց ՊԿԹ . ի կաթուղիկասութեան Հայկազեան սեռի Տեառն Գրիգորի⁽²⁾ . և ի մերոյ կաթուղիկոսութեան Աղթամարայ Տեառն Դաւթի : Եւ ի թագաւորութեան այլաոեռից Ղարայ Յուսուֆի ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի և Սուրբ Սարգսի զօրավարին և որդ-

[1] Այժմ ֆեսայ վանք կոչի , և կայ յաշխարհին Մոկաց . մերս գիւղիս է վանքն Ակնդաշտայ շինեալ ի վերայ բարձր դրից . ի ներքոյ սորին մի արտաշափ հեռաւորութեամբ է և չէ . կայ այր մի ուր է Ակն և աւաղան յորդ գեաին Մոկաց . ինձ թուի թէ յանուն ական գետոյս և զուխոս Ակնդաշտայ վանք յորջրջեալ են :

[2] Չամչեան շունէլով զսոյս յիշատակարան ի ձեռին՝ փոխանակ սոյն Ղրգորի Պօղոս դնէ կաթուղիկոս :

ւոյ նորա Մարտիրոսի և Սուրբ Գէորգայ որ է սակաւ մի հեռի : Այլ և գրեցաւ Սուրբ Աւետարանս ձեռամբ Ստեփաննոս քահանայի սուտ անուն և ախմար գրչի . յընտիր և ի ստոյգ օրինակէ . կենօք տառապանօք և բազում պանդխտութեամբ ի դառն և ի նեղ ժամանակի . ի վայելումն անձին Մերուն քահանայի և որդւոյն իւրոյ Թովմայ քահանայի . և դեռարոյս զաւակին Յովհաննիսի : Եւս առաւել զննջեցեալս և զծնողս իմ (գրչին) զՅովհաննէս և զմայրն իմ զԱւագ տիկին աղաչեմ յիշման արժանի առնել : Եւս առաւել զհոգեւոր եղբարս իմ զերջանիկ և զընարեալ կրօնաւորքն զհարազատ եղբարք իմ զԱւետիս վարդապետն և զՆերսէս կրօնաւորքըն⁽¹⁾ . և զհոգեւոր զաւակն մեր զՍուքիաս կրօնաւորն և զամենայն արեան մերձաւորս մեր առ հասարակ յիշեալիք ի Քրիստոս :

1879. է հայի 14. երեսնամբի . է Ռեբերդոյ առ Վարդաբանի եկեղեցին, յառաջ տեղափոխեալ զհայն Գրեգորի Եղիսիպոսի կ. Պալատոյ . Բնւ ընդ Տեր Մինասի . Եւս վահան Վարդաբանի Պարտիզանոյ ընկերացեալ երեսնամբ է կարէն :

Տար. — Իսկ որդի (Ղարայ) Յուսուփին Աքանտարն ոչ հանդիպեցաւ առ հայրն իւր . (ի մահուան նորին), այլ եկն ի կողմանէն Պաղտատայ . և առեալ զգօրս հօր իւրոյ և զքաջս Հիզանին, եկն ի Բագրեւանդ գաւառ մերձ սուրբ ուխտին (Յովհաննու Իւչքիլիսայ կոչեցելոյ), շինեալ ձեռամբ Տրդատայ և Լուսաւորչին Գրիգորի . կամբք գնալ ի վերայ Շահաուհին (որդւոյն Լանիթաուրայ), և Շահաուհն այն հասեալ ի հեր և ի Զարեւանդ գաւառ . և ի վերջըն Բերկրի : Եւ համբաւ գալոյ Աքանտարին եհաս առ նա . և դարձեալ անհուն բազմութեամբ եկն եհաս ի յԱրճէշ . փոս ետ հատանել յերկուս տեղիս, մինն ի յԱրճէշ և մինն ի Զուպասի (Իւսապասի, հեռապասի եւս գրեալ են օրինակազքն Մեծովեցւոյն), մինչ ի լեառն Աղու, և միւս օրն ելեալ գնաց ի դաշտն Ապահունեաց ի Պանագահն . և փոս եհատ յահէ զօրացն արի և զօրեղ զօրականին Աքանտարին : Եւ հասեալ ի Վաղարշակերտ, ի դաշտն Բագրեւան-

[1] Յամի ՊԿԹ. ի Թիւն 39 Յովհաննէս գրիչն ընդ այլ միաբանից յիշատակեալ է զանուանս սոցին իբրև երիցագոյն միաբանք խիզնայ Սուրբ Խաչի ուխտին :

դայ, ճակատ առ ճակատ բանակեցան. . . : Եւ վազվազակի և առ ժամայն ի սուր սուսերի հարեալ կոտորեցին զգօրս անհնազանդ թուրքմանին : Եւ երկու եղբարք Սքանտարն և Սսպահան (որդիք Ղարայ Ուսուֆին) մազապուրծ եղեալ գնացին փախստական սակաւ զօրօք ի ներքին կողմն աշխարհին, ի Մէրտին և ի Մաւալ : Եւ ամենայն զօրք և խիզան անկան ի ձեռս Չաղաթային : Եւ Չաղաթային առեալ զառ և զաւար, գնաց ի Սորասան ուստի եկեալ էր : Եւ փախուցեալ որդիք Յուսուֆին, գնացեալ ի ներքին կողմն աշխարհին, գիտացեալ զերթալ նոցին (զօրացն Շահաուայ), եկն վազվազակի Սսպահան (որդին Ուսուֆայ) ճանապարհաւն Բաղիշոյ . գնացեալ ի թաւրէզ նոտաւ անդ սակաւ զօրօք աւուրս ինչ : Եւ միւս եղբայրն Սքանտարն եկն Պաղտատու ճանապարհաւն մտեալ ի թաւրէզ փախոյց զեղբայրն, և էտու զաշխարհն ամենայն, և նըստաւ թագաւոր ի վերայ ամենայն կողմանց մերոց աշխարհաց : Եւ եղբայրն նորա եկն ի Բասէն և է առ զամուրն Սանկայ :

Թ. Վ. Մեծ. է Բ. Վ. 79. 80. և 81 :

Սաղաթիէլ արեղայ ի Տոսպ գաւառի, ի մենաստանին վարագայ, ի կաթուղիկոսու թեան Աղթամարայ Տէր Դաւթի, գրէ զԱստուածաշունչ մի :

Նոյնպէս և թովմայ վարդապետ ի վանս Ստաթի Սուաքելոյն՝ գրէ զԲարսղի Կեսարացւոյ քարոզս :

Չ. Վ. 2-ին :

Սուաջին գալն Շահաուղին (որդւոյ Լանկթամուրին) ի Հայս, և Սոյն էր տանուտէր :

Մեծիւ Կ-նայ Կրեկի :

Արձ : Կանգնեցաւ Սաջս գերահրաշ բարեխօս առ Աստուած Տէր Յովհաննէս եպիսկոպոսի⁽¹⁾, և հարազատին իւրոյ Յովաննէսին հանգուցելոյն ի Քրիստոս . այլ և կանգնողացն Սաղաղութենին և Կարապետին . ամէն : Թ. վ. ՊՀ :

1866. Կե. 6. է Լե՛ կղն :

Վարդան նոր վկայն Քրիստոսի, որ էր յերկրէն Բաղիշոյ և ի գիւղաւանէն Դատուանայ . յաւուրս Շամշատին քուրդ :

[1] Մեծիւ Կարոյց կոչեցելոյ, Լիմ Սնապատի վանահօր, կից հիման տաճարին է գերեզման սորին ի հարաւ կուսէ արտաքուստ :

ամիրային որ նստէր ի Բաղէշ կատարի ի նմին քաղաքի
 ի փառս Աստուծոյ, ի Թուին Հայոց ՊՀ. ամի ի Դ. Յունվարի :
 Տե՛ս նախ արագրեալ Յայտնարն :

Հապէշ ազգաւ քահանայք, վասն կրօնաւորութեան կան ի
 կողմանս Հիզանայ, և վասն Քրիստոսի նահատակութեամբ կատա-
 րին անդ. և թաղին ի վանս Բարիձորոյ Սուրբ Աստուածածնի :
 Տե՛ս է յերազմէր Յայտնարն :

Թիւ 64 . յԱւետարանէ .

Յիշ.— Փառք ամենասուրբ Երրորդութեան . : գրեցաւ (Սուրբ
 Աւետարանս) ի մեծ թուականիս Հայոց, ՊՀ. ի կաթուղիկոսու-
 թեան Հայկազեան սեռի Տեառն Պօղոսի, և յամիրութեան (Հիզ-
 նայ) ամիր Դայուտին ի քաղաքիս Խիզան :
 1665 Նոյ. 7. է վ. ան . է Տերմայր եկեղեցին :

Թիւ 65 . յԱւետարանէ .

Փառք . : Արդ յանգ ելեալ կատարեցաւ Սուրբ Աւետարանս . :
 Եւ ես թափուրս ի բարեաց գործոց, կարապետ սուտ անուն քա-
 հանայ . . . և ամենակարող զօրութեամբն Աստուծոյ կատարեցի . .
 ի թուականութեանս Հայոց ՊՀ. ի հայրապետութեան Տեառն Պօ-
 ղոսի, և մերոյ ակաթուակալի (վիճակին վանայ) Մարգարէ վարդա-
 պետի(1), և Տէր Յոհաննէս եպիսկոպոսի առաջնորդացս ուխտին
 վարագայ :

1865. Դեկտ. 11. է վ. ան. է Հոննի գիւղ. «Եւ ես ի թիմար է հին Գնունի» գա-
 ւարէ . Բնւ ընդ Տէր Բարեղեան Գեորգի հանգստեալ լարդապետի եկեալ է Լէ՛՛
 Անպարտի քնայտ է կրոն . ընդ Վեղ եր նախ խաղանկարեան Դերմայր
 «Եւ այժմ է լարդապետ է կրոն Սուրբ կարապետ :

Թիւ 66 . յԱւետարանէ .

Փառք Աստուծոյ Լուսոյն մեծի . : Եւ գրեցաւ սա ի թուարե-
 րութեանս Հայոց ՊՀ. ի հայրապետութեան Տեառն Պօղոսի, և մե-
 րոյ ակաթուակալի և առաջնորդի սուրբ ուխտիս վարագայ . քաջ
 հսկողի և տիեզերալոյս վարդապետին Մարգարէի(2). և Տէր

[1] Յիշէ զսա Մեծորեցին ի թղթ. 52.
 [2] Էր սա աշակերտաց մեծի վարժապետին Հայոց սրբոյն Գրեգորի Տաթե-
 ւացւոյն :

Յովհաննէս եպիսկոպոսի , ի քաղաքս որ կոչի Վան . ընդ հովանեաւ Սրբազան Առաքելոցս Պետրոսի և Պօղոսի , ձեռամբ անարժան , և սուտ անուն երիցու կարապետ անարհեստ գրչի . (65 թիւ Աւետարանի գրիչն է) ի խնդրոյ Ստեփաննոս կրօնաւորի :

1866. Մարտ 7 է Վան . Արարաց եկեղեցին . յարարաւ զհանայանիսն յեղեցի Բեբեջէ Տէր Սեփակ :

Թիւ 67 . յԱւետարանէ .

Փառք անպարագիծ էին . : Արդ՝ գրեցաւ Սուրբ Աւետարանս ի թուականութեանս Հայոց տումարի . ՊՀ . ի հայրապետութեան Հայոց կաթողիկոսի՝ Տէր Պօղոսի Սոյ . և Աղթամարայ Տէր Դաւթի . ի յաշխարհակալութեան Աքանտար Ղանին , (որդւոյն Ղարայ Յուսուֆի) ի յերկիրս Վասպուրականի , ի գեաւղս որ կոչի Մարմեա⁽¹⁾ . ընդ հովանեաւ Սուրբ Ստեփաննոսիս և այլ Սուրբ Նշանացրս , որ աստ կան հաւաքեալ , առ ոտս բարեսիրտ և հեղահոգի եպիսկոպոսին մերոյ Տէր Մխիթարի , որ է դէտ՝ հովիւ և տեսուչ և վերականցու այսմ վիճակի⁽²⁾ . որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի : Արդ՝ գրեցաւ և աւարտեցաւ ի նոյն ամի . ձեռամբ անարուեստ գրչի Սիմէոնի արեղայի :

1869 Յունիս 2) է Վան . է Մարտի 10-րդէ վան⁽³⁾ :

Թիւ 68 . ի Մաշտոցէ .

Փառք միասնական Սուրբ Երրորդութեան , Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ . գրեցաւ քահանայաթաղս ի թուարեւութեանս Ասքանազեան և Արեթական տումարի ՊՀ . ամի . ի հայրապետութեան Տէր Պօղոսի , և եպիսկոպոսութեան (Ուլահաց երկրին թերեւս) Տէր Գրիգորի , և ի թագաւորութեան Աղեքսանդր Վայլոդային . ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին . ձեռամբ , մեղապարտ գրչի . Մխիթար անարժան քահանայի որ ի . . :

1880. Յունիս 8 է կ . Պօլէն է Ղալաթիոյ Թանգարան .

[1] 82 տամբ կոյ այս գիւղ կանգուն առ ամի տառեխասէր գետոյն Մարմեաի ի Տոսք գաւառի , յարեւելից կուսէ կառուց Անապատի :

[2] Երկրին Գնունեաց , որ այժմ թիմար կոչի :

[3] Որ կոյ շինեալ ի սիրտ կուսանասէր լերին ի հարաւ կուսէ գեղջն կուռուպաշայ , և հայի անարգել ի բարձանց անտի ի վերայ սաղարթախիտ Այգես . տանեաց Վանայ . և ակնապարար ալեաց գոռոզ ծովուն Ուշտունեաց :

Թիւ 69 . Ի ճաշոցէ .

Փառք Եզակի անճառելոյ . . . զոր տեսեալ զայսպիսի գանձս Աստուածային և պայծառ լուսով՝ սրբասնեալ և բարեմիտ կրօնաւորն Յոհաննէս . . . ստացաւ զսա յարդար վաստակոց իւրոց . : Եւ ետ զսա ընծայ և նուէր ի Սուրբ և ի հռչակաւոր և յանուանի ուխտն՝ որ կոչի վարագ . ի դուռն սուրբ և գերամաքուր Աստուածածնին . և Սրբոյն Յովհաննու Աւետարանչին և այլ բազմահաւաք սուրբ եկեղեցեացն . ի յառաջնորդութեան Սուրբ ուխտին . իմաստուն և հանճարեղ վարդապետին Մարգարայ կոչեցեալ⁽¹⁾ : Այլ և յեպիսկոպոսութեան տեղւոյն սրբասնեալ եպիսկոպոսացն Տէր Յովանիսի և Ատոմայ : Ի թուականս Հայոց ՊՀ, ամի Եւ արդ ես անպտուզս ի բարեաց . . . կրօնաւոր թումայ գծողս . տեսի զսէր , կատարեցի զՍուրբ Գիրքս զայս . բազում և մեծ աշխատանօք հասուցի զսա յաւարտումն , յաստուածարնակ և անառիկ կղզիս Աղթամար , ընդ հովանեաւ Սուրբ Խաչիս և Սուրբ Գեղարդեանս⁽²⁾ . ի հայրապետութեան տեսուն Դաւթի կաթուղիկոսի , զոր Տէր Աստուած պահեսցէ զտեղիս զայս խաղաղութեամբ աթուակալաւն իւրով ամէն . . . Դարձեալ և մեղապարտ թումա գըծագրող սորա⁽³⁾ . . յիշեսջիք և զիմ անարժանութիւնս . : Նաեւ զճնողքն մեր (գրչին) զՍաչիկն և զԱղիզ Մէլիք . և զեղբարքն իմ զՆաւասարդն տարածամ հանգուցեալն և զԳիէորդ քահանայ , և զքոյրն մեր զՀայիմ խաթուն . նաեւ զհօր եղբարքն իմ զԶաքարիա գրագիրն⁽⁴⁾ և զԿարապետ քահանայ , և զՅովաննէս զհանգուցեալսրն ի Քրիստոս . . այլ և զուսուցիչն մեր զիմաստասէր փիլիսոփայն

[1] Ի թիւն 66. Կարապետ քահանայ գրիչ՝ զսոյն Մարգարայ վարդապետիս անուանէ տիեզերալոյս վարդապետ . ափսո՛ս հազար , որ մաշող ժամանակ չհասոյց ի ձեռս մեր զգործս սորին :

[2] Յաւուրս Զաքարիա Ա. կաթուղիկոսին Աղթամարայ , սր նորոգեաց զիմ Անապատայ տաճարն , և էր ժամանակակից Բ. Հեթում թագաւորին մերոյ , Նօտարք Հայոց նոյն ժամանակի յիշատակեալ են ի գիրս իւրեանց վասն Գեղարդայ ընդ այլ սրբութեանցն Աղթամարայ . բայց անտի մինչ ցայժմ ի 130 ամաց միջոցի չէին յիշատակեալ . և ահա կրկին յիշատակէ այժմ թովմայ կրօնաւորն Աղթամարցի . ի դիտողութիւն պատմագիտաց Ազգիս սիրելոյ նշանակեցի զայս հակիրճ ծանօթութիւնս :

[3] Սոյն թումա կրօնաւորն էր քեռի Մինասենց թովմա տարեգիր վարդապետին Աղթամարցւոյ , որպէս յիշէ ինքն յիւրում տարեգրութեան , որ գան ի լոյս ըստ կարգի թուականաց :

[4] Փիլիսոփայ անուամբ հռչակեալն տես ի 20 թիւ Աւետարանի վասն սորին զբանս Գանիէլ գրչի :

զԱտոմ վարդապետ , և զԱւետիս և զՅովանէս կրօնաւորք , որ աշխատեցան ի կոկել թղթիս (Կրկին ստացողի բանս թիւ չունէր) Ես Կարապետ եպիսկոպոս Մակուեցիս , և Գուլիջան Հաւեցիս , գընեցինք զգիրքս . . . և տուաք ի ձեռն Պետրոս վարդապետին . որ տանի ի բնական տեղիս իւր ի դուռն վարագայ Սուրբ Նշանին . յիշատակ բարի հոգոց մերոց . . :

1880. Նոյ. 10. Երևանի . է Լեւոն վարագայ :

Տար.— Շահառուհն եկն ի Ղարաբաղն :

Արտեւ Լարդապետ պարթև է թղթ. 598 :

1422 . — ՊՀԱ .

Թիւ 70 . ի Յայսմաւուրէ .

Փառք ամենասուրբ Երրորդութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ . . պատուական կրօնաւորն և բարեսէր արեղայն Ատոմ . սիրով ցանկացաւ այսմ աստուածարեալ գանձիս , և ստացաւ զսա յիշատակ բարի իւր և ծնողաց իւրոց Պարիշահին և Մարթային : Նաեւ զմիաբանք սուրբ ուխտին Կոյցի Սուրբ Սաշին . և Սուրբ Կարապետին և Սուրբ Աստուածածնին և Սուրբ Գրիգորին և Սուրբ Հռիփսիմեանցն . զառաջնորդ ուխտին զՏէր Մխիթար եպիսկոպոսըն⁽¹⁾ . և զԿարապետ սպասաւոր բանի , և զՄելքիսէթ կրօնաւոր . և զՄկրտիչ կրօնաւոր , և զԿարապետ կրօնաւոր , և զՍարգիս կրօնաւոր , և զՅովհաննէս կրօնաւոր , և զՍիմէօն կրօնաւորն , և Յովաննէս կրօնաւոր . այլ և զԴաւիթ կրօնաւոր , հանդերձ ամենայն բնակչօքն , որոց տացէ Տէր Աստուած հանգիստ արքայութիւն արդարոց : Արդ գրեցաւ սա ի խնդրոյ Ատոմ արեղային . ձեռամբ յօգնամեղ և անարհեստ գրչաց , Գրիգոր արեղայի , և Մկրտիչ սուտ անուռ երիցու և Կարապետի ի վան քաղաքի , յամի ՊՀԱ . թուականիս Հայոց : |

Թիւ 71 . յԱւետարանէ .

Յէշ.— Ես Աստուածատուրս և եղբայրն իմ Յովհաննէս , թափեցաք զՍուրբ Աւետարանս որ էր գերի . . . այլասեռաց . և տուաք ի սուրբ ուխտն , ի Տկուց վանքն . ի դուռն Սուրբ Անանիայի⁽²⁾ .

[1] Սիմէօն արեղայն յիշէ զսոյն Մխիթար եպիսկոպոսն տես ի վերոյ ի թիւն 67 յԱւետարանի :
[2] Այս վանքն այժմ աւերակ է և կոյ ի գաւառին Բզնունեաց ի հիւսիսարին յարեւմտեան կողմանէ Սքանչելագործ Սուրբ ուխտին Արծկոյ :

յիշատակ մեզ և ծնողացն մերոց Բաներգեսին և Ուլուխաթուհին .
զի յառաջն վանացն էր Աւետարանս , և մեք այլ յիւր տեղն տը-
ւինք : ՊՀԱ :

1065. Օգոստ. 14. յԱրձե է վանս Ստանկէլաֆորձայ . յառաջս վանահայրաւիան
արժանայիշարտի Գրեթոր Լորդոպերի Պիլեթեան վանեցոյ . որ եր է Բեմանս-
Բեմէ Լի՛՛ Անապարի :

Թիւ 72 . Ի յԱւետարանէ .

Փառք սկզբան . . սրբամաքուր քահանայն Յովհաննէս զար-
հուրելով ի սպառնալեացն , և փափաքելով աւետեացն . ստացաւ
զանառիկ մեծութիւնս և զանկողոսպտելի գանձս , զՍուրբ Աւետա-
րանս , յիշատակ բարի իւրն և ծնողացն իւրոց , Հօրն Թուլուխին ,
մօրն Մարթային , եղբօրն Յովհաննիսին և Բախշայիշին և քերց
Սայիմ խաթուհին , Ուսլուսին , Էդըլմէլիքին և որդւոցն Սուլթան-
շահին և Էդըլշա սարկաւադին , և կենակցին Աթամէլիքին և զո-
քանչին Զհանմէլիքին և մօր քրօջն Թաճմէլիքին⁽¹⁾ . և Փառու-
խին⁽²⁾ : Եւ արդ ես յետինս ի կարգաւորաց , և անպիտանս ի ման-
կունս եկեղեցւոյ և անիմոստս ի գիր գրչութեան . կարապետ
սուտ անուն քահանայ⁽³⁾ . շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ
նորին կաաարեցի զՍուրբ Աւետարանս , ի թուականիս Հայոց մե-
ծաց . ՊՀԱ . ի քաղաքս որ կոչի վան . ընդ հովանեաւ Սուրբ Ա-
ռաքելոցս Պետրոսի և Պօղոսի . : Դարձեալ յիշեցէք ի սուրբ յա-
ղօթս ձեր զՄխիթարն . . որ ստացաւ զՍուրբ Աւետարանս ի յար-
գար վաստակոց իւրոց . ի յառաջին ստացողէն ի Յովհաննէս քա-
հանայէն . և ետ ի դուռն Սուրբ Վարդանայ⁽⁴⁾ . որոյ Տէր Աստ-
ուած զերկնից արքայութիւն տացէ ամէն⁽⁵⁾ :

1866, Յուլ. 18. յԱրձե է վանս Ստանկէլաֆորձայ :

Թիւ 73 . յԱւետարանէ .

Փառք անսկզբան . : Եւ արդ ես յետինս ի կրօնաւորաց . : և ա-

[1] Թուի թէ ի նմին ժամանակի Մէլիք վերջաւարութեամբ կոչէին զբա-
զումս ի յատուկ անուանցն արանց և կանանց :

[2] Այս անուամբ կայ մի Հայ գիւղ ի վան . մետասան ընտանեօք ի Տոսպ
գաւառի յարեւելից կուսէ Զորովանից և յարեւմտից Ոսկիբակայ :

[3] Էր մինն ի գեղեցկագիր Հայ նօտարացն ի նմին ժամանակի : Թիւ 65 և
66 Աւետարանաց գրիշն է :

[4] Է մինն յեօթն եկեղեցեաց վանայ , որք են ի քաղաքամիջի , և կայ շին-
եալ յարեւելից կուսէ քաղաքին , կից անառիկ բերդին , ի հարաւ գեհէ նորին :

[5] Սուրբ սելոս կայ ի Բղնսնեաց գաւառի շինեալ ի սիրտ Սիւտէ լերին .

նիմաստս ի գիրս գրչութեան . Յակոբ սոսկ անուն արեղայ⁽¹⁾ շնորհիւ Տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զՍուրբ Աւետարանս , ի թուականիս Հայոց մեծաց . ՊՀԱ. ի գաւառիս Տարբերունի , որ այժմ կոչի Բերկրի , ի սուրբ ուխտս Եղա վանք⁽²⁾ : Ընդ հովանեաւ Սուրբ Ստեփաննոսիս , և արեամբ ներկեալ նահատակացն Քրիստոսի որ կոչի Սրբոց Վարդանանց⁽³⁾ . ի յառաջնորդութիւն սուրբ ուխտիս Մելքիսեդ հեզահոգի և աստուածաբան վարդապետի (յիշատակեալն ի թիւ 61 Աւետարանի) և այլ միեղէն եղբարցս , որ աստ կան ի սպասաւորութիւն սուրբ ուխտիս . Նաեւ զհոգեւոր հայրն մեր և զառաջնորդ սուրբ ուխտին , Տէր Յուսկան որդւոյ , զերանաշնորհ և զաստուածաբուղիս ի Հոգւոյն սրբոյ զՄըկրտիչ վարդապետ . (յիշատակեալն ի թիւ 54 Աւետարանի) և զՅակոբ Սոյեցի հոգեւոր եղբայրն մեր⁽⁴⁾ . : Այլ և զերախտաւորն մեր և զխրատատուն , զՅովհաննէս աստուածաբան վարդապետ , որ բազում բարութեանց պատճառ եղեւ սորին⁽⁵⁾ , ի յուսմունսս պէսպէս⁽⁶⁾ , և զԱստուածատուր կրօնաւորն և Ստեփաննոս Հայրապետըն⁽⁷⁾ և զՄարտիրոս կուսակրօն արեղայն :

1866. Հոկտ 29. է վ. ան. յՈսրան է Բաւարիոն Ուշտունեաց է Պարբեայ վանք⁽⁸⁾ :

և հայի հանապաղ ի վերայ կապուտակ այլաց , սքանչելի ծովուն Ուշտունեաց . եւս և մրգաբեր անկոց և ծաղկալի բուրսատանաց հին քաղաքին Արծկոյ :

[1] Թիւ 54 Աւետարանի գլխին է , գովութեամբ յիշատակէ զսա ի թիւն 61 Մկրտիչ վարդապետ . վանահայրն ուխտին Տէր Յուսկան որդւոյ և համարուեստակից կոչէ ինքեան :

[2] Այս ուխտս է ի մերձակայս Տէր Յուսկան Որդւոյ վանաց . և է այժմ անցեալ ի շարս շաբաթացեալ վանօրէից երկրին Տարբերունեաց :

[3] Երեւի թէ յետ մեծի պատերազմին , որ եղեւ ի դաշտն Աւարայրի , առ Տզմուտ գետովն . ազգականք և բարեկամք քաջ նահատակաց Հայոց ժողովեալ զնշխարս նոցին բերեալ են աստ և այլ ուրեք . թերեւս մինն ի բերողացն լեալ է ոսկեղէն գրիչն Հայոց մեծաց՝ երանելի վարդապետն մեր Սուրբ Եղիշէ . և Տարբերունի գաւառն գրեթէ սահմանակից է Արտազու , ուր կայ վանքն Սուրբ Առաքելոյն թաղէոսի Լուսաւորչին Հայոց և Մակու գիւղաքաղաքն , և անկանի յարեւմուտ կոյս նորին Արտազու :

[4] Ի թիւ 61 գրեալ Աւետարանի , զոր ընդօրինակեալ է Մկրտիչ վարդապետ վանահայր Տէր Յուսկան որդւոյ ուխտին գովութեամբ հռչակէ զանունսոյն արժանայիշատակ Յակոբ վարդապետի խօյեցւոյ :

[5] Ստացողի Աւետարանիս Յոհաննէս կրօնաւորի :

[6] Նշանաւոր ոմն թուի թէ լեալ է սոյն Յովհաննէս աստուածաբան վարդապետ , բայց պակասին առ ինձ այժմիկ կարեւոր ծանօթութիւնք ի վերայ սորին :

[7] Վերակացու և պետ դորձակալաց ուխտին , եւս և փոխանորդ վանահօր .

[8] Որ այժմ կոչի Չաղբր Սուրբ Նշան . շինեալ յստորոտս հսկայ լերին Ար-

Տար.— Իսկ ի ՊՀԲ. թուին գնաց նոյն Աքանտարն (որդին Ղարայ ՈւսուՔայ ամիրային) բազում զօրօք ի վերայ Ավրէլոյ և էառ գնա. և իշխան աշխարհիս մերոյ (երկրին Ռշտունեաց և Ոստանայ) գնացեալ առ նա բազում ընծայիւք ի գործ պատերազմին, և նորա դեղ մահու արբուցեալ իշխանին մերոյ Մէլիք Մահմատին սպան գնա, և անհնարին սուգ և տրամուլթիւն եհաս աշխարհիս մերոյ⁽¹⁾: Եւ ի սոյն (ՊՀԲ) ամի եկն սաստիկ մահտարածամ ի յաշխարհս մեր և մնաց երկու տարի (մինչ ի ՊՀԳ 1425) ի բոլոր ծովուս (Վանայ) և բազում տունք աւերեցան և ծնողք անգաւակ մընացին:

Մինտինց թուվայ վ. Աղեմարցի:

Եւ յերկրորդ ամին (ՊՀԲ) եկն Աքանտարն ի վերայ Բաղիչոյ և Սլաթայ, կոչեաց զամիրայն Շամշատին փեսայ իւր և ասէ. տուր ինձ զբերդն Սլաթայ: Եւ նորա գնացեալ ընդդէմ բերդին, արձակեաց զգօտին որ ի միջին և պինդ կապեալ դարձեալ: Եւ էմիրն այն զվարչամակ գլխոյն ի վայր ձգեաց, նշան տալով թէ զգլուխս հատանեն՝ զդղեակ մի՛ տայք, այլ պինդ պնդեցէք զգօտիս ձեր: Իսկ նորա բարկացեալ՝ հրաման ետ զօրաց իւրոց հատանել զգլուխ նորա: Եւ ըմբռնեալ զաէրն Ռշտունեաց սուլթան Ահմատ անուն՝ զորդի էգդին Ամիրային, և փութանակի եկն ի վերայ դղեկին Վանայ, և աւերեաց զաշխարհն ամենայն և նստաւ չորս ամիս ի վերայ նորա և ի խտարին (ի պաշարման) բերդին անթիւ և անհամար քրիստոնեայք (յազգէս Հայոց) մեռան ի սովոյ և ի ջրոյ. և փորացաւ եղեալ բազումք մեռանէին: Եւ ի նոյն (ՊՀԲ) ամի ոչ կարաց առնուլ գնա, այլ երթեալ թաւրէզ ի նոյն ամին լռեաց և զորդի Եգդին Ամիրային (Ոստանայ) զսուլթան Ահմատն սպան ի բերդ Երնջակայ:

Թուվ. Մեռ. է Բղէ. 83. և 84:

Ալեքսանդրն (Վրաց թագաւորն) եկն:

Առեւել պարսկէր ել 598:

տոսայ. ի վանահայրութեան ուխտին արժանայիշատակ Տէր Սարգիս արի և հիւրասէր քահանային. իսկ ներկայիս վանահայրն է բարեկիրթ Տէր Մարտիրոս որդի վերոյիշեալ հանգուցեալ քահանային: Ի տարպաս եկեղեցւոյ սրբոյ ուխտիս կան հանգուցեալ նշխարք սակերաց սրբոյ և երջանիկ հօրն մերոյ Եղիշէ պատմագիր վարդապետի:

[1] Գովութեամբ խօսին զամանէ թուվայ Մեծօփեցի պատմագիրն և Նօտարք մեր, աես զբանս նոցին ի վերոյ:

Թիւ 74 . Ի Ճաշոցէ .

Յիշ . — Փառք անբաժանելի և միասնական Սուրբ Երրորդութեան . . : Աւարտեցաւ այս տառ՝ ձեռամբ անարհեստ գրչի Կարապետի , ի թվ . ՊԿԲ . Հայկազեան սեռիս տոմարի և հայրապետութեան (Աթոռոյն Աղթամարայ) տեառն Դաւթի . . . Ղանութեան Թիւրքմէն ազգի , որ Իսքանտար բէկ անուն կոչի . . . Գրեցաւ աստուածախօս այս տառ յարքունակաւն յերկիրս Մոկաց : Ի վանքն որ կոչի Մպատ , ընդ հովանեաւ Ամենափրկչիս , ո՛ւր է սրբազործ եկեղեցի , և ձեռնադրողին Քրիստոսի Կարապետի , և Զօրավարիս քաջ նահատակի(1) , և այլ հաւաքեալ սրբոց , ի խնդրոյ սրբասէր Թումա կրօնաւորին . :

Ի Կոմիտաս Արժոյ Բերեկն ընդօրինակեցի . Ի 1865 Հոկ . 5 Ի վարագ . Նոյն ճաշոց Ի այ յո՛վ Ի Լուսինբերդ Գիւղն վանայ . որ է Ի հիւսիսային Իսղի Սղիայ Գիւղասանին :

[Թիւ 75 . յԱւետարանէ .

Փառք . : Ես Սահակ միայնակեացս ստացայ զՍուրբ Աւետարանս և իմ սրտի յօժարութեամբս տուի զՍուրբ Աւետարանս , իմ ազգականին Տէր Կարապետ եկեղեցապանին՝ և հոգւոյ որդւոյ իւրոյ Թումայ արեղային . և ի հայրապետութեան (Աղուանից Աթոռոյն) Տեառն Կարապետի , և յաջորդի նորին Տեառն Մատթէոսի . զոր Տէր Աստուած պահեցէ զսա բարձր փառօք՝ և անսասան կենօք աստ և ի հանդերձելումն ամէն : Եւ սուրբ և ուղղափառ եպիսկոպոսացրս , Տէր Կարապետին և Տէր Կիրակոսին , Տէր Ստեփաննոսին և Տէր Տիրատրին և Գալուստ աղին և խոջայ Յաշաիչին . զոր Տէր Աստուած հատատուն պահեցէ ի սէրն աստուածային ամէն : Եւ ես հոգոյ հաւասար Մովսէս եպիսկոպոս , որ զգիրս գրեցի , առաջի Տեառն Մատթէոսի կաթողիկոսի Հայոց և Աղուանից , վկայ եմ այս բանիս , ի թուականութեանս Հայոց , ՊՀԲ . ի փառս Աստուծոյ :

1865 . 2 . Հոկ . վ . յԱյնիսանիւր Սուրբ Աստուածանին [1] :

[1] Աստ յիշեալ Մպատ Ամենափրկչիչ վանաց վերայ Տէր Բարսեղեան հանգուցեալ Գէորգ վարդապետն , յիւր 1858 ամի ի վարագ հրատարակեալ վիճակագրութեան՝ չէ ինչ ասացեալ . ուստի ինձ թուի թէ ի շարս աւերակ վանօրէից Մոկացն է անցեալ :

[2] Էր սա երբեմն վանք և այժմ եկեղեցի , որ կայ շինեալ ի զուարճալի վայրի ի ներքոյ աստուած լերկ լերին , որ Զըմբղըմբ Մազարոյ կոչի ի բնակչաց տեղոյն :

Թիւ 76 . Ի Մաշտոցէ .

Փառք . . օրհնութեանց օրհնաբեր գիրքս այս Մաշտոց , մեք նուաստ և անպիտանք Սարգիս քահանայ և Դաւիթ ստացաք . . յիշատակ ծնողաց մերոց և մեզ . Սարգիս ծերունի և պատուական քահանայն ի սուրբ ուխտէս Հաւոյթառ զթուղթն պատրաստեաց . և ես անյիշելի Դաւիթս գրեցի զգիրքս և ընծայեցաք զսա ի սուրբ ուխտն Հաւոյթառ⁽¹⁾ ի դուռն Սուրբ Կաթուղիկէին , և Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Յարութեան և ամենազօր Սուրբ Ամենափրկչին և այլ սրբոց : Եւ եղեւ գրչութիւն սորա ի նախատրական Սուրբ ուխտն ի մեծ Այրի վանս⁽²⁾ և կատարումն յԱստուածապահ գիւղաքաղաքիս Գառնի . առ դրան Սուրբ և հըրաշափառ Կաթուղիկէիս և այլ սուրբ եկեղեցեացս⁽³⁾ : Ի թվ. ՊՀԲ . ի հայրապետութեան Տեառն Պօղոսի Գառնեցւոյ սրբազան կաթուղիկոսի . և ի վերայ դիտողութեան սուրբ ուխտիս Հաւութառ . հեզահոգի և սրբասէր և մաքրամիտ և մեծագգի արհիապատիւ եպիսկոպոսի Տէր Զաքարիայ⁽⁴⁾ : յիշեցէք ի սուրբ պատարագն զՍարգիս քահանայն և զծնողսն նորա զԲեհեւանն և զԱստղիկն , և զբազմաօրէն սուտ անուն քահանայ զԴաւիթ գրիչս . և զծնողսն իմ զհայրըն վարդան :

Տե՛ս ի Թորոս աղբոր Գեբ Գեբ . Գաբեթին եղևիտոսի Սրբանշուրեանց Ա . հար . էջ 233 — 234 : Նշուելու և Բ . հար . էջ 338 . և 339 :

Թիւ 77 . Աւետարանէ ի Ղուկասու վերջ .

Եւ արդ՝ ես վերջինս ի ծնունդս եկեղեցւոյ . . Աստուածատուր

[1] Այժմ աւերակ է նշանաւոր մենաստանս , և կայ շինեալ գո'գթէ մերձ ի կատար լերին , որ կայ հանգէպ Գառնւոյ գիւղաքաղաքին ի հարաւային կողմանէ նորին :

[2] Կայ սուրբ ուխտս յերկրին Գեղամոյ յարեւելից հիւսիսոյ Գառնւոյ գիւղաքաղաքին . այժմ սոյն ուխտին Գեղարտավանք կոչեն բնակիչք երկրին :

[3] Աստ էր հոյակապ և շքնաղակերտ պալատն այն՝ զոր Տրդատի թագթ կոչեն մարդիկ տեղւոյն , զոր շինեաց Տրդատ արքայն . . . ի վայելս շքնաղագեղ կուսան քեռն իւրոյ Սրբոյն Խոսրովիտոյ . բայց ի մեծ շարժէն Երեւանոյ որ դիպաւ յամի 1679 . և ի թվ. Հայոց ՌՃԻԸ . ընդ այլ բազում շինուածոցս , խաղտեալ կործանեցաւ և հիանալի կերտս այս և կան այժմ ի սփիւռս ճանապարհաց ցրուեալ՝ սրբատաշ և ծաղկանկար քարինք սիրալի շինիս , և շարժեն զՀայ ուղեւորս ի վերայ իւրեանց ի լաց արտասուաց . որպէս երբեմն գիպեցաւ մեծի մաստ Սիմէոն վարդապետի Ապարանցւոյ յառաջ քան զկործանումն ոորին . զոր արարեալ է չափիւք նուագս ողբերգական ի վերայ մենացեալ շինիս հզօրի :

[4] Սիմէոն կաթուղիկոսն Երեւանցի զսա համարի ի ցեղէն Պաօշ իշխանին :

ստացայ զՍուրբ Աւետարանս . . և ետու զսա ընծայ և նուէր Սուրբ Շմաւոնի Առաքելոյ հրաշագործ տաճարիս՝ յանուանի՞գեալս Ուլկազում կոչեցեալ . . (չեմ ծանօթ սոյն գեղջ) Աստուած ողորմի ասացէք ինձ . . ստացողիս Աստուածատրու և եղբօրն իմոյ Յովանիսի . . ՊՀԲ թվ :

1881. յՕհոտ. 3. է վ. ան. յԱյգեոսուն է րան հանգստեալ Սրեթան արայի Մանօղլեանց :

1424. — ՊՀԳ.

Տար. — Իսկ ի ՊՀԳ թվին . կոչեաց նոյն Աքանտարն զտէրն Ոստանայ զՍուլդան Ահմատն և զտէրն Բաղիշոյ զՇրմըզդինն (Շամշատին) խաբանօք առ ինքն և կալաւ զերկոսին զՇրմըզտինն սպան ի Սլաթ , և ինքն յանդուգ յարձակմամբ՝ և լի՞դառնութեամբ՝ և անթիւ զօրօք եկեալ նստաւ ի վերայ անառիկ ահրոցին վանայ . ընդ իւր ունելով երկաթի կապանօք զՍուլդան Ահմատն⁽¹⁾ : Եւ զերկիրս մեր ի յառ և յաւար և ի գերութիւն տուեալ երկու տարի (ՊՀԲ. էն , մինչեւ ՊՀԳ ամ.) զոր ոչ է բաւական քարտէզս ընդ գրով ընդունել յինքեան զաւեր աշխարհիս մերոյ , և զնեղութիւն զոր կրեցաք մարմնով և վշտացաք հոգով ի կղզիս Աղթամար :

Ի րարեբեհեհ Մեհաբեհ թովոյ Վարդապետի :

Վկայութիւն Սրբոյն Ստեփաննոս վարդապետի , Պետրոս քահանայի և Ստեփաննոս վկայի Սրբեցւոյ :

Սոյն երանելի վկայք Քրիստոսի, ըստ պատմութեան ժամանակակից գրագէտ Առաքել վարդապետի Բաղիշեցւոյ , էին ի քաղաքէն Հիզայ . Սուրբ Ստեփաննոս վարդապետն և երանելի քահանայն Պետրոս . իսկ պատանին Ստեփաննոս էր յերկրէն Սողձայ ի Սորբ անուանեալ գեղջէն : Սոյն երանելի վկայք երբեմն . . . յաղթեալ ի սիրոյ կենցաղոյս , ուրացեալ էին զսուրբ հաւատս իւրեանց և դարձեալ էին յայլազգութիւն և ապա շնորհիւն Աստուծոյ սորջացեալ ի . . . գնացից իւրեանց՝ դարձան կրկին անգամ ի փարախ մօրս մերոյ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ՝ արտասուածովոր ապաշխարութեամբ , և ապա վառեալ սիրովն Յիսուսի ի

[1] Սոյն Սուլդան Ահմատն ըստ ասից թովմայի Մեծօփեցւոյ՝ պատմագրի սպանանի ի բերդն Արնջակոյ , տե՛ս ի վերոյ ի ՊՀԲ թուական զբանս նորին :

Հիզան . և հրապարակաւ խոստովանեցան զՔրիստոս Աստուած մեր կատարեցան ի Քրիստոս ի թուին , ՊՀԳ. Յունիս Բ. յաւուր ուրբաթու , ի տօնի Համբարձման Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի : Իսկ Սուրբ Ստեփաննոս պատանին , ի Յունիս ԺԱ. յետ իննօրեայ նահատակութեան սոցին , լսելով զբարի վախճան երանելի և սուրբ վկայիցն , ինքն եւս քաջալերեալ դառնայ ի սխալանաց իւրոց մեծաւ զղջմամբ . և ապա վկայական մահուամբ ի սէր Քրիստոսի կատարի . . . ի հայրենի գիւղն իւր Սորբ , որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի :

Համարօրէցի է յերօթից Յայսմատարաց :

Արձ.— Պատոսի Ամենափրկիչ վանից եկեղեցւոյ արձանագրութեան օրինակն է հետեւեալն .

Փառաց տաճար Աստուածային ,
 Յերկրի դրախտ կենաց Փայտին .
 Կանգնեալ յանուն Ամենափրկչին ,
 Ի ութ հարիւր թուականին .
 Եօթանասուն և երեքին (ՊՀԳ 1424) ,
 Ի կաթուղիկոսութեան Հայոց մեծաց .
 Տէր Պօղոսի ուղղափառին ,
 Ի ժամանակս բարեպաշտի .
 Կիր Ալեքս թագաւորի⁽¹⁾ :
 Խօճայ Ստեփաննոս պատուելի .
 Շինեաց տաճարս հրաշալի ,
 Յիւր յիշատակ անջնջելի .
 Եւ ծնողաց իւր կրկնակի ,
 Եւ կենակցին իւրոյ Մելիքայ Խաթունին .
 Եւ զաւակաց իւրոց մեծի և փոքու :

Տե՛ է Դրօճիւր Կարմաթեան Պանդուխտ ԿԸ 83 : Հ. Մենասայ Բժշկեան :

Նահատակութիւն խլաթեցի Գրիգոր Մերենց վարդապետի .

Վկայ . — Յայսմաւուր յիշատակ տիեզերալուր վարդապետի , սուրբ հօրն մերոյ Գրիգորի Խլաթեցւոյ⁽²⁾ . . Յորոց և մի ի բազ-

[1] Յունաց որ նստէր ի Պոնտոս . և չէր սա ընդ իշխանութեամբ կայսերն Կ. Պօլսոյ . ի սմին միջոցի Բ. Մանուէլ էր կայսր ի Կ. Պօլիս :
 [2] Մինն ի ձեռագիր Յայսմաւուրաց կոչէ զբարբօւնապետն Գրիգորիոս Խլաթեցին , որ կոչի Խէրիաթիսոյ որդի Մերին :

մաց վարդապետաց եկեղեցւոյ և յԱստուածարան քարոզչաց. ըս-
քանչեւի այրն Աստուծոյ և ախոյեան հաւատոյ, զարդարեալն ա-
մենայն առաքինութեամբ և լցեալ շնորհօքն աստուածային, բա-
բունապետն Գրիգորիոս Ալաթեցին որդի Մերին. որ ի վերջին ա-
ւուրքս քան զառաջինսն գերագոյն երեւեցաւ. : Էր սնեալ և
վարժեալ ի գործ քահանայութեան առ սուրբ ճգնաւորի միոյ
Վարդան կոչեցեալ, որ տասն հինգ տարի յանապատի էր բնակե-
եալ, առ մեծ վարժապետն Տիրատուր⁽¹⁾: Եւ յետոյ եկեալ բնակե-
ցաւ ի հռչակաւոր ուխտն Սուրբ Ստեփաննոս Յիսկնաւանք կոչեց-
եալ: Եւ վեց ամ սպասաւորեալ նմա և օրհնութիւն ընկալեալ ի
նմանէ իբրեւ յԱստուծոյ. : Եւ հարկեալ ուսումնասէր եղբարցն,
երթեալ առ մեծ վարժապետն Յոհաննէս Արտանեցի մակ անուն
Կախիկ, որ կախեալ էր ի սէրն Յիսուսի, և ութ ամ վարժեալ և
սիրեալ ի նմանէ. ուսումնակից իւր ունելով զհոմանունն Գրիգոր
զեկրորդ. Լուսաւորիչն Հայոց, Սուրբ Առաքելոյն Ստաթէի: (Տա-
թեւացին ակնարկէ): Եւ յետ մահուան մեծին Յովհաննու Արտա-
նեցւոյն և աւերման վերին աշխարհին, ի չար բռնաւորէն թամուր
կոչեցեալ. եկն դարձեալ ի բնիկ գաւառն իւր՝ առ մեծ վարժա-
պետն Սարգիս, յերկիրն Քաջբերունեաց ի հռչակաւոր և յԱստ-
ուածարնակ ուխտն Աստուածածնի, որ Սուխարայ վանք վերակո-
չի. և անդ վարժեալ և բազում աշխատութեամբ դեգերեալ՝ ըն-
կերակից իւր ունելով զմեծ ճգնաւոր վարդապետն Վարդան Հո-
գեց վանացն. որ յետոյ յաջորդեաց զաթոռն վարդապետութեան
երանելոյն Սարգսի, և տասն ամ առ նմա յամեալ՝ ընկալեալ ի նը-
մանէ զաստիճան վարդապետութեան. իսկ յետոյ
Սուրբ քաղաքն վարդապետօք և աշակերտօք և յամեալ անդ եր-
կու ամ. : Այլ որ զկամս երկիւղածաց իւրոց կատարէ հասոյց զնա-
փափագանաց իւրոց. (մարտիրոսութեան). իսկ յետոյ
եկեալ հրեղէն լեզուն և ճգնաւոր վարդապետն՝ Յակոբ Արիմեցին
աշակերտօքն իւրովք և ազգականօք և միաբան ուխտիւն և բա-
զում ժողովրդօք եղին զնա ի տապանի և կոծ մեծ արարին ի վե-
րայ նորա. : Նահատակեցաւ սուրբ վարդապետն մեր Գրիգոր Խը-
լաթեցին որդի Մերին. ի թուականիս Հայոց ՊՀԴ. ի Մայիսի ամ-
սոյ Իէ. յաւուր Հոգեգալստեան մեծի կիրակէին. ի փառս Քրիս-

[1] Էր սա յաշակերտաց Եսայի Հռետոր վարժապետին Հայոց Եջեցւոյ, և աշակերտակից Կախիկ Յովհաննու Արտանեցւոյ :

տոսի Աստուծոյ , գյարմարող ճառիս զԱռաքել վարդապետն յիշեցէք ի Տէր աղաչեմ⁽¹⁾ :

Յայլ ճառագրէ .

Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի և աղօթիւք նորա (Գրիգորի Մերենց) Քրիստոս ողորմի ամենայն աշխարհի խնդրողաց բանիցս այս . և թումայ վարդապետի Բաղիշեցւոյ . որ զսպամոլութիւնս գրեաց :

Գարձեալ յայլ գրէ .

Մաղթանօք սորա Տէր մեզ ողորմեսցի խնդրողացս բանիցս այս երկու կարապետի ի թումայ հռետորէ . որ և զայս գիծս շարագրեաց , որ և նորին յիշատակն օրհնութեամբ եղիցի⁽²⁾ .

Տար. — ի ՊՀԴ թվին , էառ Ամիրզա Աքանտարն զՎան՝ և զայլ բերդորայքն և մլքեց զաշխարհս մեր :

Վերստեանց թովայ վարդապետ Կրիստոս

Արշ . — Ես Զաքարիա թուռն Գամրիկէլին և որդի սարոն Ազիզ բէկին , գնեցի զգեղջն Մողնի . . (մօտ ի կարպի) զի բաժինն էլ Սուրբ կարապետիս տուի . :

Տե՛ս ի Երեմ. Բ. 400 . ի ԲղԲ. 104 :

Թիւ 78 . յԱւետարանէ .

Յիշ - Փառք անակղրանն . : Եւ արդ ես յետինս ի քահանայս . :

[1] Սոյն Առաքել վարդապետ ճառագիրն . էր եղբոր որդի Գրիգոր Մերենց նահատակ վարդապետին :
[2] Աստ յիշատակեալ թումայ հռետորն ինձ հաւանական թուի՝ թէ է նոյն իսկ թովմա Մեծոփեցի պատմագիր վարդապետն . իսկ երկու կարապետ վարդապետք , որք ի թովմայէ խնդրեցին զսպամոլութիւն Մերենց Գրիգոր վարդապետի , մինն է Սուխարայ վանուց վանահայրն , եղբոր որդին Զաքէոս եպիսկոպոսին . որ նախ քան զկարապետ վարդապետն էր առաջնորդ ի Սուխարայ կոչեցեալ հոյակապ ուխտն . որ կայ ի մէջ Քաջբերունեաց գաւառին . և սյժմ ի յետին դարս անուանի Արծուարեր Աստուածածնի վանք : իսկ միւս կարապետ ինձ չէ ծանօթ՝ երեւի թէ էր ի միաբանից Յիպնայ Սուրբ Ստեփաննոսի ուխտին . որ կայ շինեալ ի սիրտ հսկայ Մասիք լերին . այժմ Սիփանայ սար կոչեցելոյն , մերձ ի հայաբնակ գիւղն Վերին Սիփան ուստի էր Գրիգոր Մերենց երջանիկ բարունին վանահայրն Յիպնայ ուխտին : Սոյն վանքն եւս ի դարաւոր ամաց հետէ անցեալ է ի թիւս շարաթացեալ վանօրէիցն Տուրուբերան աշխարհին Հայոց :

Այլ և գրեցաւ Սուրբ Աւետարանս ձեռամբ անիմաստ գրչի Կարապետի, ի դառն և ի վշտացեալ ժամանակիս, որ վասն ծովացեալ մեղաց մերոց . . . Իսքանտարն ըմբռնեաց զամիրայն մեր զսուլթան Ահմատն՝ և եկեալ բազում զօրօք ի վերայ մեր՝ և յիսուն օր խսարեաց զանառիկ դղեակս վան՝ և ոչ կարաց առնուլ զսա . և սուտ երգմամբ գնացեալ ի Դաւրէժ, և ի գարնանային աւուրսն առաքեաց զզօրս և գերեաց և աւերեաց զերկիրն Ռըշտունեաց՝ և մեր փախստական եղեալ եկաք ի Հիզան, և եղեւ կատարումն սորա աստ . ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին, և Սրբոյն Սարգսի զօրավարին, և Գէորգայ քաջ նահատակի, ի թուականիս Հայոց. ՊՀԳ Յիշեալիք . . . ստացող Սուրբ Աւետարանիս զՍարգիս, որ դնեաց զՍուրբ Աւետարանս և ետ զսուրբ Աւետարանս (ի գուռն Ալանայ) ի գուռն Ալանայ Սուրբ Նշանին, ձեռամբ Թադէոս կրօնաւորին :

1881. Յունիս 27, Երեւանի Բազմապետական թանգարանի ցուցակ:

Թիւ 79. ի Սաղմոսի մեկնութենէ .

Արդ ես վերջինս խնդրող բանի,
 Որ եմ տրուալ յամենայնի .
 Փառիադանօք զտառս գրեցի,
 Նեղ և անձուկ ժամանակի .
 Ընդ հովանեաւ Աստուածածնի,
 Որ Բարի Զոր անուն կոչի⁽¹⁾ .
 Ի թուականիս ութ հարիւրի,
 Եօթանասուն և չորս ամի .

Ձեռամբ . . . Թումայի :

1887. ի վ.մ. — Արեւիկայի Երեւանի թանգարանի ցուցակ . զոր օրինակեալ եր է Տարօն .
 ի վ.մ. Արեւիկայ . որ Ղազարոս վանքի է .

Թիւ 80. ի Սկիզբն Մատթէոսի Աւետարանէ .

Զվերջին ստացող Սուրբ Աւետարանիս զԿարապետ կրօնաւորն . նաեւ զՄկրտիչ քահանայն . Որ խնամ տարաւ Սուրբ Աւետարանիս ի Վանայ բերդն ի Սքանտարի հասարն⁽²⁾ . . . Գրեցաւ ի թվ. ՊՀԳ .

[1] Այս Բարիձորոյ Սուրբ Աստուածածնի ուխտն՝ որ եօթն խորան եւս կոչի կայ յերկրին Հիզանայ՝ մերձ ի գիւղօրայս Շէն և Բրունց :

[2] Պաշարրումն Վանայ բերդին ի Սքանտարայ՝ յիշէ զայս գէպս ի թիւն 78 նաեւ կարապետ գրիչ ընդ որս և Մինասենց թուովայ վարդապետ ժամանակակից տարեգիրն յիւրում տարեգրութեան . տե՛ս ի վերոյ :

ի վանս Արգելան . (այն է ուխտն Տէր Յուսկան Որդւոյն) զմեղա-
ւոր վարդապետս Մկրտիչ⁽¹⁾ յիշել աղաչեմ :

1883. Յունիս 3. է վան . է Հոգոյ վան + հուշակատար Սուրբ Ուրբ[2] :

Թիւ 81 . յԱստուածաշնչէ .

Բաղձանք բարոյ . . տարտամսս և տառապեալս ոգւով Աւետիք
աշակերտ բանի՝ ի Դարանաղեաց գաւառէ , ի վաղուց հետէ փա-
փագեալ ըղծայի այսմ վայելուչ . . Աստուածաշունչ հին և նոր
կտակարանացս . իսկ ի վախճանել հոգելից և տիեզերահոջակ մեծ-
բարունապետին իմոյ և վարժապետին⁽³⁾ . ժառանգեաց զսա եղբոր
որդի նորին Եզեկիէլ սարկաւազ և՛ կամեցեալ նորա վաճառել . որ
և ես անձեռնհաս էի և անարժան , կամակցութեամբ և օժանդա-
կութեամբ բազմերախտ հօրս իմոյ հոգեւորի , Տէր Սահակ կորո-
վամիտ բանասիրի՝ և երաժշտապետի . . տեսեալ զտենջանս իմ առ
այս անդին մարգարիտս օգնական եղեալ յորդորեաց զմեզ . որ և
վաճառեալ զամենայն ինչս մեր՝ զոր ունէաք ի նախնեաց և յազ-
գականաց . և խնդութեամբ ստացաք զայս լուսատու մարգարիտս
և զաստուածային գանձս⁽⁴⁾ : Արդ՝ որք ժառանգէք զսա յետ մեր .
ողորմելով մեղուցեալ ոգոցս սղորմութիւն հայցեցէք ի Քրիստո-
սէ՛ և յիշման արժանի արարէք ի բարին : Մանաւանդ զերջանիկ
վարժապետն իմ զԳէորգ լուսաւոր հոգին⁽⁵⁾ . և զուսուցիչն իմ
զՏէր Սահակ⁽⁶⁾ և զարեամբ նահատակեալ հայրն իւր զՍեղբեաստ-

[1] 61 Թիւ Աւետարանի գրիչ՝ նշանաւոր Մկրտիչ բարունին է , որ էր վա-
նահայր Տէր Յուսկան Որդւոյ ուխտին . որպէս յիշատակէ զսա Յակոբ արեղայն
գովութեամբ ի Թիւն 73 յիւրում՝ յիշատակարանի :
[2] Սոյն մենաստան կոյ շինեալ ի խորածորս կորդուաց լերանց առ ամն ե-
դեմնական հզօր և վճիտ գետոյն Տիգրիսի , ի նախկին Լուսաւորչէն Հայոց Արքայն
Բարդուղիմէոսի Աւաքելոյն . ի վանահայրութեան ուխտին Տէր Մատթէոս Մ.
վարդապետի կարճկանցւոյ , որ քսան և վեց ամաց հեռէ կոյ անդ նոյն պաշտօ-
նիւ :
[3] Այն է Գէորգ ճոխիմաստ վարժապետ բարուն Երզնկացին , որ արար
զմեկնութիւն Առորս գրոյն Սրբոյն Գրիգորի Աստուածաբանին և զայլ Քարոզս և
խրատս պէս պէս :
[4] Նախ քան զգիւտ տպագրութեան սյսպիսի մատեանք կարի թանկագին
էին . ուրեմն յիշատակն կուրթէմքերի օրհնութեամբ եղիցի :
[5] Յիշատակեալն ի թովմսոյ վարդապետէ Մեծօփեցւոյ ի Թղթ . 17. 33. և 45 :
[6] կորովամիտ բանասէրն զոր յիշատակեաց ի վերոյ :

րոս քահանայն⁽¹⁾ : Եւ ստացաք զամենագով Աստուածաշունչս՝ ի թուականիս Հայոց, ՊՀԳ. ի դառն և ի դժեւայ ժամանակիս . զի մեծ պատուհաս պատահեցաւ Եկեղեցայ դաւառիս, քանզի ի նոյն ամի յորում փոխեցաւ առ Քրիստոս, հռչակելի բարունասպետըն մեր Գէորգ եկն տէր՝ Ամթայ ի վերայ Եզրիկիս, և . . հրդեհեաց զգեղ աւանսն առ հասարակ և զվանորայս, ընդ որ և հռչակելի մենաստանս մեր կապոսու վանքս հրդեհեալ աւերեցաւ⁽²⁾ . և երեք ամ (ՊԿԵ . Էն մինչեւ ՊԿԸ) ի խսար պահեաց զքաղաքն, և առեալ ապա խաղաղացոյց, և խնամօքն Աստուծոյ սկիզբն եղեւ շինութեան դաւառիս, որ և մեք ողորմութեամբն Աստուծոյ նորոգեցաք զսուրբ Անապատս (կայիփոսի կոչեցեալն) պայծառ շինուածով առաւել քան զառաջինն . զժամատունն և զխցերն և զտընտեստունն և զայլ ամենայն շինուածսն, որ և խնամօք բարերարին Աստուծոյ, մնացէ սա անխախտ ի վայելումն սրբազան կրօնաւորաց, և յիշատակ մեզ անարժանիցս⁽³⁾ . և ամենայն աշխատաւորաց ի սմա ամէն :

1866. Յուլի 27. է յլան . Առաջնորդարան առ հանգստեալ կղերական վարդապետ Զախարեան կ. Պօլսեցի :

1496. — ՊՀԵ .

Թիւ Տ I . յԱւետարանէ .

Գրեալ ի թ վ. Հայոց ՊՀԵ . ի հայրապետութեան տեառն Պօղոսի, և յառաջնորդութեան սուրբ ուխտիս⁽¹⁾ Տէր Մարկոսի և Տէր Յոհաննիսի, ի թագաւորութեան Հայոց կոստանդեայ⁽²⁾ . . յազնիւ օրինակէ և ամենաընտիր :

Գեր. Գրեթէն Եղիսիպոսի Թարս գրաց Բ. հար. էջ 423 :

[1] Նահատակութեան պարագայք և տարին մեան ինձ անծանօթ առ այժմ .

[2] Ըստ Գարեգին եպիսկոպոսի Սրուանձտեանց Բ. Հատոր Թորոս գրոց էջ 51. սոյն վանքն կայ յարեւմուտ կոյս քաղաքին շինեալ ի սկաւառակի լիբին միոյ :

[3] Աստուածաշնչի ստացող Գարանազեցի Աւետիք վարդապետն ինքն է . որ յոյժ հաւանական թուի . թէ յետ մահուան վարժապետին իւրոյ մեծին Գեորգայ . սա յաջորդեաց զինի նորին ի պաշտօն վանահայրութեան կայիփոսի Սուրբ Յակոբայ ուխտին :

[4] Զանուն ուխտին և գրչին չէր գրեալ :

[5] Այս թուականին Հայք թագաւորութիւն չունէին :

Թիւ 82 . յԱւետարանէ .

Փառք . . . Արդ գրեցաւ Սուրբ Աւետարանս , ձեռամբ կիրակոսի անարժան գրչի , ի դառն և ի նեղ ժամանակի , ի մայրաքաղաքս Մերտին . ընդ հովանեաւ Գէորգեայ զօրավարին⁽¹⁾ . ի հայրապետութեան տեառն Պօղոսի . և յեպիսկոպոսութեան (Մերտինայ) Տէր Աբրահամին . յիշխանութեան ազգին նետողաց՝ ամիրզայ Աքանտարին , (որդւոյ Ղարայ Ուսուֆին) և ի Մերտնայ իշխանութեանս՝ ամիր Նասրին . և ի թուականութեանս Հայոց ՊՀԵ :

1866. Յունիս 31 կերակի . է վ . ի բարձրին Գնանեաց . է Տէր Գեորգի Հայոց Աւետ[2] :

Թիւ 83 . յԱւետարանէ .

Փառք Ամենասուրբ Երրորդութեան . . . Ես էլատչայ ի յՈստան քաղաքէ⁽³⁾ . ստացայ զՍուրբ Աւետարանս . . . և եղի սա ի դրան Սուրբ Եղիշէ վարդապետին՝ ի գեաւղն . որ վառնիչատ կոչի⁽⁴⁾ . . ի թուարեութիւնս Հայոց ՊՀԵ :

1866. Հունիս 29. է վ . ի Հան Պարբեայ , որ այժմ Զարբ Սուրբ Նշան անուանի :

Թիւ 84 . յԱւետարանէ .

Յիշ . — Ի թուին ՊՀԶ . ի հայրապետութեան Տէր Պօղոսի , և յեպիսկոպոսութեան Տէր Միսիթարայ՝ Ամասիոյ վիճակին , աստուածասէր և բարեպաշտ քրիստոնեայս Մղտեցի Սահակս . գնեց

[1] Այժմ Մերտին չունիմք զեկեղեցի և ոչ ուղղափառ Հայ . այլ փոքր ինչ թուով լատինաճէպ միայն :
[2] Որ 157 գերդաստանօք է հոխացեալ . և կայ շինեալ ի հարաւ կուսէ ի ներքոյ շղթային խաչկատար լերին , այժմիկ Էրեբնայ սար կոչեցեալ . ի մեջ Հաւենց և Մալապատրմ գիւղօրէից . մերձ Ալրու վանից Սուրբ Աստուածածնի ուխտին , յաւուրս Յարութիւն իշխանի գեղջն Ալրոյ :
[3] Այժմ քաղաքի հետք միայն երեւին երթեւեկ ճանապարհորդացն :
[4] Այժմ է ի շարս աւերակ գիւղօրէիցն Ոստանայ . ի սոյն վառնիչատայ էր մեծանուն Յովհաննէս վարդապետ՝ մականուամբ Բրգութ կոչեցեալ . որ ունի ըստ չափոյ գանձս և տաղս . և էր սա աշակերտ Ներսէս վարժապետ վարդապետի Ամկցոյ . և դաստիարակ մեծի բարունապետին Բարսղի Գաւառցոյ նորագողին վանուցն Արմրգօլայ . որ կայ ի Բաղէշ քաղաքի :

զՍուրբ Աւետարանս յԱստուածատուր քահանայէն ԻԴ. Ֆլորի . և եղ ի Ղաղալու եկեղեցին ի Սուրբ Սարգիսն⁽¹⁾ . յիշատակ իւր և ծնողացն՝ հօրն Գառնուկին , և մօրն Ուստիանէ . . . այլ և կացցէ ի հրճուանս սուրբ եկեղեցւոյս՝ ի գիւղաքաղաքս ի Ղաղալայի Սուրբ Սարգիսն⁽²⁾ :

1864. Ի Գեղ. 18. յԱմսից +ող+ փոսան Հայոց . Ի Սուրբ Աստուածածին եկեղեցին^[3] :

Թիւ 85 . ի կաթուղիկեաց թղթոց մեկնութենէ .

Փառք . . Գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց . ՊՀԳ . ի կաթուղիկոսութեան Տեառն Պօղոսի , և յեպիսկոպոսութեանն Երուսաղէմայ Տէր Մարտիրոսի⁽¹⁾ : Տէր Աստուած ողորմեա ստացողի գրոյս Մկրտիչ արեղային , որ է լուսարար Սուրբ Յարութեան տաճարին , և Սուրբ Գողգոթայիս . և գծողաց սուրբ տառիս Տիրատուր և Վարդան արեղայիցս : Յիշեցէք զՆիսարեղ հաւատաւորն⁽⁵⁾ . որ յոյժ երախտաւոր է մեզ ի Սուրբ Քաղաքս Երուսաղէմ :

1864. Գեղ. 12. Շաբաթ . Ի Մարտի . Ի Վան Զարեմիան Սուրբ Աստուածածին :

Թիւ 86 . յԱւետարանէ .

Փառք անպարագիծ էին . : Արդ կատարեցաւ Աստուածախօս և տիեզերաքարոզ Սուրբ Աւետարանս . ի խնդրոյ աստուածասէր և հաւատարիմ Հռիփսիմին , յիշատակ իւրն և ծնողաց իւրոց , հօրն Սաղոնին և մօրն Թաճխաթունին . : Եւ արդ ես ունայնս ի բարեաց գործոց . սուտ անուն գրչակս Յոհաննէս , որ անուամբս եմ եւեթ՝ և ոչ արդեամբք . . ըստ իմում տկարութեանս գրեցի զսա ,

[1] Այս եկեղեցւոյն այժմ տւերակք միայն երեւին . և է միով ժամաւ հեռի ի քաղաքէն Ամասիոյ :

[2] Այս գիւղաքաղաքս այժմ երեք չորս տուն միայն բնակիչ ունի :

[3] Յաւուրս յառաջնորդութեան տեղոյն և այլ վիճակաց նորին , ի Տէր հանգուցեալ տեառն Գեորգոյ արք եպիսկոպոսի Կ. Պօլսեցւոյ . աշակերտի մեծի Յակոբայ արհւոյն , Բիւզանդիոյ Հայոց գորովագութ Պատրիարքի . որ էր աշակերտ տեառն Յովհաննու Աստուածարան Պատրիարքին Կ. Պօլսոյ :

[4] Այն է Մարտիրոս Ա. եպիսկոպոսի . յաւուրս սորին կորզեալ առին ի մէնջ Վրացիք զՍուրբ Գողգոթայն :

[5] Յաշխարհէ հեռացեալ վանաբնակ կին :

զՍուրբ Աւետարանս , ի վանքս որ կոչի Գամաղիէլ⁽¹⁾ . ընդ հովանեաւ Սուրբ Առաքելոյն Գամաղիէլի , և ամենայն սրբոցս՝ որ աստ շուրջ զմեօք բնակեալ կան . ի յառաջնորդութիւն վանացս բարունոյս մերոյ Ներսէս բանախնդրի , և յեպիսկոպոսաց մերոց Տէր Ստեփաննոսի և Տէր Վարդանի , և Տէր Դաւթի . զոր Տէր Աստուած ընդ երկայն աւուրս առնէ : Եւ ի յայլ միեղէն եղբարցս Պողոսուն Ստեփաննոսին , Դաւթին , Յովաննիսին , Սարգսին , Մըխիթարին , Յովսէփին , և անտես Մխիթարին , զոր Տէր Աստուած պահեսցէ զսոսա խաղաղական կենօք մինչեւ ի խորին ծերութեան ամէն : Արդ՝ գրեցաւ Սուրբ Աւետարանս , ի թուականիս Հայոց ՊՀԶ . ի զանութիւն . . . Սքանտարին , (որդւոյ Ղարայ Ուսուֆին .) և մերոյս քուրդ ամիրիս Հիզնայ ամիր) Դաւուտին .

1865. Յունիս 10. Սուրբ Աստուածածին եկեղեցին . յառաջ Գամանս . յիւրեան Գեղայն Տէր Մարտիոս ծերունազարդ Գամանային , որ եր խուն Տէր Մարտիոս եղբուն Գորգիս :

Թիւ 87 : ի ճաշոցէ .

Փառք Եզակի Անճառելոյ . : Եւ արդ ես անպտուղս ի բարեաց . . Մարտիրոս սուա անուն քահանայ . տեսի զսէր և զփափագ սոցա զթումայի և զԱբրահամու , և ըստ իմում տկար անճամբս յանձն առի , և ամենակարող զօրութեամբն Աստուծոյ կատարեցի . . . Ժամանակիս ի թուականիս Հայոց ՀՊԶ . և գրեցաւ սա ի գեաւղս Սիսգայ⁽²⁾ ընդ հովանեաւ Սուրբ Ամենափրկչիս , և Սուրբ Աստուածածնի . :

1866. Փետրւոր 22. ի վ . . . ի Հայկունս . Սուրբ Աստուածածին եկեղեցին^[3] :

[1] Յանուն Սուրբ Առաքելոյն Գամաղիէլ հարիւրապետի ի գաւառն Հիզնայ , մերձ ի գիւղորայս Յէկու և Անդենց :

[2] Սոյն շէն 48 Հայ ընտանեօք կայ կանգուն յարեւելից կուսէ մերձ ՍԱԺ գետամնն վանայ յիշատակէ զսա թումայ վարդապետ պատմիչն Արծրունեաց գաւառ անուամբ :

[3] Վերջին նորոգութիւն սուրբ եկեղեցւոյս արարեալ է Մոկացի Արդար մականուամբ Յովհաննէս Աստուածաբան վարդապետն՝ ընդ աշակերտին իւրոյ Յարութիւն վարդապետի Գէվկանց յանցելումն դարու , և կայ գերեզման վերջնոյն ի նմին եկեղեցւոջն՝ ընդ այլ նշանաւօր եպիսկոպոսաց և վարդապետաց . յորոց մինն էր Մոկացի Աբրահամ ճոխ քարոզիչ վարդապետն , որ հանգեաւ ի Քրիստոս ի խորին ծերութեան նախ քան 1857 թուականն . յաւուրս առաջնորդութեան վիճակին վանոց Գարրիէլ արք եպիսկոպոսի Շիրոյեան վանեցւոյ :

Թիւ 88 . Սուեաբանէ ի վերջն Ղուկասու .

Ես Ղազար որդի Ստեփաննոսին ի վերին Թլկանէն (գիւղ յԵրզնկայ) գնեցի զՍուրբ Սուեաբանս , և եդի յիշատակ ի դուռն Սուրբ զինաւորին Արքայն Սարգսի . . Թվ. ՊՀԶ :

Ընթերցեալ է Արքայն Լարդուր Թեմայեան յԵրզնկայ է Շնայ Լան :

Թիւ 89 . ի Յայսմաւուրէ .

Փառք քեզ անբաժանելի Սուրբ Երրորդութիւն . Հայր և Որդի և Սուրբ Հոգի . Երրեակ Անճնաւորութիւն և մի Սասուածութիւն , Անակիզբն և ամենազօր անխախտան Թագաւորութիւն՝ օրհնեալ գովեալ և փառաւորեալ ի հրեշտակաց և ի մարդկանէ , և ամենայն քոյոց արարածոց՝ այժմ և յաւիտեանս ամէն : Պարգեւօք և առատ ողորմութեամբն Սասուծոյ բարերարին , ցանկացող եղեալ բաղձանօք հոգեւոր սիրոյ . (սոյն մատենի) Տէր Սարգիս եպիսկոպոս , սոսկ անուռն և թափուր ի յամենայն բարեգործութեանէ , և սեւ երես դիմօք և պատառող ցանկոյն Սասուծոյ . Փափաղուենէի ի տղայութենէ՝ յայս սուրբ նշխարհացս և չգտանէի : ԽՖ . ամ շուրջ եկի օրինակն չտային . լալով և պաղատանօք հայցեցի ի յամենակարող Փրկչէն , և Տէր եցոյց բազմամեղիս զկարօտ ծարաւոյս . սատանայ հանց (այնպէս) կապել էր , ընդ որ գնացի դուռն փակեցաւ . . սատանայ հանց հաղառակեցաւ , որ ԲՏ . ԴԿ . (1) ու գլխութիւն ու զամէն նիւթ (ետու) ու չգրեցին անիրաւքն . մեք էաք եօթանասուն ամեայ . գրչի մատն չոր էր և աչքս վատատես , անձար էաք և ուխտեալ էաք Սասուծոյ . : Նախ՝ հօրն մեր(2) պարոն Սօլթանչահին և մօրն Մինա խաթունին՝ և եղբարցն քուերացն , և եղբօրն մեր ըստ հոգոյ Յովաննէս քահանային , և զաւակին կարապետ կրօնաւորին , որ զօրինակն շնորհեաց . Սասուած բազում վարձս տացէ նմա , և Տէր Առաքելին : Եւ այլ հոգեւոր հօրն մեր պարոն Տիրիկին , Խուանդին , Թանկսուխին և մեր ամենայն ազգականացն մինչեւ ի քառասուն պորտն ամէն , և զՏէր Սիմէօն ճգնաւորն . Սասուած զինքն յամենայն ճգնաւորաց մասնակից արասցէ : Այլ և զեղբայր ճգնաւորին զՄատթէոս քահանայն յիւր լուսոյն և տեսոյն արժանի արասցէ ամէն : Նաեւ զկենակիցն իւր զԵսայն տիկին . այն սուրբ կանանցն . որ վասն Քրիստոսի չար-

[1] Երկու հազար գահեկան կամ դեկան :

[2] Յայսմաւուրի գրչին Սարգիս եպիսկոպոսին :

չարեցան և լուսաւորեաց Տէր Յիսուս Քրիստոս⁽¹⁾ . Տէր զինքն և զիւր զաւակսն զՄեկքիսեդեկն պահեսցէ մինչեւ ի խորին ծերութեան . անսայթաք պահեսցէ և արդիւնաւոր և քահանայեսցէ ամէն : Այլ և զհանգուցեալն որ առ Քրիստոս գնացեալ զպարոն Դանիէլն և զեղբայր սոցա զմիայնակեացն , և զխորին ծերնն՝ զնոր ննջեցեալն՝ որ և այժմ հանգեալ զՏէր Յովիէլ . և զաշխարհի կարօտածս զԲարսեղս՝ որ տղայ հասակաւ ի Քրիստոս փոխեցաւ . յիշատակն նորա օրհնութեամբ եղիցի ամէն : Դարձեալ հայցեմք ի ձէնջ , որ զվերոյգրեալն յիշէք . որ տասն ամ է՝ որ կերակրէ զմեզ և մխիթարէ ու հիւանդ կու պահէ . Աստուած կերակրէ անմահական կերակրովն զՏէր Սիմէոն և զՏէր Մատթէոսն , և զԵսանն ամէն : Պաղատանօք հայցեմք ի սուրբ հանդիպողացդ որ զԻգնատիոս վարդապետն , և Յորդանան . և զերեմիայն յաղօթս յիշեն . . : Յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր⁽¹⁾ . Նախ Գոչայ , Վանականայ , Վարդանայ , Ներսէսի , Եսայեայ : Տիրատրու , Բարսղի , Գըրիգորի , Սարգսի , Դաւթի , Կիրիոնի , Առաքելոյն , Գրիգորի , Ծերունի , Կիրակոսի , Գրիգորի , Յովսէփի , Յակոբի , Մաղաքիայի , Յոհանիսի , Սարգսի , Վարդանի , Գրիգորի քաջ և արի հռետորի . (Տաթեւացւոյն ակնարկէ) Գէորգեայ՝ Յակոբին , Մատթէոսին և այլ ամենայն համօրէն վարդապետացն . : Յօղն ողորմութեան իջցէ յոսկերս նոցա⁽²⁾ . և բուսուսցէ օրն վերջին այն սուրբ վարդապետացն և այն սուրբ թարգմանչացն Սահակայ , Մեսրոպայ , Դաւթի անյաղթի փիլիսոփայի , Մովսէսի , Ստեփաննոսի Սիւնեացն և այլն որ ի կարգին է . զիւրեանքն (ընդ) այն մեծ վարդապետան Քրիստոսի արժանի արասցէ . և ինձ բազմամեղ Սարգսիս ողորմի Տէր Յիսուս ամէն եղիցի , Սուրբ Լուսաւորչին մասնակից լինիք : Որ և զհոգեւոր հայրապետքն մեր յիշեսջիք Տէրամբ ի Տէր զկաթուղիկոսքն որ և հանգուցեալ կան : զՏէր Ստեփաննոս , զՏէր Ներսէս , զՏէր Մեսրոպ , զՏէր Ստեփաննոս , զՏէր Յովհաննէս , զՏէր Զաքարիայ , և զմիւս Զաքարիայ , զՏէր Թադէոս զՏէր Թէորոս (գուցէ Թէորոս) զՏէր Ստեփաննոս , զՏէր Կարապետ , զՏէր Գրիգոր , զՏէր Վանական , զՏէր Ալեքսիանոս , զՏէր Կարապետ . զՏէր Անուէն , զՏէր Սարգիս , զՏէր Յովաննէս զՏէր Առաքել , զՏէր Սարգիս որ զգիրքս գրեցի . զՄատթէոս քահանայն , զԹանկսուղն , զպարոն Ամիրազիզն , զՋանազիզն , զՀազարմարդն , և զայլ ամե-

[1] Զարչարող բռնաւորի անուն չէր յիշատակեալ :

[2] Եւ Աստուած ողորմի ասել քաջ և արի և ժրաջան վարդապետաց մերոց :

[3] Վերոյիշեալ բաբուն վարժապետաց Հայոց :

նայն , որ յառաջին կիւրակէն հանգուցեալ . և այլ պիտի հանգչին : Քրիստոս Աստուած : Վասն Աստուծոյ թողութիւն արարէք խոշորութեան գրոյղ և սխալանացս . . ձեր Սաչդ և Աստուած վկայ է որ քսան և մէկ տարի է , որ գրչի ծայրն և մազ չեմ տեսնուլ . ձեռս կուգողայ⁽¹⁾ . Վասն Աստուծոյ մի' մեղադրէք և օրհնեալ լինիք . (գրեցաւ գիրքս) ի Թուիս Հայոց ՊՀԶ . Ահեկի ԻԲ . ի տեղիս որ աւարտեցաւ ի Կոթի Փորոյ Վանքս . որ կոչի Ընկուղայ Գոմ . (է ի Գուգարս) ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս . . զՅովհաննէս և զՍարգիս յիշեցէք . որ մեզ ջուր են բերել . զՄարտիրոսն որ մեզ մեղր է տուել , Աստուած զիւր քաղցրութիւն նմա տացէ աւէն :

Ի 1881 . Փետր . 27 . յոսոսր Ուրբիս . է Վ . Ե . է Վնս Վարդայ Գերման Սուրբ Նշանի . է Գրեանց Բանգարանի նորին .

Տար . — Թուին ՊՀԶ շնորհօք բարեբարին Աստուծոյ , ես պիտակ վարդապետ Սիմէօն ընծայեցի զայս նորընծայ Յայսմաւուրք Սուրբ Կարապետիս (Յոհաննու վանուց Կարպոյ) վասն փրկութեան հոգւոյ իմոյ :

Շահաբնանեան Յահանէն Եպիսկոպոսի սրբաբնանեան Բ . հար . է Բղն . 104 :

էր սա (Կիրակոս վիրապեցին . որ նստաւ զկնի կաթուղիկոս Հայոց 1441 ամի) յաշակերտաց Սարգսի և Վարդանայ վարժապետաց . այր ճգնաւոր սուրբ և ընտրեալ . որ թուին ՊՀԶ . եղև քահանայ ձեռամբ Տէր Պետրոս եպիսկոպոսի Թաղէոսի Առաքելոյն . :

Ի Գրեբնանեան Գաւիթ Վարդապետի Բաղիշոյ [2] :

[1] Ի տեղիս տեղիս ի լուսանցս նոյն գրոց՝ յատկապէս ներողութիւն խընդրեալ էր յընթերցողաց իւրոց . սակս անյարմար գրութեան իւրոյ՝ որ յառաջ եկեալ էր ի գողգոջմանէ ձեռին :

[2] Էր սա աշակերտ Մեսրոբայ Արք եպիսկոպոսի մեծի դիտին Բաղիշոյ . և էր սոյն Գաւիթ գրագէտ վարդապետ , վանահայր Սուրբ Խնդրակատար Աստուածածնի ուխտին Բաղիշոյ , և նորոգող նորին . և ժամանակակից էր մեծին վարդանայ բարունւոյ վարժապետի՝ Ամրոյ վանահօրն : Ունի սոյն Գաւիթ վարդապետ մի պատմագրութիւն . սկզբնաւորեալ յիշխանութենէ տէրութեան Ռուբինեանց մինչև ի ժամանակս իւր . որոյ բնագիրն կայ ի Լիմ Անապատն . և ինքն ապա յետ ժամանակաց ուխտի ազագաւ՝ ընդ աշակերտակցին իւրոյ Աւետիք վարդապետի , և ընդ վարժապետին Մեսրոպայ Արք եպիսկոպոսին . զայ ի Լիմ և վախճանի անդ . յաւուր տօնի Որդւոց Որոտման ըստ պատմութեան իսկ Մեսրոպ եպիսկոպոսի և թաղի անդ յետագայ արձանագրութեամբ : « Կանգնեցաւ Սուրբ Խաչս բարեխօս առ Աստուած Բաղիշեցի Գաւիթ վարդապետին , և աւանայն աշխատողացն . յիշեցէք ի Քրիստոս թվ . ՌՃԻԲ : »

Իսկ Սիմէոն սրբասէր (վարդապետն Ռչտունցի) արբանեակ և սպասաւոր լեալ վարդապետին Ստեփաննոսի, (Բախավանցւոյ Փիր կոչեցելոյ) և տուեալ զինքն յընթերցումն Աստուածաշունչ կտակարանաց, եղև աշակերտ գրոց և սպասաւոր բանի⁽¹⁾: Եւ մնացեալ վարդապետն Ստեփաննոս, ամս ինչ ի նորաչէն Սուրբ Յա- Յակոբ (Կասրուտ կողայ ուխտն) յանձն առնէ զաշակերտն իւր և զբնակիչք տեղոյս շնորհացն Աստուծոյ, և ինքն գէմ եղեալ՝ երթայ դարձեալ ի Սուրբ Քաղաքն Երուսաղէմ և վախճանի անդ: Իսկ ապա զկնի գնալոյն նորա, Սիմէոն սպասաւորն բանի. առնու գաւազան և իշխանութիւն վարդապետութեան ի ՊՀԶ թուականին, և լինի խնամածու և հոգարարձու, և առաջնորդ Սուրբ Յակոբայ հանդիսաւոր կրօնաստանիս, և ծնող և դայեակ, խնամիչ և դարմանիչ, անուցանող և սփոփիչ Սուրբ Յակոբայ միաբանիցս. իբր զգորովագութ ծնող զաւակացն իւրոց:

Ի Կարեփրոսիէն Մինասէնց թովմայ վարդապետի Աղթամարցւոյ խնամակալից պատմութիւն Հայոց:

Իսկ ի ՊՀԶ թուին, էառ նոյն Աքանտարն (զան սրդի Ղարայ Ուսուֆի) զանառիկ բերդն Մակուայ ի ձեռաց քրիստոնէից⁽²⁾. և տիրեաց նմա. . . ըթ.ք կըս. . . հատ (երկու տող զիր մաշեալ էր) բոլոր ազգացս քրիստոնէից. զի ի բոլոր աշխարհացս. այն մին բերդըն միայն էր մնացեալ ի ձեռս քրիստոնէից. և այն եւս առաւ ի մէնջ:

Մինասէնց թովմայ վարդապետ Կարեփրոս:

1428. — ՊՀԷ.

Թիւ 90. յԱւետարանէ.

Յէշ.— Փառք անպարադիծ էին. : Եւ ես մեղուցեալ և անարժան ծառայս, թումայ անուամբ ելեթ միայն արեղայ⁽³⁾. . . և ամենա-

[1] Ունի սա բազում Գանձս արարեալ ի տօնս Տէրունականս. և ի Սուրբս նորին. յորոց բազմաց գլխատառս յօդին զանուն նորին, տես ի ձեռագիր Գանձարանս:

[2] Ըստ թովմայի Մեծոփեցւոյ ի թղթահամարն 68. Մակու էր ի ձեռս Ունիթոռ Հայոց, զորոյ բերդատէրն Սուրղաթմիշ հանին ասէ. ի սուտ և յերկարնակ աղթարմայութենէն՝ ծառայք Օմարայ՝ որդւոյ Միրան շահի: Եւ ի թղթ. 73. եկին ի հաւատս ասէ վասն ուրացեալ իշխանացն այնոցիկ:

[3] Մինն յերեւելի գրչացն Աղթամարայ. է նոյն իսկ Մինասէնց թովմայ տարեգիր և հրդիչ բարուն:

կարող զօրութեամբ Նորին կատարեցի զսա . յԱստուծով նախախնամեալ կղզիս Աղթամար՝ ընդ հովանեաւ գմբէթայարգ և երկնանման Սուրբ Խաչին և Սուրբ Աստուածածնին . և այլ բազմահաւաք սրբոց նշխարհացս . սր աստ կան հաւաքեալ . ի հայրապետութեան տեառն Գաւթի⁽¹⁾ . և ի զանութեան ազգին նետողաց ամիրզա Աքանտարին թուրք ազգաւ : Որ և տիրեաց աշխարհիս մերում . և էառ բռնութեամբ զանառիկ ամրոցք աշխարհիս մերոյ : Այս է զանմատչելիս և զանկոխ ոտից թշնամեաց՝ և զտեղիս ասպատանի բոլոր աշխարհացս զկղզիս Աղթամարայ , և զանառիկ ամրոցս և զմայրաքաղաքս երկրիս (Ռշտունեաց) զՈստան , զպարանոցատան ջըն զԱմուկ⁽²⁾ և մինչ ի Հէշատ և ի Նըւան , զբոլոր աշխարհս բռնակալաց ընդ ձեռամբ իւրով և ընդ իշխանութեամբ

Ես մեղուցեալս յամենայնի Աբրահամ սոսկ անուամբ կրօնաւորս , ստացայ զսա ի հալալ արդեանց իմոց . և ետու զսա ընծայ և նըւէր ի մեծ և ի հռչակաւոր ուխտս Պատրկի Վանք կոչեցեալ՝ որ կայ հանդէպ Ոստան քաղաքի⁽³⁾ . ի դուռն Սուրբ Աստուածածնին , և Սուրբ Գէորգ զօրավարին . : Յիշել ի Քրիստոս զսպասաւորք Սուրբ եկեղեցւոյս , որք վայելողք են Սուրբ Աւետարանիս , զքաջ և զարիարան՝ զսրբազան և զուղղադաւան վարդապետն մեր զՅովհաննէս⁽⁴⁾ . և Աստուածատուր վարդապետն⁽⁵⁾ . . զՄարտիրոս և զՅովաննէս , զՅովսէփ և զԱստուածատուր , զՄկրտիչ և զՎարդան , զԿարապետ և զՍտեփաննոս , զՎարդան և զԱտոմ միայնակեացս⁽⁶⁾ . Եւ արդ՝ ես ունայնս . . անյիշելիս ի գրչաց (յաւէտ յի-

[1] Էր սա եղբայր Զաքարիա Բ. կաթուղիկասին Աղթամարայ՝ որ նահատակեցաւ ի Պիթ ամի , և յաջորդեաց սա յԱթոռն զկնի նահատակութեան եղբորըն , և անտի մինչ ցայսր լեալ են ամբ 35 որ վարէ զկաթուղիկոսական պաշտօն իւր :

[2] Այն է բերդն Գնունեաց երկրին , որ կայ առ եզերքն ծովուն Վանայ յարեւելից կուսէ մերձ ի գիւղն Էրերին :

[3] Այս վանուցն այժմ Զաղբը Սուրբ Նշան անուն տան յետինք . ի դարբասի սորին ննջէ ի քուն արդարոց՝ քաղցրախօս սլաամագիրն Հայոց՝ Սուրբ վարդապետն Եղիշէ :

[4] Թուի ինձ թէ՛ Պուտլիկ մականուանեալն է՝ որ ունի բազում Գանձս ասացեալ :

[5] Զորս տող մաշեալ էր գիրն :

[6] Էին սոքա վանականք Պատրկայ վանից . զոր շինեալ է Վարդ Պատրիկ իշխանն Արծբոււնի՝ որդի թէոդորոսի Ռշտունոյ մեծի իշխանին Հայոց . ներկայս մի քահանայ միսցն ունի սոյն վանք :

չեի) անուամբ միայն արեղայս թուամայ⁽¹⁾. . յիշման արժանի առնել զիմ անարժանութիւնս , և թողութիւն մեզաց խնդրել ի Քրիստոսէ ինձ և ծնողացն իմոց Սիմէոնին և Արղունին . . այլ և երախտաւոր քեռոյն իմոյ և ուսուցչին թուամայ միայնակեցին , և հօրեղբօրն իմոյ Վարդանին , և որդւոյ նորա Մկրտիչ կրօնաւորին հանգուցելոցն ի Քրիստոս , և նորաբողբոջ քուերորդւոյ իմոյ , Հայրապետ կրօնաւորի⁽²⁾. . Գծագրեցաւ և աւարտեցաւ Սուրբ Աւետարանս՝ ի ՊՀԷ. թուականին , և ընծայեցաւ ի դուռն Պատրիկայ վանից Սուրբ Աստուածածնին , և Սուրբ Գէորգ զօրավարին :

Ի 1866. Հ. Կ. 29. Շաբաթ. է Վ. ան. յՈոտոմն է վանն Պատրիկայ . է վանահայրաւթեան Տէր Սարգիս Գահանայի :

Թիւ 91 ի Յայսմաւուրէ .

Փառք . . ի Թուարերութեանս Հայոց . ՊՀԷ թուականին . գըրեցաւ գիրքս սոսկացուցիչ ի հայրապետութեան տեառն Պօղոսի , և յաշխարհակալութեան Շահ Իսքանտարին , որ ունէր զթագթն (Թափրէզ) և բազում աշխարհ ի Սօլթանիոյ մինչ ի Մէրտին . և զայս միջոցս զամէն ի ձեռին ունէր : Եւ զի տղայ էր և չոր գլուխ շատ աւեր երեր Քրդաստանաց . և սպանեց զՊարնէքն (զպարոնս քրդաց) և շատ աւար տարաւ և գերի՝ վասն ծովացեալ մեզաց մերոց . և յայսմ (ՊՀԷ) ամի Հոգեղալստեան ծնկահար ձիւն երեկ : (եկն) Արդ՝ այս չար ժամանակիս՝ կրօնաւոր սմն արեղայ Սարգիս անուն : ետ զգիրս ի գրել և ինքն փոխեցաւ առ Քրիստոս . . և ես սուտ անուն Յոհաննէս յանձն առի , և շնորհօք Քրիստոսի աւարտ հանի . գրեցաւ գիրքս լուսազարդ ի վանքս Մեծոփայ⁽³⁾ . ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս՝ և Սուրբ Յակոբիս՝ և առ ոտն մեծ բարունապետի թուամայ վարդապետի⁽⁴⁾ . պարոն Գօրգու աղբեր⁽⁵⁾ , և Տէր Յոհաննիսի . զոր Տէր Աստուած պահեսցէ զնոսա ի

[1] Պարժանքն ուխտին Աղթամարայ , որոյ յիշատակն օրհնութեամբ կղեցի .

[2] Սա յեա ժամանակաց յաւուրս Գ. Զաքարիա կաթուղիկոսին Աղթամարայ . որ նստաւ նա եւս ընդհանուր կաթուղիկոս յէջմիածին՝ և յաջորդի նորին Ստեփաննոսի երրորդի՝ նման քեռոյն իւրոյ Մինասնց թովմայ տարեգիր վարդապետի , ծաղկեցաւ յոյժ ի վայելչագիր նօտարութեան և ի տարեգրութեան :

[3] Որ կայ ի գաւառին Աղիովայ՝ շինեալ ի մէջ ձորակի միոյ ի հիւսիսաւ յին կողմանէ Ականց գիւղաքաղաքին մերձ ի գիւղն Յարութիւն :

[2] Պատմագրի Մեծոփեցւոյ . վանահօր ուխտին այնորիկ :

[5] Ըստ թովմայի Մեծոփեցւոյ ի թղթ. 93 էր սա Գօրգի Մէլիք Աղոյ գիւղաւանի տանուտէրն :

Դարձեալ ի ՊՀԸ. թուականիս, զոր ժողովեաց. (Սքանտար զան) գունդ կազմեաց, և ելեալ գնաց ի վերայ քաղաքին Սուլթանիոյ, և չորս ամիս խտարեալ էառ զնա՝ և զամենայն զօրսն որ անդ կային՝ սուր ի վերայ եղեալ զենեաց զամենեանս. . և զտէրն տեղւոյն (Սուլթանիոյ) ըմբռնեալ զԵլիաս՝ խօջու որդին՝ եղ յամուրս իւր: Եւ էր տէր տեղոյն որդի քենւոջն Շահ Ռուհին՝ թագաւորին Մարաց և Պարսից կողմանց արեւելից և Սորասանու: Եւ նորա շարժեալ ի բարկութիւն՝ եկն անթիւ և անհամար զօրօք. . ի վերայ յիմար և անզգայ և անհնազանդ և հպարտ և գոռոզ բռնաւորին Սքանտարին: Այլ մատնեցաւ (Սքանտարն) ամենայն զօրօք իւրովք ի ձեռս Չաղաթային. և գերեաց զամենայն թուրքմանս և զբազումս ի քրիստոնէից, և առեալ տարաւ ի ձմերայնոցն Ղարաբաղ, և անդ անցոյց զդառնաչունչ աւուրս ձմերայնոյն:

Թովմայ Մեծ. է Բղթ. 83. 6. 7.

Թիւ 93 . յԱւետարանէ .

Յիշ.— Փառք Անսկզբան . : Արդ գրեցաւ սա ի գիւղաքաղաքքս Կարբի⁽¹⁾, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին, և այլ Սուրբ եկեղեցեացս, յամի, ՊՀԸ. թուականիս մերում :

1866. Յուլ. 30. Շէքեթ. է Վ. Է. է Մարտի 4-դէ է Սեպտեմբերի 1-ին^[2],

Թիւ 94 . ի Մաշտոցէ .

Փառք . . : Որոյ ցանկացող եղեալ արքայութեան Աստուծոյ Վաւրդուեցի Յովանէս երէց . . որ և երեւ (եւ) երեք հարիւր ըսպիտակ մատաղի ի Լուսաւորչիս գերեզմանն Չորեհանգիստ կոչեցեալ՝ Ղազար վարդապետին ձեռօքն. և ես Ղազար վարդապետ

[1] Անկանի սա ի մէջ կոտայից և յԱրագածոտան գաւառաց. և կայ ի հիւսիսային յարեւմուտս քաղաքին Երեւանոյ իբր վից ժամաւ հեռի ի նմանէ:

[2] Այս գիւղն շինեալ կայ առ ափն Սեւ գետին, որ երբեմն շինիս անուամբ Մարմեա եւս կոչի. և է առաջին ի գետս բարեբերութեամբ իւրով՝ որք թափին ի լիճն Վանայ. քանզի ի գարնանային ժամանակի ի մէջ Մոյիս և Յունիս ամսոց՝ տայ և մատուակէ ողջոյն բնակչաց Վասպուրական աշխարհի՝ և այլ դրացի քաղաքաց և գաւառաց նորին՝ զբարեհամ Տառեխ ձուկն իւր. և ամ ըստ ամէ կշտապինդ լիացուցանէ առ ինքն գիմող ի գեհից գեհից կարաւանս՝ որք գան վասն Տառեխի:

պատշաճ զայն համարեցայ. որ յիշատակ լինի հոգւոյն. . . ի կաթուղիկոսութեան տեառն կոստանդեայ, և ի թագաւորութեան Աղուպ պակին: Յառաջնորդութեան սուրբ ուխտիս (Ջորեհանգիատ կոչեցելոյ) Ղազար վարդապետիս անարժան անուանա: Եւ զուխտի մանկունս յիշատակելով զառաջնորդս և զհայրապետս (գուցէ հարպետ) Լուսաւորչի սուրբ գերեզմանին կարապետ կոչեցեալ: Այլ մեք միաբանքս յիշատակելով զՍարգիս երէց, զԹորոս դասակալն և զԳրիգորն, որ են գաւառաւ Տիվրիկցիք, զՅովհաննէս արեղայն, զՄկրտիչն, զԹագէոսն, զՍտուածատուրն, զՄարտիրոսն, զՅովհաննէսն, և զՍնդատած միայնակեացն, որ է միամիտ սպասաւոր մեզ. և այլ սարկաւազունք՝ որ խիստ աշխատեցան ի վանից շինելըն⁽¹⁾ և այլք տնտեսք և հովիւք և իշավարք և լծուարք և այլ աշխատաւորք. և բոլոր միաբանիցս իւրաքանչիւր զբարի ձայն տայ լսել ամէն. : Այլ և թողութիւն արասցէ. . . Տէր Շուքրանի բազում մեղացն Սուրբ Աստուածածնին բարեխօսութեամբն՝ և Լուսաւորչին արժանաւոր աղօթիւքն, զի երկու հարիւր սպիտակ մեղաց գին ետ ի վանիցս պակասութեան. որոյ Աստուած ոչ յիշէ զիւր մեղքըն. : ի թուականութեանս Հայոց ՊՀԸ յիշխանութեան Աւթման պակին. որ գրեցաւ բոլոր մաշտոցս. ձեռամբ Գրիգորի անխմաստ գրչի Տիվրիկեցւոյ. :

Ի 1889. ի վ.ն. — Արեւի շարագետ թօթխիւտն. զոր օրինակել է կամախ Աւթման:

1430. — ՊՀԹ.

Տար. — Եւ նոցա (Ջոնկայի օրդւոյ Շահ Ռուհայ և զօրաց իւրոց) առեալ զառ և զաւար և զողորմելի մանկունսն մեր անթիւ և անհամար ի քաղաքէ և ի գեղջէ, և երթեալ ի Տոսպ գաւառ յերկիրն Վանայ ի յոտն Սուրբ ուխտին Վարագայ, յանկարծակի հասեալ ի վերայ առաջնորդութեամբ. . . քրդով մի Սեւդին անուն՝ ի տանէ և յազգէ բարեբարոյ և աշխարհաշէն ամիրային էզդին, (ի) և (օրդւոյ նորին) Մէլիքին, (տեարցն Ռստան քաղաքին Ռըշտունեայ) որ ունէր զերկիրն Բերկրոյ, և գերեալ զամենայն գաւառն անթիւ և անհամար զկանայս և զօրդիս ամենայն հաւատացելոցն (Հայոց) առեալ տանէին ի Սորասան: Եւ ճիչն և վայն և ե-

[1] Աւրեւն Ղազար վարդապետն է մինն ի շինարար վանահարց անտի:

ղուկն տիրեաց մեզ : Եւ մեք բաղում անգամ հարցաքննութեամբ ի խնդիր եղեալ թերեւս գտանէաք զթիւ համարոյ գերեացն զԱրճիչոյ և զՎանայ՝ և ոչ ոք կարաց ստուգել . բայց միայն այսչափ զի երեք սարկաւազ ի Սուրբ ուխտէն Մեծոփայ , և քսան և եօթըն գերի ի գեղջէն Աղոյ⁽¹⁾ . որ մերձ էին առ մեզ յազգէ և սիրելեաց ծանօթք զի գերեալ էին , և տասն գերի ի միոջէ տանէ ի գեղջէն Մաճառաւաց⁽²⁾ : Եւ վա՛յ մեզ , և եղուկ յայնմ օրէ մինչեւ ցայսօր և առ յապա : Եւ այս եղեւ ի ՊՀԹ թուականին ի Պէնտէկոստէին աւուրս : Դարձեալ ի Սաչի տօնի աւուրն եկն Աքանտարն այն՝ նստաւ ի վերայ Արճիչոյ քաղաքին , և հնարէր զհնար առմանն : Իսկ քրիստոնէիցն խորհուրդ ի մէջ առեալ Քաղանի . . . մահաւանդ խորհրդական և իմաստուն , իշխանակերպ և քրիստոսասէր տանուտէրն Մուրատայ անուն , զհետ Արճիչոյ տանուտեարցն Յովհաննէս Փոքօ ձեռնաւորն և Գորգի Մէլիքն Աղոյ տանուտէրն (եղբայրն Թովմայի Մեծոփեցւոյ) գնալ առ . . . Աքանտարն և շիջուցանել զբարկութիւն դառնութեան նորա . : Եւ ողորմութեամբ Քրիստոսի շիջուցին զդառնութիւն նորա : Եւ նա երգուաւ ոչինչ վնաս գործել նոցա : Բայց զտէր քաղաքին Արճիչոյ Սալթին անուն սպանին և տանիչման մի խորհրդակից նմա . և մազ մի ոչ կորեաւ ողորմութեամբն Աստուծոյ ի քաղաքէն . զի քրիստոնէասէր էր (Աքանտար) և ողորմած ազգին մեր : Այլ վասն հպարտութեան բարուց իւրոյ ոչ ինքեան յաջողեցաւ , և ոչ հաւատացելոցն , կորեաւ ինքն և կորոյս զազգս մեր :

Թ.Վ. Մեծ. Է Բ.Վ. 91 92. և 93.

Տար .— Դարձեալ եկն Շահ Ռուհն . (որդին Լանկթամուրոյ) Դեմետրէն⁽³⁾ զէմ գնաց ի Ղարաբաղն :

Առաւել պարտէլ էլ . 598 :

Դարձեալ ի սոյն թուին մահ տորածեցաւ .

Առաւել պարտէլ էլ . 598 :

[1] Այս մեծ գիւղաւան այժմ է ի ձեռս քրդաց : Էր սա հայրենիք Թովմայ վարդապետի Մեծոփեցւոյն գիպուածոցս պատմագրի :
 [2] Այս գիւղն ի 1858 ամի տպեալ վիճակագրութեան ունէր 33 Հայ գերգաստան , բայց ի 1866 ամի յամսեանն Հոկտեմբերի , մինչ յանուն Նարեկայ ուխտին նուիրակութեան պաշտօնիւ գիպեցայ անդ՝ հաղիւ թէ տասն տան չափ գտայ զՀայ բնակիչս . զի յորովք գաղթեալ էին անտի
 [3] Ինձ յոյժ հաւանական թուի թէ է թագաւորն Վրաց :

Տէր Կոստանդին էր կաթուղիկոս ի Սիւ :

Առեւել իւրապէս գոր. եջ. 421 :

Արշ. — Աստուծով ես Սայտի որդի պարոն Շանդին քաջ և յաղթող զօրավարին և մեծ իշխանաց ազգէն . և ի թուին ՊՀԹ տեղեացս տէր . և պարոն Փոքր Սիւնեաց Ականոյ և Հաթերքոյ և Հանդարերդոյ և Ծովակին Գեղամայ մինչ ի Շաղվաքոյ . կանգնեցաք զՍաչս (ի վանս Ծարոյ) հօր մերոյ Շանչին . որ երկիր պագէք յաղթս յիշեցէք :

Յովհաննէս Եղիսիպոսի Շահաբեանի թ. հար. սորաքր-թեան ի թղթ. 365 :

զՎարդան փիլիսոփայն յիշեցէք ի Քրիստոս . թվին ՊՀԹ :

ի 1865. ի վ. 2. ի 1. 1. 1. 1. 1. 1. [2]

Թիւ 96. ի Յայամաւուրէ .

Յէշ. — Փառք Անսկզբան . Գրեցաւ Սուրբ Աւետարանս ձեռամբ անարժան գրչի Վարդանի . գրեցի անարժան ձեռօք իմովք յընտիր և ի ստոյգ օրինակէ . կենօք տառապանօք և բազում տրամութեամբ : Եւ է ի մեծ թուականիս Հայոց . ՊՀԹ . ի կաթուղիկոսութեան Հայոց Աղթամարեցւոյ տեառն Գաթի՝ եղբոր տեառն Զաքարիայի , որ վկայական արեամբ կատարեցաւ . և սրակեցաւ ի Քրիստոսէ ընդ ամենայն սուրբս . ի Սուրբ ուխտս որ կոչի Հոսրովայ վանք . ընդ հովանեաւ Սուրբ Տաճարիս՝ Հոսրովային Սուրբ Նշանիս և Աստուածածնիս . և առաջնորդ Սուրբ ուխտիս Մկրտիչ քահանային՝ և այլ միարան եղբարցս որ աստ կան հաւաքեալ՝ ազաչեմ յիշել ի Տէր Աստուած : Քանզի ստացաւ զՍուրբ Աւետարանս՝ կրօնաւորն Ստեփաննոս եւ գրել յիշատակ իւրն և ծնողացն իւրոց , հօրն Թումայի և մօրն Շնոհորի , և պապուն Սոցտեղի . և կացցէ սա ընդ իշխանութեամբ տաճարի Սուրբ Նշանիս . Յիշման արժանի առնէք փծուն գրիչս զՎարդան ունայն արեղայս . և զհայրն իմ զՍամուէլ քահանայ և զմայրն իմ զՄինայ՝ զթումէն և զՏիրանցն զհոգեւոր ծնողքն իմ . և վայելումն անձին իւրոյ զՍուրբ Աւետարանս ի դառն ժամանակի : Աւա՛ղ զայնքան դառնութիւն դժնդակութեանս , զի վասն մեղաց իմոց . թէ ինչ երեկ (եկն) ի վերայ այնքան քրիստոնէից ո՛հ . (թուղթ պակաս էր :

ի 1887. յՕգոստ. 22. ի Միտոյ Անշուր Բողի Եկեղեցին :

[2] Շիրիմն է մերձ ի ծովեզրն . ի հարաւային արեւմուտս Սրբոյ Տաճարին . յիւր պարթեւ խաչվիմէն ցուցանի թէ անուանի ոմն լիայ է Վարդան փիլիսոփայն :

Թիւ 97 . Ի Հարանց վարուց .

Փառք ամենասուրբ Երրորդութեան . ։ Իսկ աւարտ սորա եղեւ ի թուին , ՊՀԹ . յաշխարհս Հոնաց և Գազարիայ կոչեցելոյ . յերկիրըն Սուլղաթայ , ի մայրաքաղաքս Կաֆայիս , (ի) մենաստանիս , որ յանուն մեծի ճգնաւորին սրբոյն Անտոնի , և ընդ հովանեաւ նորին արժանաւոր ազօթիցն . և յառաջնորդութեան սորին վանից՝ մեծի երջանիկ բարունապետի՝ Սարգիս լուսաւոր վարդապետի արթուն և ժիր մշակի(1) . որ զաւերս զայս (ուխտս) և զամայացեալս՝ որ մուրալով էին կերակուր բնակչաց սորա՝ նսրողեաց շինելով՝ և յօրինեաց զբոլոր պակասութիւն սորա . և զարդարեաց եղբարք՝ և պայծառ ժամատեղաւ՝ և հաստատեաց մտօք և արդեամբք . զոր ընդ երկայն աւուրս արացէ Տէր Աստուած զսա՝ բողբոսեաց ժամանակօք տեւել մնալ առ մեզ : Իսկ ի հայրապետութեան Տեառն Կոստանդեայ՝ աստուածասէր և իմաստուն խաղաղասիրի , և նուիրակութեան և եպիսկոպոսութեան Տէր Կարապետի սրբասնունդ և խոհեմի(2) . ձեռամբ պիտակ անուն կրօնաւորի Թադէոսի Ավրամենց .

1865. Նոյ 20. Ի վ.ան. Ի Լէ՛ կղզե՛ն .

1431 . — ՊԶ .

Տար. — Եւ ի ՊԶ թուականին : Էսառ Փիրիբէկն զՆ.դ.թ.ամար կըղզին . և տնարատմելի տրամութիւն եհաս աշխարհիս (Ռչտունեաց և Վանոյ) և ազգիս Հայոց . և երկիրս աւերակ մնաց երկու տարի :
Մինասենց թովոյ վարդապետ Գրեգոր :

Յակոր արեղայ գրէ զՀարանց վարք մի ի վանս Երերան(3) :

Մատթէոս երէց ի գիւղաքաղաքն Անկեղագութ . ընդ հովանեաւ Սուրբ Լուսաւորչի գրէ զՆարեկ մի :
Ի Գրեգոր Գանկե՛ն Էջմիածնի :

[1] Յիշատակէ զսա Զամչեան ԵԳ . հատ. ի թղթ. 473. և 483 :
[2] Աստի ցուցանի թէ՛ 438 ամ յառաջ . ի կաթուղիկոսէն նուիրակ առաքելոյ սովորութիւն լեալ է ի մէջ Ազգին :
[3] Ինձ անծանօթ է այս վանքն , թերեւս սխալմամբ փոփոխութիւն կրեալ է ի տպագրութեան բուն անուն վանից . վասն զի Էջմիածնի մատենից ցանկի տպագրիչն Յակոր վարժապետ Կարինեանց , զսրբագրութիւն խնամով չէ ի գործ եղեալ :

Իսկ ի դալ միւս ամի որ մտաք ի ՊԶ թուականն . սով սաստիկ եղեւ յաշխարհս մեր . . . զի կերան զչուն և զկատու և զմեռելոտի՝ զձի և զջորի . զէշ և զուղտ : Եւ պարապեալ սրակասեցաւ անասունն՝ և դիմեցին ի յուստերս և ի դասերս իւրեանց , մինչ զի ի թավրէզ քաղաքն կերեալ էին հազար ոգի գաղտնի և յայտնի , և աւերեալ վերին և ներքին կողմանքն : . Իսկ գաղանքն որ սովորեալ էին ուտել զմեռելոտիս , դիմեցին ի վերայ կենդանեացն՝ որք յերկիրս մեր կային : Մտանէր գայլն յԱրճէշ⁽¹⁾ և յամենայն գաւառս մեր , զորդին ի մօր գրկանցն առեալ պատառէր և ուտէր , թէ ի դաշտի դիպեալ յառնէր ի վերայ մեծաց և փոքունց և առ ժամայն պատառէր : Եւ աւելի քան զհարիւր ոգիս ի յԱրճէշ գաւառի գայլն եկեր . թող զազքատս որ ի վերայ գետոցն Առեստու և Մարմետու կային⁽²⁾ : Եւ ի գաւառէն Արարատեան ի ձմերային եղանակին ելեալ գնացին ի կողմն Վրաց այնքան հաւատացեալք ի խսառթեանէ օղոյն մեռեալ եղեն , մինչ զի ոչ կարացին ի թիւ արկանել վասն բազմութեանն , որպէս պատմեաց մեզ հոգեւոր եղբայր մեր Զաքարիա արեղայն Տեղերեցի : Եւ մոթցորեանն⁽³⁾ աւելի հանէր քան զվաթսուն թակայ ի պազարին (ի վաճառատեղին) Արճիչոյ : Եւ մեռանէին ամենայն մարդիկք բնիկք եւ օտարականք : Եւ առեալ ոմանք զձիս իւրեանց դիմեալ գնացին ի հեռաւոր աշխարհս ի յերդնկայն և ի Խարբերդ⁽⁴⁾ . և ի յԱմիթ , և ի յԱրդնի և ի Զմչկաժակ : Եւ որք անտերունչ մնացին , մեռանէին ի սաստկութեանէ սովոյն , և ոմանք գնացեալ խսառնեցան ի քուրդն Բաղիչոյ , Մշոյ , եւ Սասնոյ , վասն ազքատութեան և սովոյն դառնութեան . . . աւելի քան զհինգ հարիւր ոգի , և տրտմութիւն մեծ եղեւ Աստուծոյ և հրեշտակայ և մարդկան : . Եւ այս եօթն ամք են (ի ՊԶԴ. Էն սկսեալ) որ ի ներքոյ դառն

[1] Այս քաղաքն ի մեր պատանեկութեան ծովակուր եղեւ ի գոռ լճէն Ռըշտունեաց :

[2] Այս զոյգ գետոց յետինն ծանօթ է ինձ՝ որ անցեալ ի հին գնունեաց երկրէն թափի ի ծովն ի սահմանածոյրս Մարմետու և Եկմալ գիւղորէիցն . իսկ առաջինն որ Առեստու անուամբ կոչի . ինձ թուի թէ է մեծն ի գետոց Վանայ Պանտիմահու կոչեցեալ՝ որ ի սահմանս Առնիսայ մտանէ ի լիճն Բզնունեաց . թերեւս ի ժամանակին թովմոյի Մեծոփեցւոյ , վերոյիշեալ Առնիսայ Առեստ կոչէին :

[3] Մոթ է անուն չափոյ բառ գաւառական :
 [4] Հինգ դար առաջ թովմայ Մեծոփեցին՝ մեր Ա. Պօլսեցի ոմանց նորասիրաց հակառակ Քարբերդին խարբերդ կոչեալ է՝ և է ճիշտ . իսկ վերջի նոր անուն է անվաւեր և սխալ . որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ :

պատուհասի կամք . զի սուրն կորոյս , սամն սպան , գերին պակասեաց , գաղանք կերան զմարդիկ , թռչունք կերան զվաստակս՝ գորտն և մկունք ապականեցին զանդաստանս աւելի պատուհասքան զԲաբելոնացոցն յաւուրս Արրահամու , և դառնագոյն քան զպատիժն Իբրայեցւոց և Եգիպտացւոց , զի որդիք Եգիպտացւոց ի ծով ընկղմեցան . իսկ որդիք Հայոց ի ծովն . .

ԹԻՒԼ ՄԵՅ. է ԲԳԼ. 93. 94. 95. և 96.

ԱՐՅ.— Ի ԹՎ. ՊԶ. կանգնեցաւ Սուրբ Խաչս ի բարեխօսութիւն սարուն Սիմէոնին . . ձեռագործ է Սիմէոն վարդապետին :

Սարգիս Եպիսկոպոս Զուլտան սարգիս-Բեան Բ. հար. է ԲԳԼ. 466.

ԹԻՒԼ ԾԾ . յԱւետարանէ վերջին ստացողէն .

ՅԷԸ.— Զվերջին ստացող Սուրբ Աւետարանիս զԴրաօ և զեղբայրն իմ զՅովսէփ . . (որ ստացաք զՍուրբ Աւետարանս) ի հալալ արդեանց մերոց և տուինք ի դուռն Սուրբ Աստուածածնին Մլիանից եկեղեցւոյն⁽¹⁾ . . ի թուիս Հայոց ՊԶ :

1867. է Փետր. 23. է Վ.Ն. է Սարգիս վարդապետ Եկեղեցին : Յարստիս է Եպիսկոպոս Վ.Ն.Յոյ սարգիս Արսուլան սարգիս-Բեան :

ԹԻՒԼ ԾԾ . յԱւետարանէ .

Փառք Անսկզբան . . Հայրապետ կրօնաւոր . . գնեաց զսա յիշատակ հոգւոյ իւրոյ . . և քուեր որդւոյ իւրոյ Միսիթար դեռարողբ և նորածաղիկ քահանայի՝ և ծնողացն իւրոց հօրն Խուսէն բէկին և մօրն Խէրիքին . ի մեծ թուականութեանս Հայոց ՊԶ. ի կաթուղիկոսութեան Հայկազեանս սեռի Տեառն Կոստանդեայ . և ի մերոյ կաթուղիկոսութեան Աղթամարայ Տեառն Դաւթի : Եւ ի թագաւորութեանս մերոյ ամիր Դայուտի , և ի զանութեան աշխարհիս Աքանտարի զոր Տէր Աստուածն Իսրայէլի պահեսցէ անասան զաթու հայրապետական և զթագաւորական մերոյ ազին⁽²⁾ . և բարձրացուցէ զեղջիւր Սիոնի ի մէջ Հայաստանեայց և ես . . Ներսէս մահտասի . . ծրագրեցի զյիշատակարան և նորակերտեալ կազմեցի . . Եւ զստացող Սուրբ Աւետարանիս զՀայրապետ կրօնաւորն . . և զերկու քոյրն (Հայրապետ կրօնաւորին) զԳուհար և զՇնո-

[1] Մնայ ինձ անծանօթ վերոյիշեալ շէնն :

[2] Հայք չունէին թագաւոր ի սին ժամանակի :

հուոր . և զերկու աղբերն զԳրիգորն և զՔուրդ Ամիրն և Ղազար .
 և զկողակիցն իւր զԹաճխաթուն՝ զՄարգարիտն⁽¹⁾՝ զվեսէն իմ
 զՎասակ . և զնորարողը զաւակն մեր զՄուսէս , և զկնքաւորն
 իմ զՆիկողայոսն յիշեցէք առ Աստուած . :

† 1881 . Յունիս 23 . † Բուրլ . † Էն . Ա-Ե-Ի-Ս-Ս-Ե-Բ Աստուածային^[2] :

Թիւ 100 . Մաղկաքաղ ի պատմութենէ Ամիրզայ վկային Սպարկերացւոյ :

Տոր . — Դարձեալ յետ ութ ամի նահատակութեան սրբոցս⁽³⁾ .
 ի ՊԶԱ . թուին , էր այր ոմն մանուկ տիօք և հասակաւ . (18 ա-
 մաց ըստ Յոհաննէս քահանայի ժամանակակից այլ գրչի) ի դաւա-
 ուէն Սպարկերտու ի գեղջէն կեղեսու անուն Ամիրզայ⁽⁴⁾ . հաւա-
 տով քրիստոնեայ և արուեստիւ դարբին . և էր բարի բնութեամբ
 հեզ և հանդարտ՝ ժիր ի պահս և յաղօթս՝ լի ամենայն առաքի-
 նութեամբ , և յոյժ ցանկայր մարտիրոսական մահուամբ մեռանիլ
 վասն անուանն Քրիստոսի . և եհաս բաղձանացն և մխիթարեցաւ
 հոգեւորական մխիթարութեամբ և խնդութեամբ սուրբ նոր Մար-
 տիրոսս այս Ամիրզայ : Եւ այսպէս եղեւ մահ սրբոյն՝ զի երթայր
 յեկեղեցին և ունկն դնէր մտադիւրութեամբ սուրբ գրոց և սաղ-
 մոսաց : Եւ լուեալ զբանս մարգարէին Դաւթի՝ որ ասէ «պատ-
 ուական է առաջի Տեառն մահ սրբոց իւրոց :» Եւ այնպէս եմուտ
 բանս այս ի սիրտ նոր նահատակին՝ որպէս ջուր ի ծարաւուտ երկ-
 րի՝ որ կրկին դալարացաւ ի բոյս մարտիրոսութեան , և ընթացաւ
 ի յաղ չարչարանաց կենսատու Սաշին՝ զհետ կոչողին Քրիստոսի
 որ ասէ . «որ ոչ առնու զխաչ իւր և գայ զհետ իմ չէ ինձ արժա-
 նի :» Եւ կատարեաց զայս երանելի մանուկն Ամիրզայ՝ յոր և ես

[1] Զոյգ անուամբ յիշին թէ Թաճխաթուն և թէ Քուրդ Ամիրն՝ և այսու-
 յայտ լինի մեզ՝ թէ առ նախնիս մեր կայր սովորութիւն զոյգ անուն գործածելոյ :

[2] Ուխտս կայ ի հարաւային յարեւելից կուսէ քաղաքին . և էր վանահայր
 տեղւոյն՝ ծերունի Պօղոս վարդապետն Մօսկանցի :

[3] Ստեփաննոս վարդապետի և Պետրոս քահանայի Հիղանցւոյ . որք կատա-
 րեցան յամի 1424 . և ի թուին Հայոց ՊՉԳ ի Հիղան քաղաքի . ըստ յերինողի վա-
 րուց նոցին Առաքել գրագետ վարդապետի Բաղիշեցւոյ . տես անդ էջ ի վերոյ 74 .
 և 75 . զժաղկաքաղ պատմութեան նոցին :

[4] Յովհաննէս քահանայն Ամիրզէկ կոչէ անուն վկային՝ և ծնողացն Ատով
 և Մինայ՝ որ էր ասէ յերկրէն Մոկաց , ի գաւառէն Սպարտերու՝ ի գեղջէն որ
 կոչի կեղիս :

պատմեցից զսակաւ մի զվարս սորա : Սա էր նման մեծին Ենովքայ ի պահս և յաղօթս՝ և այնքան երազ էր ի տքնութիւնս , մինչ զի զբոլոր տարին ի պահս լինէր և անսուաղ աղօթէր՝ և ի գործս աշխատէր : Եւ աղաչէին զնա եղբարքն և ասէին՝ թէ հաց կեր որ ի յուժոյ չանկանիս . և նա ասաց թէ այնպէս պիտի մարդն զկերակուրն ուտէ . որ հոգեդադար լինի նմա , և զհանդերձն հագնի՝ որ զվերկութիւն ծածկէ : Եւ ոչ այսու շատացաւ սուրբ վկայս այս . այլ ակն ունէր մարտիրոսական մահուամբ կատարիլ՝ և պըսակիլ ի Քրիստոսէ : Եւ զայս բան ի միտ առեալ էր՝ որ ասէ՝ «օ՞նսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց՝ և ոչ ամաչէի» : Եւ մինչ այս խորհրդեանս էր սուրբն՝ եհաս տօն Աւագ Սուրբ Զատկին , և հաղորդեցաւ ի Սուրբ Խորհրդոյն՝ և այնուհետեւ կամեցաւ ցուցանել զինքն և այնպէս կատարեցաւ Ս . Ամիրզա(1) ի փառս Քրիստոսի :

1887. — Բ է կրօնայ իրէն :

Դաւիթ կրօնաւորն ի վանքն Երեւան . ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի , և ի հայրապետութեան Տեառն Կոստանդեայ գըրէ զմայր Մաշտոց մի :

Յակոբ արեղայն ի Սուրբ քաղաքն Երուսաղէմ . գրէ զմեկնութիւն Սաղմոսաց Դաւթի :

Նիշխանի :

Ա.բ.՝ — զԹու մայ(2) և զՄկրտիչ վարդապետք՝ և Յովհաննէս ե-

[1] Զվարս սորին գրեալ էր Ատոմ գրիչ՝ ընդ վարուց Ստեփաննոս վարդապետին՝ Գամաղիէլի վանից վանականի և ընդ վարուց Պետրոսի քահանային Հիզանցւոյ . նոյնպէս և ընդ վարուց Ստեփաննոս պատանի նահատակին Սորփեցւոյ ի մի . Արեգի Զ . և Մարտի ԺԴ . որ ութ ամաւ յառաջ ՊՀԳ . ին վկայեալ էին վասն Քրիստոսի . և յօրինող վարուց նոցին էր Առաքել վարդապետն Բաղիշեցի . որպէս պատմէ Ատոմ գրիչն . և ես համառօտեալ ետի աստ ի պէտս ազգային և կեղեցական պատմութեան . Սոյն Ամիրզա նահատակի ծննդավայր կեղիս գիւղն . որ կայ ի Սպարկերտ գաւառի յերկրին Մոկաց է շէն և կանգսւն 30 տուն Հայ ընտանեօք մերձ ի գիւղօրայս Բաղմենից և Տանժիս մինչեւ ցայսօր ժամանակի . և մերձ գեղջս է Սուրբ Կիրակոս վանք՝ ըստ ասութեան նկարագրի վայրեացն այնոցիկ արժանայիշատակ Գեորգ վարդապետի Տէր Բարսեղեան՝ ի Տէր հանգուցելոյն :

[2] Մեծսփեցի պատմագիր վարդապետն է :

պիսկոպոս , և զմիաբանքս սուրբ ուխտիս , (Մեծոփայ) և զՄարտիրոս քահանայ շինող սուրբ գերեզմանիս (Մեռելյարոյց Աստուածատուր վարդապետի Արճիշեցւոյ՝ որդւոյ Աղբերկայ . և էր սա ժամանակակից Լեւոնի Ա. թագաւորին . . . և Յոհաննու է. կաթուղիկոսին Հայոց) : Յիշեցէք ի Քրիստոս ի թուին ՊԶԱ :

† 1866. Հոկ. 7. Ուրբաթ. † Մեծոփայ Սուրբ Ուխտի : [1]

Թիւ 101 . ի Մաշտոցէ .

Յիշ — Փառք . : Արդ գրեցաւ սա ձեռամբ . . Յովաննէս պիտակ անուն արեղայի . ի վանս Սուրբ Կիրակոսու(2) . ի թուարերու թեանս Հայկազեանս տոհմի ՊԶԱ :

† 1871. Յունւ. 22. † Նիսիսի . † Սուրբ Աստուածատուր Եկեղեցի : [3]

Թիւ 102 . ի Մաշտոցէ .

Փառք Հօր անսկզբնականի . և միշտ Մենելոյն ի Նմանէ Որդւոյն Միածնի , և յաւէտ Բղիսելոյն Հոգւոյն ճշմարտի , Որք են բնութեամբ միացեալք՝ և անձամբ յատկացեալք : Որում փառք ի հրեղինացն՝ և երկիրագութիւն ի հողեղինացս՝ այժմ և անգրաւ յաւիտենիւ ամէն : Արդ՝ ես մեղապարտ ի մանկունս եկեղեցւոյ . անարգս ի սլարս վարդապետաց՝ յետինս ի քարոզողաց , վերջինս ի ծնունդս եկեղեցւոյ , Մկրտիչ սոսկ անուն վարդապետս . եղէ ցանկացող այսմ աստուածաշունչ կտակիս՝ որ կոչի Մաշտոց . Ետու գրել զսա սիրելի եղբօր մեր հոգեւորի , և սրբասէր քահանա-

[1] Ընդօրինակէցի զայս վերոյիշեալ արձանագրութիւն ի յորմոյ մատրանն . ո՛ւր կայ շիրիմն Աստուածատուր վարդապետի Աղբերկան որդւոյ՝ որ է կից մեծի տաճարին ի հարաւ կօւսէ նորին . յաւուրս վանահայրութեան կարճիկ Յովհաննէս վարդապետի վանեցւոյ :

[2] Ինձ թուի թէ սոյն ուխտն է այն՝ որ կայ ի Սպարկերտ գաւառի յաշխարհին Մոկաց՝ մերձ ի գիւղն Գեղիս՝ որպէս դնէ Գեորգ վարդապետ Տէր Բարսեղեան :

[3] Ձի գնացեալ էի անդ հրահանու ազգային վարչութեան՝ վասն ընտրութեան նոր առաջնորդի . և ապա հաւաքելով զԵրեցփոխանս վիճակին ի ժողով՝ ընտրեցին քուէից առաւելութեամբ զգէտ իւրեանց վիճակի . զՆերսէս Արքեպիսպոսն վարժապետեան՝ և եր վանահայր ի նմին ժամանակի ի վանս Արմաշու , ի Տէր հանգուցեալ Գեորգ Արք եպիսկոպոս . կիրթ Հայկաբան՝ և ճոխ պատմագետըն Հայոց . որ եւ սա եւս մեծ զօրավիզ հանդիսացաւ ինձ առաքմամբ խորէն վարդապետի՝ այժմ կպիսկոպոսի և վանահօր ուխտին՝ ի ձեռնարկութիւն գործոյս :

յի կարապետի : Յիշատակ ինձ և հոգեւոր ծնողաց իմոց կարապետ կրօնաւորի և Յակոբի⁽¹⁾ : Այլ և մարմնաւոր ծնողաց իմոց Օրպէլին և Դովլաթին : Դարձեալ աղաչեմ յիշել ի բարին Քրիստոս զերջանիկ և զքաջ հաւատորն , և զտիեզերապոյս բարունին զԹովմայ , որ զօրինակն շնորհեաց և բազում բարութիւնս եցոյց մեզ⁽²⁾ : Նաեւ զհոգեւոր եղբայրս մեր՝ զգրոց աշակերտեալ անձիսն՝ զՅովաննէս կրօնաւոր՝ որ զեօթն օրէնքն գրեաց և զյիշատակարանս գրոցս՝ և զհայրապետ կրօնաւորն՝ որ զգիրս կազմեաց . նաեւ զհոգեւոր որդեակս իմ զՄինաս դպիրն՝ որ զգիրս ծաղկեաց , և զԳրբիգոր դպիրն՝ որ հանապազ մեզ սպասաւորէ , և զեղբայրն իւր զՄկրտիչ մոնթ՝ գրեացէ զսոսա Քրիստոս Աստուած ի գիրն կենաց , և յանջնջելի դպրութիւնն ամէն⁽³⁾ : Եւ արդ՝ գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց . ՊԶԱ . ի չար և ի դառն ժամանակիս .

. . . ի թոյլ տալոյն Աստուծոյ՝ վասն բազմութեան մեղաց մերոց : Ի թագաւորութեան . . . Աքանտարին⁽⁴⁾ Եւ ի հայրապետութեան Տեառն Կոստանդեայ՝ և յեպիսկոպոսութեան Տէր Յոհաննիսի . յերկիրս Քաջբերունի . ի քաղաքս որ կոչի Արճէշ . ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս , և Սուրբ Յակոբիս . ձեռամբ կարապետ քահանայի , հանձարեղ և իմաստուն քարտուղարի :

Ի 1881. Յունիս 19. Ի Բաղէշ . Ի Գոմաց Լուս[5] :

[1] Էին սոքա ի միաբանութենէ Տէր Յուսէփի Արղւոյն . և սոյն Մկրտիչ վարդապետն եւս էր վանահայր անդ . տես ի վերոյ ի թիւն 61 ի ամանէ գրեալ Աւետարանի յիշատակարանն :

[2] Է նոյն իսկ Թովմայ վարդապետ Մեծոփեցի պատմագիրն . որ կայ յիշատակեալ ընդ սոյն Մկրտիչ վարդապետի և ընդ Յոհաննէս եպիսկոպոսի՝ ի թուին ՊԶԱ ամի արձանագրութեան . որ կայ ի վերայ մատրան Աստուածատուր վարդապետի Արճիշեցւոյ՝ տես ի վերոյ էջ 99 և 100 :

[3] Զսոյն Գրբիգոր դպիրն և զեղբայրն իւր զմոնթ Մկրտիչ՝ զոր յիշէ աստ , յետ ժամանակաց յոյժ երեւելի հանդիսացան ի մէջ Տարբերունեաց և Արճիշոյ . Գրբիգորն է սոյն զոր յիշէ Առաքել ի շարս վարդապետաց Հայոց Զորթան մականուամբ . որ եղև աշակերտ յետոյ Համշէնցի Յոհաննէս վարդապետի , և վարժապետ Մատաղ Ներսէսի . տես ի գիրս նորին 426 էջ : Նոյնպէս և ի թորոս աղբար գիրք Գեր . Գարեգին եպիսկոպոսի Բ . հատոր էջ : 483 : Իսկ Մկրտիչն՝ եղբայրն Գրբիգորի՝ յետ ժամանակաց նստաւ վանահայր ի Տէր Յուսէփի Արղին՝ յաւուրս Ատոմայ կաթողիկոսին Աղթամարոյ և Եսաղուպ շահին Պարսից՝ որ էր որդի Ազուէն Հասանայ :

[4] Մինասենց Թովմայ վարդապետ գրիչ Աղթամարցի և Յոհաննէս գրիչ Մեծոփեցի ի թիւն 90 և 91 . նման սոյն կարապետ քահանայ գրչի գանդատեն զարմանէ ընդ որս և Թովմայ Մեծոփեցի պատմագիրն՝ տե՛ս ի վերոյ :

[5] Յաւուրս վանահայրութեան տեղոյն հանգուցեալ Վարդան վարդապետի՝ որ բազում ամաց հետէ էր վանահայր անդ . բայց պիտակ անուամբ՝ և ոչ ըստ օրինի ժիր և շինարար վանահարց կոչման համեմատ :

Տար. — Եւ ՊՁԴ թուականին Շահ Ռուհն ի դուրս եկն, և Սքանդարն փախեալ, և երկիրս սասանեալ կայր, և Ջհանշէն երգիր պարոն Շահ Ռուհն, և ապա խաղաղացաւ երկիրս :

Տարեգիր Մինասէնց թուով խորհուրդ :

. . . Սքանտարին որդի մի կայր եղեալ իշխան ի յամուրն Տոսպ գաւառի ի յոտն Վարազ ի վան քաղաքի՝ անուն Արալի. և առնէր զանիրաւութիւն հարկապահանջութեամբ Աղգիս մեր և Տաճկաց : Եւ նոքա երթեալ առ հայր նորա Սքանտար գանգատեն ի վերայ նորա . . և նորա երկուցեալ գնալ առ հայրն, (իւր Սքանդար) այլ խոյս ետ և գնաց առ տէրն Շամախու Սալիլուլլահ անուն՝ որդի շէխ Իբրահիմին : Իսկ նորա ըմբռնեալ զնա ետ տանել առ տէրն Սորասանայ Շահ Ռուհ անուն՝ որդի Թամուրին . . և գնաց (Սքանդարն) ի վերայ կողմանն Շամախու՝ աւերեաց զաշխարհն ամենայն, զքաղաք և զգիւղ . . . Իսկ տէրն Շամախու Սալիլն այն առեալ զղատի և զմիւտառիս և ընթացեալ առ Շահ Ռուհն՝ տէրն Հրէ քաղաքին, հող զգլխով արկեալ և զօճիս պատառեալ. պատմեցին զղառն և զողբալի անցս աղետիցն՝ որ անցոյց ընդ նոսա՝ Սքանդարն : Իսկ նորա ցասմամբ զայրացոյց զինքըն և զամենայն ընտանիս իւր . : Եւ ի սրտմտութենէ ցասմանն (Շահ Ռուհն) երեք աւուր ձանապարհ քսան ոգով բարկութեամբ եկեալ : Եւ ապա զօրաց նորա աստի և անտի ժողովեալ անթիւ և անհամար բազմութեամբ եկեալ հասին ի Սուլթանիս քաղաք . : Իսկ Շահ Ռուհն խաղաղասէր գոլով ծանր զօրօք շարժեալ եկն եհաս ի տունն Սիւնեաց ի յամուրն Երնջակայ . և պատեալ պաշարեաց զայն աւուրս բազումս . և Սքանդարն արտաքոյ կայր կլային . (բերդին Երնջակայ) փախեալ 150 մարդով՝ եկեալ գողապէս յերկիրն Գոգովիտ ի գիւղն Արծափ աւուրս սակաւս⁽¹⁾ : Եւ անտի յարուցեալ գնաց ընդ զօրս իւր, և եհաս ի քաղաքն կարնոյ այժմ Արզրում կոչեցեալ՝ ուր էին փախուցեալք յահէ և երկիւղէ Չաղաթային եկեալ : Իսկ տէրն Եզնկային Օթման անուն առեալ զզօրս իւր և եկեալ ընդ առաջ նորա (Սքանդարին) աւելի քան քսան հազարաւ պատերազմել ընդ նմա : Եւ նա սրտապնդեալ ու-

[1] Սոյն Արծափ պարսպապատ գիւղն կայ մինչեւ ցարդ շէն և կանգուն . և անկանի յարեւմուտ կոյս քաղաքին Պայազիտայ առ ստորոտս Աւագ Մասեաց : Աստ հանգչի ի քուն Ղազարու ի ծոց եկեղեցւոյն՝ մեծ հերոսն Հայոց՝ Ռուստամ պէյ երեւելի մենամարդիկն . որ մեռաւ ի վերջին Արեւելեան պատերազմի զէն ի ձեռին վասն փրկութեան բազմաց :

Ղուլն (ծառայն) եկաւ ի յԵրզնկէն, և սպանաւ Աքանդարն ի յորդւոյ⁽¹⁾ և նստաւ⁽²⁾ Ջհանշէն:

Թիւ 108. յԱւետարանէ:

Յիշ.— Փառք եղակի Անճառելոյ .: Արդ՝ գրեցաւ Սուրբ Աւետարանս՝ ձեռամբ սուտ գրչի և անարժան քահանայի Կարապետի, ի Թուին Հայոց ՊԶԴ. ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ, և մերոյ առաջնորդի և աթոռակալի Սուրբ ուխտիս Վարադայ. Տէր Յովհաննէս Արք եպիսկոպոսի, ի քաղաքիս որ կոչի Վան. ընդ հովանեաւ Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային և Սրբոյն Սահակայ հայրապետի՝ ի դառն և ի վշտաշատ ժամանակիս, որ վասն ծովացեալ մեղաց մերոց. բացաւ դուռն Խորասանայ, և եկեալ որդի Թամուրին Շահ Ռուհն ի յաշխարհն Հայոց. և որդիք Ղարայ Ուսուֆին Իսքանդարն վախատական գնաց ի ներքին աշխարհն՝ և սպան զՂարայ Օթմանն. (տէրն Երզնկայի ըստ Թովմայի Մեծոփեցւոյ) և զորդին և զայլ բազումք ընդ նմա. և միւս եղբայրն Ջհանշայն գնաց հնազանդութեամբ մօտ ի Շահ Ռուհն. և նստաւ նորին հրամանաւ (Թագաւոր) ի Թաւրէզ. և եղեն երկու եղբարքն թշնամիք միմեանց և ոչ գիտեմք թէ զինչ լինելոյ եմք:

† 1866. † Մ-յի- 13. † վ. ան. † Ս-րք Սահայ եկեղեցին:

Թիւ 109. Սկիզբն շինութեան եկեղեցւոյն Հայոց ի Ղալաթիա:

Արդ՝ — Ի սկզբան կառուցաւ տաճարս յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ. և ի հայրապետութեան Հայոց Տեառն Թէոդորոսի սրբազան կաթողիկոսի, և ի Պատրիարքութեան Սըրբոյ Երուսաղէմի՝ տեառն Եսայեայ Արք եպիսկոպոսի առաջնոյ. գնեալ տեղիս Սրբոյ տաճարիս ի ճէնովացւոյ Կոմսի անուն բարեպաշտ վաճառականի ուրումն Քէֆէ քաղաքին Ղըրումու, յամի տեառն 1436 ՊԶԵ⁽³⁾:

[1] Շահուբաթ անուն ըստ Թովմայի Մեծոփեցւոյ ի թղթ. 107:

[2] Հրամանաւ Շահ Ռուհայ Թագաւոր ի Թաւրէզ, եղբայրն Աքանդարայ:

[3] Ջսոյն արձանագրութեան թուական սխալ եղեալ են, զի ի 1436 ամի՝ ի վաղուց հետէ վախճանեալ էին Թէոդորոս կաթողիկոսն. որոյ մահն եղև ի 1393 ա-

ԹԻՒ 110 . յԱւետարանէ .

Յիշ. — Փառք . : Արդ՝ գրեցաւ Սուրբ Աւետարանս ի կղզիս Աղթամար՝ ընդ հովանեաւ Սուրբ Խաչիս և Սուրբ Նշանի . ի հայրապետութեան Տէր Զաքարիայի . և ի Թուին Հայոց ՊԶԵ . ձեռամբ Դանիէլ քահանայի . . կենօք տառապանօք և բազում պանդխտութեամբ ի դառն և ի վշտաբեր ժամանակիս՝ յորում եկեալ . . . Փիրի բէկ . և առեալ զկղզիս Աղթամար ,⁽¹⁾ . . . և մեր փախստական եղեալ և մերկ և թափուր ի հայրենի ընչիցն՝ և դարաշխարհիկ եղեալ կայաք երկու տարի (ՊԶ . Էն մինչեւ ՊԶԱ . Թուական Հայոց) ի յԱստուածապահ գիւղն Ուրանց (ի կեցան գաւառի , Մոկաց) մինչեւ մեծ տէրն (Մերունի Դաւիթ կաթուղիկոսն Աղթամարայ) խնդիր արարեալ և երբ զմեզ . (յԱղթամար ի Թըվին Հայոց ՊԶԲ) և ինքն Աստուած փոխեցաւ⁽²⁾ . և կամք երկմիտ և ի վայր մնացած՝ և այս ամենայն եղեւ վասն ծովացեալ մեղաց մերոց . : Ընդ նոսի՝ և զանախտան Դանիէլ գրիչ և զճնողքն իմ զկարապետ քահանայ և զԴուռնմէլիք՝ և զեղբայրն իմ զԹումայ կրօնաւոր՝ որ ինքն այլ գրեաց՝ և զքոյրն մեր , և զուսուցիչն մեր և զհօր եղբայրն զԶաքարիայ փիլիսոփայն . :

Ի 1887. Յունիս 14. վարդապետ Երեմիայի Սուրբ Թումայի Առաքելայ Էն [3] :

մի . իսկ Ա . Պատրիարքն Երուսաղէմի Եսայի Աբբ եպիսկոպոսն՝ յաջորդեաց Յոհաննէսի՝ առաջնոյ , ի 1391 ամի . տե՛ս ի Զամչեան աղիւսակի ի վերջն Գ . հաստորոյ ի Թղթամար 112՝ ի ցանկն Պատրիարքացն Երուսաղէմի՝ և յետ ինչ ամաց վախճանի . ահա՛ այսու ստոյգ ապացուցիւ հաստատի վերոյ եղեալ Թուականի անճշգոթիւն : Ուստի Ղալաթիոյ Թաղական պատկառելի Խորհուրդն՝ ընդ նորոգման Սուրբ եկեղեցւոյն՝ պարտի նորոգել զայն սխալ արձանագրութեան Թուականն եւս ի պատիւ Ազգին :

[1] Զառումն Աղթամարայ ի Փիրիբէկայ լեալ է ի 1431 ամի . ըստ ականատես պատմութեան Մինասենց Թովմայ տարեգիր վարդապետի Աղթամարցւոյ՝ տես ի վերոյ գրանս նորին :

[2] Եթէ ըստ սոյն Դանիէլ աւետարանագրչի Դաւիթ կաթուղիկոսն վախճանեալ է նախ բան 1436 ՊԶԵ . Թուական՝ ուրեմն սխալի բազմասմուտ Հ . Միքայէլ Զամչեան , որ գնէ զսա կենդանի յաւուրս կիրակոսի վիրապեցւոյ կաթուղիկոսութեան՝ յետ 1441 ամի . և ի Թովին Հայոց ՊԶ . տես անդ ի նորին Գ . հաստոր էջ 487 և ի տող 38 :

[3] Կայ Սուրբ ուխտս ի գաւառին Ուշտունեաց՝ ի հիւսիսային յարեւմտից զուարճայի գեղջն Գանձակայ . և հայի ի բարձրութենէ անտի իւրոյ ի վերայ նոյն գեղջն՝ և վանուց Սրբոյն Սահակայ՝ Լուսապտուղ կոչեցելոյ՝ և ի վերայ գեղածիծաղ ծովուն Ուշտունեաց , ի վանահայրութեան նոյն Ուխտի՝ Տէր Յարութիւն հիւրասէր քահանայի :

Թիւ 111 . Ի Գանձարանէ .

Փառք ամենասուրբ Երրորդութեան . : Արդ՝ գրեցաւ սա ի նահանգիս Փռուզիոյ՝ ի գաւառս Երասխայ . որ այժմ մականուամբ կոչի ի հոմանուանադրութիւն Չմէկիկ Յոհաննէս Թագաւորի . : Արդ՝ գրեցաւ Սուրբ տառս ի Թուականութեանս մերում . ՊԶԵ . ամին . ի հայրապետութիւն Կիւլիկեցւոց Տեառն Կոստանդեայ , և յաշխարհակալութիւն Ալի պէկին , ի յերկիրս Չմէկաճակու , ի Սուրբ ուխտս Կարմիր վանք՝ ընդ հովանեաւ Սուրբ Կարապետին , և Աստուածընկալ Սուրբ Նշանացս⁽¹⁾ . ի յառաջնորդութիւն (ուխտին և վիճակին) Տէր Մեղքիսէթի : Եւ լրացաւ ձեռամբ . . անարհեստ Մկրտչի՝ սուտ անուն կրօնաւորի . :

Է 1868 . Է Մայիս . 1 . Է Կարէն . Է Սուրբ Աստուածընկէն Էկեղեցին . յառաջնորդութեան Յարմարիւն Արտիսիոյն Երեւանի Սուրբ Երասխայի պարտիարի :

Թիւ 112 . Ի Յայտնաւորէ .

Փառք . : Արդ՝ գրեցաւ սա ի յԱստուածապահ քաղաքս Բաղէշ . ընդ հովանեաւ զօրաւարացն՝ Սուրբ Սարգսի և Սուրբ Գէորգայ՝ և Սուրբ Ստեփաննոսի Նախավկային . ի հայրապետութեան Տեառն Կոստանդեայ՝ և յեպիսկոպոսութեան (Բաղիշոյ) Տէր Ստեփաննոսի⁽²⁾ ի բռնակալութեան աշխարհիս Հայոց՝ Աքանդարի որդւոյ Ղարայ Ուսուֆի . . . և եղեւ երկրորդ Աշրաֆ Ազգիս . և մեր ամիրայի (Բաղիշոյ) Շեխ Մահմուտի⁽³⁾ : Յայտն ամի մեծ վարժապետն Թումայ (այն է Մեծոփեցի պատմագիրն) և Կարապետ⁽³⁾ . Եօթն վարդապետօք և այլ բազում աշակերտօք փախստեայ եկեալ ի

[1] Այս նշանաւոր վանքն այժմ աւերակ է ըստ վկայութեան Գեր. Գարեգինի եպիսկոպոսի՝ Սրբանձառեանց տէս ի նորին Բ. հատոր Թորոս գրոց 113 էջ՝ ի նրկարագրութեան նոյն ուխտին :

[2] Գովութեամբ յիշատակէ զսա Մեծոփեցի պատմագիրն վասն հիւրասիրութեան սորին և ժողովրդեան իւրոյ . զոր ցուցին վշտալի փախստէիցն Արճիշոյ յամի 1435 . որ եղեւ ի բռնութենէ Աքանդարայ :

[3] Ի վարս Հիզանցի Մարտիրոս նոր վկային՝ որոյ ընդարձակ պատմութիւն կայ առիս՝ որ նահատակեալ է ըստ պատմութեան Գալուստ եպիսկոպոսի ի Յուն վար 4 ի սկիզբն 1436 ամի՝ ի քաղաքն Բաղէշ . . անդ փոխանակ Մահմուտի Շեխ Մահմուտ կոչի :

[4] Յետինս այս էր վանահայր Խոռաբատայ ուխտին Արճիշոյ որ այժմ Արճուաբեր Աստուածածին կոչի :

գաւառէն Արճիշոյ՝ առ մեզ կային ժամանակ ինչ . և ի նոցին շը-
նորհարաշխ և առատարուխ իմաստիցն բազումք օգտեցան պէս
պէս ուսմամբ . զոր Տէր Աստուած վարձս բարեաց տացէ նոցա ա-
մէն : Տառատակցաւ գիրքս ձեռամբ . Ստեփաննոս երիցուն ի թուա-
բերութեանս Հայոց . ՊԶԵ . ի խնդրոյ թումոյ տանուտէրին :

Է 1887. Յուլի 22. Չրեւելի. է վ. Ն. — Արեւիկայի թիւստեան.
չր օրէնստեւ է Տարծն է լան Արատեւոյ :

Տար. — Իսկ եղբայրն (Աքանդարայ Ջհանչաչ) պաշարեաց զնա
զօրօք իւրովք մինչ ի յեղանակ գարնանային ժամանակին՝ ամրոցս
և բնակութիւնս շինելով շուրջ զամրոցաւն : (Երնջակայ) Եւ էր Աքան-
դարին այն որդի մի Շահուբաթ անուն՝ միաբանեալ ինքն և մայր
իւր և տասն զօրականս և քաջ մենամարտիկս , և ի գիշերի երթեալ
գտին զնա ի քուն արբեալ ի գինւոյ . և հանեալ զսուրս իւրեանց
սրախողխող արարեալ սպանին զնա . . և բարձաւ չարն ի միջոյ . :
Եւ էր թուականն ՊԶԶ . որ այս գործեցաւ : Ի ՊՀ թուականէն ի
հետ մինչ ի մահ սորա ամենայն երկիր ի վրդովման կայր և ի խը-
ւովութեան . զի երեք անգամ է այս՝ որ Շահ Ռուհ Չաղաթայն ,
նորա անհնազանդութեան աղազաւ զամենայն թուրքմանն և Մի-
ջերկրայս ի գերութեան ետ : Միանգամ ի Վաղարշակերտ . Երկ-
րորդ ի Սալմաստ . Երրորդ անգամ այս է յորմէ մեռաւ ինքն՝ և
բազումք վասն նորա մեռան :

Թիւմոյ Լրբողեր Մեծտեցի. էջ. 106. 107. և 108 :

Գարձեալ և աստ պատմեցից զաղէտ և զկսկիծ դառնութեան
մերում ազգի : Էր ի քաղաքն Արճիկէ այր մի բարեպաշտ և երկիւ-
ղած , Ասաուածասէր և սիրող սրբութեան , յոյժ խոնարհ և կար-
գաւորասէր և ամենայն չարեաց ատեցող՝ և տիւ և գիշեր յաղօ-
թըս կայր եղբարքք և որդւովք և ամենայն ընտանեօք : Եւ էր ա-
նուն նորա Մուրատչահ՝ պատկերով , քաղցր և ողորմած . . .
Եւ էր իբրեւ թագաւոր քրիստոնէից ի մէջ ծովու բոլորիս : Եւ
նախանձեալ ստտանայի և կամարարաց նորա . . . մատնեցին զնա
քաղաքապետին՝ (Արճիոյ) և նոցա ոխ ունելով ընդ նմա մատնեցին
զնա քաղաքացիքն անօրէնք թոյլատուութեամբ մերոյ ազգիս պըղ-
ծոյն և չարագործին Ջենոն անուն : Եւ նորա եղեալ ի բանտի
նետալից արարեալ և ի գղեկէն ի վայր արկեալ եհաս մարտիրո-
սութեան և անանց սրտակացն : Եւ յառաջ քան զայս տանուտէր
մի Չաքարիէ անուն ըմբռնեալ և ի պարանոց նորա պարան արկ-

եալ հեղձուցին զնա՝ որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի, և աղօթիւք սորա Տէր Յիսուս Քրիստոս մեզ ողորմեացի և ամենայն քրիստոնէից ամէն :

Թիւ 112 : Ի վարուց Յովհաննէս վկային Խլաթեցւոյ . Ի Բզմահատ 109. 110 .

Թիւ 113 : Ի վարուց Յովհաննէս վկային Խլաթեցւոյ .

Պատուական և պանծալի վկայս այս Յովհաննէս էր ի Բզնունեաց գաւառէն ի Խլաթ քաղաքէ բարեպաշտ ծնողաց զաւակ . ի Թուականիս Հայոց ՊԶԶ : Եւ սիրեցեալ եղեւ յաչս քուրդ ամիրայեալի քաղաքին (Խլաթայ) Սեւդին կոչեցեալ . Եւ տեսեալ քրդացն զճշմարիտ հաւատս նորին՝ քարիւ և փայտեաւ հարեալ ջարդեցին զամենայն մարմին նորա . և նա քաղցրութեամբ աւանդեաց զհոգին իւր ի ձեռս հրեշտակաց Ասաուծոյ : Եւ առեալ քրդաց զպատուական նշխարք երանելի մանկան տղային հրով այրեցին ի մէջ քաղաքին : Եւ ի գիշերին յայնմիկ լոյս սաստիկ ծագեալ ի վերայ նորա և քրդաց ահարեկ եղեալ յամօթ լինէին : Եւ առեալ զմնացեալ մասն նշխարաց նորա սրբազան արք եպիսկոպոսըն (Խլաթայ) Տէր Ստեփաննոս և պատուական քահանայք հանդերձ ամենայն բազմութեամբ քաղաքին, ցնծութեամբ և ուրախութեամբ օրհնելով զԱմենասուրբ զնորորդութիւն . տարեալ եղին ի սրահ Սուրբ եկեղեցւոյն . կատարեցաւ Սուրբ վկայն Քրիստոսի յամսեանն Փետրվարի ԻԲ. ի տօնի հարիւր յիսուսն հայրապետաց Կ. Պօլսի . յետի բարեկենդանի Շաբաթ օրն ի փառս Քրիստոսի :

Ի 1881. Փետր. 27. յառաջ Ուրբաթն Ի Տեղի պահոց առաջի լեքի . Ի վան . Ի վան վարժայ . Ի յերօքի Յայտատարաց ախրին այնորի համարտեցի զվարժարանէն . Ի պետ Ազգային պարտաւիտան :

Թիւ 114 . Ի Շարականէ .

Յէշ . — Աւարտեցի դառն և ի նեղ ժամանակիս, գրեցաւ գիրքս ի գաւառիս Եղեաց⁽¹⁾ ի վանքս Յաղացքար (այժմ շէնէ թէ ոչ չէ ինձ յայտ) ընդ հովանեաւ կենսաբեր Սուրբ Նշանիս ի լաւ և յընտիր օրինակէ Խլիցի . ձեռամբ Մատթէոս քահանայի յիշատակ ինձ և ծնողաց խնոց . . ի Թվին . ՊԶԶ :

Տե՛ Ի Թիւ 113 Ի Բ. հարց ել 462 և 463 Գեբ Գրեթէն Եղեացայի Սեւանյրեանց :

[1] Տպագրութեան սխալ կայ աստ Եղեացեաց կամ Եղեգիս գրելու է, որ անկանի ի Սիւնիս յարեւմուտս հարաւոյ վայոց Զորոյ :

Թիւ 115 . Ի Յայտմաւորէ .

Փառք ամենասուրբ Երրորդութեանն . : Եւ ես անպիտանս . .
 գրիչս կարապետ՝ տեսի զփափագ ամենօրհնեալ քրիստոնէին խօ-
 ճայ Թաճդինն , և յանձն առեալ գրեցի ի քաղաքս Արճէշ կոչեց-
 եալ . (99 թիւ Մաշտոցի գրիչն է) ընդ հովանեաւ Սուրբ Աստ-
 ուածածնի տաճարին . և այլ ամենայն սրբոցս որք աստ կան . ի թը-
 լահանիս Հայոց ՊԶԶ ի հայրապետութեան Տէր կոստանդին : Եւ
 յառաջնորդութեան երկրիս Քաջբերունոյ՝ և ամենայն քրիստո-
 նէից ազգի , մեծ հռետորին՝ և քաջ քարտուղարին՝ Թումայ բա-
 բունապետին . քանզի յայսմ վերջին ժամանակիս՝ սա միայն յայտ-
 նեցաւ ճշմարիտ քարոզող ազգիս Հայոց . և պարծանք ամենայն
 վարդապետաց և կրօնաւորաց : Վասն զի առնէր և ուսուցանէր
 ամենեցուն զսրբութիւն և զառաքինութիւն . քանզի արեգակն էր
 բերան սորա և լոյս փայլէր ի պրակաց բանիցն՝ որ շուրջ էին գնո-
 վաւ⁽¹⁾ : . Եւ արդ ես անպտուղս ի բարեաց . . անյիշելիս ի գրչաց՝
 սուտ անուն կտրապետ աշխարհի երէցս ծառայ և աշակերտ
 սմին . (Թումայի Մեծօփեցոյ) հրամանաւ սորին և միջնորդու-
 թեամբն՝ ըստ խնամ տկարութեամբս յանձն առի , և ամենակարող
 զօրութեամբն Աստուծոյ կատարեցի զսա : Վասն զի այսչափ գը-
 ծագրելս շնորհիւ և ողորմութեամբ սորին է Թումա վարդապետի :
 Որոյ Տէր Աստուած ընդ երկայն աւուրս՝ հաստատուն և անշարժ
 պահեսցէ զսա՝ ի վերայ գաւազանի իշխանութեան իւրոյ . և յետ
 աստեացս ելանելոյ երկնից արքայութեան արժանիս արասցէ հան-
 դերձ ծնողօքն՝ և ամենայն արեան մերձաւորօքն ամէն . : Ստացող
 գրոցս զխօճայ Թաճդինն . և զծնողսն իւր Ամիր Հասան և զԹավ-
 րէզ մէլիքն , զկենակիցն զԴիլքուշատ , և զհանգուցեալն ի Քրիս-
 տոս զԱլամա՝ և զճազկեալ զաւակսն իւր զԱքանդար և Նաս-
 րադին . և զեղբարսն զԱմիրգօլ⁽²⁾ . զԼեղբըլքարիմ . : Նաեւ զծնող-
 քըն մեր (գրչին) զՅովհաննէս քահանայ և Զըմբութ . և զեղբար-
 քըն իմ զՄկրտիչ . զՄելքիսեթ և զՎարդան քահանայս⁽³⁾ . Եւ զու-

[1] Է սա նոյն ինքն Թումայ վարդապետ Մեծօփեցի պատմագիրն .

[2] Թերեւս անուամբ սորին կոչեցաւ Յովհաննու Մկրտչի վանքն Բաղիշոյ Ա-
 միրգօլու վանք :

[3] Սոյն Վարդան քահանայն քաջ քարտուղար էր՝ զորոյ գրոց յիշատակա-
 րանս յետ այսորիկ կարես տեսանել յընթացս շարունակութեան գործոյս : Իսկ գը-
 ռիչ սոյն Յայտմաւորիս նշանաւոր նօտարն Հայոց՝ արժանայիշատակ կարապետ
 քահանայն՝ ըստ պատմութեան կղբօրն իւրոյ Վարդան քահանայի՝ յետ ինչ ամայ
 նահատակի վասն Քրիստոսի Աստուածութեան յԱրճէշ քաղաքի , որոյ յիշատակն
 օրհնութեամբ կղիցի :

սուցիչն մեր զԹուսայ վարդապետն՝ զվերոյիշեցեալն . և զՅովհաննէս եպիսկոպոսն որ զօրինակն շնորհեաց : Եւ զորդին իմ զՍտեփաննոս սարկաւազն՝ որ և նա գրեաց⁽¹⁾ . : Ես Թաճդին (Ամիր) Հասանի որդիս գնեցի զՋաղացն Շամոյէն՝ հայի և տաճկի վկայութեամբ , և բնական մուլք տուի Սուրբ Յովաննիսին . (Ամրդօլայ ուխտին թերեւս) ինձ բարի յիշատակ և իմ ծնողացն Ամիր Հասանին և Թավրէզ մէլիքին՝ և եղբարցն իմոց Ամրդօլին և Արդըլքարաւին , Կարապետին և Մկրտչին . և իմ զաւակացն Աքանդարին և Նասարադնին . և իմ կենակցին Դիլքուշատին (հանգուցելոյ) և Ալամչին և ամենայն արեան մերձաւորացն . ով որ կարդայք ի սրտիւ Աստուած ողորմի ասացէք սոցա : Եւ զՋաղացն մեր թաղի վկայութեամբ (ինձ թուի Ամրդօլայ) ամենու , և քաղաքացւոցն հայու և տաճկի վկայութեամբ , և վանից երկցանու վկայութեամբ : Ես Բարսեղ եպիսկոպոս վկայ . ես Մատթէոս արեղայս վկայ . ես Աստուածատուրս վկայ . ես Ստոմ արեղայս վրկայ . ես Ղազար վարդապետս վկայ⁽²⁾ : Ես Սոսրով արեղայս վկայ⁽³⁾ : Առաջի Աստուծոյ վկայ ենք . որ Ջաղացն վանիցն գնեցաւ . տաճկի և հայու ձեռօք . :

Է 1881. Յուլ 2. Բաղէլ յԱմրդօլ : Է Էնն Սեբն Յահաննէս Մկրտչն :

Թիւ 116 • Ի Շարահանէ .

Փառք անհաս վեհի . : Արդ՝ գրեցաւ զիրքս այս՝ որ կոչի Շարահանոց՝ ի թուականութեանս Հայկազեան՝ ՊՁՁ . ամի՝ ի Սուրբ ուխտս Հաղբատայ . ընդ հովանեաւ Սուրբ Նշանիս⁽¹⁾ . և Սուրբ Կաթուղիկէիս , և Սուրբ գերեզմանիս Սարկաւազ վարդապետիս , և Շուշանայ Սուրբ վկային⁽²⁾ . ի վարդապետութեան մեծ բարունոյս՝ և քաջ հռետորիս Յովհաննէս վարդապետիս , ի յառաջնորդութեան Տէր Զաքարէի . ձեռամբ փծուն գրչի Մարտիրոսի՝ սուտ անուն արեղայի , ի վայելս անձին՝ (իւրոյ) և յետ մահուն յի-

[1] Սա ի քահանայութեան Ազարիս կոչեցաւ . և էր երեւելի գրիչ ի մէջ Ազգին ի նմին ժամանակի . որ յայտնի է յիւրոց յիշատակարանաց՝ զորս ունիս տեսանել ի ժամանակին :

[2] Թերեւս է սա նահատակեալ Ղազար վարդապետն , զոր յիշէ Թովմայ վարդապետ Մեծփեցի եւս և Չամչեան Հ. Միքայէլ հատոր Գ. էջ 452. և տող 14 :

[3] Էին սոքա ի ժամանակին յայնմիկ սիարանք ուխտին Ամրդօլայ :

[4] Սոյն Հաղբատայ ուխտն անկանի ի Չորափոր գաւառի յարեւելից հիւսիոյ նորին :

[5] Թերեւս գասերն Մեծին վարդանայ Մամիկոնէի Սուրբ զօրավարին Հայոց :

չատակ հոգւոյ կրկին ծնողաց և եղբարց . յիշեցէք . . և զհօր եղբայրն իմ (գրչին) զտէր Յունան, զհայրն իմ զՍոցատեղ, և զմայրն իմ զՍոնդիկն՝ զեղբայրն իմ զՍարգիս, և զամուսինն (իւր) զՄամքան, և զզաւակս իւրեանց, և զքոյրն իմ զՈւստիանէ՝ որ միամբտութեամբ սպասաւորեաց մեզ . :

է 1877. է Նոյ. 25. յԱնգլիա է հայրատաղաւ Կարին է Լանքայ . է մէջ Ռանտարան Կիւլոյն՝ որ էսէ Փրէնէլ Միւլսմ . մեզ Կիւլոյնի տնայտէն է Մանլար . է մեր քնայեալ էի :

Թիւ 117 . յԱւետարանէ .

Փառք Եզակի . . Արդ գրեցաւ Սուրբ Աւետարանս՝ ձեռամբ . . անարժան քահանայի Կարապետի . (108 թիւ Աւետարանի գրիչն է) ի Թուակահանիս Հայոց, ՊԶԶ. ի հայրապետութեան Տեառն Կոստանդեայ, և ի Թագաւորութեան Չհանչայ ամիրգին⁽¹⁾ . ի քաղաքիս որ կոչի Վան, ընդ հովանեաւ Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային, և Սրբոյն Սահակայ հայրապետին, ի դառն և վշտաշատ ժամանակիս . որ վասն ծովացեալ մեղաց մերոց . մահ ատրածեցաւ յաշխարհ իյԱսորոց մինչեւ ի Հայք՝ և անողորմ կոտորեցան՝ անթիւ տղայք և մանկունք, և ոչ գիտեմք զինչ լինելոց եմք . Այլ և յիշեսցիք առաջի Քրիստոսի զպատուական հայրապետն՝ զուղղափառ՝ անրիժ՝ ախոյեան՝ քաջ և յողթող՝ զսրբասէր՝ զաղքատասէր և ողորմածն՝ զՏէր Զաքարիա Կաթուղիկոս⁽²⁾ . զոր Տէր Աստուած պահեցէ ի նա ջահ անշիջանելի ի սուրբ եկեղեցի . և Աջն Անեղին՝ և Բագուկն Հզօրին պահապան և հովանի լիցի նմա ամէն . Յիշեսցիք ի սուրբ, յաղթս ձեր . . զստացող սորա զպատուական և զսրբասնեալ կրօնաւորն զՍարգիս (արեղայն) և զծնողքն իւր զհայրն Ղապար, և զմայրն Էլթանգ . : Արդ՝ գրեցաւ Աւետարանս այս յառաջնորդութիւն Կարապետիս, և տուաք անձն Անապատիս . :

է 1866. է Նոյ. 9. յԱղեմար էրգին . է Կիւլոյնի տնայտէն Անուայն Տեր Գեորգ ինարար էպիսկոպոսէ Հիւանցայ :

[1] Եղբօրն Աբանդարայ՝ որդւոյ Ղարայ Ուսուֆի . որ սպանաւ ի սինն ամի ի բերդն Երնջակայ ի սոյն Չհանչա եղբօրէն իւրմէ՝ ըստ Թովմայի Մեծոփեցւոյ ահանաւես պատմագրի :

[2] Աղթամարայ՝ սոյլ ժամանակակիցքն եւս գովութեամբ խօսեն զմեծ հայրապետէս :

1438. — ՊԶԷ.

Տար. — Առաքել երգիչ վարդապետ Բաղիշեցի . յեզր Մերտին մեծ քաղաքին , յօրինէ զներբողական Գանձն իւր ի վերայ երջանիկ կուսին վառվառեայ :

Ի ՊԶԷ թուականին թագաւորն վրաց Ալեքսան անուն , դեղ մահու ետ իշխանին Պեղգինի (կամ Պէշգինի) որդւոյն Սմբատայ , Օրբէլեանց՝ թուին Բուրթելի , որ էր աներ իւր . վասն զի առեալ (Պեղգինի) զամենայն կողմն Սիւնեաց և զամենայն գաւառս շըրջակայ մերձ ի Սիւնիս աւելի քան զվաթսուն հազար քրիստոնեայ տունս , և ազատեալ ի Շահ Ռուհէն վրաց : Եւ թագաւորն (Ալեքսան) առ երես սրատուեալ զնա տայ նմա զդղեակն Լօռու⁽¹⁾ : Իսկ նա բարեպաշտ և երկիւղած գորով , սիրող կարգաւորաց , ողորմած և աղքատասէր տա ամենեսեան՝ ձայն տուեալ առ նա ժողովէին : Եւ նա զամենեսեան սրատուէր և մեծարէր հացով և սեղանով , և հանդերձով զամենայն դիմեալս առ նա յազգէն Հայոց : Իսկ արիւնարբու գաղանն և անգութն (Ալեքսան արքայն վրաց) երկուցեալ ի նմանէ սին և սնտաի կարծեօք՝ զի Հայք առ նա ժողովեսցին և աւերումն լինի կողման վրաց . մանաւանդ ի նենդութենէ չար իշխանացն , որպէս ի սկզբանէ նախանձու և ատելութեամբ կորուսին զամենայն ազգս Հայոց , գաղտնի դեղ մահու տան ի յայր մի Ամնադին անուն յազգէս Հայոց՝ խոստանալով նրմա մեծամեծ պարգեւս : Եւ անօրէն արեանարբու կայէնն առաւել սիրեաց զնենգութիւն և զազգն Քաղկեդոնական քան զՍատուածապաշտ և զբարերարն Ազգիս ուղղադաւան և ճշմարիտ հաւատացեալն՝ (Պեղգինէ) տայ նմա յանպատրաստից դեղ մահու ի ժամ կերակրոյն : Եւ նորա իմացեալ՝ զդեղթափ խնդրեալ և ոչինչ օգտեալ աւանդեաց զհօգին ի ձեռս հրեշտակաց , և տարեալ եդին առ հայրն իւր Սմբատ և եղբայր իւր Ստեփաննոս եպիսկոպոս Սուրբ ուխտին Տաթեւու , որ հանգուցեալ էին ի կողմն վրաց փախստեամբ ի յայլազգեաց : Եւ սուգ եղեւ ամենայն ազգիս Հայոց , և յուսահատութիւն ամենայն մերոյին ազանց . վասն զի ճիւմի կայր ի մէջ ողկուզաց և ասող մի ի խաւար գիշերի⁽²⁾ , և տեղիք ապաւինի ամենայն քրիստոնէից ազգիս :

ԹՎ. Լրդդդդ Մեծօրէն պարտեալ է ԲՆ. 117. 118. և 119 :

[1] Լոռի քաղաք անկանի ի Գուգարք նահանգի ի Տաշիրս Ազատու գաւառի :

[2] Յովհաննէս քահանայ Հայրատացի ժամանակակից մեծի իշխանիս գովութեամբ խօսի զամանէ . տես ի 118 թիւ Ճաշոցի :

ԹԻՒ 118 . Ի Ճաշոցէ .

Յիշ.— Փառք պատիւ . : Արդ՝ ես Աստուածատուր մեղապարտ էրէց՝ բազում ժամանակաց այրի , ի Կոտեւուց երկրէն ի գեղջէն Արծնոյ՝ ցանցակող եղէ այս հոգելից տառիս ի դառն և ի նեղ ժամանակիս . որ որդի մեծի Խորազմին (Ղանկ) Թամուրին Շահ Ռուխ կոչեցեալ՝ չորս անգամ բազում հեծելօք անգութ և անազորոյն և անողորմն և ծարաւի արեան քրիստոնէից , երեկ (եկն) ի վերայ աշխարհիս Թավրիզոյ , որ բազում և անասելի աւերած ի վերայ աշխարհիս Հայոց : Չի զոր սրով կոտորեաց , և զոր անողորմ գերի վարեաց և կորոյս , և զոր սովամահ եղան՝ և զոր մահն տարաւ՝ և զորս դայլք և գազանք կերան և պատառեցին⁽¹⁾՝ և մնացեալքն այսր և անդր փախեան բնաջինջ և մտին յաշխարհն Վրաց : Եւ ամենեւին անմարդարնակ մնաց և աւերեցաւ աշխարհն մեր . և դրունք երկնանման տաճարաց փակեցան , և լոյսք և կանթեղք շիջան և խաւարեցան , և խունիք և նուէրք պակասեցան , և աղօթք և երգք Սաղմոսաց պակասեցան և դադարեցան՝ և մատուցմունք պատարագաց և ամենայն սրբութիւնք եկեղեցւոյ՝ Խաչ և Աւետարան՝ և ամենայն հանդերձեղէն սպասք եկեղեցւոյ . . . գերի մատնեցան . և մեծ սուգ և ողբ՝ և տրտմութիւն և կսկիծ հասաւ Հայոց եկեղեցեաց . և եղաք որպէս հինն Իսրայէլ կոխան և այսն կատականաց ամենայն ազգաց . և այս ամենայն հասաւ և եկն ի վերայ մեր՝ վասն ծովացեալ և անառակ և անդարձ և անզեղջ մեղաց մերոց : Յայս դառն և կսկծալից ժամանակիս՝ կարի աղքատութեամբ և չքաւորութեամբ՝ ետու գրեւ զգիրքս ի յօտար երկիրս Վրաց՝ ի ձեռս Յոհաննէս քահանայի՝ ի վանքս Հաղբատայ՝ առ դրան Սուրբ Նշանիս . և Սուրբ մայրաքաղաք Սմբարանիս , և Սուրբ Աստուածածնիս՝ և Սուրբ Գրիգորիս⁽²⁾ . առ դամբարանի սուրբ վարդապետաց⁽³⁾ և սուրբ հայրապետաց , և մեղսաքաւիչ և Աստուածարնակ Սուրբ տաճարացս , ի յառաջնորդութիւն Տէր Զաքարիա արհ(ի) եպիսկոպոսիս , և ի թագաւորութեան Վրաց

[1] Վկայէ զառացելոցս թովմա վարդապետ Մեծոփեցի պատմագիրն՝ ի Թղթ. 94. 95. ևն. որ անձամբ կրեաց և ետես զայս ամենայն :

[2] Մարտիրոս արեղայ ի Թիւն 116. փոխանակ Սուրբ Աստուածածնի և Սուրբ Գրիգորի՝ յիշէ զՍուրբ Շուշան տե՛ս ի վերոյ գրանս նորին :

[3] Սարկաւագ վարդապետի՝ ըստ վերոյիշեցեալ Մարտիրոս արեղայի :

Ալեքսանդրէի⁽¹⁾ և պարոնութեան տեղւոյս և նահանգիս Լօռոյ մեծափառ և աստուածասէր իշխանաց իշխանիս՝ պարոն Բէշքենին յազգէն Օրբէլեանց⁽²⁾ . թուին մեծ պարոնին Բիւրթէլի ի թուականիս Հայկազեան տուամարիս ՊԶԷ . ամին :

† 1866 . † Մարտ 5 . † Վ. Կ. յԱրար † Սուրբ Աստուածածին Էկեղեցին [3] .

Թիւ 119 . ի Գանձուց Առաքել վարդապետի Բաղիշեցւոյ :

Որ Առաքել անուանեցայ ,
Եւ վարժապետ ես կոչեցայ .
Բայց ի գործոց յոյժ հեռացայ ,
Այլ յոյս ի Տէր Յիսուս կալայ .
Ի յուր հարիւր թուականին ,
Ուրթսուն և եօթն աւելորդին .
Զբանս ասացի սուրբ Վառվառին ,
Յեզր Մերտին մեծ քաղաքին :

† 1865 . Յունիս 29 . յԵկեղեցւոյ Սուրբ Երեմիայի Էկեղեցին :

Սոյն Գանձասաց Առաքել վարդապետն այլ է ի ՊԾԳ ամի և ի Թիւ 22 . յիշեալ յԱռաքելէն՝ զի էր նա քեռորդի մեծի վարժապետին Հայոց Տաթեւացւոյն Գրիգորի . և էր նա ըստ Թովմայի Մեծոփեցւոյ ի Թղթ . 51 . առաջնորդ Սիւնեաց՝ և վանահայր Տաթեւու վանից . Իսկ Երկրորդս՝ է Առաքել վարդապետ Բաղիշեցի երգիչն , որ ունի բազում գանձս ասացեալ . և այս բանս հաստատի յետագայ Աւետեաց գանձի խորագրովն՝ որ է այս :

« Գանձ Աւետեաց երեկոյին ,
« Սուրբ Մինդեանն հինգ օրին .

[1] Սա ըստ ասից Թովմայի Մեծոփեցւոյ պատմագրի՝ ի Թղթաճամար 117 և 118 . որ արիւնարբու գազան կոչի ի նմանէ . դեզ մահու տայ մեծի իշխանին Սիւնեաց Պեղգինի՝ որդւոյն Սմբատայ Օրբէլեանց՝ թուին Բուրթէլի՝ որ էր աներ իւր . և բառնայ զսոյնպիսի երեւելի իշխան յաշխարհէ . ի ՊԶԷ 1438 թուականին մերոյ :

[2] Ըստ Թովմայի Մեծոփեցւոյ ի Թղթ . 117 որդւոյն Սմբատայ :

[3] Յաւուրս աւագ քահանայութեան տեղւոյն ձերունազարդ Տէր Սիմեոնի Բերկրցւոյ՝ որ էր եղբորորդի արժանայիշատակ և մեծագործ առաջնորդին Վանայ Ղազար վարդապետի . զսա տեսեալ եմ ես ի հասակի կոյտառ մանկութեանս :

«Երդեայց զսա քաջ բարունին ,
«Տէր Առաքել Բաղիշեցին .»

Կայր նա եւս մի այլ Առաքել վարդապետ՝ որ աշակերտ էր Մերենց նահատակ Գրիգոր վարդապետի Սլաթեցոյ՝ որ ի նահատակութեան նորին ի ՊՀԳ 1415 ամի. եղերկու ողբականաւ գովարանեալ է զվարդապետն իւր. որոյ տան գլուխն յետագայն հեգէ : «Գրիգոր վարդապետին յԱռաքելէ՛ նորին աշակերտէ .»

Թիւ 120 . յԱւետարանէ .

Փառք . : Գրեցաւ Սուրբ Աւետարանս , ի մայրաքաղաքն որ կոչի Գորի⁽¹⁾ . ի թագաւորութեան Վրաց Աղեքսանդրոյ⁽²⁾ ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս ի թուին ՊԶԷ . ձեռամբ Յոհաննէս գրչի . ի խնդրոյ Տէր Մատթէոս քահանայի . :

† 1865. Մարտ 8. † Սեբաստիոյ Սուրբ Նշանի վան .

Թիւ 121 . ի Գանձարանէ .

Գրեալ ի վանս Սուրբ Գրիգորի Մեղիտինոյ Հայոց . ի թվ. Հայոց ՊԶԷ . յիշեցէք զիս զԴաւիթ արեղայս (թերեւս գրիչ Գանձարանին) և զհայրն իմ զԻսահակ քահանայն . . զԿոստանդին աւագերէցն և զաստուածատուր զաւակսն իւր՝ զԹորոս քահանայն և զՍտեփաննոս հայրպետն , այժմ խնամատար և վերակացու են Սուրբ ուխտիս . .

Տե՛ս ի Գեր. Գորեթին Եղիսիպոսի Սրբաձայնի Բ. հարսր Թարսոս Էրոց Էջ 452. և 453 .

Թիւ 122 . ի Յայսմաւուրէ .

Փառք համագոյ և միասնական Սուրբ Երրորդութեան . : Եւ արդ ես անպտուղս ի բարեաց . . Կիրակոս . . (երեք տող գիր մաշեալ էին) Հինգ Խորան , ի հայրապետութեան Տեառն Կոստանդեայ՝ և մեր առաջնորդութեան (Բաղիշոյ) Տէր Ստեփաննոսի և ամիրութեան քաղաքիս Շեխ Մահմատին . և զանութեան Ջհանշայ

[1] Անկանի սա յարեւմտից կուսէ քաղաքին Տփլիսոյ . շինեալ առ ամն կուր գետոյն հզօրի :

[2] Վասն սորին աե՛ս ի վերոյ ի 118 թիւ ճաշոցի յիշատակարանի [1] ծանօթութեան :

միրզին . որ յայսմ ամի Սքանդար եղբայր նորա՝ սպանաւ ձեռամբ որդւոյ իւրոյ՝ և նստաւ ի թաղթն Ջհանշէն . և ի թուականիս Հայոց . ՊԶԷ : Զստացող գրոյս գրարեմիտ տիկին Ղրիմ խաթուն , և զայրն իւր զԱպուլէն . . և եղ ի դուռն Սուրբ Աստուածածնին . և Սուրբ Փէորգայ զօրավարին . . (ի Բաղէշ) և Կիրակոս գրչիս՝ եւ իմ ծնողացն Էլէքսան քահանային , եւ Եղիսաբեղին . . Կիրակոս գրչիս . . եւ կողակցին իմոյ Քնքուշ խաթունին . :

ի 1881 . Յունիս 9 . ի կարգին ի վանիկ Գեղ[1] :

1439 . — ՊԶԸ .

Տար . — Եւ ՊԶԸ թուին , գողացան զԼուսաւորչի Աջն ի Սիս . և առին Վրացիքն զԳողգոթայ ի Հայոցս . և հուր անկաւ յերկնից ի Մըմրուտ սարն⁽²⁾ և շատ տարի այրեց զայն սարերն :

ի Կարեփրս-Թեմե Մեմուսեւց Թովմայ Լարդուպի Աղմասարցոյ Ժամանակից և անորիս պարմանի :

Շինեցաւ դուռս Մալաթիոյ Սուրբ Լուսաւորչի վանուց Սուրբ Գրիգորի՝ ձեռամբ Սիմէոն եպիսկոպոսի . ի թվ . Հայոց՝ ՊԶԸ :

Յետ վախճանի Կոստանդին կաթուղիկոսի . Յովսէփ Գ . նստի կաթուղիկոս՝ և կացեալ ամիսս ինչ վախճանի , և նստի Գրիգոր Մուսարէկեանց :

Շահաթնանեան Յովնանի եպիսկոպոսի հար . Ա . ԷՂ 210 :

Թիւ 123 . ի յԱւետարանէ .

Յէշ : — Արդ՝ գրեցաւ Սուրբ Աւետարանս ի թուիս Հայոց . ՊԶԸ . ձեռամբ Գրիգորի սուտ անուն կրօնաւորի , ի վանս որ կոչի Արդեւլան . ընդ հովանեալ Մօրս լուսոյ Սրբուհոյ Աստուածածնին՝ և Տեառն Յուսկայ որդւոյ սրբոյ գերեզմանին⁽³⁾ . ի հայրապետու-

[1] Մինչ ընդ Արիստակէս վարդապետի Դէվկանց վանեցւոյ վարագոյ վանուց վանականի՝ գնայօք ի Բաղէշ :

[2] Նէմրուտ լեռն՝ որ կայ յարեւմտից կուսէ ծովուն վանայ ի մէջ Գատուանայ և Խլաթոյ :

[3] Տէր Յուսկայ որդին է՝ նոյն իսկ Ստեփաննոս սքանչելագործ մեծ վարդապետն Հայոց Արտամեացի՝ որ հանգուցեալ կայ ի նոյն վանս :

Թեան Լուսաւորչին⁽¹⁾ . Քանզի յայսմ ամի վերացեալ եղեւ Աջն (Լուսաւորչին) ի Սոոյ . և ոչ գիտեմք զի՞նչ եղեւ . յառաջնորդութեան Սրբոյ ուխտիս Մկրտիչ վարդապետին⁽²⁾ :

Թիւ 124 . ի Ճաշոցէ .

Փառք . : Եւ արդ ես . . քահանայ կարապետ . . կատարեցի զՍուրբ Գիրքս զայս . . ի քաղաքն Ոստան . որ է ծովահայեաց ի դուռն Քարի Սուրբ Աստուածածնին՝ ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին՝ և Սուրբ Ստեփաննոս Նախավկային . ի Թուահանութեանս Հայոց ՊԶԸ . ի հայրապետութեան (Աղթամարայ) Տէր Զաքարիայի՝ որ յայսմ ամի նստաւ յաթոռ հայրապետութեան⁽³⁾ Եւ ետ զսա (գիրքս) նուէր (տանուտէրն Յոհաննէս) ի դուռն սուրբ և փառաւորեալ վկային Քրիստոսի Գէորգեայ . ի գիւղն՝ որ կոչի Նահգենց . : Նաեւ զսանահերն իւր (գրքի ստացողին) զտանուտէրըն զԱմիրբէկն . . (կարապետ քահանայ գրչիս) և ծնողացն իմոց Ստեփաննոս քանանայի և Փաշայի . :

է 1882. Յուլի 26. է վ. ան. է Տերմայր Էկեղեցին .

Թիւ 125 . յԱւետարանէ .

Փառք Ամենասուրբ Երրորդութեան . : (գրեցաւ) ձեռամբ . . Մաղաքիա արեղայի . : Եւ եղեւ աւարտ սորա . . ի մերում . . ՊԶԸ . ամի . ի Նոյեմ. 7 . օրն Շարաթ՝ ի հայրապետութեան Տեառն Գրիգորի՝ բարեպաշտի և աստուածասիրի և իմաստնոյն . և եպիսկոպոսութեան սրբասիրի մեծի՝ Տէր Մաղաքիայի ի մերում Հոնաց աշխարհին՝ և Գաղարիայ նահանգիս Սաւլխաթ

[1] Թուի թէ յայսմիկ ժամանակի Սոոյ կաթուղիկոսական Աթոռն՝ զիւր բարձր կոչումն կորուսանելով յաչս ընդհանուր Ազգին . ուստի սոյն յիշատակարանի հեղինակ Գրիգոր կրօնաւորն զանց առնէ յիշատակել զանուն Գրիգորի կաթուղիկոսի Մուսաբէկեանց :

[2] Սոյն Մկրտիչ վարդապետ զոր յիշատակէ կարապետ քահանայ հանճարեղ գրիչն՝ ի թիւն 102 գրեալ Մաշտոցի իւրում . էր նաեւ գէտ Բերկրոյ վիճակին՝ և էր նշանաւոր ի մէջ վարդապետաց ի նմին ժամանակի : Զայս յիշատակարանս կայ տպեալ ի գիրս Առաքել պատմագրի յէջ 402 :

[3] Ի թիւն 114 կարապետ նահատակ քահանայ գրիչն ի ՊԶԸ ամի զայս Զաքարիայն՝ կաթուղիկոս յիշատակէ գովութեամբ . Թուի թէ ի կենդանութեան Գաւթի նախորդին իւրոյ՝ ձեռնադրեալ էր կաթուղիկոս , և թերեւս ի սմին ՊԶԸ ամի՝ յետ վախճանի նորին յաջորդեալ է նմա :

Ղրիմի, և Կաֆայիս մայրաքաղաքիս՝ ի մենաստան մեծի Սրբոյն Անտոնի, և Աստուածածնի, ի խնդրոյ պատուական և երջանիկ քահանային Արրահամի. :

1870. Նոյ. 11. Զրեւելիք է Կ. Պօլս. է Ղալմէտ. է Սուրբ Լուսնայի եկեղեցի. :

Թիւ 126 . ի ճաշոցէ .

Փառք Սուրբ Երրորդութեան և մի Աստուածութեան՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ . : Արդ՝ գրեցաւ սա ի թուականիս Հայոց ՊԶԸ. ի գաւառիս որ կոչի Դարանաղեաց՝ և մականունն Կամախ, ի սուրբ մենաստանիս, որ կոչի Ծնան Առճոյ վանք. ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին. ի հայրապետութեան Տէր Գրիգորի, և յեպիսկոպոսութեան Դարանաղեաց գաւառիս Տէր Կիրակոսին, և յիշխանութեան Իաղու բակին՝ որ էր նախախնամող քրիստոնէից ազգին. ապա չէր արժաթասէր՝ այլ նախախնամէր և հրաման տայր եկեղեցեաց՝ որ շինէին, և այլ բազում բարութիւնս առնէր. : Յիշեալիք զստացող սորա զպարոն Պակթամուրըն, և զճնողսն իւր՝ զՔրման խաթուն և զԱստուածատուրն, և զկողակիցն իւր զՄամա խաթուն և զգաւակսն իւրեանց. : Յիշեալիք և զառաջնորդ սուրբ ուխտիս՝ այլ և զպարոն Պակթամուրն որ եռափափագ և ջերմեռանդ և յօժար սրտիւ ել և գնաց և շինեաց զեկեղեցին. որ (էր) անրնակ ի մարդկանէ. . շինեաց զսա վանք և Անապատ, և զարդարեաց հանդերձիւք և գրեանօք՝ ամենայն զարդիւք ծառօք և տնկօք՝ ով ոք չունի իշխանութիւն ի յայս վանքս՝ ոչ դավէ (դատ) առնելով՝ ոչ ծախելով՝ ոչ տանելով, ոչ գիրք և ոչ այլ ինչ, յիշատակ անջնջելի իւրն եւ ծնողացն. :

է 1864. Դեկ. 11. է Մարզապետ Սուրբ Աստուածածնի եկեղեցի. :

1440 . — ՊԶԹ .

.....

Եւ դարձեալ ի միւս ամին. ՊԶԹ. թուականին բարկացաւ արարիչն Աստուած ի վերայ մերոյին ազգիս և ի վերայ չար թագաւորին(1) և աշխարհի նոցին : Ձի թագաւորն թավրիզու. . . և

[1] Վրաց Ալեքսանդրի տես ի վերոյ ի ՊԶԷ. 1438 ամի և ի 118 թիւ գրեալ ճաշոցի թիւ 1 ծանօթութեան զբանս թովմնայի Մեծփեցւոյ :

իշխանն՝ Ջհանշահ անուն զոր ժողովեաց՝ գունդս կազմեաց՝ և զառաջնորդն Արտաւիլու առեալ եկն ի վերայ տանն Վըրաց . և բազում անգամ դեսպան առաքեաց զալ նմա ի հնազանդութիւն և զսովորական հարկն տալ նմա : Եւ նա ոչ կամեցաւ , այլ խստութեամբ պատասխանեալ ընդդէմ նորա : Եւ զայրացեալ եկն ի վերայ բազմութեամբ անթիւ զօրօք յաւուր մեծի Չատկին յանկարծակի և յանպատրաստ ժամու , և զանկեալս ի ձեռս իւրեանց գերեցին և զմեծամեծս սպանին . և խսար արարեալ նստան ի վերայ ամենայն Շամշուլտէ քաղաքին⁽¹⁾ : Եւ մինչ ի Պենտէկոստէի օր գալտեան Հոգւոյն Սրբոյ առին զՇամշուլտէ խարէութեամբ և երկիւղիւ . . և ինն հազար չորս հարիւր գերի առին Եւ անարի և որովայնամուլ և արբեցող և լապաստակակեր ազգն Վրաց՝ որ հանապազ ի գիներբուս նստեալ պարծէին՝ յաղթող լինել ի վերայ ամենայն ազգաց , նետիւ միով մարդ մի խոցել ոչ կարացին : Եւ անա ինքեանք մազապուրծ եղեալ՝ զորդիս իւրեանց ի ձեռս թշնամեաց մատնէին : Եւ բարձրացուցէ զեղջիւր թագաւորաց քրիստոնէից՝ բարեխօսութեամբ Սրբուհւոյ Աստուածածնին . և ամենայն սրբոց երկնաւորաց և երկրաւորաց , մանաւանդ նոր և ընտրեալ մարտիրոսաց՝ քաջ և արի նահատակացն՝ հեղմամբն արեանց Շամշուլտէ ողորմելի քաղաքացեաց : Եւ ի ձեռքն սոցին բարեխօսութեան և մաղթանաց Տէր Յիսուս թողութիւն արա մեզ՝ և ծնողաց մերոց և հարազատաց և ամենայն հայկազեան սեռիս կարգաւորաց և աշխարհականաց և ամենայն քրիստոնէից . ամէն⁽²⁾ :

Թիւ 127 . ի Գանձարանէ .

Յէշ :— Փառք . . Եւ արդ՝ գրեցաւ սա ի մայրաքաղաքս Ռստան որ է ծովահայեաց , ի դուռն Քարի Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Ստեփաննոս նախավկային , և Սրբոյն Սարգսի զօրավարին . ի թուականիս Հայոց ՊԶԹ . ի հայրապետութեան (Աղթամարայ) Տէր Չաքարիայի Հայոց կաթուղիկոսի . ձեռամբ կարապետ

[1] Անկանի սոյն քաղաքն ի Գուգարս ի սահմանս Վրաց :
 [2] Թովմայ բաբուն Մեծոփեցի ի թղթահամար 119. 120. 122. 123. 124 և 125 : Աստ վախճան տայ Մեծոփեցին իւրում պատմութեան :

կրօնաւոր անարհեստ գրչի⁽¹⁾ . ի խնդրոյ Նարեկցի բարեպաշտ հիւս
Պետրոսի . որ ստացաւ զսա և եդ յիշատակ ի դուռն Սուրբ Թով-
մայի Առաքելոյ վանուցն . :

Է 1866. Նոյ. 16. Է Նարեկոյ վանս որ իայ Է գաւառին Ուլրասնեոյ Է վան-
հայրաւիտն ստորին Յովսէփ վարդապետի Հիւանցոյ Է Տէր հանգստեւոյն .

1441 . — ՊՂ .

Տար. — Կիրակոս բանասէր վարդապետ՝ գրէ զպատմութիւն
մեծի բարունապետին Թովմայի Մեծփեցւոյ :

Է 1849. տի Հոյասոսն լրտէր :

Եւ ՊՂ թիւն յէջմիածին կաթուղիկոս նստուցին :

Միւստեան Թովմա վարդապետ :

Եւ ետին կաթուղիկոս (յէջմիածին ի ՊՂ թվին) զՏէր Կիրա-
կոս՝ որ էր յերկրէն Քաջբերունեաց՝ ի գեղջէն Սառաբաստայ⁽²⁾ . :
Եւ այս են ժողովեալ վարդապետք և եպիսկոպոսք . (ի ձեռնա-
դրութեան Կիրակոսի Վիրապեցւոյ) Յովհաննէս մեծ վարդապետն
Հերմոնայ վանից⁽³⁾ . և աշակերտք իւր Գաւիթ և Ստեփաննոս վար-
դապետք , Շմաւօն վարդապետ ի Տաթևու , Գրիգոր վարդապետ
ի Սուրբ Թադէոսէ՝ Գրիգոր միւս վարդապետ Հազրատու՝ Կիրա-
կոս վարդապետ Ռչտունցի՝ Սարգիս վարդապետ Զորովանից՝ Տի-
րացու վարդապետ Վանանդայ՝ Սիւնեայ . և ի կողմանէ Վասպու-
րականի Թումայ վարդապետ Քաջբերունեաց յԱղիովտոյ . (Մեծփե-
ցի) պատմագիրն է) Մկրտիչ Կարապետ (վարդապետք Մեծփե-
ցի) միւս Մկրտիչ Ողբեկենց . Մկրտիչ Հողեցի . Սարգիս և այլք . .
Կարապետ վարդապետ , Յովսէփ վարդապետ Սառաբաստու՝ Ղա-
զար վարդապետ Բաղիշեցի՝ Սարգիս և Յոհան վարդապետք յԱրծ-
կու , Զաքարիա վարդապետ Վարազայ . և այլ բազում եպիսկո-
պոսք՝ քահանայք՝ կրօնաւորք և դօլաթաւորք՝ որք յօժարեցան
ի շինումն և ի նորոգումն մօրն լուսոյ քրիստոսադիր Սուրբ Աթո-

[1] Ինձ թուի թէ 124 թիւ ճաշոցի գրիչն է :

[2] Այս գիւղն այժմ աւերակ է և կայ ի հարաւ կուսէ . սրբոյ ուխտին
Սուխարայ՝ որ կոչի Արծուաբեր Աստուածածին :

[3] Յեղեղնաձոր գաւառի անկանի սոյն ուխտն . ի մէջ Սիւնեայ նահանգի՝
յարեւմտից հարաւոյ Վայոց Զորոյ . և Յոհաննէս վարդապետն է նոյն իսկ մա-
կանուանեալ կողտիկ վարժապետն կոչեցեալ :

ուոյն էջմիածնի բազում աշխատութեամբ և կամակցութեամբն Աստուծոյ՝ որ արկ ի սիրտ իշխանին Արարատայ պարոն Աղուպ բէկին, որ ետ հրաման վերստին նորոգելոյ զՍուրբ էջմիածին . .

Գրեալ է Լուսինայի Բարեբեկի խնամակալի :

Ի սորա ժամանակս (սուլթան Մուհամէտի) ՊՂ. թուին՝ այրեցին զՍուրբ Յայն ի Մարզուան . և զսպիտակ դօտին բարձին ի քրիստոնէից :

Վարդան Լուսինայի Բարեբեկի Խնամակալի :

Չուսուարչի Աջն գողացան ի Սոյ և բերին յէջմիածին . և զՍորվիրապայ հայր Տէր Կիրակոս կաթողիկոս օրհնեցին :

Գրեալ է Խոսրովի Խնամակալի :

Գրիգոր Հանեցի էր կաթողիկոս Աղուանից . ըստ թովմայի Մեծոփեցւոյ պատմութեան . զոր յիշատակէ Հ. Միքայէլ Չամչեան :

Գ. հար. էջ 488 :

Չաքարիա եպիսկոպոս վանահայր Հաւուց թառայ՝ Անասն եպիսկոպոս առաջնորդ Սորվիրապայ, Կարապետ եպիսկոպոս վանահայր Յօհանավանայ . և Յովհաննէս եպիսկոպոս վանահայր Բջնոյ յիշատակին ի Շահխաթունեան Յովհաննէս եպիսկոպոսէ .

Տե՛ս է նորին Բ. հար. էջ 113. 187. 282. և 296 :

Ողորմութեամբն Աստուծոյ նորոգեցաւ Սուրբ էջմիածին, և աշխարհախումբ հանդիսիւ՝ նստաւ կաթողիկոս յէջմիածին Կիրակոս ճգնազգեաց վարդապետն Վիրապեցի :

Տե՛ս է Չամչեանի Խնամակալի Մեծոփեցւոյ յէջ 77 :

Թիւ 128 . ի ճաշոցէ .

Յէշ. — Զոր տեսեալ զայսպիսի գանձս Աստուածային . . Մկրտիչ քահանայն՝ և ետ գրել զբոլոր տարեգիրքս տարւոյն, յիշատակ իւր և ծնողացն իւրոց Աւնոփրիոս քահանային, և մօրն իւր Շայմելիքին՝ և հօր եղբարցն իւր Կարապետ վարդապետին՝ և Յովհաննէս Հէրպէտին(1) . և Ազիզ բակին, և զմօր քուեր որդիքն իւր զՏէր

[1] Ինձ յոյժ հաւանական թուի թէ խառաքաստոյ ուխտի վանահայրն ակնարկէ :

Ստեփան եպիսկոպոսն : Այլ և յիշեացէ Տէր Աստուածն Իսրայէլի զսանամայրն իւր զՈւսլուենմելիքն՝ և զդուստր իւր զմեծ խաթունըն , որ ի Տէր Մկրտիչ Հերպետին (վերայ) բազում երախտիք ունին հոգեւոր և մարմնաւոր : Արդ՝ գրեցաւ սա ձեռամբ յողնամեղ և անարհեստ գրչի Յովհաննէս քահանայի . ի յերկիրս Քաջբերունի՝ ի քաղաքս որ կոչի Արճէշ . ընդ հովանեաւ դմբէթայարկ և խորանածեւ Սուրբ եկեղեցւոյս՝ որ յանուն Սուրբ Գէորգայ զօրավարին կառուցեալ կայ : Ի թագաւորութեան . . . Սուլթան Ջիհանշային . և ի կաթուղիկոսութեան Սուրբ Լուսաւորչի Աթուոյն՝ Տէր Կիրակոսի , որ մականունն Խլոնց կոչի : Արդ՝ գրեցաւ սա ի թուականիս Հայոց ՊՂ թուին , ձեռամբ տխմար գրչի Յովհաննէս քահանայի , ի յիշատակութիւն Մկրտիչ քահանայի , ստացողի և նկարչի : .

Տե՛ս Գեղ. Գործքի եպիսկոպոսի Արստիշտիանց Թարս գրոց Ա. հար. եջ. 222. 223 .

Թիւ 129 . ի կարմիր անուն արծաթապատ Աւետարանէ .

Փառք Անսկզբան : Եւ ետ գրել զսա (Մկրտիչ եպիսկոպոսըն) յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն՝ հօրն Կիրակոսին և մօրն Հոնդ մէլեքին , և հոգեւոր մօրն Մարթայ մահդասոյն ամէն . : և ինձ անյիշելոյս Մարգարէ գրչի . . և ծնողաց իմոց Յովհաննէսին և Ոսկոյն և եղբարց իմոց Յովհաննէսին և Մխիթարին , և հոգեւոր ծնողաց իմոց Թումայ քահանային և Յովհաննէսին : Արդ աւարտեցաւ Սուրբ Աւետարանս ի յարքունական երկիրս Մոկաց . ի գեղս որ կոչի Աբրահամանց . (է յարեւմտակողման թաղն Մոկաց) ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս . ի թուարեքութեանըս Հայոց ՊՂ . որք հանդիպիք Սուրբ Աւետարանիս զպարզեւքն սուք զԱստուած ողորմին՝ ստացողին Մկրտիչ եպիսկոպոսին և ամենայն քրիստոնէից ամէն :

է 1887. Օգոստ. 21. Ուրբաթ. է Մոկ. է Թաղն Աբրահամանց է Սուրբ Յարստիան եկեղեցին :

Թիւ 130 . ի Տօնացուցէ .

Փառք Ամենասուրբ Երրորդութեան . , Եւ գրեցի ըստ իմում կարի՝ յիշատակ ինձ և ծնողաց իմոց Ղազար Մահդասուն և Անբարին . . և ի թուականիս ՊՂ . ձեռամբ անխմաստ գրչիս Թումայի՝ ի սուրբ ուխտս Մեծ ուխայ . ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս , և այլ սրբոց որ աստ կան հանգուցեալ , և առ ոտս տիե-

զերաւոյս վարդապետիս Թոււմայի . (Մեծուիւնցի պատմիչն է) զոր և Տէր Աստուած պահեսցէ անսասան կենօք ամէն : Եւ ես եղկելի գըրիչս Թոււմայ⁽¹⁾ զմանկունսդ Սուրբ եկեղեցւոյ . :

† 1871. Փետր. 25. † Լնս Վարդապետ .

Թիւ 131 , † Մատթէոսի Աւետարանի Մեկնութենէ .

Ի Թուին Հայոց մեծացն ՊՂ. յամսեանն Մարտի . որ օր տասըն հինգ էր աւուր Չորեքշաբթի , (գրեցաւ գիրքս) ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի , և Սուրբ Ստեփաննոսի նախավկային , և Սուրբ Սարգսի զօրավարին՝ և Սուրբ Կարապետին՝ և այլ բազմահաւաք սրբոցս՝ որ աստ կան . ի հայրապետութեան Տեառն Գրիգորի կաթուղիկոսի ամենայն Հայոց . ի սուլթանութեան Եգիպտացւոց՝ և յաշխարհակալութեան Մելիք Տահարի՝ որ մականունն Չախմախ կոչի , ի դառն և ի նեղ ժամանակի . . . որ կէսքս ի սովաւ յաշխարհէ յայլ դաւառ վարեն , և կէսք յեղբարց և ի մարց բաժանեն : Եւ յայսմ ամի ՊՂ. դարձեալ յայլ իմն պատահումն հանդիպեցաւ Հայոց ազգիս . քանզի Աջ Սուրբ Լուսաւորչին մերոյ Գրիգորի , որ կայր Հիմի քանի ժամանակ . . քաղաքի որ յաշխարհին . . (գիրս մաշեալ էին) եայ՝ անյայտ եղեւ . ոչ գիտեմք թէ գողացան , և ոչ գիտեմք (թէ) ինքն զինքն ծածկեց , և ի մեծ նեղութիւն կան և ի տրտմութիւն Հայոց Ազգս վասն այս պատճառի , և զկաթուղիկոս Գրիգոր բազում չարչարեցին . և այլ եպիսկոպոսք ընդ նմա վասն Աջին Լուսաւորչին՝ և ոչ գտին զնա . որ յուսամք ամենասուրբ Հոգին Աստուած զի յայտնեցէ զԱջ Սուրբ Լուսաւորչին մերոյ ի ձեռն ընտրելոյ և արդարոյ առնն միոյ . որպէս զիայտն Սուրբ Սաշին ի ձեռն Կիւրղի . և որպէս զինքն զԼուսաւորիչն ի ձեռն հովուացն . և որպէս զԽաչն Վարազայ ի ձեռն Թողկայ Սուրբ ճգնաւորի , և որպէս զնշխարն Սուրբ Քօշիցն ի ժամանակն վերջին ամէն և եղիցի :

† 1864. Դեկտ. 28. յԱմստեւ +աղ+ † Սուրբ Նեկուայոս +ամնէլաֆսրժ հայրապետի եկեղեցի :

Թիւ 132 . † Ճաշոցէ .

Եւ արդ՝ գրեցաւ Ճաշու գիրքս ի քաղաքս Արծկէ՝ հանդէպ սրբարարի ծովուս՝ որ մանր ձկունք ելանեն , ընդ հովանեաւ պա-

[1] Սա էր քաջ քարտուղար՝ և յետ վարժապետին իւրոյ Թովմայի Մեծուփեցւոյ երեւելի հանդիսացաւ ի նմին ուխտի :

տերազմի Սրբոյ Նշանիս , և Սրբոյ Աստուածածնի Կաթուղիկէիս ,
ի հայրապետութեան մեծի Աթոռոյն՝ որ էր ի Սիս խափանեցաւ .
զի զնշն Սրբոյ Լուսաւորչին անտի գողացան , և յամս երկու Ազգս
Հայոց անտերունջ մնաց՝ ի դառն և ի չար ժամանակիս
զի թուականս Հայոց ՊՂ . էր , որ այս ամենայն բանս եղեւ :

Տե՛ս է գերս Աստուածաբան . է ՌդԲ . 402 . և 403 :

Թիւ 133 . ի Յայսմաւուրէ .

Եւ արդ՝ գրեցաւ Յայսմաւուրս ի թուականութեանս Հայոց
մեծաց . ՊՂ . ամին . յերկիրս Վասպուրականի՝ ի քաղաք Վան կո-
չեցեալ՝ ընդ հովանեաւ Սրբուհոյ Աստուածածնի տաճարիս՝ և
այլոց Սրբոց . ի հայրապետութեան մեծի Աթոռոյն Սասյ՝ որ յայ-
սրմ ամի զԼուսաւորչի Աջն գողացեալ տարան . և Աթոռն ունայն
մնաց

յԱստուածաբան . է ՌդԲ . 403

Թիւ 134 . ի Յայսմաւուրէ .

Եւ արդ՝ գրեցաւ սա . ի թուականութեանս Հայոց մեծաց .
ՊՂ . ամին . յերկիրս Վասպուրականի , ի քաղաքիս Վան կոչեցեալ՝
ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի տաճարիս , և այլ Սրբոցս .
(ձեռամբ Վարդան քահանայ գրչի) ի հայրապետութեան մեծ Աթո-
ռոյն Սասյ , որ յայսմ ամի զԼուսաւորչի Աջն գողացեալ տարան , և
Աթոռն ունայն մնաց , . . . ի պարսնութեան Ջհանշահին . : Յայ-
սրմ ամի (ՊՂ 1441) մեծ նշան եղեւ . քանզի լեառն Մամբուտ կո-
չեցեալ՝ որ ի մէջ Խլաթ և ի Բաղէշ է . յանկարծակի գողաց իբ-
րեւ զսաստիկ որոտումն ամալոյ . որ երկիրն ամենայն ահարեկ եղ-
եալ ստանեցան , որ և տղայքն ընդ հայրս և ընդ մայրս ողբս
առեալ լային . վասն զի տեսին որ սարն պատառեցաւ լայն իբր
զքաղաք մի՝ և այլ փոքր փոքր , և ի պատառուածէն ի վեր հուր
ցոլացեալ ելանէր մառախլապատ ծխով և ժահահոտութեամբ , որ
և տղայքն ի հոտոյն հիւանդանային՝ և քարինք եռային յահագին
բոցոյն . և մեծամեծ վէմս ընդ երկինս ձգէին ձայնիւ որոտմամբ .
որ և ի դղրդմանէն Խլաթ քաղաք կարծիս առեալ դողային⁽¹⁾ :
Ջայս ամենայն տեսին աչօք բացօք և այլ գաւառք :

Տե՛ս է Հնարանութեան Հ . Ղստուածաբան . Ա . հար . է ՌդԲ . 406 :

[1] Ջայս գէպս հրաբղիս՝ յիշատակէ նաեւ Մինասենց թովմնոյ վարդապետ
ժամանակակից՝ յիւրում տարեգրութեան երկու ամաւ յառաջագոյն՝ գրելով ըստ

Թիւ 135 . յԱւետարանէ .

Փառք անսկզբանն . : Արդ՝ գրեցաւ Սուրբ Աւետարանս ի կըղ-
 ցիս Աղթամար . ընդ հովանեաւ Սուրբ Սաշիս և Սուրբ Նշանի՝ ի
 հայրապետութեան Տէր Զաքարիայի . և ի թուին Հայոց՝ ՊՂ. ձե-
 ոամբ Դանիէլի սուս անուն քահանայի . . ընդ նոսին (յիշեցէք) և
 զանպիտան Դանիէլ գրիչ և զճնողքն իմ . . և զուսուցիչն մեր և
 զհօր եղբայրն Զաքարիա փիլիսոփայն . . (1) դարձեալ ազաչեմ
 յիշել զԴանիէլ անարժան գրիչս , և զերախտաւորքն մեր , նաեւ
 սպասաւորք Սուրբ տաճարիս (Աղթամարայ) զմեծ փիլիսոփայն
 զԹումայ (2) և զՍարգիս , զՍաշիկ և Յոհաննէս , զԱւեաիս , և զՀե-
 րապետ (3) . զՅովանէս փակակալ և զԲարսեղ՝ զՅովանէս և զՅու-
 սէփ և զաշակերտք մեր զՈհաննէս և զՀերապետ՝ որ հանապազ ,
 աղօթեն բազկատարած մաղթանօք զփրկութիւն ամենայն աշխար-
 հի : Յազաքս այսմ յուսոյ նուիրեաց տանուտէր Մկրտիչն զկտակս
 կենաց ի դուռն մօրս լուսոյ . :

Է 1866. Նոյ. 7. յԱղթամար կղերն է թուի վ. անոյ :

1442 . — ՊՂԱ.

Տար . — Եւ ի միւս ամին . ՊՂԱ. Սուրբ Աջն Գրիգորի մեր Լու-
 սաւորչին գողացեալ եղեւ ի Սոոյ , և տարեալ ի Հայս ի յԵջմիա-
 ծին՝ նորոգեցին զնա և նոր կաթուղիկոս նստուցին կիրակոս ա-
 նուն . զայս թումայ վարդապետն յիշէ ի մէջ Լանկթամուրի սպատ-
 մութեան :

Վարդան վարդապետ Բողեւոյի գործիչ :

Նորոգեալ շինի ուխտն Սրբոյն Յակոբայ՝ որ է ի մէջ Բզնուն-
 եաց մերձ ի Յառէն գիւղ :

Տեղագրութիւն Հ. Սուրբի էջ 269 :

այսմ . « ՊՁԸ թուին գողացան զԼուսաւորչի Աջն ի Սիս . և տանն վրացիքն
 զԳողգոթայ ի Հայոցս . և հուր անկաւ յերկնից ի Մըմրուտ սարն՝ և շատ տա-
 րի սյրեց զայն սարերն » :

[1] Էր սա մինն յերեւելի միաբանիցն Աղթամարայ՝ յաւուրս Զաքարիա
 նահատակ կաթուղիկոսի տեղոյն :

[2] Մինասենց թումայ վարդապետ ժամանակագիրն է :

[3] Էր սա քուերորդի Մինասենց թամայ վարդապետի , և եղեւ քաջ նօտար
 յաւուրս Ստեփաննոս Գ. կաթուղիկոսին Աղթամարայ , որ նստաւ յետ մեծին
 Զաքարիայի 1464 ամի անդ :

Ար) .— Բարեխօս է Սուրբ Նշանքս նահատակ կրօնաւորացն Ղազարին և Թադէոսին . (ի Սուրբ Գէորգ հին ուխտան Քէֆէու) : ՊՂԱ :

Պատմութիւն Անայ է Բղ. 352 .

Յիշատակ է Սուրբ Նշանս Յովհաննէս եպիսկոպոսին . . (է ի Նոր Նախջուանու Լուսաւորիչ եկեղեցին) :

Տէ՛ն Բ. հարստութիւն Սուրբ Եղիշտի Զաւարէն էլ 467 .

Թիւ 136 . ի ճաշոցէ .

Յիշ .— Փառք եզակի անճառելոյ . : Անարհեստ գրիչս յանձն առի տկար անճամբ . . բազում և մեծ աշխատանօք հասուցի զսա յաւարտումն յԱստուածաբնակ վանքս , որ Գամաղիէլ կոչի , ընդ հովանեաւ Սուրբ Առաքելոյս Գամաղիէլի . ի Թուականութեանս Հայոց . ՊՂԱ . ի հայրապետութեան Տեառն Տէր Կիրակոսի , որ յայտմամբ նորոգեցաւ Սուրբ Էջմիածինն , և Տէր Կիրակոս հայրապետ ձեռնադրեցաւ . և ի մեր քուրդ ամիրիս՝ ամիր Դայուդիս . : Դարձեալ Յովհաննէս վարդապետս⁽¹⁾ . աղաչեմ զսրբութիւնդ ձեր . . յիշեսցիք զիս զգծագրող սորա . և զճնողսն իմ զՎարդան և զԴիլշատն , և զհանգուցեալ եղբարքն իմ զՔաղցրիկ Յովհաննէս և զտարածամ Խէրապետն . :

է 1881 . Յուլ 4 . է Բողէլ . է Էն Արտօլայ :

Թիւ 137 . ի Յայսմաւուրէ .

Փառք անսկզբանն . : Եւ արդ՝ ես ունայնս . Թումայ սուտ անուն կրօնաւորս . . և գրեցի զսա . . ի կղզիս Աղթամար . ընդ հովանեաւ Սուրբ Խաչիս և Սուրբ Նշանի՝ ի Թուականութեանս Հայոց . ՊՂԱ . : Այլ և զմեծ փիլիսոփայն զՄինասէնց Թումայն⁽²⁾՝ որ զառաջ նա գրեաց՝ և զնորին ծնողքն . :

է 1867 . Յունի 17 . է Վան . է Բաւարին Ուլտանեայ է կապտախոյս Սուրբ Յովհ . է Էմահայրութեան սիրին Աբրահամ Վարդապետի Խաչի կոչեցելայ՝ որ է Բազում մայ հերի եր անդ Էմահայր :

[1] Գրիչն է՝ որ էր վանահայր Գամաղիէլի վանիցն , և էր սա մինն ի փափագողաց վասն վերադարձի կաթուղիկոսութեանն՝ ի Սոյ , ի Սուրբ Էջմիածին . զոր յիշատակէ Հ . Մեքայէլ Զամշեան Գ . հատոր էջ 478 :

[2] Է նոյն ինքն Թումայ տարեգիր վարդապետն Աղթամարցի :

Թիւ 138 . Յայտնաւորէ .

Օրհնութիւն , գոհութիւն , բարեբանութիւն , Գթածին . . Որ
եա կարողութիւն . . գրչի Յովաննէս քահանայի հասանիլ յաւարտ
յայտն Սատուածաշունչ կտակիս յամի . . ՊՂԱ . Եւ արդ՝ գրեցաւ
սա ի քաղաքս Արծկէ՝ հանդէպ սրբարար ծովուս՝ որ մանր ձկունք
ելանեն՝ ընդ հովանեաւ ամենամաքուր Սուրբ Սատուածածնի կա-
թուղիկէիս : Ի հայրապետութեան Տեառն կիրակոսի ընդհանուր
Հայոց կաթուղիկոսի , որ է արժանաժառանգ մեծ Աթոռոյ Սըր-
բոյն Գրիգորի Լուսաւորչին՝ ի տեղի իջման Միածին Բանին Աս-
տուծոյ : Վասն զի զԱջ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին գողացան ի
Սոյ և բերեալ եղին յիւր սեպհական Աթոռին . և այս ի խնամո-
ցըն Սատուծոյ : Եւ մերոյս նահանգի (առաջնորդութեան) Ստե-
փաննոս արք եպիսկոպոսի հօր եղբօրս իմոյ :

Ի վնս Արտեւս . օրինակէս Արտեւ վարդապետի Թօթմախան վանեցայ՝ որ է ի
Քաթանախէնէ Սրբոյ ստեփն վարդապետ :

Թիւ 139 . ի Սաղմոսէ .

Փառք քեզ . . Արարիչ . . Իսկ ես . . փծուն գրիչս Յովհաննէս . .
Արդ՝ գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց . ՊՂԱ . ի մէջ եր-
կուց գաւառաց Եկեղեաց և Դարանաղեաց՝ յերկնահանկէտ և յԱստ-
ուածարնակ լեառս Սեպուհ . ընդ հովանեաւ Սուրբ Լուսաւորչիս
մերոյ Գրիգորի , և Սուրբ Փրկչիս՝ և Սուրբ Սատուածածնիս և
Սուրբ Կարապետիս՝ և Մանեայ կուսին Սուրբ գերեզմանիս , և
այլ բազմահաւաք սրբութեանց : Եւ եղի զսա յիշատակ ինձ և ծը-
նողացն իմոց . . ի դուռն բազմերախտ հօրն մերոյ Սուրբ Լուսա-
ւորչիս Գրիգորի մերձ յայրն Մանեայ : Ի յառաջնորդութիւն Սուրբ
Ուխտիս Տէր Բարսեղ եպիսկոպոսի⁽¹⁾ և զմիաբան եղբայրութիւն
Սուրբ ուխտիս զՅովհաննէս արեղայն զփակակալն՝ և Թորոս արե-
ղայն զօրինակիս շնորհողն՝ և զՄարտիրոս արեղայն զծաղկողն՝ և
զԱրրահամ արեղայն զգասաւայրն՝ և զԱւետիք արեղայն , և զՄե-
ղիտոն արեղայն , և զայլ միաբան Սուրբ Ուխտիս յիշեցէք . :

Ի 1887. յՕգոստ. 4 Երեւանէն է վ. ան. ար Արտեւ վարդապետ Թօթմախան^[2] :

[1] Էր սա մինն ի ժողովականացն այնոցիկ՝ որք նամակաւ իւրեանց հաւան
գտան վասն ընտրութեան կիրակոսի վիրապեցւոյ ի կաթուղիկոսութեան ամե-
նայն Հայոց , Չամչեան Գ. էջ. 487. և տող 33 :

[2] Զոր օրինակեալ էր ի վանս Սուրբ Լուսաւորչին մերոյ՝ որ կայ ի Սեպուհ
լեառն գերազանց , ըստ յօրջորջման Պլուզ Քերթողին Երզնկացւոյ Աստուածարան
վարժապետին Հայոց երանելոյն Յովհաննու :

1443. — ՊՂԲ.

Տար. Կամաւն Աստուծոյ ես Տէր վարդան որդի Ջալալին՝ տուի Ծակ Սաչի հողն ի Սուրբ Ուխտս Գանձասարայ՝ իշխանութեան Աղբաստոյ՝ առաջնորդութեամբ Տէր Եղիային, սոքա տուին երկու օր ժամ. ու խափանէ դատի. թուին ՊՂԲ :

Շահխանեսան Բ. 376: Ջալալեան Ա. էջ 188 :

Բարսեղ վարդապետ էր վանահայր Ուշի Սուրբ Սարգսի վանուց :

Շահխանեսան Յահանէս եղիսիս Բ. հար. էջ 120 :

Յետ անկման Կիրակոս կաթողիկոսի վիրապեցւոյ՝ նստի Գրգոր Մակուեցի :

Շահխանեսան Ա. 224 :

Գրգոր կաթողիկոս Մակուեցի՝ որդի պարոն Ջալալ բէկին՝ որ նստաւ հրամանագրով Ջհան շահ թագաւորին Դավրէժու ի Սուրբ Աթոռս էջմիածին. գնէ զՎաղարշապատ գեղն յանուն Սուրբ էջմիածնի ի Սէյիտ պէկէ :

Տե՛ս է Ջահան Սեֆեան իմաստիկոսի Երեւանցոյ էջ 100 :

Ջաքարիա վարդապետ՝ որ էր ի զարմէն Գրգորի մագիստրոսի՝ նստի վանահայր վանիցն Ամենափրկչին և լինի ջատագով Գրգորի Մակուեցւոյ :

Սեֆեան իմաստիկոսի Ջահան Սեֆեան էջ 277 :

Յանուն Սասնցի Մխիթար մատենագիր վարդապետին՝ կանդնեն զմի խաչարձան միաբանք ուխտին Մեծոփայ, զկնի 108 ամաց վախճանի նորին. յաւուրս վանահայրութեան տեղւոյն պատմագիր թովմայ վարդապետի Մեծոփեցւոյ :

է 1860 Հ. Կ. է Մեծոփ. յարձանագրութեան նորին :

Ջաէր Կիրակոս կաթողիկոսն փոխեցին վասն նախանձու, և Մակուեցի Գրգոր եպիսկոպոսն նստաւ կաթողիկոս զարալով. . . և թուրքով, և զիս և զՍարգիս վարդապետն տուգանել ետուն. և զինչ վատութիւն որ արարին Կիրակոսի կաթողիկոսին. և Սարգսի վարդապետին և ինձ Աստուած թողու զմեզս նոցա :

Տե՛ս է պարտագրութեան Առաքել Լուսապետի Դավրէժեցոյ. էջ 598[1] :

[1] Սոյն տարեգրութեան հեղինակն՝ ինձ թուի թէ թովմայ Մեծոփեցին է. որ էր ինքն ժամանակակից Կիրակոսի. և էր մինն ի գլխաւոր աշխատող վարդապետացն՝ որք պատճառ եղն հաստատութեան կաթողիկոսութեան ի Սուրբ էջմիածին :

Թիւ 140 . յԱւետարանէ սկիզբէն դրեալ .

Յէշ. — Յիշատակ է այս Սուրբ Աւետարանս Չմշկագէկցի Գէորգեալիսկոպոսիս , որ գրեցի անարժան առաջնորդ Սուրբ Գէորգայ գերեզմանի Խուլավանից , որ զարդարել է հանգուցեալ Միքայէլ եպիսկոպոսն⁽¹⁾ . վասն երկիւղին լանկ Թամուրին սուրբ գերեզմանիս միաբանք թագուցեալ են ի Ծով Դղեակ . և վասն Սարտիշարի Սուրբ Կարապետին և Կարմիր վանուց . և սիրով յորդորեալ ամենայն միաբանաց , կրկին ժողովեցի ինն միաբանս և պայծառացուցաք Սուրբ Աթոռս . և երկու ագարակ գնեցաք գիւղին մերձ և դաշտն՝ մեծ ագարակն՝ հարիւր փարայ , և միւսն քսան իմ հալալ վաստակէս , և բաց ի վանքիս մերձակայ հաւշէ՝ որ օծեալ քար դրաք ի ներքոյ վանացս ութն ընդէ . և հիւսիսային ճանապարհիւ սուտ Լոյսալի գիւղն՝ որ հեռի է կէս ժամ . և անտի Հողադաշտ լեռն է յարեւմտից կուսէ դէպի հարաւ կէս ժամ , մինչեւ ի ճանապարհն Սարբերդու . : Պարոն Աբելն թաղարցի . որ կուր էր աչօք և եկն ուխտ , և բացան աչք նորա՝ հարիւր և վատցուն ամաց (էր) . և բազում քաջութեամբ ստացաւ վանացս հողն (Գէորգեալիսկոպոսն) որ տիրեալ էր Լոյսալի (գեղջ) . . . կարդացողն . : Ասացէք Աստուած ողորմի նահատակ եղբօրս Տէր Յովանին . . թաղեցաւ ի մատուռն Սուրբ Աստուածածնայ , և բազում հիւանդ բժշկի . վա՛յ ինձ բթամտիս որ եղբայր նորա եմ և այս սուրբ գերեզմանիս առաջնորդ եմ՝ գրեցի այս բանս սակաւ . այլ և գըրեալ եմ ամենայն անցք որք ընդիս և ընդ աթոռս անցին , յիշատակագրութիւն Միքայէլ արքեպիսկոպոսին և միւս առաջնորդաց որք յառաջ քան զմեզ . իսկ այս բանս սակաւ գրեցի թուին Հայոց ՊՂԲ :

Տես է Գեղ. Գորեգէն եպիսկոպոսի Բ հարսը Թարսս գրոց էլ 349 և 350 :

Թիւ 141 . ի Ճաշոցէ .

Եւ արդ եղև սկիզբն Ճաշոցիս ի Սուրբ ուխտն Մատնավանք⁽²⁾ . և աւարտեցաւ ի քաղաքն յԱրծկէ . յամի ՊՂԲ . ի թագաւորութեան Ջհանշայի որդւոյ Ղարայ Իւսուֆին . և ի հայրապետու-

[1] Նորոգութիւն Խուլէի Սուրբ Գէորգայ ուխտին որ եղև ի ձեռն սոյն արժանայիշատակ եպիսկոպոսին լեալ է յամի Տեառն 1255 և ի թվին Հայոց՝ 29 :

[2] Մատնավանք անուամբ կրկին են մենաստանք , մինն ի Տարօն՝ յարեւելից կուսէ մեծի վանուցն Գլակոյ՝ իսկ միւսն ի Խլաթ յարեւմտեան կուսէ ծովուն Բզնունեաց :

Թեան Աթոռոյ Լուսաւորչին մերոյ տեղապահի Տեառն Կիրակոսի⁽¹⁾՝ ընդհանուր Հայոց կաթողիկոսի . զի մինչ ի սոյն ամս Աջն Լուսաւորչին մերոյ Գրիգորի ի Սիս էր . և ամենայն ազգս Հայոց հնազանդեալ էաք Աթոռոյն Կիլիկիոյ . և այժմ շնորհիւ նորին՝ և օժանդակութեամբ Հոգւոյն Սրբոյ վերստին եկն ի նոյն վաղար . շարաթ Շողակաթի տաճարին . և հաստատեցաւ Աթոռն Հայկազնի սեռի . :

Տե՛ս յԱռաւել պարտադրի գրոց էջ 404 :

Թիւ 142 . ի ճաշոցէ .

Օրհնութիւն գոհութիւն . : Որ ետ կարողութիւն Յովհաննէս սուտ անուն քահանայի , հասանել յաւարտ այսմ կտակի : Յամի ՊՂԲ . ի խնդրոյ սրբասնեալ կրօնաւորի Տէր Ղազարի . : Արդ՝ գըրեցաւ լուսազարդ տառս՝ ի դառնացեալ և յերկոյացեալ ժամանակիս . . . յորմէ այց արասցէ զմեզ Քրիստոս որդին Աստուծոյ : . Եւ զիս զգծողս զՅովանէս քահանայ՝ և զճնողսն իմ զՅակոբ քահանայն և զՍալչուկ խաթուն . և զհարազատն իմ զԳրիգոր արեղոյն և զՆերսէս դպիրն . :

է 1887. Փետր. 27. է վ. ան. է վ. արտ :

1444 . — ՊՂԳ .

Տար . — Արդնոյ Բարձրահայեաց Սուրբ Աստուածածնի ուխտին նարողութիւն որ լեալ է ձեռամբ Մկրտիչ Արք եպիսկոպոսի Պոռեցւոյ՝ Նազաչ մականուանելոյ՝ ըստ այսմ :

«Օժանդակութեամբն Աստուծոյ , և հրամանաւ Օթման Շահին՝ կանգնեցաւ խորանս վերադիտողութեամբ Նազաչ Մկրտիչ «եպիսկոպոսի . Թվ . ՊԳ»⁽²⁾ :

Տե՛ս է Գեբ . Գաբեթին եղեւոստի Սրբանշրեանց Բ . հարսը Թարս գրոց էջ 174 :

Թիւ 143 . յԱւետարանէ .

Յէշ . — Եւ արդ՝ սկսեալ եղեւ Սուրբ Աւետարանս յԱրդնի ի

[1] Սա էր ինքն ի խաւարաստայ գիւղաքաղաքէն՝ որ ի գաւառին : Քաջրեւեռնեաց , թէեւ ինքն վիրապեցի յորջորջի :

[2] Փոխանակ գնելոյ թուական ՊՂԳ . տպագրական սխալմամբ ՊԳ . եղեալ են՝ որ չէ ճիշտ . ի զի նոյն եղեալ թուին դեռ Մկրտիչ Նազաչն չէր իսկ ծընեալ :

վերադիտողութեան Հայկազեան սեռի երկուց կաթուղիկոսաց՝
Տեառն Գրիգորի՝ և Տեառն Կիրակոսի. զի յորժամ գրեցաւ Սուրբ
Աւետարանս այս, չորս ամ էր՝ որ զՍուրբ Լուսաւորչի Աջն կորեալ
էր ի Սոոյ. և ել համբաւն ի Վաղարշապատ վասնորոյ՝ ժողովեցան
վարդապետք, եպիսկոպոսք, քահանայք. եօթն հարիւր անձն, և
հաստատեցին զԱթուռն յԷջմիածին. և եղին զոմն Կիրակոս անուն՝
այր առաքինի և ճգնաւոր կաթուղիկոս. և հաստատեցին զԱթո-
ւռն Սրբոյ Լուսաւորչին. ի յաշխարհակալութեան Համզայ Սուլ-
թանին⁽¹⁾. և ի թուականութեան Հայոց ՊՂԳ. ամին: (Կիրակոս
նստեալ է կաթուղիկոս ՊՂ ամի, և ոչ ՊՂԳ. որպէս դնի աստ):

Արտեւ Կարճեք է Բղձ. 404.

Թիւ 144. յԱւետարանէ.

Փառք և սլատիւ: Իսկ գծադրեցաւ Սուրբ Աւետարանս՝ ի
թագաւորութեան Ամիրզա Ջհանշային՝ և ի կողմնապետութեան
մերոյ աշխարհիս (Ռչտունեաց թերեւս և Վանայ) Ղըլիճ Ասլան պա-
րոնին. ի խնդրոյ երկուց հարազատաց՝ Ծերուն արեղային Սուրբ
Վարդանայ Հերպետին⁽²⁾ և եղբոր իւրոյ Թումային: Եւ արդ՝ ես
ունայնս. Մինասենց Թումայ անուամբ և եթ արեղայս⁽³⁾. տեսի
զփափագ Ղուզիկ Թումային զոր ունէր առ հոգեւորս. և ետու գը-
ծագրել զսա քուերորդւոյն խնոյ Հայրապետ արեղայի⁽⁴⁾. Եւ ես
իսկ մեղսամած մատամբ խնով ծաղկեցի զսա ըստ իմում կարի. և
զերիցս եւս գլխանց գծագրեցի ձեռամբ խնով և կազմեցի՝ յԱստ-
ուածապահ կղզիս Աղթամար. ընդ հովանեաւ Սուրբ Սաչի տա-
ճարին. և Ամենափրկչին՝ և Սուրբ Աստուածածնին՝ և Սուրբ Սար-
գիս զօրավարին. ի հայրապետութեան Տեառն Ջաքարիայի. և

[1] Իշխէր սա ի Միջագետաց սկսեալ մինչ յԱղծնիս. և էր սա հայր Ռ-
զուն Հասանայ. որ 1467 ամի սպան զՋհանշահ որդին Ղարոյ Ռսուլի և կա-
լաւ զԱթուռ նորս ի Թավրէզ:

[2] Ապագ վանք կոչեցելոյ՝ որ կայ յարեւելից կուսէ Նարեկայ ուխտին շին-
եալ ի բարձրագիր դրութեան հանդէպ ծովուն Աղթամարայ:

[3] Աղթամարցի Թումայ տարեգիր բարունին է՝ որ փայլէր ի ամին ժամա-
նակի ի նմին կղզւոջ:

[4] Գանիէլ քահանայ ի Թիւն 135 գրեալ յիւրում Աւետարանի յիշատակէ
զայս Հայրապետն և զքեռի սորին Մինասենց Թումայ բարունին ի շարս միաբա-
նիցն Աղթամարայ: Սա գինի քեռոյն իւրոյ յոյժ երեւելի հանդիսացաւ գրական
աշխատութեամբ՝ յաւուրս Ստեփաննոսի Գ. կաթուղիկոսի տեղւոյն:

ի թուականութեան Հայկազեան տումարիս . ՊՂԳ . ի դառն և ի չար ժամանակի

ի 1866. Նոյ. 8 Երեւոյնի Աղթամար իղին

Թիւ 145 . ի Մաշտոցէ .

Փառք . . զոր տեսեալ ծերն Քարիմ և ստացաւ զսա . . և ետ ընծայ և նուէր յանուանի գեօղն ի Գաւաշ՝ ի դուռն Ամենասուրբ Փրկչին և Սուրբ Կիրակոսին⁽¹⁾ . : Եւ արդ ես ամենամեղս ի մէջ կրօնաւորաց Գրիգոր . . քահանայ՝ ըստ իմում տկարութեան յանձն առեալ գրեցի յԱստուածապահ կղզին Աղթամար . ընդ հովանեաւ Սուրբ Սաշիս , և Սուրբ Գեղարդեանս⁽²⁾ . ի հայրապետութեան Տեառն Զաքարիայի՝ և ի թուականիս Հայոց . ՊՂԳ . ի դառն և ի նեղ ժամանակիս :

ի 1866. Նոյ. 7. ի Կաթողիկոսի Աղթամարայ :

Թիւ 146 . ի Ճաշոցէ .

Փառք Եղակի անճառելոյ . : Եւ արդ՝ ես անպտուղս ի բարեաց . . Դանիէլ սուտ անուն քահանայ (136 թիւ Աւետարանի գրիչն է) տեսի զսէր և զփափագ սորա , (Առաքել քահանային՝ ստացողի Ճաշոցին) կատարեցի զՍուրբ գիրքս զայս . բազում և մեծ աշխատանօք հասուցի զսա յաւարտումն յԱստուածաբնակ կղզիս Աղթամար՝ ընդ հովանեաւ ամենայաղթ Սուրբ Սաշիս , և Սուրբ Նշանիս և Սուրբ Աստուածածնիս . ի թուականիս Հայոց . ՊՂԳ . ի Հայրապետութեան Տեառն Զաքարիայի . :

ի Նոյն Ճաշոցի Դէլ Կեղին :

Զստացող սուրբ գրոցս զԱռաքել քահանայն՝ և զծնողքն իւր զՍտեփաննոս քահանայն և զԱրղունմեղէքն՝ և զկենակիցն

[1] Թէպէտ սոյն անուանի գիւղն Գաւաշ ի դարաւոր ժամանակաց հետե գատարկացեալ է ի բնակչաց իւրոց՝ բայց անուամբ կայ կենդանի մինչեւ ցայսօր ժամանակի . զի ողջոյն գաւառն Ռշտունեաց անուամբ գեղջս Գաւաշ յորջորջի ի բնակչաց երկրին :

[2] Դանիէլ եպիսկոպոսն երեւելի գրիչն Աղթամարցի ի թիւն ձԲ. ձԸ. և ձԺԱ. գրեալ յիշատակարանօքն՝ որք ընդ այլ բազում հին յիշատակարանաց կան անտիպ առիս . յիշէ զՍուրբ Գեղարդն յամի 1309 և ի թուին Հայոց 25Ը. լինիլ նոյն սրբութեան յԱղթամար՝ և յետ 1355 ամաց անցանելոյն ի վերայ . յիշէ ապա ի սմին յիշատակարանի Գրիգոր կրօնաւորն :

զնազխաթուն, և զորդիքն զթուճայ պէկն, զՍտեփաննոսն և զՅովհաննէսն. յիշեցէք ի Քրիստոս: Ընդ նոսին զմեղուցեալ գրիչս զԴանիէլ՝ սուտ անուն քահանայ, եւ զԴն զսն իմ զԿարապետ քահանայ⁽¹⁾ և զԴուսն Մելիք՝ և զեղբայրն իմ զթուճայ կրօնաւոր, և զորդիքս մեր զՍտեփաննոս կրօնաւորն, և զՅովհաննէս սարկաւազն՝ որ աշխատեցաւ ի կոկել և ի կցել թղթիս:

Է 1880. Նոյ. 10. է վարդ:

1445. — ՊՂԴ.

Թիւ 147. ի Յայսմաւուրէ.

Յիշատակ (է Յայսմաւուրս) Հազար բէկին և ամուսնոյն իւրոյ թուրվանդէին՝ և ծնողաց իւրոց Բուրթելին և Քաթուրին. և զգրիչն Աստուածատուր՝ ի Սլաթ քաղաքի՝ ընդ հովանեալ ԺԱ. Սորանացս. յամի ՊՂԴ. թուականի, յաշխարհակալութեան նետողաց ազգի Ջհանշահ Ամիրզին թուրքմանին. և ի նոր հայրապետութեանս Հայոց Տեառն Կիրակոսի Էջմիածնի կաթողիկոսի:

Տէ՛ր է Գարեգին Եպիսկոպոսի Բ. հոր. Թորոս Գրոց էջ 306:

Թիւ 148. յԱւետարանէ.

Արդ՝ գրեցաւ և ոսկով զարդարեցաւ Սուրբ Աւետարանս. ի թուարերութեանս Հայոց. ՊՂԴ. ձեռամբ սուտ անուն արեղայի Յովաննիսի. ի մէջ երկուցն գաւառաց Եկեղեաց և Դարանաղեաց առ դամբարանի Սրբոյն Գրիգորի Լուսաւորչիս և Սուրբ Փրկչիս՝ ի լեառս Սեպհոյ. յառաջնորդութեան Սուրբ ուխտիս Բարսղի⁽²⁾ և ի վարդապետութեան քաջ բարունոյն Յովհաննէսի, և գրոց աշակերտաց նորին՝ Տէր Աբրահամին՝ և Մարտիրոսին, և Աստուածատրին՝ և Աւետիքին. և զալեօք պատեալ ծերունին զՏէր Թորոսըն և Յովհաննէս փակակալն, զՍարգիս Ապահունեցին, զԳրիգոր Համէլէնցին և զՀայրապետն և զայլ միաբան Սուրբ ուխտիս զմեծ և զփոքր յիշես:

Է 1887. յՕգոստ. 4. է լւն. աւ Արժ. Արսէն Լաբրապետ Թոթմախեան. զոր օրհնակեալ էր է լւնս Լուսաւորչին Գրոց աւ իայ է Սեպտհ:

[1] Էր սա ճարտար քարտուղար՝ յաւուրս Զաքարիա Բ. Նահատակ կաթողիկոսին Ազթամարայ, և յաջորդի նորին Գաւթի Գ:

[2] Բարսեղ եպիսկոպոսն է. զոր յիշէ սոյն Յովաննէս գրիչ է թիւն 139 սաղմոսի ի վերոյ:

Թիւ 149 . Ի Մաշտոցէ .

Փառք և պատիւ . . սրբասէր կրօնաւորն Յովաննէս՝ Ի գեղ-
ջէն Գաւաշից՝ ըստ նախնեաց Բրժոնց կոչեցեալ . : և նուիրեաց
զսա Սուրբ տաճարիս՝ որ է շինեալ գումբէթաձեւ և երկնանման՝
Ի գերահռչակ ուխտս , և Ի հրեշտակաբնա՛յ կրօնաստանս՝ որ կոչի
Սուրբ Յակոբ : Զոր շինեալ է առաջի թագաւորացն Հայոց , Ի գլուխ
երկրիս Ռշտունեաց յարեւմտից կուսէ՝ առաջի կապտա կողան բեր-
դին⁽¹⁾ Ի պահպանութիւն աշխարհիս Հայոց : Ստացող սուրբ կը-
տակիս ընծայեաց զսա Սուրբ Յակոբայ գերահռչակ տաճարիս՝ յի-
շատակ հոգւոյ իւրոյ՝ և ծնողացն իւրոց՝ Բաղտասարին և Շնոհվո-
րին՝ և եղբօրն իւրոյ Թումային . որ՝ յաւուրս ձմերայնոյ Ի բքա-
բեր ուսի (շեղջ ձեանց) անկեալ մեռանի յերկիրն կեցնայն⁽²⁾ . Եւ արդ-
եւ . . փժուենս Ի գրչաց . . (ընտրեալն իգրիչս) Մինասենց Թումայ⁽³⁾
եղկելի հոգիս . . (144 թիւ Աւետարանի գրիչն է .) և Ի սիրոյ և Ի
հարկէ սրբազան անձին և Աստուածաբան վարդապետին Սիմէոնի
(Ռշտունցւոյ) առաջնորդին և շինողին՝ Սուրբ Յակոբայ գերահռչ-
ակ ուխտին . որ յորդորեաց զՅովաննէս (կրօնաւորն) Ի բարին .
յաղթեցայ և ես . . կատարեցի զսա յԱստուածախնամ կղզիս Աղ-
թամար . ընդ հովանեաւ գմբէթաձեւ և երկնանման Տաճարիս⁽⁴⁾ և
Սուրբ Փրկչիս , և Սուրբ Սարգսի զօրավարիս . յաշխարհակալ թա-
գաւորութեան Ամիրզայ Զհանշային , և Ի կողմնապետութեան մե-
րոյ աշխարհիս՝ որ տիրէ վանայ և Ոստանայ . Ղլիճ Ասլան պարո-
նին . որք են ազգաւ թուրք . . Ի հայրապետութեան մերոյ նա-
հանգիս՝ Տեառն Զաքարիայի , և Ի թուականութեան Հայկազեան
տումարիս ՊՂԴ . Ի յամսեան Մարերի Թ . յաւուր Շարաթու գը-
ծագրեցաւ և աւարտեցաւ Սուրբ տառս այս : Եւ այժմ սակաւ
ինչ պատմութիւնս արժանիս յիշատակի գծագրեցից յայսմ տառի՝
եւ Մինասենց Թումայս եղկելիս ոգի , զի զկնի մեր եկողքն գիտաս-
ցեն՝ թէ յորո՞ց ոմանց շինեցաւ , և յորում ժամանակի Սուրբ ուխ-
տըս այս՝ և հանգիսաւոր կրօնաստանս՝ որ կոչի Սուրբ Յակոբ . որ
Ի վաղուց ժամանակաց ամայի էր լեալ՝ և անբնակ Ի մարդկանէ :
Արդ՝ որպէս լուաք Ի պատմութեանց առաջին սկիզբն շինութեան

[1] Այս բերդս վանից յարեւմտեան դեհն է՝ կէս ասպարէզ բացակայու-
թեամբ :

[2] Է սա մինն Ի գաւառաց Մոկաց աշխարհին :

[3] Աղթամարցի Թումայ վարդապետ տարեգիրն է :

[4] Մեծ և հոյակապ է արդարեւ տաճարն Աղթամարայ՝ զորոյ նման դեռ
չտեսին աչք Տոսպեցւոյս յայլ գաւառս Հայաստանի :

սորա . եղև յառաջին թագաւորացն ի Սենեքերիմայ և յորդոց նորա . (իշխանացն Արծրունեաց թերեւս) ի ժամանակին յորում գնաց քոյրն Մանաճիրհի (իշխանին Ռչտունեաց) հետիոտս՝ ջերմեռանդ հաւատով՝ և յորդարուղիս արտասուօք ի Նըսէբին (Մծպին) և եբեր զՍուրբ Յակոբ հայրապետի ճկոյթն մինչ ի տեղիս այս . և աստ հաճեցաւ սուրբ մատն հայրապետին Յակոբայ բնակիլ . և ազատեցաւ երկիրս Ռչտունեաց յանիծիցն սուրբ հայրապետին . վասն որոյ աշխարհաժողով արարեալ թագաւորն Հայոց՝ շինէ զիառաւոր եկեղեցիս՝ զՍուրբ Աստուածածին , և զՍուրբ Յակոբ , և զՍուրբ Յովհաննէս , և զՍուրբ Մանկունքն և ժողովեալ բազում կրօնաւորս՝ առնէ զսա վանս միաբանակեցաց բազմաց , մինչ զի ասի աւանդութեամբ՝ թէ քան զերեք հարիւրն աւելի արեղայ եղեալ է ի վանքս այս : Եւ հաստատէ թագաւորական հրամանաւ՝ ի բոլոր ծովուս ամենայն իշխանութեամբ իւրով՝ գեօղս և արտորայս՝ այգիս և դրախտս և ծառատունկս՝ սխվ (յիշատակ) և մուլք (կալուած) վանացս : Եւ մնայ բազում ժամանակ շէն՝ այնպիսի փարթամութեամբ մարդով և մէքով . և այս առաջին շինութիւնս յառաջ էր քան զՀայ թուականն : Բայց զկնի ժամանակաց աւերեալ տեղիքս՝ լինի անմարդարնակ՝ իրր զհողարլուր մի մեծ . ոչինչ մընացեալ նշան շինութեան՝ բայց միայն եկեղեցիքն անշարժ մնացին : Եւ թէ զինչ եղև պատճառ աւերմանն՝ և քանի՛ ամ մնաց աւերակ ոչ գիտեմ հաստատ . բայց կարծեօք թուի թէ քան զերկու հարիւր տարին աւելի աւերակ մնաց : Իսկ ՊԿԱ . ամի . թուականութեան Հայկազեան տօմարիս՝ ի թագաւորութեան թաղթին (աթոռոյն Թավրիզոյ) Ղարայ Յուսուֆին , և ի կողմնապետութեան մերոյ աշխարհիս՝ ամիր Եզդնին՝ և որդւոյն իւրոյ Մելիքին՝ որ էր յոյժ խնամածու և բարեկամ քրիստոնէից⁽¹⁾ և ի կաթուղիկոսութեան մերոյ վիճակիս Տեառն Դաւթի՝ վարդապետ ոմն երեւելի՝ բարեսէր և աստուածային ճրիւքն պարգաւաճեալ՝ որոյ անուն Ստեփաննոս ճանաչի՝ մականուն Փիր՝ յերկրէս Ռչտունեաց . ի գեղջէն Բախվանից⁽²⁾ աշակերտ գոլով Յոհաննու Որոտնեցւոյ՝ մակ անուն Կախիկ կոչեցելոյ՝ սորա վարդապետական քարոզութեամբ շրջակայեալ ի վերայ ամենայն երկրի՝ ընդ կողմամբ աշխարհի Հը-

[1] Նման սոյն Մինասենց Թովմայի՝ գովէ զայս Եզդին ամիրայն ի գերս իւր Թովմայ պատմիչ վարդապետն Մեծոփեցի :

[2] Կոյ կանգուն շէնս ի մէջ լայնանիստ դաշտաձորակի՝ առ եզերքն վճիտ՝ յորդ և բարեհամ մեծի վտակին Ադամնասակն կոչեցելոյն Յ՛ տամբ Հոյ բնակչօք ի գաւառին Ռչտունեաց :

ուսմոց՝ ամսս բազումս՝ երթայ միանգամ և երկիցս յԵրուսաղէմ՝ և ապա դառնայ վերստին և գայ յաշխարհս Հայոց, ի բնիկ և ի սեփնական երկիրս իւր՝ մեծաւ ընծայիւք ամենայն եկեղեցեացս. շուրջառ և սկիհ և Աւետարան բերելով վանօրէից և գիւղօրէից, եկեղեցեաց: Եւ յորդորեալ զքրիստոնեայս՝ և ինքն գլխաւոր լեալ քան զտասն աւելի եկեղեցիք կրամածք և կամարօք շինել տայ յերկիրն Ռշտունեաց՝ յամիրապետութեան Մելիքին և հօրն իւրոյ: (ամիր Եղգնին) Եւ ապա խորհրդակից և գործակից ինքեան առեալ՝ կրօնաւորս Աստուածասէրս, որոց անուանք յորջորջեալ կոչին Մկրտիչ և Կիրակոս՝ Յովանէս և Յովհաննէս, Սիմէօն և Գրբիգոր, և եկեալ ի մեծահռչակ և ի թագաւորաշէն ուխտս, որ կոչի Սուրբ Յակոբ. որ էր ի բազում ժամանակաց աւերակ լեալ և անմարդարնակ և սկիզբն առնեն շինութեան տեղւոյս, և յաջողութեամբն Աստուծոյ ժողովին ի տեղիս և այլ կրօնաւորք և աշխարհականք գործաւորք վանացս. որոց անուանք գրեալ են ի դպրութիւն կենաց՝ և շինեն զվանքս ծագէ ի ծագ. նորոգեն կրդմիւրաշէն և կրամած զՍուրբ Յակոբայ գումբէթս. որոյ ճարտարապետ և շինող էին սրբասէր կրօնաւորքն՝ Գրբիգորն, և Յովհաննէսն և Յովաննէսն⁽¹⁾. որք մաքրական վարուք զկնի ամաց ինչ անցելոց փոխեցան յաշխարհէս, որոց ողորմի Քրիստոս յօր դատաստանին ամէն: Իսկ Սիմէօն սրբասէր՝ արբանեակ և սպասաւոր լեալ վարդապետին Ստեփաննոսի⁽²⁾, և յայս ամենայն նեղութիւնքս և հարածանքս հեղահոգի և Աստուածաբան վարդապետն Սիմէօն՝ զՍուրբ Յակոբայ միաբանքս՝ իբր զգորովագութ ծնող պահեաց զսոսա, յայլ և այլ տեղիս շրջելով՝ ի հոգեւորս խրատելով, և զմարմնաւոր պէտան լիակատար պատրաստելով: Սա ստացաւ և բազում մուլք և արտորայք այգի և ծառատունկք վանիցս: Չոր ինքեամբ (ինքնին) գնեաց տրօք քրիստոնէից, և զոր յորդորեալ զքրիստոնեայս և զաշխարհականս՝ ետ գնել նոցա ի հալալ արդեանց իւրեանց՝ մուլք և անդաստանս վանիցս՝ որոց տացէ. Քրբիստոս Աստուած ընդ միոյն հարիւրապատիկ: Եւ արդ այսօքիկ են նոր տուած և արծաթադին մուլք վանացս: Չինչ որ բնական մուլք է վանացս՝ թէ կողամախի պրակն (անտառն) և թէ արտ

[1] Ի նախնի ժամանակս միաբանք Հոյ վանօրէիցն ըստ կարի՝ էին արուեստագէտք և նօտարք՝ և ոչ մեզ նման ծոյլ պղերկ և անպէտ:

[2] Տես նաեւ յէջ 87. և տող 1. ի վերոյ ի սոյ՝ մատենկի ի ՊՀԶ ամի զտարեգրութեան հատուածս՝ որ վասն շինութեան Սրբոյն Յակոբայ գրեալ ի սոյն թովմայէ:

և թէ ասին՝ որքան և է ի յԸնծաքու⁽¹⁾. դաշտս, յայտնի է ամենեցուն. եւ երկու արտ ի Շատուան⁽²⁾. եւ ծառ ի Գանձակ⁽³⁾ և երկու արտ ի Դեղձիսն⁽⁴⁾. եւ հինգ արտ՝ և Սաղաթիէլ երկրանց այգւոյ կէսն ի Մոխրաբերդ⁽⁵⁾. և Օմար Շամչանի բաժին հողն՝ ԺԳ. արտ և խոտունցն. (մարգագետին) և փագախն, (բնակարանն անասնոց) և կալն՝ և Մանդուկանց Ամիր պէկի այգին ծառերովն ի Մոխրաբերդն: Սոքա ամենեքեան Սիմէոն վարդապետին արծաթագին մուլք են վանացս: Զոր ստացաւ տրօքն քրիստոնէից՝ և յորդորեաց վարդապետական քարոզութեամբ զայլս ոմանս՝ ըստանալ ընչիւք իւրեանց, և նուիրել մուլք և ոխվ Սուրբ Յակոբայ վանացս: Եւ երկու արտ ի Նարեկ⁽⁶⁾. և մէկ ի Բախվանց⁽⁷⁾: Դարձեալ աղաչեմ յիշել ի Քրիստոս զԼերթ ահատոր հարազատքս մեր՝ զսրբակրօն արեղայքս, որք վայելողք են այս տառիս և սպասաւորք Սուրբ (Յակոբայ) տաճարիս, զՊօղոսենց կիրակոսն, և զԳաւաշեցի Ստեփաննոս, զԿիրակոս և զՄկրտիչ մահդասիքն, զՍարգիս և զԿիրակոս, զՀայրապետ և զերկու Թուամայն, և զԱռաքելլն, և լի բերանով. Աստուած ողորմի ասել:

1867. Յունւ 16. է Սուրբ Յակոբայ Լան. որ կայ յերեւելն Ուշտանեաց՝ լինել
 — ընկեր ընչստեասր լերին:

Թիւ 150. ի կոնդակէ Գրեգոր կաթուղիկոսի Մակուեցւոյ.

Շնորհօք և ողորմութեամբ՝ կամօք և ընտրութեամբ Ամենակալին Աստուծոյ. . . և յերջանիկ տիրապետէ սուրբ և ընտրեալ

- [1] 22 տամբ է Հայ գիւղ մի՝ որ կայ մերձ առ Սուրբ Յակոբայ ուխտն՝ յարեւելից կուսէ նորին:
- [2] Կայ կանգուն շէնս երկուտասան Հայ ընտանեօք՝ մերձ ի Սուրբ Թուամայի Առաքելոյ ուխտն առ ասին ծովուն Ռշտունեաց:
- [3] 27 տամբ կայ շէնս մերձ ի Լուսապտուղ Սուրբ Սահակայ ուխտն՝ առ ընթեր Սրբոյն Թովմայի:
- [4] Այս գիւղս կայ յարեւելից կուսէ Սրբոյն Յակոբայ՝ և յարեւմտից Նոր գեղի. և է անկեալ այժմ ի ձեռս քուրդ Տէվրուշ պէյի. որ է եղբայր. . . խան Մահմուտի և խան Աւտալայ:
- [5] Կայ 60 տամբ կանգուն շէնս՝ մերձ ի Նոր գեղ՝ յարեւելից կուսէ՝ առ ասին Աղթամարայ լճին: Զսահման սոյն Մոխրաբերդի կարի համ կն:
- [6] 60 տամբ գիւղ՝ և միանգամայն հոյակոպ ուխտ ի Ռշտունիս:
- [7] 31 տամբ կայ շէնս մերձ ի Պողոնիս գիւղն կանգուն և հաստատ:

Հայոց հայրապետէ , Տէր Գրիգորիոս Հայոց կաթողիկոսէ ամենայն հայկազեան սեռից քրիստոնէից՝ եպիսկոպոսապետ և Պատրիարք արքայանիստ և թագաւորաբնակ քաղաքիս Վաղարշաբաթոյ մեծաց Հայոց . և Արեթական տոհմի տեղապահ և յաջորդ՝ աթոռակալ և փոխանորդ Սրբոց Առաքելոցն Թաղէոսի և Բարդուղիմէոսի և Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին : Զոր և գրեմք ի դրանէ Աստուածադիր Աթոռոյ՝ և երկնաստեղծ բազկաւն Քրիստոսի հաստատեալ ի հիմանէ Կաթողիկէ Սուրբ եկեղեցւոյս էջմիածնի՝ և բազմահաւաք սրբութեանց սորա : Նախ և առաջին Աստուածամուխ ներկեալ արեամբն Յիսուսի Սուրբ Գեղարդէ . և ի Թագն արքայական ի Փշոց Պսակէ՝ եղեալ ի գլուխ Յիսուսի : Եւ ի Բեւեռաց բազկացն Յիսուսի Միածնի Որդւոյն Աստուծոյ : Եւ ի ծածկոյթ երեսաց՝ Յիսուսի Սուրբ Վարշամակէ : Եւ ի Քետարգել Սուրբ Նշանէ՝ հրաշագործ ի ձեռն Լուսաւորչին Պետրոս Պատրիարքին : Եւ ի տէրունական մածեալ Արեամբն Քրիստոսի և ի սքանչելագործ օձահալած երկուց Սուրբ Նշանացս Կարմրականէ և ի Լըրջականէ : Եւ ի Աստուածընկալ Սուրբ Նշանէ , որ ի բուրմանէ անուշահոտութեան զմայլին քիմք մարդկան : Եւ ի կենսաբեր Սուրբ Նշանէ : Եւ ի յԱմենափրկչէ սկզբնատալական Պատկերէ : Եւ ի յայլ բազում Սուրբ Նշանացս՝ և յամենայն առաքելական Սուրբ Աջերաց որք աստ կան : Ի Սուրբ Աջէն Յոհաննու Կարապետին Քրիստոսի : Եւ ի Սուրբ Աջէն Նախավկայ Սուրբ Ստեփաննոսի : Եւ ի Սուրբ Աջէն Թաղէոսի Առաքելոյն : Եւ ի Սուրբ Աջէն Բարդուղիմէոսի Առաքելոյն : Եւ ի Սուրբ յԱջէն Գրիգորի մերոյ Լուսաւորչին : Եւ ի Սուրբ Աջէ Ռըստակէսի սքանչելագործի ի Նիկիայ և ըյս ծագողին յընդհանուր աշխարհս Հայաստանեայց : Եւ ի Սուրբ Աջէ Սահակայ Պարթեւի : Եւ ի Սուրբ Աջէ Յակոբայ Մծբնոյ հայրապետին՝ որ զմեռեալն կենդանացոյց : Եւ ի ի Սուրբ Աջէ Ղեւոնդ երիցու Ղեւոնդեանց : Եւ ի Սուրբ Աջէ Ստեփաննոս քահանայի Հռիփսիմեանց առաջնորդի ի Վաղարշապատ քաղաքի : Եւ ի Սուրբ Աջէ Սուքիասայ Սուքիասեանց : Եւ այլ բազում Աջերոյս որ աստ կան : Եւ ի դամբարանացս և յեկեղեցեաց , ի կենաթաղ գերեզմանէ Սրբոյն Գրիգորի հրաշագործ սուրբ Վիրապէն : Եւ ի չըքնաղագեղ գերեզմանացս Հռիփսիմեանց և Գայիանեանց : Եւ յերկոսին Առաքելոյս Անդրէի եղբորն Պետրոսի և Մատթէի Աւետարանչին : Եւ ի Սուրբ Անանիա Առաքելոյն Դամասկացւոյ՝ որ զՊօղոս մկրտեաց : Եւ ի Սուրբ գերեզմանէ Մեսրոպայ վարդապետի՝ երկրորդ Լուսաւորչին Հայոց : Եւ ի Սուրբ գերեզմանէն Յուսկանն

որդւոյ վրդանիսի՝ որդւոյ Սրբոյն Գրիգորի : Եւ ի սուրբ նշխարաց Սարգսի և որդւոյն նորին Մարտիրոսի : Եւ ի Սուրբ գերեզմանէն Յովհաննու՝ որ Կողեան կոչի : Եւ ի Թարգմանչաց Սուրբ գերեզմանաց Մովսէսի Սորենացւոյն և Ղազարու Փարիեցւոյ : Եւ յայլ բազում նշխարացս և գերեզմանաց և յեկեղեցեաց՝ որ զարմանազան յօրինուածով գմբեթայարկ հաստակառոյց վիսօք շինեալ կան ի պարծանս Հայկազեան սեռի՝ Ասքանազեան Արեթական տոհմի : Օրհնութիւն . . և սրարգեւք Աստուածային փառացն հեղցի առատապէս՝ և ծաւալեսցի գետօրէն ի վերայ ամենօրհնեալ վիճակաց աշխարհիդ Տարօնոյ : Զոր գրեմք նախ ի մեծահանդէս և ի գերահազակ . . Սուրբ Ուխտդ Յովհաննու Մկրտչին՝ և Սուրբ Աստուածածնի տաճարին . և ի Սուրբ Ստեփաննոս Նախավկային . և ի Սուրբ Գրիգորի մերոյ Լուսաւորչին : Եւ յայլ բազում սրբութեանց որ աստ կան հաւաքեալ : Նախ ի Սուրբ Շիշ Իւղոյս զոր Մովսէս օրհնեաց և օճեաց զմարգարէսն՝ և զքահանայս և զթագաւորսն : Եւ Սամուէլ մարգարէն օճ զԴաւիթ և զայլ մարգարէսն : Եւ կինն պոռնիկ եհեղ ի վերայ գլխոյն Քրիստոսի . և Յիսուս յետ խաչելութեան օրհնեաց և ետ յաւաքեալսն . և Սուրբն Թադէոս բերեալ եդ աստ . ընդ նմին և զԱրծուաբեր Սուրբ Նշանն՝ որ էր ի կենաց Փայտէն : Եւ յետ Յ. ու ժ. Բ. (312) ամաց՝ եբեր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր՝ զճախ մատ մարմնոյն Սրբոյն Յովհաննու մեծի՝ և շինեալ ի վերայ սրբոյն (վանս) զոր այժմ վերածայնի Շիշ Իւղոյ վանք : Զոր գրեալ է (են) լիակատար պատմագիրքն և Միխայէլ⁽¹⁾, եւս գրեալ կայ վասն մարմնոյ և գերեզմանի Սրբոյն Յովհաննու և յերկոտասան Առաքելոցն մասանց : Եւ Յովսեփոյ Արեմաթացւոյ Սուրբ Սաշէս . և ի Քրիստափոր Սուրբ Նշանէս : Եւ ի տղայ Սուրբ Կիրակոսէն : Եւ ի Գէորգայ Սուրբ Նշանէս : Եւ այլ բազում սրբոց՝ որ աստ կան հաւաքեալ ի պարծանս Հայոց : Եւ սոքա են գուռն երկնից . . : Իջանէ Աստուածային Ծորումն օրհնութեան արձարձմունք Նախախնամութեան սեփհական թեմին և վիճակին : Նախ ի Պլէլ՝ Սորէնք⁽²⁾ ի Քառու Ք⁽³⁾ ի Փողրկով, ի յերկու Սճնուտ . ի Յարթխօնք, ի յԱւզաղրիւր . ի Շեխլանք, ի Ղըզլաղաճ, ի Տարմածին Ք, ի Մլքաջուր Ք ի Ծաղկունք Ք, ի Հովիտ, Ք ի Յուռուղ, ի Յուղկունք Ք, ի Կորեկջուր Ք, ի Կժու, ի Սործավանք,

[1] Պատրիարքն Ասորոց՝ որ էր ժամանակակից Ներսէսի Շնորհաււոյն :

[2] Ի սոյն շինէն էր Մովսէս Քերթողահայրն Հայոց :

[3] Սոյն Ք աստիւ նշանակեալ գիւղորոյքն այժմ են քրդաբնակ :

ի Փարխաւ և յիւր Մզրէք , ի Վերս Ա.⁽¹⁾ ի Ճապկնուտ , ի Յառջի-
 շէն Ա , ի Բերդ Ա , ի Քարուտ Ա և յիւր մզրէն , ի յԱրծինք Ա , ի Քը-
 խմուտ Ա , ի Սաչկօնք Ա , ի Սմբատ Ա , ի Սէրկէվլիկ Ա , ի Մզոն Ա ,
 ի յԱռուտոց Ա , ի Կորմրիչ Ա , ի Փէչար , ի Ճանաձոր , ի Գղեակն
 յՌապատ , ի յԱրգելք Ա , ի Հէրքին Ա , ի Քարուտ , ի Յէրէզ , ի
 Անտեւ Ա , ի Մզակ , ի Սառնէս , ի Յոփում , ի գիւղաքաղաքն լճէ ,
 ի Գուժայ , և դղեակն Սիւան Ա , ի Բաղին Ա և յիւր Մզրէն Ա , ի
 Թիլ Ք , ի Յիսին Ք , ի Թրախէ , ի Հրետան Ք , ի Սրտէ , ի Հայնի քա-
 ղաք , ի Տսլնէ , ի յԱպար Ք , ի Զոսայ , Անթղնու , ի Պալընճնէ , ի
 յԸնխալայիմ , ի յԱդախ , ի Ճումարիկ , ի Նունքաս , ի Քարոզ ,
 ի Մշրկիկ , ի Յարօսք , ի Վանք , ի Զոխիգ , ի Հօտնաւ , ի Հըզ-
 րաւ , ի Վանք , ի Թոճըլ , ի Քրքան , ի Զկրշէն Ք , ի Մուֆարդին ,
 ի Ճսուն Ա , ի Պատման Ա , ի Պօշաթ Ա , ի Պաչմթէ Ա , ի Պաշխայ ,
 ի Սլէմանի , ի յԱրտայ Ք , ի Յարխունթ , ի Ճաւղիկ , ի Սրիպայ Ա ,
 ի Պասմ Ա , ի Պախունաս Ա , ի Պաչմթէ Ա , ի Վռապատ Ա , ի Բայի ,
 ի Բերմ , ի Յսիկ Ա , ի Վանք Ա , ի Ճաճանք Ա , ի Սանտայ Ա , ի Իշ-
 խանձոր , ի Ընկուզնակ , ի Սեւիթ , ի Յարդաւնք , ի Հեղին , ի
 Յարս , ի մեծ Փառկայ , ի Փառկայ Ք , ի Սաղտուն , ի Շուղէք , ի
 Կրընտիկ Ա , ի Յահրօնք , ի Գեղրվան , ի յԸնձքար , ի Վանք , ի
 Մոսրձոր , ի Կից Ք , ի Յեհօր , ի Հարուիթոյ Ա , ի Տլերեթաւ ,
 ի Փարի , ի Կաչուաս Ա , ի Յապտակէս Ա , ի յԱպիպոդէ , ի գիւ-
 ղաքաղաքն Գոզկէ և իւր գաւառովն : Եւ յայլ ամենայն բո-
 լորովին թեմն զոր կարգեալ է և կանոնաւորեալ և վիճակ-
 եալ մեծն Ներսէս . յետ նորա Սուրբ Գրիգոր Տաթեւացի և
 յետ նորա Տէր Գրիգորիս կաթուղիկոսն : . Եւ մինչդեռ ի յայս
 հոգս էաք՝ եկին առ մեզ առաջնորդութեամբն Աստուծոյ , և հը-
 րաւիրամբ հոգւոյն Սրբոյ , Տէր Դաւիթ խարազնազգեստ ճգնաւոր
 արեղայն՝ և Տէր Կարապետ արեղայն , և Տէր Թադէոս արեղայն ,
 և Տէր Յովհաննէս արեղայն , և Տէր Կիրակոս արեղայն , և Տէր
 Նիկողոս արեղայն , և Տէր Սարգիս երաժիշտն⁽²⁾ , և այլ բազում
 ուխտականօք և տանուտէրօք և աւագ երիցօք , և ունէին ընդ
 իւրեանս թուղթ վիպական և հաւանութեան ի քաջ հաւատօրէն՝ ի
 Գրիգոր տիեզերալոյս բարունապետէն և յայլ միաբան եղբարց և
 ի տանուտէրաց , ի քահանայից՝ ի մեծ ամեծաց , և ի փոքունց :
 Զոր յուղարկեալ էին առ մեզ՝ զպատուելի և զխմաստուն կուսա-
 կրօն քահանայն զԿարապետ արեղայն հաւանութեամբ ամենեցուն ,

[1] Այլ գրով նշանակեալ գիւղորայքն այժմ կան աւեր :

[2] Էին սօքա միաբանք Մշոյ Սուրբ Յովհաննու վանիցն :

և ձեռնադրելով խնդրեալ էին առաջնորդ Սուրբ ուխտին Եզրդու-
տոյ Սուրբ Յովանիսայ և իւր սեփհական թեմին և վիճակին, Չը-
ռըխկին՝ և իւր երկրին, Մուֆարդնայ և իւր երկրին, Սլեմանկին
և իւր գաւառացն, և նահեային որ Կողբ անուանի. Գազկու և
իւր գաւառացն. Սաչկոնայ և իւր Մզրանին, Կնճանայ և իւր գա-
ւառին՝ և մասն ինչ ի Տարօն գաւառին: Այլ և սահմանօրէն ըս-
տորագրեցից զկարգեալ վիճակն սրբոյ հռչակաւոր ուխտիս ի Սըր-
բոյն Գրիգորի Լուսաւորչէն, այլ և ի մեծէն Սահակայ Պարթեւէն
հաստատ գրով: Եւ յետոյ վերստին հաստատեալ ի Յոհան Օձնեց-
ւոյն, և կրկին կնքեալ ի Գրիգորիս կաթուղիկոսէ: Այսինքն նախ
ի Ջրոյ Հինչինոյ իջանէ ի Մեղրագետ, Արածանի գետով՝ որ Եփրատ
անուանի Սեւոքով լերամբ մինչեւ ի ջուրն Ճապաղի աւանով և Ռա-
պատիւ՝ մինչեւ որ Յիսին կոչի. Բաղին գաւառաւ՝ Սեւան Դը-
ղեկաւ Տպնով և Ապարաւ, Աթաղ դղեկաւն, Թըռչըլ աւանաւն,
Մեհրնկաւն՝ հանդերձ Սրգոհրանով, Նըփրկերաւ՝ որ է Մու-
ֆարդին Մարտիրոսայ քաղաքն՝ Պաթմանաւ և Ռապատ նահիւփն.
Փարչանց գետովն Պողոտայիւն և Կողբայ գաւառաւն հանդերձ ընդ
առուով Անթանիոյ. ի յարեւմտեան կողմանէ ջրովն Հինչինու շըր-
ջի ի դաշտն Տարօնոյ: Այսոքիկ կարգեալ և սահմանեալ վիճակք
հռչակաւոր մենաստանիս, որ Շիշ Իւղոյ վանս յորջորջի, վասն այ-
նորիկ սահմանաւ յատուկ գրեցաք, զի անջրելի մնացէ ի ներհա-
կաց, և աներկբայ լինիլ կարծողաց՝ ի նախնեաց կարգելոց, որ-
պէս ի հին մատեանն գրեալ իսկ էր, ի վաղնջուց ժամանակաց ի
սրբոյ հայրապետաց, որպէս վերոգրեալն յայտնեցաք ձեզ: Այլ և
Սուրբ Աթառոյս հանդ և սինսօն այս է. Առուականն Յերկէն՝
Արօսիկ, Դարրնաձոր՝ որու ձորովն մինչեւ ի Ղզլաղաձն՝ վերին
Տրպն Բապասայ մինչեւ ի Մնճնուտայ վերեւն՝ Քաշոլովն մինչեւ
ցէմին թափանն և Քառուտն Տէրընաղբիւր Մզրայ է: Ջրի անդին
Սորոնից է, այսգին վանից մինչեւ ի Վարդենից դիմաց, մինչեւ ի
ճանապարհն՝ մինչեւ վերին Վարդենից դիմաց: Երեք աղբիւր կայ՝
Բլելի ձորն վանիցն է. մինչեւ Յառուականն, Քարխաձի ջուրն
վանիցն է. քամ՝ Տատրեսգամու սինսօ խտանձին հանտակն գետի
փուլ Պողոսի հընի ճանապարհն՝ Երուկնին մինչեւ ի հանտակն: Այ-
սոքիկ հանդ և սինսօ կարգեալ և հաստատեալ ի նախնեաց և յիշ-
խանացն և վկայութեամբ բազմաց եկելոց քահանայից և տանու-
տեարց վկայութեամբ և գրով. որք էին ընդ Կարապետ արեղա-
յին, որք ունէին հրովարտակ թագաւորական, զոր և խնդրեցին
իսկ ի մէնջ վերստին կարգել հայրապետական մատենագրիւ առ ի
կրկնակի հաստատութիւն, որ և հաւանեալ գրեալ ետու ի նա:

Որով օրհնեցաք եպիսկոպոս և տեսուչ և առաջնորդ հօտին Քրիստոսի, և բոլոր թեմին և վիճակին Սրբոյն Յովհաննու. վասնորոյ և մեք մեծաւ պատուով և յոյժ սիրով ընկալաք զդա որպէս զհրեշտակ Սատուծոյ: Ձի հաճեցաք ի բարւոք վարս դորա և յիմաստութիւն՝ վասն զի է այր պատուական և հեզ, բարի ողորմած ի վերայ կարօտելոց՝ և հնազանդ ըստ կամացն Սատուծոյ և մեր վասնորոյ ընտրեցաք և կոչեցաք՝ զդա ի սլատիւ և յաստիճան եպիսկոպոսութեան, ի վերայ հաշակաւոր Սուրբ ուխտիդ Յովհաննու Մկրտչին և ամենայն տանդ՝ Հայնու գիւղաքաղաքին, Աթխայ քաղաքին, Լըճու գիւղաքաղաքին, Գասկու գիւղաքաղաքին, և ամենայն յընդհանուր վիճակացն իւր: Մեծաւ հանդիսիւ յՍատուածարնակ տաճարի Սուրբ Էջմիածնի ի կաթողիկէիս Վաղարշապատոյ, ի յամսեան Յունիս Ը. ի մեծ թուին ՊՂԳ. յՍատուածամուխ Սուրբ Գեղարդեամբ և յՍատուածընկալ Սուրբ Նշանաւս. և ԲԺան. (12) Սուրբ Նշանօքս: Եւ շնորհապաշխ Սջով մեր Սուրբ Լուսաւորչին Գրիգորի, և այլ երկոտասան Սջերովս առաքելական և հայրապետական: Եւ օրհնեցաք զկարապետ արեղայս ձեզ եպիսկոպոս՝ և հոգեւոր առաջնորդ: Եւ զոր սարգեւեաց և վիճակեաց Սուրբն Գրիգոր և յետ նորա մեծն Ներսէս Շինողն, զոր շինեաց Ռ. վանք Սթուն և սահմանեալ կանոնեաց զթեմս զորս յանուանէ յիւնցաք, և յետ նորա Սուրբն Գրիգոր Տաթեւացին(1)՝ և յետոյ այսոյ (և յետ սոցին). ես Գրիգոր կաթողիկոս՝ օրհնեցաք զկարապետ արեղայս արք եպիսկոպոս՝ և կրկին նորոգեցաք զկրտակս մերով օրհնութեամբ՝ և առաքելական և հայրապետական բարձր հրամանաւն առաքեցաք առ ձեզ. հանդերձ սրբալոյս Սուրբ Մեռնաւ ձեզ հովիւ և առաջնորդ: Որով և դուք ամենեքեան առ հասարակ սիրեցեալ որդիք մեր ի Քրիստոս զարժանաւոր պատուեալ և զառաքելաշնորհ, գովելի և իմաստուն սրբազան եպիսկոպոսն ձեր. որ առաջնորդ է Սուրբ ուխտին, և դարմանիչ սընանկաց և հովիւ վիճակիդ: Մեծաւ պատուով և յոյժ սիրով ընկալարուք իբրեւ զհրեշտակ Սատուծոյ, և որպէս զմի Առաքելոցն Քրիստոսի ի դրանէ Սուրբ Աթուոյս առ ձեզ առաքեալ: Ձի մի մնասջիք անտերուծ առանց հովուի և հոգեւոր առաջնորդի: Եւ ամենայն հոգեւոր խրատու դորա ունկնդիր լերուք: Վասնորոյ ի մտանել դորայ (կարապետ նորապսակ եպիսկոպոսի) և գրաւորա-

[1] Տաթեւացւոյ ժամանակակից Չալայրէկեանց Մակուեցի Գրիգոր կաթողիկոսն Հայոց՝ զԳրիգոր մեծ վարժապետն մեր Տաթեւացի սուրբ հաշակեալ հրապարակէ՝ հակառակ ոմանց Լատինամոլաց:

կան օրհնութեամբ հրամանիս մեր առ ձեզ և աստուածազործ Մեռոնիս : Իջցէ և Շնորհք ողորմութեան Աստուծոյ յերկնից ի վերայ ձեր եօթնապատիկ , և լցուսցէ զձեզ ամենայն հոգեւոր և մարմնաւոր օրհնութեամբ և բարութեամբ , բարձցէ ի ձէնջ և յամենայն աշխարհէ ձերմէ զամենայն հարուածս որ գան ի վերայ աշխարհի վասն ծովացեալ մեղաց՝ զսով . . . : Արդ՝ գրեցաւ զիր օրհնութեան մեր հրամանի ի յըստ մեզ մարդեղութեան Քրիստոսի . Ռ Ն Ս Է . (1445) և ի Սրբոյն Գրիգորէ Ռ Ճ Ս Բ : Եւ ի մեր նստել ի Սուրբ յԱթոռս՝ որ է ամ Ե . և ամիսս Գ . և օր ժե : Եւ ըստ թվականին մեծի ՊՂԴ : Եւ վասն առաւել հաստատութեան մնալոյ ձեռագրեցաք՝ մերով սովորական կարմիր ձեռագրովս ստորեւ , և կնքեցաք ի վերոյ մերով ամէն երեւելի և տիրական և արքունական ծաղկաւէտ մեծ մատանեաւս : Կամօք բարերար մարդասիրին Աստուծոյ . : Գրիգոր ծառայ ծառայիցն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ Տեառն մերոյ՝ շնորհօք և ողորմութեամբ նորին կաթուղիկոս ամենայն Հայոց և Պատրիարք Վաղարշապատու :

Կանգալս իւր յոյժ ի Մլայ Սուրբ Յովնանս լան[1] :

Թիւ 151 . յԱւետարանէ .

Փառք անպարագիծ էին . : Եւ արդ՝ ես ունայնս ի բարեաց . . (Յովհաննէս վարդապետ) գրեցի զսա Սուրբ Աւետարանս՝ ի Սուրբ ուխտս որ կոչի Գամաղիէլ . ընդ հովանեաւ Սուրբ Առաքելոյս Գամաղիէլի . և յայլ սրբոցս՝ որք շուրջ զմեօք մածեալ կան : (136 թիւ ճաշոցի գրիչն է) : Արդ՝ գրեցաւ Սուրբ Աւետարանս ի թուականիս Հայոց , ՊՂԴ . ի դառն և ի նեղ ժամանակիս՝ ի զանութիւն . . . Ջիհանչին , և ի մեր քուրդ ամիրի՝ ամիր Դայուտին՝ և ի յառաջնորդութիւն վանացս Դաւիթ եպիսկոպոսին՝ և բարունւոյս մերոյ Յովհաննիսի , և այլ միաբան եղբարցս կրօնաւորացս՝ Ստեփաննոսին՝ Յովհաննէսին միւս Յովհաննէսին՝ Սարգսին միւս Սարգսին : . Աստուած ողորմի ասացէք Ստեփաննոս քահանային՝ որ ետ զՍուրբ Աւետարանս ի դուռն Սուրբ Քրիստափորին , ի գիւղըն որ կոչի Սորի .

է 1866. Սեպտ. 6. է վ. ան. է գիւղն Արարատի :

[1] Սոյն կոնգակ որ կայ ի վանս Արբոյն Յովհաննու որ ի Մուշ . ընդօրինակեցի յօրինակէ Արսէն վարդապետի Թօխմախեան :

Թիւ 152 . Ի Գանձարանէ .

Փառք և պատիւ հօր Անճնին . : Արդ . . անկարգս ի կարգաւորաց . . և անյիշելիս ի գրչաց Մինասենց Թումայս . եղկելի ոգիս՝ անուամբ և եթ արեղայս⁽¹⁾ . : Եւ ստացայ զնիւթ սորա ի հալալ արդեանց իմոց . . և իմով իսկ մեղսամած մատամբս գծագրեցի զսա մեծաւ աշխատութեամբ յԱստուածախնամ կղզիս Աղթամար . ընդ հովանեաւ Սուրբ Խաչի տաճարիս , և Ամենափրկչիս , և Սուրբ Աստուածածնիս . և Սուրբ Սարգիս զօրավարիս , ի հայրապետութեան Տեառն Զաքարիայի՝ և ի Թուականութեան Հայկազեան տօմարի . ՊՂԴ . և նուիրեցի զսա ընծայ . . ի Սուրբ Խաչս Աղթամարայ . : Յիշեցէք ի Քրիստոս զերախտաւոր քեռին իմ՝ (և) զուսուցիչն զԹումայ միայնակեացն՝ որ բազում ջան և աշխատութիւն կրեալ է ի վերայ իմ . . և քուերցն իմոց Ոսկի տիկնեայ և Անղալատի , և որդւոց նոցին Հայրապետի սրբակրօն արեղայի , լերթահատոր հարապատին իմոց . :

Ի 1866 . Նոյ . 6 . յԱղթամար :

Թիւ 153 . Ի Յայտնաւորէ .

Փառք քեզ անսահման Անուն . : Եւ գրեցաւ սա յերկիրս Վասպուրական՝ ի քաղաքս որ կոչի Վան . ընդ հովանեաւ սրբոյն Ստեփաննոսի Նախավիկային , և սրբոյն Սահակայ Հայրապետի , և Սրբոց Առաքելոց Պետրոսի և Պօղոսի . և սրբոյն Վարդանայ զօրավարին . ի հայրապետութեան (Էջմիածնի) Տէր Գրիգորի , և մերոյ եպիսկոպոսի և առաջնորդի Սուրբ Ուխտիս Վարագայ՝ Տէր Յոհաննէսի . ի Թուականութեանս Հայոց , ՊՂԴ . ի դառնացեալ ժամանակիս՝ ի Թագաւորութեան Զհանչայի . որ ի յայսմ ամի՝ գնաց բազում շօրօք յԱխլցիսայ . . . : Եւ արդ՝ ես անպըտուղս ի բարեաց . . սուտ անուն էրէց կարապետ . (108 . և 117 . Թիւ Աւետարանաց գրիչն է) տեսի զսէր Մկրտիչ կրօնաւորին՝ զոր ունէր առ հոգեւորս . »

Ի 1866 . յՕգոստ . 2 . երեւելի է վ . . . Ի Գանձարանէ՝ ի Գեղի Խժէի[2] :

[1] 144 Թիւ Աւետարանի և 149 Թիւ Մաշտոցի գրիչն է .

[2] Սոյն Հայ շէն կայ շինեալ առ ամին Բզնունեաց ծովուն . 72 Հայ գերդաստանօք՝ յարեւելից կուսէ Ամկայ բերդին՝ և յարեւմտից Զրհանին Ամայ .

Թիւ 154 . յԱւետարանէ՛ որ մականուամբ Մեռելյարոյց կոչի .

Փառք Ամենասուրբ Երրորդութեան : . որ ցանկացող եղեալ (ամին) երջանիկ քահանայն և կրօնաւոր (Յոհաննէս) որդի բարեպաշտ և աստուածասէր տանուտիրոջ պարոն Գաւրգի Մելիքին⁽¹⁾ . երիտասարդ հասակաւ և բարի բնութեամբ . ուստի շարժեալ ի սէր Աստուածային գանձուցս՝ և ջանաց ստանալ զանառիկ մեծութիւնս՝ և զգանձս անկողոպտելիս ի վայելումն անձին իւրոյ , և յետ աստեացս ելանելոյ՝ յիշատակ հոգւոյ իւրոյ՝ և ծնողաց իւրոց պարոն Գորգի Մելիքին⁽²⁾ . և մօր իւրոյ Սալչուկին՝ և եղբարց իւրոց պարոն Գրիգորին՝ և Ստեփաննոսին՝ և Մինաս խալիֆին . . և հօր եղբարց մերոց՝ Թովմայ բարունապետին (Մեծոփեցի պատմագիրն է) և ուսուցչին իմոյ Ամիրմէլիքին , և որդւոց նորին Ստեփաննոս կրօնաւորին , և հանգուցելոյն ի Քրիստոս պարոն Պապուն , Ստեփաննոսին և Շամշին՝ Յոհաննէս քահանային , Արիստակէս նահատակին⁽³⁾ և ի զուարճութիւն ուրախութեանց մանկանց և որդւոց նոցին՝ Գրիգոր քահանային , Մերոն սարկաւազին . . և դեռարոյս պատանեկաց՝ Յակոբին . . Նասրատին . . և ամենայն արեան մերձաւորաց իւրեանց կենդանեաց և հանգուցելոց . յիշատակ բարի և թողութիւն մեղաց լիցի աստ և ի հանդերձեալն ամէն : Եւ ես յետինս ի քահանայից և յերիցանց՝ սուտ անունս ի կարգաւորաց Յոհաննէս , որ բազում աշխատութեամբ զտկարութիւն աչացս մոռացայ , և զգիրս գրեցի՝ որք հանդիպիք սմա օրինակելով . . յիշեսջիք ի բարին Քրիստոս զմեզ՝ և զհանգուցեալ ծնողս մեր զՄանկասար . : Եւ դարձեալ կրկին ի յիշումն Աստուածարնակ Սուրբ ուխտիս Մեծոփայ՝ Սուրբ Աստուածածնի տաճարիս զԹումայ մեծ բարունապետ (պատմիչ) և զՄկրտիչ վարդապետ , և զհանգուցեալքն ի Քրիստոս , զՅոհաննէս եպիսկոպոս , զՄատթէոս կրօնաւորն . և զՂազար , զՅակոբ , զՄեսրոպ , զՆիկողայոս աշակերտք սորին ամէն . : Եւ զայլ ամենայն միաբանք Սուրբ ուխտիս⁽⁴⁾ :

[1] Գորգի մելիքն էր եղբայր Թովմայի Մեծոփեցւոյ բարուն պատմագիրն Հայոց որ բնակէր ի մեծ գիւղն Աղի մերձ ի Մեծօփ :

[2] Էր սա մինն ի նշանաւոր և յերեւելի իշխանաց ի նմին ժամանակի յերկրին Քաջբերունեաց և Աղիովտոյ :

[3] Էր սոյն երանելին եղբայր հարազատ բարուն Թովմայի Մեծօփեցւոյ . որ բոցակիզեալ այրեցաւ վասն Քրիստոսի ի զօրացն Աքանդարայ :

[4] Քսան և հինգ վարդապետաց անուանք եւս կային . բայց մի առ մի դրբելն զանց արարի :

Արդ՝ գրեցաւ Սուրբ Աւետարանս՝ ի դաւառս Քաջբերունեաց, ի յԱստուածապահ քաղաքս Արճէշ. ընդ հովանեաւ Սուրբ Եկեղեցւոյս, և ծաղկեցաւ ի Սուրբ ուխտս Մեծոփայ, (ձեռամբ աստուածատրատիւ. . և հեզահոգի Մինաս կրօնաւորի) (1) ի հայրապետութեան Տեառն Կիրակոսի՝ Սուրբ Կաթողիկէ Էջմիածնի՝ վաղարշապատութեան Նոր քաղաքիս սկսեալ եղեւ, և (ի) հայրապետութեան Տեառն Գրիգորի աթոռակցի՝ Լուսաւորչին մերոյ օրհնեալ եղեւ. (աւարտեցաւ) և յաշխարհակալութեան Ջհանշայ Ղանին թափրիզու: Եւ գրեցաւ սա ի թուականութեանս Հայոց, ՊՂԳ ամին. (պակաս էր թուղթ):

Է 1860. — Գ Զ. Կ. 8. Է ՄԷԶԷ[2]:

1446. — ՊՂԵ.

Տար. — Եւ ՊՂԵ. (Ջհանշահն) զԲաղդատն էառ:

Յիշուիցի Յովհաննէս կրօնաւոր Կարեփի:

Եւ եկեալ վարդապետն Թոււմայ (Մեծոփեցի պատմիչն) միւսանգամ ի Մեծոփ, և սրբագրեաց զՍաղմոսն և զԱղօթամատոյց և Կ (60) ամ կացեալ անդ. և թուին՝ ՊՂԵ. վախճանեցաւ:

Է Տարեգրութեան Դատի վարդապետի Բաղեւոյ:

Թիւ 155. ի Յայսմաւուրէ.

Յիշ. — Փառք. Եւ ետ զսա (Ներսէս երէցն) ի վանքն Նորգեղիայ՝ ի դուռն Սուրբ Կիրակոսի՝ յիշատակ անջինջ հոգւոյ իւրոյ և. . Այլ և աղաչեմ յիշել ի Տէր զերջանիկ վարդապետն՝ զքաղցրաձայն փիլիսոփայն զՅովհաննէս՝ զխարաղնազգեաց ճգնաւորն՝ զառաջնորդ վանացս Սուրբ Կիրակոսի. որ կամակից և պատճառ եղեւ գրոցս գրելոյ, և յորդորող այսմ հոգեւոր գործոյ: Եւ զՅովհաննէս արեղայն զեղբօրորդին իւր, և զՅովհաննէս արեղայն զհոգեւոր սիրեցեալ որդին իւր, և զայլ ամենայն արեղայքն և զմիաբանք վանացս: Դարձեալ աղաչեմ յիշել ի Տէր զգրողք գը-

[1] Էր սա մինն ի նշանաւոր ծաղկանկար վարպետաց՝ երկրին Քաջբերունեաց ի նմին ժամանակի. զորոյ հոգին Տէր լուսաւորեցէ:

[2] Յաւուրս առաջնորդութեան ուխտին այնորիկ ձերունազարդ Տէր Միքայէլ հեզաբարոյ վարդապետի, որ քառասուն ամաց հետէ կայր ի նոյն պաշտօնի վանահայրութեան:

րոցս զՄինաս սարկաւագն՝ որ զառաջքն գրեաց ժՁ. տետր, և զԵրեմիայ արեղայն՝ որ ժ. տետր գրեաց. և զՏէր Սաչատուր վարպետն, որ Ը. տետր գրեաց. և զՅոհաննէս վարդապետն՝ որ Ա. տետր գրեաց, և զիւր աշակերտքն զԱստուածատուր արեղայն՝ որ Ձ. տետր գրեաց՝ և զԱւետիք արեղայն՝ որ Դ. տետր գրեաց⁽¹⁾: Եւ ես բազմամեղ և անխնաստ Սարգիս՝ որ զԴ. տետրակի վերջք գրոցս գրեցի՝ և զցանկն ի յառաջքն, նաեւ զՄարկոս արեղայն՝ որ Դ. տետր գրեաց. և ներսէս արեղայն, որ Ա. տետր գրեաց: Եւ այսոր (սորին) պատճառն մին վասն ժամանակիս, և մին զի օրինակըն հատեալ եղեւ, և այլք ոմանք զնոյն գիրքս գրէին. և մին վասն ջերմ սիրոյն զոր ունէր ներսէս քահանայն: Այլ և աղաչեմ յիշեւ ի Տէր Աստուած, զՏէր Սաչատուրն որ ետ զօրինակն Մինաս սարկաւագին գրեց զԴ. ամսոյն. և զայլն Տէր Գրիգոր Կարպեցին ետ, Աստուած լուսաւորէ:

Եւ զի գրեցաւ սա ի ՊՂԵ. ամի՛ թուականիս Արեթականի, ի դառն և յանբարի ժամանակիս: Որ վասն ծովացեալ մեղաց խնոց. խստացաւ սիրտ իշխանին Եզնկա քաղաքիս՝ . . . և արար խորհուրդ ընդ դանուշմանսն զի քակեսցեն զեկեղեցիսն զքաղաքիս և զգեղորէիցն՝ նաեւ զվանորայս: Եւ ինքն եւ բազում զօրօք և զընաց ի վերայ Կամխայ բերդին, և բան տուեալ էր մօշնանուն՝ թէ յորժամ զբերդն առնու առ հասարակ զԲ. (երկու) երկրիս զեկեղեցիքն քակեսցեն . . . : Իսկ Միածին որդին Աստուած՝ ոչ արար անտես զգնեալքս պատուական և Սուրբ Արեամբն իւրով՝ այլ զթացեալ փրկեաց զեկեղեցիս քրիստոնէից: Մինչ զի ակներեւ տեսեալ էր իշխանն զՍուրբն Սարգիս սպիտակ երկվարօք և այլ Սուրբք ընդ նմա. որ փութացուցանէին զնա երթալ ի բերդն զի առցէ. և նա եկեալ մերձ ի բերդն ի գիշերի՝ և կապեաց իւրովի զպարանն ի պարանոցն իւր՝ որք քարչեցին զնա ի վեր և արկին ի բանտ: Եւ զօրքն եկեալ փախստական ի քաղաքս՝ ընդունեցան զորդին նորա իւրեանց պարոն: Եւ դարձեալ կրկին արարին զառաջին խորհուրդն քակելոյ զեկեղեցիսն: Եւ յաւուրս յայնոսիկ իբրեւ յետ ամսոյ միոյ եղբայր իշխանին Շեխ Հասանայ՝ եկն յօտար երկրէ և եմուտ ի քաղաքս Ի. արամբ և տեսեալ զկապուտն՝ որ ի գլուխն քրիստոնէից և զնեղութիւնս՝ ելեալ այն Ի. արամբն և զը-

[1] Սոյն Աւետիք և Աստուածատուր արեղայք և վարդապետն իւրեանց Յոհաննէս, ըստ գրութեան Սեպուհոյ վանուց միաբան Յովհաննէս արեղայի՝ էին միաբանք նոյն ուխտին. տես ի վերոյ ի թիւն 148 Աւետարանի յիշատակարանն:

նացեալ ի դուռն սալաւոտին և կալեալ զորդի իշխանին՝ ինքնին տիրեաց քաղաքիս և հրաման արար զի քրիստոնեայքն՝ զկապուտըն ի գլխոյ իւրեանց ձգեսցեն . և համարձակ զօրէնս իւրեանց կատարեսցեն : Եւ յեա աւուրց ինչ Կամիսայ բերդի սարսնն եհան զՇեխ Հասան և արձակեաց , և մօլնանին այս քաղաքիս՝ դարձեալ թուղթ յուղարկեցին ի ծածուկ առ նա , զի եկեսցէ ի քաղաքս և նոքա կոտորեսցեն զդուռն և առցեն ի ներս և սպանցեն զեղբայր նորա , և զառաջին խորհուրդն կատարեսցեն : Իսկ եղբայր նորա Մահմուտ պարոնն իմացեալ զայս և ըմբռնեաց զամենեւեան , զգլխաւոր մօլնան կախեաց , և զայլս բազումս շարաշար տանջեաց զինչս և զապրանք նոցա էառ՝ և յայլ երկիր վտարեաց : Եւ յետ սակաւ աւուրց ելեալ Շեխ Հասանն ի Կամիսայ երթայր յերկիրն իւր ի Դերջան , և եղբայր նորա իմացեալ՝ առաքեաց զօրս և կալաւ զնա՝ և եդ ի բանտ երկաթի կապանօք . և խաղաղացաւ (խափանեցաւ) նոցա չար խորհուրդ և կատարեցաւ բանն Դաւթի . թէ « Գուրն զոր փորեցին և պեղեցին՝ ինքեանք անկան ի խորխորատն զոր գործեցին » Եւ այս կարի մեծ սքանչելիք . . . : Գործեցաւ այս ի յեղանակէն աշնան , մինչեւ ի յեղանակն դարնան : Իսկ ի գալ եղանակին ամարան , եկն ի վերայ քաղաքիս եղբորորդի Մահմուտ պարոնին . . . Ճիհանկիրն՝ բազում և շատ զօրօք , և խսարեաց զքաղաքս ամսոյ Իկ . Էն , մինչեւ յՅգոստոս ժ . և քար և քանդ արար զերկիրս Եկեղեաց , և գեղորայսն զամէն այրեց , և ելեալ յերկրէս յայլ շրջակայ գաւառսն և զամենայն աւերէ : Իսկ մարդիկ երկրիս յօտար երկիր վտարեցան , մինչ զի անբընակ եղեւ երկիրս ի մարդկանէ՝ և դեռ յայս ալեաց միջի կամք իբրեւ զնաւ բեկեալ՝ և թէ զինչ լինելոց է յառաջիկայն Աստուծոյ է գիտելի : Արդ՝ մի ոք իշխեսցէ հանել զսուրբ մատեանս . : Իսկ եկեղեցւոյան և այլ արեղայքդ Սուրբ Կիրակոսի վանացդ խընամ տարէք գրոցս . զի ի ժամանակի փախստեան կամ խռովութեան զգիրքս ի քաղաք տարէք և պահեցէք . և ի ժամանակի խաղաղութեան (բերէք ի վանս) և ընթերցէք . և մի ախեալ և փակեալ պահէք , զի գիրք փակեալ՝ կուռք են : Այլ և յերես անկեալ .

Ի նոյն Յայամուռերէ յայլ տեղէ .

Ո՛վ դառն ժամանակիս . զի զօրք բազում պաշարեալ են զքաղաքն Եզնկայ . ո՛վ եղբայր անմեղադիր լեր խոշորութեան և սըխալանաց գրոյս՝ մին զի անարհեստ էի ի գործ իրիս , և մին զի ի խսար էաք՝ և ի տրտմութեան , զի զամենայն գեղորայս Եզնկոյ

և զվանորայսն նաեւ զմիարանքն՝ այրեցին հրով. այլ և զվաստակըն և զայգիքն՝ և զամենայն ինչ զոր կերան և առին, և զոր առտոն կոխեցին և տարակուսեալ էաք:

Ի նոյն Յայսմաւուրի սկիզբէն.

Ո՛վ եղբարք անմեղադիր լերուք խոշորութեան և սխալանաց գրոյս. զի յահ և ի փախ էաք. . . . և մարդիկ երկրիս ամենեքեան յօտար երկիր վտարեցան, և երկիրս մնաց անբնակ: Ձըստացող գրոյս զՆերսէս քահանայն յիշեցէք ի բարին: . . . Նաեւ զհեզահոգի նկարող սորա զՍամուէլ վարդապետն ամէն:

Է 1887. է Վ. և. — Արժ. Արեւն Հարտողեոյ Թօթմտեան, որ յօրինակեալ էր յերջնայ է Հան Սրբայն կերպար:

Թիւ 156. Ի Յայսմաւուրէ.

Փառք համագոյ և միասնական Աստուածութեան. . . և ըստ այնմ օրինակի տեսեալ զանառիկ մեծութիւնս. . . ոմն ի կրօնաւորաց Մկրտիչ անուն՝ և եղբայրն իւր Յովաննէս: Եւ ետուն գըրել զսա՝ բարի յիշատակ հոգւոց իւրեանց. . . Եւ արդ՝ ես անսլուտուղս ի բարեաց. . . անարժան Ստեփաննոս՝ յանձն առի գրել զսուրբ գիրքս ի դառն ժամանակիս. զոր կանք ի վշտի. . . Եւ գրեցաւ սա՝ ընդ հովանեաւ Սուրբ Սարգսի, և Սուրբ Գէորգեայ. և Սուրբ Ստեփաննոսի՝ ի քաղաքս Բաղէշ. ի հայրապետութեան տեսան կիրակոսի¹⁾: Եւ յամիրութիւն Շեխ Մահմատին՝ որ յաթուոյն աքսորեցին. (և) զեղբօր որդին ի տեղն դրին՝ զփոքր ամիրէն զՇմզդին: Եւ ի զանութիւն Ջհանշա ամիրզին: Եւ յայսմ ամի (ՊՂԵ) եղև թանգութիւն մեծ, որ մին բեռ ցորեան՝ եղև ի վաթսուն թանկայ (թանկայ բառի արժէք մնայ ինձ անծանօթ): Եւ Արարիչն Աստուած նախախնամեաց զհաւատացեալ քրիստոնեայքս՝ ի թուականիս Հայոց. ՊՂԵ. գրեցաւ. . . Յիշեսջիք առաջի Քրիստոսի զստացող սուրբ գրոցս զՄկրտիչ կրօնաւորն և զեղբայրըն իւր զՅովաննէս, զհայրն իւր զԲուքն, և զՄայրն զԷլիսաթուենն: Եւ զմիւս այլ եղբայր զՊարոնն և զԿարապետն՝ և զՎարդմանուկըն՝ փոխեալն առ Աստուած, և զքոյրն զՍամօշ խաթուենն, և զեղբօր որդիքն՝ զԴանարէկն. զԹումայ բէկն. և զՍիրուն բէկն, և զքոյր նոցին զՀայ խաթուենն. . . Եւ զհօր եղբայրն զԹումայ մահ-

[1] Չամչեան չունելով զայսպիսի յիշատակարան ի ձեռին՝ երկու ամ միայն տայ կիրակոսի կաթուղիկոսութեան:

դասին . : Յիշեալիք առաջի Քրիստոսի զանարժան և զմեղաւոր ծառայս զՍտեփաննոս գրիչ . և ուղիղ սրտիւ և լիակատար բերանով Սասուած ողորմի ասացէք՝ ինձ և ծնողաց իմոց Հայրապետ քահանային և Նաս խաթունին՝ Սարգիս քահանային՝ և որդւոց նորին . : Յիշեալիք . . զստացող սուրբ գրոցս՝ զխստակրօն և զսրբասէր Մկրտիչ կրօնաւորն , և զեղբայր Յովանէս . զոր ետուն գրել զսուրբ գիրքս . . և եղին ի դուռն Սուրբ Վարդան զօրավարին . որ է յերկիրն Ռչտունեաց՝ հանդէպ գեղին Գաւաշի⁽¹⁾ . յիշատակ բարի հոգւոց իւրեանց . : Եւ արդ ես . . Մկրտիչ անուամբ և եթ արեղայ . տեղեալ Աղթամարցի՝ ըստ նախնեաց Քուքենց կոչեցեալ . : Հոգի ընկալ և Սասուածաբան վարդապետքն եկեղեցւոյ՝ յամենայն ազգաց պատմութեանց հաւաքեալ ի մի տուփ գումարեցին՝ և անուանեցին Յայսմաւուրք : Իսկ ի մերումս ժամանակի , որ էր թուական Հայկազեան տօմարիս ՊԾ . Երանաշնորհ վարդապետն Գրիգոր Սլաթեցին , ըստ նախնեաց Մերենց կոչեցեալ . ոչինչ նուազ գտեալ քան զառաջի հոգի ընկալ վարդապետսն՝ այլ առաւելեալ քան զնոսին : Սա յաւել ի վերայ առաջնոց գրելոցն յոլով բանս շահաւէտս և օգտակարս յամենայն պատմագրաց , վկայարանութիւնս յինքենէ նորոյ վկայից սրբոց . որք եղեն ի մերումս ժամանակի , և հարստացոյց զնորքս : Յետոյ և ինքն սրով կատարեցաւ ի վանքն Յիւլանայ⁽²⁾ . ի ՊԷԴ . թուականին՝ որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի : Արդ՝ ես վերջինս ի ծնունդս եկեղեցւոյ՝ Մկրտիչ անուամբ միայն կրօնաւորս . տեսի զհոգեւոր փարթամութիւն սուրբ գրոցս և ցանկացայ սմա՝ և ետու գծագրել զսա ի հալալ արդեանց իմոց . և տուի զսա ընծայ և նուէր ի գերահռչակ ուխտս՝ որ է յանուն Սուրբ Վարդան զօրավարին . ի հայրապետութիւն (Աղթամարայ) Տեառն Ջաքարիայի . :

է 1880 . Նոյ . 10 է վ . ր . ր . ր . ր .

Թիւ 157 . յԱւետարանէ .

Փառք . . իսկ ես ունայնս . . Մինասենց թովմայս՝ անուամբ և եթ արեղայս (144 թիւ Աւետարանի 149 թիւ Մաշտոցի և 152 թիւ

[1] Թէ սոյն գիւղն և թէ վանքս՝ որք կան հանդիպակաց դէմ առ դէմ միմեանց ի բարձր գրութեան՝ ի վաղուց ժամանակաց հետէ կան անքնակ ի մարդկանէ :

[2] Ար է անուամբ Սրբոյն Ստեփաննոսի ի գաւառին Բզնունեաց մերձ յԱրծկէ . և կայ սյժմ անքնակ :

Գանձարանի գրիչն է) լուայ զփափագ և զսէր, (Բէլուեցի Շնոհվոր հաւատարիմ կնոջն) և ետու գծագրել զԱստուածախօս Աւետարանըս զայս՝ քուերդւոյ իմոյ Հայրապետի սրբակրօն արեղայի՝ յաստուածախնա՛ իղզիս Աղթամար . ընդ հովանեաւ երկնաման և գումբէթաճեւ Սուրբ Սաշի տաճարիս, և Ամենափրկչիս, և Սուրբ Սարգիս զօրավարիս՝ ի հայրապետութեան Տեառն Զաքարիայի. և ի թուականութեան Հայկազեան տումարիս ՊՂԵ. և ընծայեաց զսա նուէր և ընծայ աստուածարնակ Սուրբ տաճարիս . որ է շինեալ յանուն սրբոյն Յակոբայ հայրապետին, և Սուրբ Աստուածածնին, և Սուրբ Յոհաննէս Աւետարանչին՝ առաջի Կապուտ Կողան բերդին : Եւ է հռչակաւոր վանք և հրեշտակարնակ կրօնաստան . : Յայսմ ամի էառ ամիրզա Ջհանշէն գԲաղդատ՝ որ է Բարեւոն . և էր թիւն ՊՂԵ . :

Ի 1867. Յունի 16. Երկու-էրեքի է վ. և . է Բելու- գի-ըն՝ որ յարեմոսից իստի- կոյ 74 Հոյ երբօր է ծագ գա-տին Ուլտանեաց .

Թիւ 158 . ի Յայսմաւուրէ .

Փառք անբաժանելի Սուրբ Երրորդութեան . . որ ետ կարողութիւն տկար Սալիֆայ քահանային հասանել յաւարտ . : Արդ՝ գըրեցաւ ի թուականիս Հայոց . ՊՂԵ . ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին՝ և Գէորդեայ զօրավարին՝ և Սուրբ Յակոբ հայրապետին . ի քաղաքս Արճէշ կոչեցեալ . ի հայրապետութեան Տեառն Կիրակոսի, և յառաջնորդութեան (երկրին Արճիշոյ) քաջ բարունապետացն թումայ վարդապետի (Մեծոփեցւոյ) և Կարապետ վարդապետի⁽¹⁾ . որոց յիշատակ նոցին օրհնութեամբ եղիցի . . զըստացող սուրբ գրոցս զԱբրահամ կրօնաւորն, և զհօր եղբայրն իւր զՎարդան վարդապետն, և զԵղիս սարկաւազն յիշեցէք ի Տէր :

Ի 1868. Դեկտ. 3. է վ. և է գի-ըն Էրեւն[2].

Թիւ 159 . ի Յայսմաւուրէ .

Փառք . : Աւարտեցաւ Սուրբ Գիրքս այս . յամի ՊՂԵ . ի թուականութեանս Հայոց . ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի վարդան երիցու . (134 թիւ Յայսմաւուրի գրիչն է) ի խնդրոյ վարդան կրօնաւորի . . և գրեցաւ Սուրբ գիրքս ի քաղաքս վան, ընդ

[1] Էր սա վանահայր ուխտին խառարաստայ :

[2] Շէնա այս կայ ի ծոց Գնունեաց գաւառին, ի հիւսիսային կողմանէ խաչկատար լերին . որ այժմ Էրեւնայ սար անուանի . յաւուրս աւագ քահանայութեան շինին այնորիկ Տէր Գրիգոր ձերունազարդ քահանայի :

հովանեաւ Սուրբ Առաքելոցս Պետրոսի և Պօղոսի, և Տիրամօր Սուրբ Աստուածածնին, և Սուրբ Վարդան քաջ զօրավարին, և Սուրբ հայրապետին Իսահակայ. ի կաթուղիկոսութեան Տեառն Կիրակոսի, և (Աղթամար ոյ) Տէր Զաքարիայի, և մերոյս առաջնորդի Սուրբ Ուխտիս Վարագայ՝ Յոհաննէս եպիսկոպոսի և Զաքարիա վարդապետի⁽¹⁾. ի թագաւորութեան Զհանչայի. որ ի յայսմ ամի (ՊՂԵ.) էառ զանառիկ քաղաքն զԲաղդատն. և յայսմ ամի (ՊՂԵ) եղեւ վախճան տիեզերալոյս և մեծ բարունապե. . (Թուղթն սրակաս էր :

† 1865. Սեպ. 14. † կրոն. քնն. [1] :

Թիւ 160 . ի ճաշոցէ .

Փառք անբաժանելի և միասնական Սուրբ Երրորդութեան . . Արդ՝ գրեցաւ սա ի թուին, ՊՂԵ. ի դառնարեր ժամանակիս վասն մեղաց մերոց . մինչ ի յասելն մեզ՝ թէ լաւ է մեզ մեռանել քան թէ կենդանի մնալ՝ զի գիրն լցցի : «Թէ ամենայն սիրտ «ի տրտմութիւն, և ամենայն անձն ի ցաւ, յոտից մինչեւ ցղլուխ «չիք ի նմա առողջութիւն :» Եւ հրաման արարեալ (Զհանչա՛հ) ժողովեաց զամենայն Թորգոմացիս յարեւելից՝ և բազում զօրօք գնաց ի վերայ Բաղդատայ՝ և կռիւ եղեալ և ոչինչ կարաց առնել⁽²⁾. Բայց ի զօրականացն կոտորեցաւ Բ. Ռ. այր (2000) ու ՔՃ. (300) պարոն. և գիտութիւն եղեւ մեզ՝ զի յԱստուծոյ էր զոր աւասց Տէրն թէ «Որ առնու սուր սրով անկանի . .» Յիշեաջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր . զմեղուցեալ գրիչս Յովսէփ Սարկաւազ . .

† 1867. Յուն. 1 † քնն. Բեւ. :

Թիւ 161 . յԱւետարանէ .

Փառք Անսկզբան . : Արդ՝ ես Մարգարէս . . շնորհիւ Տեառն սկսայ . և ողորմութեամբ նորին կատարեցի (զսուրբ Աւետարանս) ի յարքունական երկիրս Ընչտունեաց, ի վանքն որ Բերդաձոր կոչի . ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս . ի թուականիս Հայոց ՊՂԵ⁽³⁾. և արդ՝ ես ունայնս ի բարեաց . . Առաքել անուամբ և

[1] Սոյն Զաքարիա վարդապետ և Յովհաննէս եպիսկոպոս յամի 1444 ի ձեռնագրութեան Կիրակոսի ի կաթուղիկոսութիւն ամենայն Հայոց՝ ներկայ էին անդ ընդ ժողովեալ հարցն՝ ըստ Հ. Միքայէլի Զամչեան՝ Գ. հատոր էջ 187 :

[2] Ի թիւս 157 և 159. Մինասենց Թովմայ վարդապետն և Վարդան քահանայ ասէն թէ՛ էառ Զհանչահն զԲաղդատն : Նման սոցին գրէ Յոհաննէս կրօնաւորն Յիպանցի ժամանակակից յիւրում տարեգրութեան :

[3] Ի վանահայրութեան Բերդաձորոյ ուխտին Կիրակոս վարդապետի :

եթ արեղայ . ցանկացող եղէ այս Աստուածախօս տառիս . և ըն-
ծայեցի զսա նուէր ի յանուանի և ի գերահռչակ ուխտս Սուրբ
Յակոբ՝ որ է յերկիրս Ռչտունեաց՝ առաջի Կապուտ Կողան բեր-
դին . . յառաջնորդութեան Սուրբ ուխտիս՝ Սիմէոն վարդապետին .
որոյ տացէ Քրիստոս պարգեւ բարի ըստ վաստակոց իւրոց՝ զի
մեծ երախտաւոր է մեզ և տեղւոյս . .

է 1867. է ԳԻ-ՆԵ ԲԵԼ-

1447 . — ՊՂԶ .

Տար. — Մկրտիչ արհի եպիսկոպոս (Նախաչ կոչեցեալն) նորող-
եալ է զՅամիթ քաղաքի Կաթուղիկէ եկեղեցին . ի թուին ՊՂԶ .

Տե՛ս է 1848 ա՛յ Հայաստանի Երեւանի ԲԵ- 107 :

Թիւ 161 . Սուրբ Գէորգ եկեղեցւոյ արձանագրի պատճէն՝ որ կայ յար-
տաբօւստ ի կողմն արեւելեան [1] :

Արձ. — «Տէր Աստուած Յիսուս Քրիստոս , զՀայրապետ կրօ-
«նաւորն յիշեցէք ի Քրիստոս . ՊՂԶ :»

«Տէր Աստուած Յիսուս Քրիստոս . Ստեփաննոս՝ Մկրտիչն յի-
«շեցէք ի Քրիստոս . ՊՂԶ :» (Նոյն եկեղեցւոյ դրան պարաւորի ար-
ձանագրի պատճէն) :

«Տէր Աստուած . Յիսուս՝ Քրիստոս . զՀազար բէկ(?) . Հնոխոր
«Սուրբան յիշեցէք ի Քրիստոս :» (Նոյն Սուրբ Գէորգ եկեղեցւոյ
տաճարի փորագրեալ գեղեցիկ դրան արձանագրութիւն . Յաջ կող-
մանէ) «զԹումայ կազմող և զՅոհաննէս Նալբանտ .» (ի ձախ կողմա-
նէ) «զՈվանէսայ որդին զԹումայ կազմողն յիշեցէք ի Քրիստոս :»

է 1887. Յ-ՆԻ 15. Չ-ԵԻԼ-ԲԵԻ. ա՛յ է Ս-ԵԲ ԳԵՐԵԲ [3] :

[1] Սոյն ճոխ տեսարանով ի եկեղեցին կայ ի գաւառին Ռչտունեաց՝ ոչ հե-
ռի ի շինէն Գանձակայ՝ շինեալ ի վերայ վիմակարկառ հրուանդի միոյ՝ առ ափն
ծովուն Բզնունեաց . ի հիւսիսային յարեւելից նորին :

[2] Սոյն Հազար բէկի մի արձանագրութեան եւս հանդիպեալ եմ յՈստանայ
Կապան ի ներքոյ Պղլաքարոյ անցեալ 1887 ամի՝ մինչ ընդ Արսէն վարդապետի
ի Մոկս երթայեաք :

[3] Մինչ գնացեալ էի ուխտի աղաքաւ ընդ ուխտաւորացն վանայ , ի Նա-
րեկ յԱղթամար , և ապա ի վանս Սրբոյ Առաքելոյն Թովմայի . և ի վանս սրբ.
բոյն Սահակայ Լուսապտուղ կոչեցելոյ . որք կան մերձ առ Գանձակ գիւղն Ռըշ-
տունեաց կից ծովուն Աղթամարոյ . էր ընդիս և քեռորդին իմ Շիկեան Կարա-
պետ պատանին :

Թիւ 163 . Սևետարանէ .

Յիշ. — Փառք Անսկզբանն և Սկզբանն ամենայնի . . կատարեցաւ Սուրբ Աւետարանս յերկիրս Մոկաց , ի դիւզս որ Փասաւանք կոչի , ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին , և Սուրբ Գրիգորին , և Փրկչին : Եթէ լսեալ էիք ի պատմութենէ սորա (Փասայ վանից) զոր երեք խնձոր է բերեալ ի դրախտէն Ադամայ կրօնաւորի միոյ : Այլ և գրեցաւ Սուրբ Աւետարանս ձեռամբ Իսրայէլ քահանայի՝ անիմաստ և ախմար գրչի . . յընտիր և ի ստոյգ օրինակէ կիւրիկեցւոց՝ կենօք տառապանօք և բազում պանդխտութեամբ՝ ի մեծ թուխ Հայոց . ՊՂԶ . ի կաթուղիկոսութեան Հայկազեան սեռի Տեառն Զաքարիայի Աղթամարցւոյ : Զոր Տէր Աստուած պահեսցէ անսասանելի զաթոռ հայրապետական և զթագաւորական . զի յիշելով զանուանս նոցա սասանեալ սաքրին և ոչ եւս երեւին թշնամիք ճշմարտութեան : Զոր տեսեալ զայսպիսի գանձս աստուածային . . տանուտէրն թովմայ , և երկու եղբայրն իւր Գրիգորն և Ղազարն ի գեղջէն Աղնայ . և ետ գրել զսա ի հալալ և յարդար վաստակոց իւրոց . յիշատակ հոգւոց իւրեանց և ծնողացըն հօրն Ստեփանին և մօրն Շնոհորին . : Դարձեալ կրկին մաղթանօք աղաչեմ ես հողացեալս ի գերեզմանի՝ անարժանս ի դասս կրօնաւորաց Իսրայէլ զամենայն ընթերցողք Սուրբ Աւետարանիս՝ զի յիշման արժանի առնէք զանարժան գրիչս Իսրայէլ , և զհայրն իմ զԱմիրչահն և զմայրն իմ զՇնոհորն . . և զուսուցիչքն իմ զԹովմայ քահանայն և զԹադէոսն՝ և զԱռաքեալն : Այլ և զերախտաւոր վարպետք՝ իմ զՏէր Մարգարէն և զՏէր Վարդան մաղղասին . : Այլ և յիշեցէք ի Քրիստոս Աստուած զԴաւիթի Պետրոսն՝ որ ասէր Տէր Իսրայէլ զիս յԱւետարան գրէ քեզ վարձք է . :

† 1880. Հ. 7. † Լ. Կ. Վ. Կ. Կ. Կ.

Թիւ 164 . ի Ճաշոցէ .

Փառք . : Արդ՝ գրեցաւ սա ի թուխ Հայոց , ՊՂԶ . ի դառնա-

[4] Ի սոյն յիշատակարանի յիշատակեալ բարունապետն անանուն՝ է նոյն ինքն թովմայ Մեծոփեցի մեծ վարդապետն Հայոց՝ որոյ վախճան լեալ է ի սին իսկ ամի ըստ տապանագրի նորին . « Խաչս կանգնեցաւ ի բարեխօսութիւն թումասս « մեծի բարունապետի ամենայն Հայոց . որ գնաց ի նորոգումն Սուրբ Եջմիածնի և փոխեցաւ առ Աստուած . » թ. վ. ՊՂԶ . » մի քանի բառ անվերձանելի մնացին ի հնութենէն :

բեր ժամանակիս, վասն ծովացեալ մեղաց մերոց. ձեռամբ Մկրտիչ սարկաւազին. . ընդ հովանեաւ Սուրբ Թէոդորոսի զինաւորին, զոր այժմ Դերձկի կոչի⁽¹⁾. և այլ բազմահաւաք նշխարաց. : Եւ Սիմէոն հայրապետի, որ ետ գրեւ զգիրքս ի վայելումն մաքուր անձին իւրոյ. յիշեցէք զվանիցս միարանքն զՍիմէոն արեղայն և զսարկաւազներն և զգործաւորն Սարգիս սրապն. :

† 1865. Մարտ 10. † Սեբաստիոյ Սուրբ Մինաս եկեղեցին :

Թիւ 165. յԱւետարանէ .

(որ գրեալ էր) ի քաղաքն Արծկէ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի՝ ի հայրապետութեան Տեառն Կիրակոսի ընդհանուր Հայոց կաթողիկոսի. ի թագաւորութեան Ջհանշահի որդւոյ Ղարա Եուսուֆի, ի թվականի մերում՝ ՊՂԶ. ամի. յորում ժամանակի յոյժ հարկապահանջութեամբ տառապի ազգս Հայոց. :

Տե՛ս է Գեբ. Գարեգին Եպիսկոպոսի Սբաստանցի Բ. հարսը Թարսոս քրոջ եւ 433 :

Թիւ 166. յԱւետարանէ .

Փառք Ամենասուրբ Երրորդութեան՝ այժմ և յաւիտեանս ամէն. Արդ՝ գրեցաւ Սուրբ Աւետարանս, ի թուականիս Հայոց ՊՂԶ. ի հայրապետութեան Տեառն Կարապետի. (Սոյ Աթոռոյն) և եպիսկոպոսութեան՝ Տէր Գրիգորի եղբոր որդի նորին. ի վանս Ծառիկու ընդ հովանեաւ սուրբ Աննայի⁽²⁾. ձեռնատուութեամբ Սիմէոն քահանայի, և քուեր որդւոյ իւրոյ Կիրակոս դպրի. : Ջգըծագրող սորա զՀայրապետ բանին աշակերտեալ՝ ընդ նմին և զըստացող Սուրբ Աւետարանիս Առիմէլիքն և զճնողսն իւր Ազիզ սէկն և Ըռանախաթուն. :

† 1865. Յունիս 10. յԱրարիկե քաղաք † Սուրբ Աստուածածնի եկեղեցին :

1448. — ՊՂԷ.

Տար. — Ձեռնադրութեան մի Մաշտոց գրի ի թուին ՊՂԷ յանձանօթ գրչէ ի Կարմիր վանք, որ կայր ի մերձակայս Չմշկածագ քաղաքի :

[2] Վայրն ուխտիս մնայ ինձ անձանօթ :

[3] Ծառիկու Սուրբ Աննայի վայրն և գաւառն մնաց ի մէնջ անձանօթ :

Թիւ 167 . Սւետարանէ .

Յէշ. — Օրհնութիւն գոհութիւն . . որոյ ցանկացող եղեալ այս անգին ջոհարի և պատուական մարգարտի՝ համեստ և հարկեւոր մայրս մեր հոգեւոր՝ Թուրվանդայ խաթուն՝ և ստացաւ զսուրբ Սւետարանս . : Եւ ես յետինս բանասիրաց՝ և տրուպս կարգաւորաց՝ Յովհաննէս . . սկիզբն արարի Սուրբ Սւետարանիս . ի թուականութեանս մեր . ՊՂԷ ամին . , ի հայրապետութեան Տեառն Գրբիգորի ընդհանուր Հայոց կաթուղիկոսի . ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի տաճարիս . և սրբոյն Ստեփաննոսի կաթուղիկէին . :

† 1865. Նոյ. 30. † վ.ն. † Լէ՛ կղզն. յառաջս Լանհայրսնիւն՝ Ելանսոր հայկաբնի թօփսպէն Յովսէփ արհի Եղեմիսոսի վ.նեցայ .

Թիւ 168 . ի Գանձարանէ .

Փառք Ամենասուրբ Երրորդութեան՝ Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն ամէն . ի թուականիս Հայոց . ՊՂԷ . գրեցաւ Սուրբ Գանձարանս ի քաղաքիս Վան . ընդ հովանեաւ Սուրբ Առաքելոց Պետրոսի և Պօղոսի . ի հայրապետութեան Տեառն Ըռասակէսի⁽¹⁾ . և մերոյ առաջնորդիս Սուրբ ուխտիս Վարադայ՝ Տէր Յովհաննէս եպիսկոպոսի և Մարգարայ վարդապետի . ձեռամբ Սաչատուր երիցու . : Յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր՝ զստացող սորա զՏէր Աստուածատուրն՝ որ . . նահատակեցաւ . ընդ նմին աստուածատէր տանուտէրն զՂազարն , զԳրիգորն՝ զմայրն Շնահոր , զկենակիցն Շախափաչայ . . որ ետ երկու գրիւ ցորեն և թափեաց զգանձարանս ի գերութենէ . և ետ ի դուռն Սուրբ Աստուածածնին՝ որ է յԱրարքն անջինջ յիշատակ :

† 1831. Յունիս 25. Հինգլսբէի † Բղէլ ար Էրօր Սեֆեան Դաւիթեան Ստանցի .

Թիւ 169 . ի Ճիւղագրութենէ .

Եւ այսքան շատ լիցի՝ որ ցուցեալ եղեւ ի մէջ ամէն . ի խընդորոյ Թովմայ վարդապետի հրեշտակարնակ Սուրբ ուխտիս Մեծօփայ . և ես ծառայարար կատարեցի Յակոբ վարդապետս Ղրիմե-

[1] Չամչեան զոյն Արիստակէսի կաթուղիկոսութեան սկիզբն գնէ 1462 ՋԺԱ. ամի. զկնի շորեքտասան ամաց. տես յաղիւսակ նորին էջ 93 .

ցի՝ աշակերտ Գէորգայ վարդապետի և բաջ դիտապետի Եզնկայ-
ւոյ՝ յաղագոս ազգականութեանց բաժանման :

† 1865. † Կրտսց :

Թիւ 170 . Յակոբ Արիմեցւոյ յիշատակագրէ .

Փառք անրաժանելի Երրակ Անճնաւորութեան Հօր և Որդւոյ
և Հոգւոյն Սրբոյ : Արդ՝ ո՛վ բարունի և Աստուածաբան՝ աստուա-
ծային իմաստութեան ցանկացող՝ որդեակ իմ հոգեւոր և եղբայր
ցանկալի և բաղձալի վարդապետ Թումայ . առաջնորդ աստուա-
ծաբնակ քրորէագոռմար հռչակաւոր Սուրբ ուխտին Մեծօրայ
վանք անուանելոյ : Ահա զայս եւս խնդիր քո կատարեցի բազում
աշխատութեամբ և առցես զսա (զմեկնութիւն Տումարի) և ընդ ու-
շիմ մտաց քոց նրբահայեաց որոնեսցես , և զպահասն լցուցանի-
ցես . : Վասնորոյ աղաչեմ զքոյին հեղութիւնդ սիրով բաղձանայ ,
զի մօտասիրելն քոյովդ հանդերձ զհոգւոյս աղքատս քո զՅակոբ
Արիմեցիս՝ սոսկ անուն միայն վարդապետս ի յառաջալիր յաղօթս
քո մի մուսայիս :

† 1880. Փետր . 29. † Կահանգ տէ . † Կ. Պօլիս . † Աւլաիիոյ Թանգարան :

Թիւ 171 . Սուեաարանէ .

Ի ծագմանէ ճշմարիտ Արեգական . : Եւ արդ ես . . Ներ-
սէս անուամբ և եթ արեղայ՝ եղկելի ողիս ծրագրող սորա⁽¹⁾ . . .
գրեցի զսա ընդ հովանեաւ գերապայծառ և երկնանման Սուրբ
Սաշիս (Աղթամարայ) գմբէթայարկ տաճարիս . և Սուրբ Փրկչին՝
ընդ հովանեաւ Սուրբ Սարգսիս . և ի հայրապետութեան Տեառն
Զաքարիայի , և ի թուականութեան Հայկազեան տումարիս . ՊՂԷ .
ամին : Ներսէս սոսկ անուն արեղայիս՝ որ զՍուրբ Սուեաարանս զը-
ծագրեցի՝ և ծնողացն իմոց Կուռճի բէկին , և Էմնայ խաթու-
նին⁽²⁾ . և հարազատ եղբօրն իւրոյ Ստեփաննոս սրբասէր կրօնա-
ւորի⁽³⁾ . Աստուած ողորմի ասացէք հոգեւոր հօրն իմոյ՝ անյաղթ

[1] Է նոյն իսկ քաջ քարտուղարն Հայոց . երեւելի Ներսէս եպիսկոպոսն՝ եղ-
բայրն Ստեփաննոս Գ. կաթուղիկոսին Աղթամարայ :

[2] Սոյն Էմնա խաթուն էր քոյր տարեգիր վարդապետին Հայոց Մինասենց
Թովմայի Աղթամարցւոյ :

[3] Սա զկնի մեծի Զաքարիայ երրորդի ի ՋԺԳ ամի նստաւ կաթուղիկոս ՍԱԷ-
թամար :

փխլիստփային՝ Մինասենց Թուճային (վարդապետին) ամէն : . Եւ արդ՝ ես ունայնս . . Հայրապետ անուամբ և եթ արեղայս ի Շատվան գեղէ⁽¹⁾ ստացաք զՍուրբ Աւետարանս զայս . . և ընծայեցի նուէր Նկարինայ Սուրբ Յարութեան՝ և Սուրբ Աստուածածնին՝ հրեշտակաբնակ մենաստանին⁽²⁾ . յիշատակ բարի հոգւոյ իւմոյ . . և ծնողացն իմոց Թուճային և Մարթային : . Եւ մի՛ ոք իշխեսցէ հեռացուցանել զսա ի Նկարիայ Սուրբ Յարութեան տաճարէն : . Աւա՛ղ դառնութեան ժամանակիս՝ որ պատահեցաք մեք . վասն զի յայսմ ամի՛ որ զՍուրբ Աւետարանս ծաղկեցի և կազմեցի , էր սաստիկ մահտարածամ՝ որ չէր եղեալ այսպէս ի վաղ ժամանակաց . և ժանգն ապականեաց զվաստակ դաշտաց . և մուկն եռաց յամենայն երեսս դաշտաց՝ և ապականեաց զվաստակս : Այս եղեւ ի ՊՂԸ . թվականին :

Է 1881. Յունիս 30. է Բուզլ է Սուրբ Գեորգ Էկեղեցին : Որ էս 1881 է Բուրձը Լարէ է հարստային յարեւել տաղաին :

1449. — ՊՂԸ .

Տար.— Մարտիրոս կրօնաւորն ի քաղաքն Կաֆայ գրէ զՍաղմոսի մեկնութիւն արարեալ ի Տաթեւացոյն :

Յիշատին :

Ար.— Ես Կարապետ վարդապետս⁽³⁾ Կանգնեցի զՍաչս բարեխօս աւ Աստուած՝ եղբօրն իմոյ Յոհաննէս հերպետի՝ որք երկիրպագանէք յիշեցէք ի Քրիստոս : Թվ. ՊՂԸ :

Է 1866. Սեպտ. 12. յԱրճեւ յԱրճաբեր սեպտ.

Թիւ 173 . ի Շարականէ կրկին ստացողէ ,

Յիշ.— Ես Յոհաննէս որդի Աքանդարին ԻԴ . թանկայ թամուրի (փողի անուն է) ի Չաղաթիցն գնեցի (զՇարականս) յիշատակ

[1] Է շէնս ի մէջ Ռշտունեաց ի մերձակայս Սրբոյն Թովմայի Առաքելոյ ուխտին՝ ի հիւսիսային կողմանէ նորին : Զհոյակապ եկեղեցին շինիս՝ շինեալ են արժանայիշատակ իշխանքն Արծրունեաց՝ ասնն ականատեպ :

[2] Սոյն երբեմն երեւելի ուխտն ի դարաւոր ամաց հետէ կայ անբնակ . և արտօրայք սորին հանդերձ անտառաւն՝ կան այժմ ի ձեռս այլոց :

[3] Վանահայր էր սա խառարաստոյ ուխտին , և եղբօր որդի Զաքէոսի եպիսկոպոսին . որ նախ քան զայս Կարապետ վարդապետն էր առաջնորդ անդ :

ինձ և ծնողաց խնոց . որդիքս առ Աստուած փոխեցան և թողին մեզ սուգ անմխիթար⁽¹⁾ : Ետու զՇարականոցս դեռարոյս մանկանքն Յովհաննէս սարկաւազին՝ Տէր Եսայի որդւոյն . : Գրեցաւ գիրքս ի Յարպէլան (սոյն Յարպէլանայ չեմ ծանօթ) ի յառաջնորդութիւն Սուրբ Ուխտիս Ներսէս վարդապետիս . և Յովհաննէս եպիսկոպոսին . սոցա վկայութեամբն . . ի թվին ՊՂԸ . ամին . ի հայրապետութեան Գրիգոր կաթողիկոսի . ի թագաւորութեան Ջհանչին որ գնաց ի Հրէ՝ ու ի Խորասան :

Է 1877. Նոյ. 24 յԱ. Գրէ . ի Լ. Կոնստանտնուպոլիս Գրիգոր Թանգարան . առ Պարսե-
եան Արժ. Ստեփան վարդապետ :

Թիւ 173 . յԱւետարանէ .

Գրեալ ի լաւ և յընտիր օրինակէ . յԵրեմիա կրօնաւորէ . ի թվ. ՊՂԸ . ի լեառն Սեպուհ . ի հռչակաւոր Անապատն Սուրբ Լուսաւորչին , ի դուռն Սուրբ Աստուածածնին՝ և Սուրբ Կարապետին , և սքանչելագործին Սրբոյն Մինասայ , և Երից Մանկանցն , ի յԱռաջնորդութեան Մատթէոս սրբասէր կրօնաւորի , ի հայրապետութեան Տեառն Գրիգորի ի Վաղարշապատ քաղաքի . և յիշխանութեան Դարանաղեաց գաւառիս Ճաւար բէկի . :

Տե՛ս ի Գեբ. Գորեգէն եպիսկոպոսի Սրահնդեանց Բ. հարսր Թորոս գրոց էջ 423 և 424 :

Թիւ 174 . յԱստուածաշնչէ .

Զվերջին ստացող Աստուածաշնչիս զԿարապետ վարդապետն , և զհայրն զՄկրտիչ քահանայն . . և զՅակոբ վարդապետն իւր . . և զաշակերտսն զՅովաննէս և զՅակոբ և զՍիմէոն և զՄարտիրոս , և զՍիմէոն հայրապետն՝ և զամենայն միաբանք Սուրբ Ուխտիս Ապահունիք կոչեցեալ , զՍարգիս և զԹորոս , զՍողոմոն , զՅովհաննէս , զՊետրոս և զմիւս Յովհաննէս սուրբ քահանայն , և զԳրիգոր տընտեան յիշեալիք ի Քրիստոս . . , Եղեւ գրաւ բանիս ի թվ. Հայոց . ՊՂԸ :

Ի Նոյն Թորոս գրոց էջ 296 :

[1] Թերեւս ի նմին ՊՂԸ ամի պատահեալ մահատարածամու մեռան . զոր յիշէ Ներսէս արեղայն տես զբանս նորին ի 171 թիւ յԱւետարանի :

Թիւ 175 . յԱւետարանէ .

Փառք Անսկզբանն . : Արդ՝ գրեցաւ Սուրբ Աւետարանս յԱստուածապահ կղզիս Աղթամար, ընդ հովանեաւ ամենայաղթ Սուրբ Խաչիս, և Սուրբ Նշանացս . ի հայրապետութեան Տեառն Զաքարիայի, և ի թուականիս Հայոց՝ ՊՂԸ . ձեռամբ Գրիգոր սոսկ անուն և անպիտան քահանայի . . (145 Մաշտոցի գրիչն է) ի դառն և ի վշտաբեր ժամանակիս . . . Յիշեցէք ի Տէր զԹուրվանդայ բարեպաշտուհի տիկինն՝ որ ստացաւ զՍուրբ Աւետարանս՝ և ետ յիշատակ ի դուռն Սալնապատայ վանուց Սուրբ Կարապետի և Սուրբ Աստուածածնի . :

Է 1866. Յունիս 10 է Վ. ան . է Էնն Ստեփանայ[1] :

176 . յԱւետարանէ .

Փառք անսկզբանն . : Ուստի և տեսեալ զսորա փրկագործութեան խորհուրդ . մեղուցեալ գրիչս Թումայ Մեծուփացի . (այլ էր սա ի պատմագրէն) զտկարութիւն մարմնոյս ի բաց ընկեցի, և զօրութեամբ և օգնութեամբ Հոգւոյն Սրբոյ՝ սկսայ և աւարտեցի զՍուրբ Աւետարանս՝ յիշատակ ինձ և ծնողաց իմոց Ղազար մահտասուն և Անբարին հանգուցելոցն ի Քրիստոս : Գրեցաւ ի յերկիրս Քաջրերունի, ի Սուրբ Ուխտս որ կոչի Արջոնից վանք⁽²⁾ . ընդ հովանեաւ Սուրբ Գէորգայ զօրավարիս, և այլ սրբոցն որք աստ կան հաւաքեալ . և ի հայրապետութեան Տեառն Գրիգորի Սուրբ Էջմիածնի՝ և ի թագաւորութեան Ջհանչին որդի Ուսուֆին, որ տիրեաց աշխարհիս Հայոց և Ասորւոց, զի էր խաղաղարար, և հարկապահանջութիւն բուռն էր . . . վասն մեղաց մերոց, և ի թուականութեանս մեր ՊՂԸ . : Դարձեալ մեղուցեալ գրիչս Թումայ և Մինաս եպիսկոպոս, ընծայեցաք զՍուրբ Աւետարանս աստուածահաճոյ և փառաւորեալ Տէր Գրիգոր կաթողիկոսին Սուրբ Էջմիածին⁽³⁾ . որ հանապազ զմեզ ի յիւր սուրբ աղօթքն յիշէ, և

[1] Որ այժմ Սուրբ Գրիգոր յորջորջի ի բնակչաց երկրին՝ ի վանահայրութեան Թադէոս Մ. վարդապետի Վասպուրականցւոյ՝ որ էր ի միաբանութենէն Վմոյ . իսկ այժմ է առաջնորդական տեղապահ ի Վ. ան . և փոխանորդ ի վանս Վարագայ :

[2] Կայ շէն և կանգուն Սուրբ Ուխտս ի մէջ Մայծակ և Ջիւտկեախ գիւղորէից մինչեւ ցայսօր ժամանակի :

[3] Զսորին մի նշանաւոր և պատմական պատճէն կոնդակի տես ի թիւն 150 ի վերոյ :

անմեղադիր լինի, զի խիստ տկար էի աչօքս. որ ոչ զկարգ գըրոյն և զնիրքն տեսանէի. ազաչեմք զձեզ վասն սիրոյն Քրիստոսի՝ որ անտես չառնէք. զի կար մեր այս էր. և զվարպետ վարդան. որ զՍուրբ Աւետարանս կապեաց և կազմեաց յիշեսջիք ի սուրբ յաղօթս ձեր:

† 1866. յԱրեւ Յ Երեւնիքի է Լն է Սուրբ Յովն Երեւնիքի:

.....

1450. — ՊՂԹ.

Տար. — Թագաւորեաց Մահմէտ (Սուլթան տաճկաց) ամս ԼԱ. Արտաէլ պարսպիք էջ 552:

Արշ. — Պօղոս արեղայս կանգնեցի. Սուրբ Սաչս բարեխօս առ Աստուած. ՊՂԹ:

† 1866. է Լնս Արժասպիք:

Թիւ 177. ի կտակագրէ.

Յիւ. — Այս իմ կամաց և հաւատոյ զիր է Դաւթիս՝ որ եհաս ինձ տկարութիւն. և ես յիշեցի զբանն Առաքելոյն՝ թէ կտակ յետ մահուն հաստատ է. և մինչդեռ իմաստութիւնս կատարեալ էր կոչեցի ինն քահանայք և պարոն տանուտրայք, (Իլովայ) և արարի ինձ տիաթիք՝ որ է կտակ. և զոր ունիմ այս է Դ. կամեն ջիրվից. Ժ. կամեն (չափ կշռոյ) պղպեղ. և Ի. սամի քթան. այս ինչացս Ա. ձի Ա. Փուֆէրի Սուրբ Աստուածածնիս՝ Ա. ձի Հաճկատարին⁽¹⁾. Ա. սոմ խոստովանահօրս՝ կէս սոմ աւագ երիցուն՝ Ա. Ա. չարեկ քահանայից և վանօրեացն. իմ կողակից Բաշայ խաթուն և այլ մարդ յետ նարայ (կտակիս) հայ ու չէ չունենայ. ի թուիս ՊՂԹ. վկայ պարոն Նիկօլ ևն:

Տե՛ս է ճանապարհորդութիւն Լեհաստան անան Գրոյ Հ. Մինասոյ Բեթլեհեմ էջ 145:

Թիւ 178. ի ճաշոցէ.

Փառք Ամենասուրբ Երրորդութեան՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն

[1] էր վանք Իլովայ. ի սոյն վանս ձեռնադրեաց յետ ժամանակաց ընդդէմ կամաց բոլոր ժողովրդեան՝ անխոհեմ Մելքիսէթ կաթուղիկոսն զչանարժան Նիկօլն՝ որ եղև ժանտախա Իլովայ թշնամի Հայութեան՝ և հզօր գործիք ի ձեռն ձիղութեաց վասն երկպառակութեան՝ յիշատակն անարժանին նղովիւք եղիցի.

Սրբոյ . Ջոր տեսեալ զայսպիսի Գանձս աստուածային և պայծառ լուսով՝ պատուական և երջանիկ պարոն Ամիրդօլն⁽¹⁾ և ցանկացաւ այսմ աստուածային փարթամ Գանձուցս՝ և ջերմեռանդ սիրով հոգւոյն՝ և մեծ փառաբանութեամբ՝ ստացաւ զսա յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց Հասանին և Թաւրէզ մէլիքին . և եղբարց իւրոց պարոն Թաճգնին՝ պարոն Ապաուլքարամին , պարոն Կարապետին , պարոն Մկրտչին , և քըւերցն Շիրին խաթունին՝ Շատուն , Արմէլիքին , և զամենայն ազգատոհմ նորա զկենդանիս և զհանգուցեալսն . : Ջստացող սուրբ գրոյս՝ զպարոն Դօլն՝ և զկենակիցն իւր զՄլքան խաթունն , և զիւր ծնողքն (կնոջ) զԱստուածատուրն և զՍաղաթ մէլիքն : . Գրչակս զՅովանէս սուտ անուն քահանայ , և զծնողսն իմ զԿարապետ քահանայ և զԹաղայմէլիքն , և զեղբարքն իմ զԱստուածատուր քահանայ , և զամենայն արեան մերձաւորս իմ . . կատարեցի կարողութեամբն Աստուծոյ՝ զսուրբ գիրքս զայս՝ ի թուականիս Հայոց ՊՂԹ : Այլ և գրեցաւ ի քաղաքս Խլաթ⁽²⁾ . ընդ հովանեաւ ԺԱ . խորանայս , և Սուրբ Գէորգ զօրավարին . զի ետ գրել զսա Ամիրդօլն՝ յիշատակ իւրն՝ և ամենայն արեան մերձաւորաց իւրոց : Եւ ետ զսա ի դուռն Սուրբ Յովհաննիսին . ձեռամբ և վկայութեամբ Սարգիս վարդապետին և սրբակրօն կրօնաւորացն Տէր Աստուածատրսն , Տէր Մկրտչին , Տէր Խոսրովին , Տէր Սաեփաննոսին , Տէր Յովանիսին , միւս Տէր Սաեփաննոսին , Տէր Ներսէսին : . զպարոն Ամիրդօլն՝ զպարոն Թաճգնինն . . և զծնողքն իւրեանց զԱմիր Հասանն և զԹաւրէզմէլիքն , և զմեծ պատն զՍուլէմանչէն և զՇարմէլիքն՝ և զհօր եղբայրն իւր զԱմիր Ալին՝ և զորդիքն զՍուլտանչէն , և զՍուլէմանչէն . զՅովաննէս , և զՇահրիարն և զպարոն զԻլալն : .

Է 1881 . 1 Յուլի . 9 ՀԻՒԷԲԷԷ Է ԲԻԷԼԱՊԵՐԴՕԼ

Թիւ 179 . Ունիթուաց ժամագրքէ .

Յամի Տեառն ՌՆԾ . (1450) և ըստ Հայոց ՊՂԹ) վերջի ըստացող բրէվիարիս . (Ժամագրոյս) ես Ֆրայ (եղբայր) Թաղէոս Շահա-

[1] Անուն սորին յիշի ի Կարապետ գրչէ ի թիւն 115 Յայամաւուրի . թերեւս Սրբոյն Յովհաննու Մկրտչի ուխան՝ որ կայ ի Բաղէշ Ամիրդօլ կոչմամբ՝ ի յիշատակ սորին կայ կոչեցեալ :

[2] Է քաղաքս առ ափն ծովուն Աւանայ յարեւմտեան կողմանէ :

պուճեցի(1) . Եկի ի Կաֆայս՝ ի Սուրբ Նիկօլ վանքս , և գնեցի զգիրքըս զայս ի Լատինացւոց , ի հալալ վաստակոց . :

Է 1877. Է Նոյ. 24. Է Լ. անդամ հայրատաղութի ճսի գրասրահն :

. . . ՊՂԹ ամի գրեցաւ ի Թորդանայ վանս , առ դամբարանի Հօրս լուսոյ և Որդւոց և Թոռանց նորա . ձեռամբ մեղսաներկ ոգոյ և անարժան Մարտիրոս եպիսկոպոսի :

Է 1883. Է Մայիս 7. Է Վ. անայ արաւմուկացիացի :

Թիւ 180 . Ի Յայսմաւուրէ .

Աստանօր առացից պատմագրաբար գանցս աղէտից ազգիս քըրիառնէից : Ի Թուականութեան Հայոց . ՊՂԹ . (Ասէ Գաւիթ եպիսկոպոս Խարբերդցի) եղեալ սուլթանն Թաւրիզու Ջիհանշահ անուն , բազում և անթիւ զօրօք Կ. Ս. աւ . (60000) եկեալ էառ զԵզնկայն յազգէն Թուրքմանայ . որ էր ազգաւ Պայընտուր , և կալեալ զիշխանն Եզնկա քաղաքին՝ և Խ. անուանի սմիրայ զհետ նորա , և տարեալ յարեւելս կորուսին : Եւ զԿամիսայ աստուածաշէն երկիրն եւս հասարակ գերեաց իբրեւ անձինս ԺՄ. ընդ այր և ընդ կին , Թող զայն որ մաշեցան : Եւ զՆերքին Դերջանն և զՎերին Դերջանն , զԲարերդ , զԿեղի , զԿոճակն , և զԳայլ գետն , զՇիռեան , զՍատաղ առ հասարակ գերեաց . :

Տե՛ս Է Գեր. Գարեգին եպիսկոպոսի Սրբաձորեանց Թորոս Էրոց Բ. հարոր էջ 380 :

Թիւ 181 . յԱւետարանէ :

. . Եւ գտի ստոյգ և ընտիր օրինակ՝ զոր գրեալն էր Յովանէս Աշէթըցի ի Թորոս փիլիսոփայէ ի Դրազարկն՝ և յուզարկեալ հռչակաւոր ուխտին Առաքելոցն Տարօնոյ . որ կոչի Ղազարու վանք(2) : Եւ իմ առեալ գրեցի . . ձեռօքս ի Թվականիս Հայոց . ՊՂԹ . ի քաղաքս Բաղէշ . ընդ հովանեաւ Սուրբ Սարգսի . :

Է 1887. Է Վ. ան. ար. Արե՛ն վարդապետ Թօնիմիտեան . զոր օրենմեալ եր է Մշա [Սուրբ Մարգիտ եկեղեցին :

[1] Շահապոնս էր ի սահմանս հին Նախշուանայ . որ երբեմն որջացեալ էին անդ անբարիշտ և ազգակործան Հայ Ունիթոսք :

[2] Աստ յիշատակեալ Թորոս փիլիսոփայն էր ի ժամանակս Բ. Լեւոնի արքային մերոյ . և Դրազարկ վանքն էր մինն ի ճոխագոյն վանորէիցն Աիլիկիոյ՝ յորմէ ելին արք գրագէտք՝ յորոց մինն է սոյն Թորոս փիլիսոփայն : Այժմ Դրազարկ ուխտըն անցեալ կայ ի շարս աւերակաց մերս քաղցր հայրենեաց :

Թիւ 182 . յԱւետարանէ .

Փառք Ամենասուրբ Երրորդութեան . : Վասնորոյ ի խնդիր ելեալ լուսափայլ Մարգարտիս , առաքինասէր և բարեմիտ միայնակեացն Կարապետ , և փափաքանօք ետ գրել զՍուրբ Աւետարանս . : Գրեցաւ Սուրբ Աւետարանս՝ ի թուարերութեանս Հայկազեան սեռիս՝ ՊՂԹ . ի վանս Յիպնայ Դաստակ կոչեցելոյ⁽¹⁾ . ընդ հովանեաւ Սուրբ Ստեփաննոս կաթողիկէիս , և վասիլ թագաւորի Սուրբ Նշանիս⁽²⁾ . և Սուրբ վարդապետաց գերեզմանիս⁽³⁾ . որ աստ կան հանգուցեալ : Ի զանութիւն թավրէզ քաղաքին Ջհանշայ խաղաղարար պարոնին . և ի կաթողիկոսութեան Տեառն Գրիգորի Վաղարշապատ քաղաքի՝ Սուրբ Էջմիածնի : Աւարտեցաւ ձեռամբ ամենամեղ գրչի՝ Յովաննէս սուտ կրօնաւորի : Այլ և աղաչեմք զձեզ՝ յիշել ի սուրբ յաղօթս ձեր՝ զմիաբան վանացս՝ զառաքինասէր հայրապետն մեր՝ (Արծկոյ վիճակին) զՏէր Մինաս եպիսկոպոսն⁽⁴⁾ զՅովհաննէս արեղայն , և զՄանուէլ՝ և զԱրսէն , և զՅակոբ քահանայ . որ են ժիր մշակ՝ ի դրունս Սուրբ եկեղեցւոյս . և Աստուած ձեզ ողորմեսցի : .

Ի 1866. Յունի 19 ի վ.ն. ի Սուրբ Նշան առաքինարանիս Էլեղեցին :

1451 . — 2 .

Տար . — Երզնկացի Գրիգոր արեղայն՝ վասն Քրիստոսի Աստուածութեան և վասն ճշմարիտ Հաւատոյս մերոյ՝ հրով ողջակիզեալ նահատակի յամսեան Սեպտեմբերի յԵրզնկայ քաղաքի . որպէս գրի յընդարձակ պատմութեան իւրում :

Ի յեւսեիք Յայտնաւորս :

Եւ 2 . թիւն (Ջհանշահն) զՂլաթայ (Սլաթայ) երկիրն և զԲա-

[1] Ուխտս է ի Բզնունիս մերձ ի Սիփան գիւղն՝ շինեալ ի գրկի Մասիք լերին հզորի . և կայ այժմ աւերակ ի դարաւոր ամաց հետէ :

[2] Յետ աւերման և ամոյրութեան Յիպնայ ուխտին՝ չէ յայտ մեղ թէ զայս Սուրբ Նշանս ո՛ւր արդեօք փոխադրեցին :

[3] Մինն ի սոյն վարդապետացն էր Գրիգոր Ծերենց Սլաթեցի , որ նահատակեցաւ անդ ի Պէրսի ամի ի Ռօժկանայ . . :

[4] Ի թիւն 176 Արջոնից վանից վանական թովմայ արեղայ Մեծփեցի յիշատակէ զայս Մինաս եպիսկոպոսն :

դիշուն արար գերի և գետին . վա՛յ հազար բերան . որ զայս խըղ-
ճերս տեսաք աչօք մերօք ի ժամանակիս մերում :

Յեղանցի Յոհաննէս կրօնաւոր Կարեփէր [1] :

Դաւիթ արեղայ գրէ զմեկնութիւն Մատթէոսի Աւետարանչին
ի Սեւան կղզին :

յԵՂԵՆԻՆ :

Թիւ 183 . ի Յայսմաւուրէ .

Գրեցաւ Յայսմաւուրս . Զ . Թուականութեանս Հայոց . և ի
հայրապետութեան Տէր Գրիգոր կաթողիկոսի , և ի Թագաւորու-
թեան Պարսից Ջիհան շահին , ի դառն ժամանակի և յաւուրս չա-
րութեան⁽²⁾ . . զամենայն աշխարհս ի հիւքմի կացուցանէր . բայց
աւա՛ղ որ զամենայն քրիստոնեայս դառն չարչարէր և անհանգիստ
առնէր հարկապահանջութեամբ կեղեքելով զքրիստոնեայս :

Տե՛ս ի վարդապետացի Տէր Յոհաննէս Կրօնացի Ա . Կար . Կրօն . Ե Լ 37 :

Թիւ 184 . յԱւետարանէ .

Օրհնութիւն գոհութիւն . . . և ես յետինս բանասիրաց , և
տրուպս կարգաւորաց՝ Միքայէլ գրիչս՝ սուտ անուն քահանայ . .
և աւարտեցաք զՍուրբ Աւետարանս՝ ի Թուականութեանս Հայոց .
Զ . ամին . ի քաղաքիս Բզնունեաց Արծկէ կոչեցեալ՝ ընդ հովան-
եաւ Սուրբ Աստուածածնի տաճարիս , և Սրբոյ Ստեփաննոսի կա-
թողիկէի , և (սրբոյն Գրիգորի⁽³⁾) ի հայրապետութեան Տեառն Գը-
րիգորի՝ ընդհանուր Հայոց կաթողիկոսի . : Յիշեցէք զստացող
Սուրբ Աւետարանիս զՎարդան գրակապն⁽⁴⁾ :

Է 1866 . յԱպրէլ 5 . Է վրէժ Սուրբ Յովն Եկեղեցին :

[1] Ինչ այնպէս թուի թէ՛ սոյն Յոհաննէս կրօնաւորն է 182 թիւ Աւետարանի գրիչն :

[2] Ջիհան շահն ասէ անծանօթ գրիչն Յայսմաւուրիս :

[3] 167 թիւ գրեալ յԱւետարանի ի Յոհաննէս գրչէ յիշատակեալ Ստեփաննոսի կաթողիկէն՝ որոյ տեղն անծանօթ մնայր մեզ . այժմ սովաւ յայանեցաւ թէ յԱրծկէ քաղաքն է նոյն ուխտ :

[4] Ի թիւն 176 թովմոյ Մեծօփեցին յիշէ զանուն սոյն Վարդանայ վարպետ յորջորջմամբ :

Թիւ 185 . յԱւետարանէ .

Փառք անեղին . . : Արդ՝ գրեցաւ սա յերկիրս Ջերմաճորոյ⁽¹⁾.
 Ի վանքս Փոքր Ակոռոյ⁽²⁾. Ի յառաջնորդութիւն Սուրբ Ուխտիս
 Դաւիթ կրօնաւորի՝ ձեռամբ անարհեստ և յողնամեղ գրչի՝ Ստեփաննոսի սուտ անուն կրօնաւորի . Ի թուարեութեանս Հայոց Ջ .
 Ի խնդրոյ պատուական և իմաստուն մահդասոյն Պօղոսի . քանզի
 յոյժ փափագանօք ետ գրել զՍուրբ Աւետարանս՝ յիշատակ հոգե-
 ւոյ իւրոյ , և ծնողացն՝ հօրն Ստեփաննոսի՝ որ կատարեցաւ յան . .
 և մօրն Ջուհարին , և եղբարցն թումայ քահանային և Աստուածա-
 ծատրոյն՝ որ սրախողխող եղեւ յան . . և դստեր Գրիգորին՝ Գու-
 հարի , որ քարավէժ եղեւ ի բերդն Ջուայլու⁽³⁾ Արդ՝ գը-
 րեցաւ սա ի հայրապետութեան Ջաքարիա Աղթամարցւոյ , և ի
 թագաւորութեան Ջհանշայ դանին . . ընդ նոսին և զթումայ վար-
 դապետու որդին զՅինենից⁽⁴⁾ ուխտն (գեղապետ) և զեղբարքն ուխտ
 Ջաքարէն և զՄխիթարն , և զՇապուհն յիշեցէք ի Տէր :

Է 1866. յԱրեւ 5 : Է վան . Է Սուրբ Յակոբ եկեղեցին յԱրեւստան Է Բաղ-
 Նուրեմոյ :

1452 . — ՋԱ .

Տար . — Մակուեցի Գրիգոր կաթուղիկոսն Հայոց՝ ի սոյն ՋԱ .
 Թվ . գրէ զկոնդակ մի առ միաբանս Մաղարթայ լերին :
 Եսկի . Բ . հար էլ 289 :

Թիւ 186 . յԱւետարանէ .

Յիշ . — Փառք համագոյ անբաժանելի և միասնական Սուրբ Եր-
 րորդութեան . : Արդ՝ կատարեցաւ Սուրբ Աւետարանս՝ ի քաղաքս
 որ կոչի Վան . ընդ հովանեաւ Սրբուհւոյ Աստուածածնին , և Սուրբ

[1] Է մինն ի գաւառաց Մոկաց աշխարհին :
 [2] Մերձ ի կաղբի գիւղն Շատախ գաւառի՝ կայ Սուրբ Ստեփաննոսի ան-
 ուամբ մի մենաստան մինչեւ ցայսօր . որպէս տեղագրեալ է արժանայիշատակ Գե-
 որգ վարդապետ Տէր Բարսեղեան . թերեւս նախնիք զայն Ակոռոյ վանք կոչէին :
 [3] Յիշէ զայս բերդն թուվմայ վարդապետ պատմիչն Արծրունեայ ի թղթա-
 համարս 81 . 85 . և 314 տես ի նորին տպագրեալն ի տիպ Կ . Պօլսոյ :
 [4] Շէնս կայ կանգուն մերձ ի Սողմանց գիւղն Շատխոյ 9 Հայ երգօք մինչեւ
 ցայսօր ժամանակի :

Վարդան քաջ զօրավարին, և այլ Սուրբ եկեղեցեացս⁽¹⁾. ձեռամբ յոգնամեղ և անարժան սուտ անուն Վարդան երիցու⁽²⁾. Ի թուականութեան Հայոց ՋԱ. Ի հայրապետութեան Տեառն Գրիգորի, և մերոյ ատուակալի Սուրբ ուխտիս Վարագայ՝ հեզահոգի եպիսկոպոսին Տէր Յովանիսի, և Չաքարիա վարդապետի: Յիշեցէք ի Քրիստոս ի սուրբ յաղօթս ձեր՝ զիս զանարժան գծողս զՎարդան. և զիմ ծնողքն՝ զհայրն իմ զՅովանէս քահանայն, և զմայրն իմ Չըմբութ՝ և զեղբայրն իմ և զուսուցիչ զհարապետ քահանայն՝ զնահատակն Քրիստոսի, որ նահատակեցաւ յԱրձէշ քաղաքի⁽³⁾. և այլ եղբարցն իմոց, և իմ որդւոյն Նիկողայոսին՝ որ աշխատեցաւ ի կոկել թղթին⁽⁴⁾. և միւս որդոց Յովանիսին և Գրիգորին. և մեր աղոց մօրն (երիցկնոջն) Դովլաթին և նորին ծնողացն: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՄինաս ծաղկողն. և զՎարդան վարպետ կազմողն: Յիշեցէք ի սուրբ յաղօթս ձեր զՅովանէս (տանուտէրն և զտիկինն նորին) զԱւագուհն՝ որ ստացաւ զՍուրբ Աւետարանս: և

Ի 1881. Յունիս 30. Ի Բաղէշ Ի Սուրբ Գեորգ եկեղեցին:

Թիւ 187 · յԱւետարանէ.

Փառք և գոհութիւն Աստուծոյ: Այլ և գրեցաւ Սուրբ Աւետարանս աստուածախօս՝ ձեռամբ անարժան և ախմար գրչի Վարդանի, յընտիր և ի ստոյգ օրինակէ: Ի մեծ թուականիս Հայոց · ՋԱ. Ի կաթողիկոսութեան Հայոց՝ Աղթամարայ Տեառն Չաքարիայ, ընդ հովանեաւ Սուրբ տաճարին Գէորգայ և Սուրբ Նըշանի: Քանզի ստացաւ զսա պատուական և հաւատարիմ թովմայ և կողակիցն իւր խաթուն Մէլիքն:

Ի 1882. Ի Վան. — Արժ. Յակոբոս վարդապետ Երզնկեան:

Թիւ 188 · յԱւետարանէ.

Փառք եղակի Տէրութեան և Եռահիւսակ Անձնաւորութեան՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Արդ՝ գրեցաւ (Աւետարանս) ի

[1] Բաց ի վերոյ յիշելոցն հինգ եկեղեցի ևւս կան ի քաղաքամիջին Վանոյ:

[2] Էր սա նշանաւոր գրիչ ի նմին ժամանակի՝ որպէս ունիս տեսանել յետ այսորիկ յընթացս սորին շարունակութեան:

[3] Աւ այժմ՝ նահատակութեան տարին մնաց յինէն անձանօթ երանելոյս:

[4] Սա զկնի հօրն իւրոյ քաջ նօտար հանդիսացաւ ի մէջ Աղղին յիւրում ժամանակի:

Թուականիս Հայոց՝ ԶԱ. ի հայրապետութեան վաղարշապատու Տեառն Գրիգորի, և ի զանութեան Զահան շահին՝ որդւոյ (Ղարայ) Ուսուֆին. գրեցաւ ձեռամբ անարուեստ գծողի Գալատի՝ անուամբ միայն արեղայի՝ և ոչ գործով, ի դառն և յանբարի ժամանակի. ի գաւառս (նահանգս) Արարատեան՝ ի ձորս Քեղոյ. ի վանքս Աղջոց⁽¹⁾. Ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և հրաշափառ կաթողիկէիս. և Սուրբ Ստեփաննոս նահատակիս, և Թրի Սուրբ Նըշանիս. և այլ բազմահաւաք սրբոցս որք սատ կան՝ ի խնդրոյ սըրբասէր և հոգելի միայնակեցին Դաւթի. :

† 1865. Փետր. 12. յԵրուսաղիմ ի Սուրբ Երեմիայի եկեղեցի. :

Թիւ 189. ի Նարեկէ .

Փառք Ամենասուրբ Երրորդութեան. : Արդ՝ եղեւ զբաւ գըրչութեան սորա՝ յաստուածապահ կղզիս Աղթամար, ընդ հովանեաւ գմբէթածեւ և երկնանման Սուրբ Խաչի տաճարիս. ԶԱ. Թըւականիս, ի հայրապետութեան Տեառն Զաքարիայի, ձեռամբ Մինասենց Թումայ Արեղայի^(?). :

† 1866. † վ. : :

1458. — ԶԲ.

Տար. — Այս սուղիան Մուհամատս էառ զմայրն մայրաքաղաքաց զմեծ Կոստանդնուպօլիս ի ձեռաց Հոռոմոց (Յունաց) վասըն մեղայ նոցա. և այնուհետեւ կոչեցան աշխարհակալ և ինքնակալ կայսերք և թագաւորք ի թուին, ԶԲ. : Եւ այսպէս բարձին զթագաւորութիւնս և զաւերութիւնս բազում ազգաց և աշխարհաց. այսինքն, զՎրաց. . . և զԱղվանից, և զՄարաց, և զԱսորւոց, և զԱրապացւոց՝ ուստի էր օրինագիրն իւրեանց, և զԵգիպտացւոցն, և զՆուպեացն, և զՀոռոմոց, և զՀոնաց, և զԲուլղարաց, և զՄազքթաց, և զԱփխազաց, և զՄակեդոնացւոց, և զՀիւսիսականաց, և զԹաթարաց, և զսակաւ ինչ զՖռանկաց, և զՊարսից, և ընդարձակեալ զթագաւորութիւն ինքեանք միայն միապետեցին. . . . :

վարդան Վարդապետ Բաղեւնի գործագիր[3]. :

[1] Մինաստանս է ի Գեղարքունի գաւառի՝ Սիւնեաց նահանգի .
 [2] 144. 149 և 152 թուոց գրիչ՝ տարեգիր թովմա բարունն է .
 [3] էր սա վարժապետ Գրիգոր Շղթայակրի՝ և Յովհաննու Կոլտաի հատըն, տիր պատրիարքացն Հայոց. որոյ վախճան լեալ է ի Բաղէշ ի վանս Ամրղօլայ ի թվ. ՌՃԾԳ. և յամի Տեառն 1704. :

Սուրբան Մուհամման էառ զՀաստամբուլ, և զԿաֆայն, և զԱղ-
քըրմանն, և զՏրապիզոն, և զայլ բազում քաղաքս և գաւառս :

Գրե՛ր Կրե Կրե՛ր [1] :

Յովհաննէս եպիսկոպոսն էր հայր ուխտին վարագայ և տե-
սուչ վասպուրական աշխարհին :

Ըստ պատմութեան Յովսէփ եպիսկոպոսի թո՛ղս-դեան :

Թիւ 190 · յԱւետարանէ ·

Յէշ. — Փառք համագոյ անբաժանելի և Միասնական Սուրբ
Երրորդութեան . : Առեալ (զԱւետարանս) բարեպաշտ մուղղասի
Շահբաշէն . : յիշատակ բարի հոգւոյ իւրոյ և ծնողացն՝ հօրն Ամիր-
բէկին, և մօրն Սայմէլիքին, և եղբօրն Թայիփշայ մուղղասուն . և
քուրոջն Շառօղին, և դստերն Դանայ խաթունին . և քեռոյ որդ-
ւոյն Էմնադնին, և Շահրիարին, և կենակցին Ջէտիլիաշին . : Եւ
արդ՝ ես մեղապարտ գծողս վարդան քահանայ . գրեցի զԱւետա-
րանս ի քաղաքս որ կոչի վան . ընդ հովանեաւ Սուրբ Աստուա-
ծածնին, և Սուրբ վարդանայ զօրավարիս, ի թուականութեանս
Հայոց . ՋԲ . ի հայրապետութեան Տեառն Գրիգորի Հայոց կաթու-
ղիկոսի, և մերոյ Սուրբ Ուխտիս վարագայ Տէր Յովանիսի . և ի
թագաւորութեան Ջհանշայի միրզին . : Եւ ինձ մեղապարտ գրչիս
վարդանայ (186 թիւ Աւետարանի գրիչն է) և իմ ծնողացն Յո-
վանէս քահանային և Ջմրութին . և որդւոյն իմոյ Նիկողայոսի՝ որ
աշխատեցաւ ի կոկել թղթին . և միւս որդւոյն Յովանիսին և Գը-
րիգորին . :

է 1882. Յուլի 29. է վան . է Սուրբ վարդան եկեղեցին :

Թիւ 191 · յԱւետարանէ ·

Փառք համագոյ և անբաժանելի Սուրբ Երրորդութեան . :
Արդ՝ այսմ գանձիս ցանկացաւ աստուածասէր կին Մելիք խաթուն
և ետ գրել զսա յիշատակ բարի հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց՝
հօրն Ստեփաննոս քահանային . և մօրն Աղութ խաթունին, և առն
իւրում՝ Ազնաւուրին՝ և որդւոյն Սոչնամին . : Անյիշելիս ի գրչաց
սուտ անուն քահանայ վարդան, (190 թիւ Աւետարանի գրիչն է)

[1] Ըստ այսմ գրեն և Առաքել պատմիչ վարդապետ Թավրիզեցի, Յարութիւն
քահանայ խալֆայեան վանեցի, և մի անձանօթ Տարեգիր :

և զիս զմեղաւոր գծողս (յիշեցէք ի Տէր) և զիմ ծնողքն՝ զհայրն իմ զՅովանէս քահանայն, և զմայրն իմ զԶմրութ՝ և զեղբայրն իմ զԿարապետ քահանայն՝ զուսուցիչն և զերախտաւորն մեր, որ նահատակեցին յԱրճէշ քաղաքի⁽¹⁾. և զայլ եղբարքն իմ, և զորդեակրն իմ զՆիկողայոս սարկաւազն՝ որ աշխատեցաւ ի կսկեւ թղթին:

Է 1882. Յունիս 28 է վ. և. է Տերապոյր եկեղեցին. որ կայ անեւել է հարստութիւնն և հին բերդին:

Թիւ 192 . յԱւետարանէ .

Ի թղթին Հայոց 28 . Աւարտեցաւ Սուրբ Աւետարանս՝ ընդ հովանեաւ Սուրբ Առաքելոցս Եղիազարու վանուցս . ի հայրապետութեան Տեառն Գրիգորի, և յառաջնորդութիւն Սուրբ Ուստիա Տէր Պօղոսի և Տէր Կարապետի⁽²⁾. Ի սովալլուկ տարին՝ որ սոջի պատեալ էր զամենայն մարդ ի մեծէ մինչեւ ի փոքր, որ չէ յիշելոյ զայն:

Աստուծոյ շնորհակալութեամբ . որ օրինակեւել էր է Մայ Սուրբ Յովանէս վանս:



Թիւ 193 . յԱւետարանէ .

Աւարտեցաւ Սուրբ Աւետարանս . . թուականիս Հայոց . 28 . ամին . գաւառիս Քաջրերունոյ ի գեղնաքաղաքն Ականց, որ է հիւսիսոյ կողմանէն Արճիշոյ⁽³⁾ ընդ հովանեաւ Սուրբ Առաքելոյն թաղէոսի . և այլ բազում եկեղեցեացս որ աստ են . ի հայրապետութեան Տէր Գրիգորի, ի թագաւորութեան Ջհանշահ Էմիրզին, որ զբոլոր աշխարհս ձերբակալ ունի ի ձեռին իւրում . Աստուածողորմի ասացէք ստացողի Սուրբ Աւետարանիս վալթին, և ծընողաց նորին Դանիէլին . . և գծողիս Յովսեփայ . :

Տէր է Գեղ. Գարեթին եղիսիոյս Սրբանշրեանց թուս Գրոյ Բ. էջ 365:

[1] Էր սոյն նահատակ Կարապետ քահանայն գեղեցկագիր քարտուղար . և ուսեալ էր զայն արհեստն յոտս թովմայի Մեծօփեցւոյ պատմագրի .

[2] Յանուն սորին տուեալ կոնդակն ի Գրիգոր կաթողիկոսէն տես ի վերոյ ի թիւն 150:

[3] Ի հիւսիսոյին արեւելս անկանի Արճիշոյ զոյգ ժամու չափ հեռաւորութեամբ:

Ի ԶԳ. Թուականին ,
 Ի Յունիս ամսեանն ԻԲ . ին .
 Ո՛վ որ կարգայ ի յաղենին ,
 Նա մեզ ասէ զՔրիստոս որդին . .
 Եւ Աստուած ողորմի իմ վարպետին .
 Առիտակէս բարունապետին ,
 Եւ ինձ անարժան և անպիտան ծառային ,
 Տէր Սիմէոն արք եպիսկոպոսին :
 Տե՛ս է Գեբ. Գարեթէն Եղե՛կոյսի Թորոս Գրոց Ա. հարստ էջ 327 և 328 .

Թիւ 197 . յԱւետարանէ .

Իսկ Հայոց Թվականիս ԶԳ (գրեցաւ Աւետարանս) ի քաղաքիս
 Բաղէշ . ընդ հովանեաւ Սուրբ Սարգսի , և Սուրբ Գէորգայ . և
 Սուրբ Ստեփաննոսի . ի հայրապետութեան Տեառն Գրիգորի . և ի
 հայրապետութեան Աղթամարայ Տեառն Զաքարիայ , և ի կայսե-
 րութեան ազգին նետողաց Ջհանշահ Ամիրին . . Յիշեմք զստա-
 ցող սորա . . և զիս զգրիչս Ստեփաննոս քահանայ . :

Թորոս Գեբ Բ. էջ 445 .

Թիւ 198 . ի կաթուղիկէի Թղթոց Մեկնութենէ .

Փառք Ամենասուրբ Երկոց Գոյութեան . . ամա ցանկացաւ այր
 ոմն կուսակրօն արեղայ . և մաքրամիտ կրօնաւոր Կիրակոս ա-
 նուն . . և ետ գրել . . Իգնատիոսի անարժան արեղայի . : Եւ արդ-
 յանդ եղեալ կատարեցաւ սա ի Թուականութեանս Հայոց . ԶԳ .
 ամին . ի հայրապետութեան Տեառն Տէր Գրիգորի ընդհանուրի
 Հայոց կաթուղիկոսի , և տեղապահի Սրբոյն Գրիգորի մեր Կուսա-
 ւորչի . և մերոյս նահանգի Տեառն Զաքարիայի՝ Աղթամարայ վե-
 րադիտողի , ի գաւառին Քաջբերունի . ի վանս Սուխարայ . որ այ-
 ժըմ Սառաբաստայ վանք վերածայնի⁽¹⁾ . ընդ հովանեաւ հոյակապ՝
 բարձրաշէն , և պայծառաշէն՝ գմբեղարդ՝ և հրաշագեղ Սուրբ
 Տաճարիս⁽²⁾ . որ յանուն Ամենասուրբ Աստուածածնին կառուցեալ
 կայ . յառաջնորդութիւն Սուրբ Ուխտիս՝ առ ոսս երջանիկ և հե-
 ղահոգի վարդապետի՝ ամենագով և հանճարեղ՝ իմաստուն և ար-

[1] Իսկ այժմ յաւուրս մեր Արծուաբեր կոչի :

[2] Յետ Աղթամարայ սա չքնաղ և պայծառագոյն է շինութեամբ ի մեջ վա-
 նորէից երկրին մերոյ Շամիրամակերտին Վանոյ :

դիւնաւոր , կարապետ Քարունապետի⁽¹⁾ : Արդ գրեցաւ սա ի վերոյ ասացեալ Սուրբ Ուխտն , և վասն վրդովման՝ և տատանեալ դառն ժամանակիս , ի յահէ թշնամեաց փախեան երկիրս . և ումանք ամրացան յանառիկ կղզիս՝ Լիմն կոչեցեալ , և և շատք ցըրուեցան յերկիր Ամկու (ի դաւառին Գնունեաց) և վասն ծովացեալ մեղաց մերոց անկան ի ձեռս հեծելի՝ թալանեցան՝ կողոպտեցան՝ շատ ոք սպանան . . . և զանբաւ կոծս և զսուգս՝ և զաղիողորմ շիւան լալոցն՝ ո՛վ կարէ պատմել՝ և կամ ընդ գրով արկանել : Եւ որք որ մտաք ի Լիմն բազում սովով և պանդխտութեամբ տառապեցաք : Եւ աստ գրեցաւ կէս գրոցս և վճարեցաւ . ընդ հովանեաւ սուրբ գեղեցկաշէն և զարդարեալ բարեձեւութեամբ , և բարձրակառոյց շինութեամբ , և հրաշագործ Սուրբ Տաճարիս որ յանուն Սրբոյն Գէորգայ զօրեղ վկային կառուցեալ կայ⁽²⁾ : Յիշեցէք սրտի մտօք զվերասացեալ ստացող լուսազարդ սուրբ գրոցս՝ զկիրակոս հեղահողի արեղայն , և զճնողսն և զեղբարսն իւր՝ որ ստացաւ ի հալալ և ի քրտնաջան վաստակոց իւրոց՝ բարի յիշատակ իւր և իւրոցն ամենայնի : Եւ ընծայեաց վարագայ սուրբ հրաշագործ՝ և Աստուածընկալ Սուրբ Նշանին , ի դրունս եօթնասիւն Լուսոյ⁽³⁾ որ է հրեշտակաբնակ տեղի՝ և աստուածունակ Անասիատ : Որք են անդ հաւաքեալ այժմ բազմութիւն անձանց կրօնաւորաց : Արդ՝ ես կիրակոս արեղայս՝ յերես անկեալ պաղատիմ կողկողագին և յորդարուղիս արտասուօք՝ որք հանդիպիք այսմ աստուածային Բուրաստանիս՝ յիշեցէք առաջի Անմահ Գառին Աստուծոյ , և մեղաց թողութիւն խնդրեցէք ինձ՝ և հարց և եղբարց իմոց : Նաեւ հոգեւոր հարց և եղբարց իմոց Յոհաննէս եպիսկոպոսին (առաջնորդին վարագայ) և Զաքարիա վարդապետին⁽⁴⁾ . Յոհաննէս կրօնաւորին . հերպետ⁽⁵⁾ Հայրապետին , Մել-

[1] Էր սա եղբորորդի Զաքէոսի Աբբ եպիսկոպոսին՝ որ էր առաջնորդ Խառաբաստոյ ուխտին՝ ըստ վկայութեան օրին իսկ կարապետ վարդապետի տես ի թիւն 46. գրեալ յԱւետարանի ի վերոյ յամի ՊԿԵ :

[2] Նորոգեաց զայս տաճարն հոյակապ շինութեամբ՝ առաջին Զաքարիա կաթողիկոսն Սղթամարոյ . ըստ նորին իսկ արձանագրութեան ի թուին 287. 4305 ամի , որ կայ առ իս օրինակ՝ բայց առ այժմ մնաց անտիպ :

[3] Յառաջագոյն եօթն այլ և այլ եկեղեցիք կային ի վարագ :

[4] Յիշէ զայս Հ. Մեքայէլ Չամչեան ի հատոր Գ. ի թղթ. 487 ընդ երեւելի վարդապետացն՝ որք գտան ի Սուրբ Էջմիածին յամի 1441 ի ձեռնագրութեան վերապեցի կիրակոս կաթողիկոսին :

[5] Վերակացու ուխտին , կամ փոխանորդ վանահօր ի վերոյ գործակալաց մենաստանին :

քիսէթ կրօնաւորին, Թաղէոս ճգնաւորին, Ահարոնին, Կարապետին, միւս Կարապետին, Ատովին⁽¹⁾. Դաւթին, Մկրտաչին, միւս Մկրտչին, Գրիգորին, Կարապետին, Մահտաաի Յոհաննէսին Յովանիսին, Սուքիասին, Ստեփաննոսին, և միւս Ստեփաննոսին, և Յակոբ միակեցին: Ձի սօքա ամենեքեան հայրախընամ գթով, և հոգեւոր սիրով զմեզ խրատեալ են՝ վարձահատոյց լիցի սոցա Քրիստոս Աստուած, և փրկէ յամենայն յորոգայթից հոգւոյ և մարմնոյ. և պահեսցէ զոսա Տէր Աստուած բարեւի և սուրբ կենօք յայտ աշխարհիս, և յետ աստեացս ելանելոյ՝ զՏէր Յոհաննէս եպիսկոպոսն՝ ընդ սուրբ հայրապետացն դասեսցէ, և զՋաքարիա վարդապետն՝ ընդ սուրբ վարդապետաց դասակից և պսակակից արասցէ, և զհերպետն հանդերձ միեղէն կրօնաւորօքն իւր սուրբ տեսոյն և լուսոյն արժանի առնէ ծնօղօք հանդերձ ամէն եղիցի և եղիցի: Զանարժան գծողս Իգնատիոս արեղայս ազաչեմ յիշեւ ի Տէր.:

† 1865. † Նոյ. 30. † Վ. Է. † Լէ՛ կղերն. որ է հաւաքաւոր կրօնասրտան անսամբ Սրբոյն Գեորգոյ + մը զօրաւորին:

Թիւ 199. յԱւետարանէ.

Գրեալ ի Թվ. 27. ի վանս Պառաւգրակ⁽²⁾, ընդ հովանեաւ Սուրբ Նշանիս, և Սուրբ Կարապետիս, և Սուրբ Սարգսի զօրավարին. ձեռամբ Կարապետ հայրապետին. (Թերեւս հարպետին ասելոյ փոխան) յիշեցէք զհօր եղբայրն զՈնոփրիոս հայրապետն, և զհամօրէն միաբանութիւն Սուրբ Կարապետին զհնգետասան կրօնաւորան. զծերս, զտղայս, զսարկաւազուէն և սպասաւորքս և զգործաւորքս Անապատիս. (Հալւորի վանուց):

Տե՛ † Գե. Գորեգէն Եպիսկոպոսի Սրբանշրեանց Թորոս քրոյ Բ. էջ 376:

1455. — 27.

Տոր. — Ի Թվ. 27. նոյն Տէր Գրիգոր՝ այլ և եղև կաթուղիկոս Տէր Արիստակէս: (Տես յԱռաքել պատմագրի 429):

[1] Սա յետ ժամանակաց երեւելի հանդիսացեալ է ի մէջ ուխտին Վարազայ ճոխ բնաբնասացութեամբ իւրով ի վանահայրութեան Կարապետ արք եպիսկոպոսի:

[2] Ինձ անծանօթ մնայ տեղին առ այժմ:

Թիւ 200 • Ի Գեղեցկանկար Աւետարանէ .

Յիշ.— Փառք Անսկզբանն և Սկզբան ամենայնի . . սրբասնեալ քահանայն Տէր Սաշատուր , և բարեանունդ մաքրամիտ որդին իւր Տէր Դաւիթ՝ որ նորընծայ էր ի յաստիճան քահանայութեան . ձեռնարկեալ գրեաց զՍուրբ Աւետարանս . որ և ի սոյն ամի (ՁԴ) վերափոխեալ առ Քրիստոս . և եթող զանկողոպտելի Գանձս՝ յիշատակ բարի հոգւոյ իւրոյ , և բարեմիտ ծնողին իւրոյ Սաշատուր քահանային , և Շամամ տիկնոջ . : Եւ արդ՝ ես յետինս ի կարգաւորաց . . Դաւիթ սուտ անուն քահանայ՝ շնորհիւ Տեառն սկսայ , և ողորմութեամբ նորին կատարեցի զտէրունեան Սուրբ Աւետարանս . ի թուականիս Հայոց մեծաց ՁԴ ամին . ի քաղաքիս Արճէշ կոչեցեալ , ընդ հովանեալ Սուրբ Տաճարիս Գէորգեայ զօրավարին , ի հայրապետութեան Տեառն Գրիգորի մեծ Աթոռոյն էջմիածնի : Աստուած ողորմի ասացէք այս մարգարտաշար կտակի՝ Սաշատուր քահանայի , և ծնողաց իւրոց Յոհանիսին և Ոսկւոյն , այլ և հոգեւոր մօրն իւրոյ Սառին . և մեծ պապերուն խաւջայ Մուսեհին և պարոն Ստեփաննոսին՝ և վարպետաց իւրոց Մարգարայ վարդապետին և Էլթանենց Տէր Վարդանին ամէն : Եւ ինձ անարժան գրչի Դաւիթ քահանայի . և ուսուցչին իմոյ Յովանէս քահանայի և մարմնաւոր ծնողաց իմոց՝ հօր իմոյ Սաշատուր քահանայի և մօր իմոյ Շամամին՝ գնացելոյն առ Քրիստոս . : Ես Սաշատուր քահանայ ետու զՍուրբ Աւետարանս՝ յիշատակ հոգւոյ իմոյ ի դուռն Սուրբ Կիրակոսի , ի Բաղէշ քաղաքի . ընդ իշխանութեամբ Մարդանենց Կիրակոս քահանայի⁽¹⁾ . որ հոգւոյ որդի է մեզ , մի ոք իշխեսցէ :

Է 1881. Յունիս 13. Է Բողեւ է Կարգաւոր եկեղեցին .

Թիւ 201 • յԱւետարանէ .

Փառք Անսկզբանն , և Սկզբանն ամենայնի . : Ուստի և տեսեալ սորա՝ անձառ փրկագործութեան խորհուրդ՝ ոմն ի լուսածնեալ զարմից՝ անուն պարոն Ամիրգօլ⁽²⁾ . : Եւ ետ գրել զսա մեծաւ փառագամբ և յօժար կամօք՝ հրամանաւ քաջ բարունոյս

[1] Մարդանենց անուամբ մի գերդաստան եւս սոյժմ ի Վան կայ . չէ՞ կարելի արգեօք , թէ վերոյիշեալ Կիրակոս քահանայի ցեղէն իցեն :

[2] Զանուն սորին յիշատակեալ է մեծաւ գովութեամբ Յոհաննէս քահանայ գրիչ յիւրում ճաշոցի տես ի վերոյ ի թիւն 178 ,

մերոյ Ղազարոյ⁽¹⁾ ի ստոյգ և յընտիր օրինակէ . յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն իւրոց՝ հօրն Ամիր Հասանին և մօրն Թաւրէզ Մեւլիքին , և եղբարցն իւրոց պարոն Թաճղնին՝ պարոն Ապտուլքարամին՝ պարոն Կարապետին , պարոն Մկրտչին՝ և քրւերցն Շիրին խաթունին , Շադուն , Ամիրմեւլիքին , և ամենայն ազգատոհմացն իւրոց . . զԱմիրդօլն և զկողակիցն իւր զՄլքան խաթուն և զժաղկեալ զաւակս իւր՝ զպարոն Գորգն՝ և զդստերքն զԹաւրէզ մեւլիքն և զԳօզալ խաթուն . . : Եւ զանպիտան գրչակս զՊօղոս արեղայ , և զհոգեւոր հայր և զուսուցիչն իմ զՂազար բարունապետն , որ բազում աշխատութեամբ և չարչարանօք սնոյց և հասոյց զմեզ ի կարգս քահանայութեան . որումն վարձահատոյց ամենեցուն Քրիստոս՝ վարձս բարեաց հատուցանէ նմա՝ հարիւրապատիկ աստ և ի հանդերձեալն ամէն : Նաեւ զծնողքն իւր զհայրն զԱստուածատուրն՝ և զմայրն զԱմէնտիկինն . և զեղբարքն զՊօղոս և զԲաղդասարն՝ զհանգուցեալսն ի Քրիստոս . : Եւ զիս (գրիչս) զանհաւասարս ի կարգս կրօնաւորաց . : Նաեւ զմարմնաւոր ծնողքն իմ (գրչին) զհայրն իմ զՄխիթարն , և (զմայրն իմ) զՍիրմայ և զեղբարքն իմ զԿիրակոս և զՄարտիրոս՝ և զՍօճայ Յակոբն . : Արդ՝ գրեցաւ Սուրբ Աւետարանս ի վանքս Բաղիշոյ որ Ամիրդօլ վերածայնի . ընդ հովանեաւ Սուրբ Յովհաննու Կարապետին , և Սուրբ Սիոնի . . . ի թուականութեանս Հայոց :

է 1881 . Յուլ 10 . է Բուլեւ Արտու :

Թիւ 202 . յԱւետարանէ .

Փառք Անսկզբանն և Սկզբան ամենայնի . : Արդ՝ գրեցաւ սա յարքունական երկիրս Մոկաց , ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս , և Սուրբ Գրիգորիս՝ Հայոց Լուսաւորչի . որք աստ կան և մասունք սրբոց վարդանանցն , ի գեղս որ Փասայ վանք կոչի , ձեռամբ անարհեստ գրչի՝ Իսրայէլ սուտ անուն քահանայի⁽²⁾ . ի թուարեւութեանս Հայոց . 27 . ի խնդրոյ պատուական և իմաստուն տանուտրոջն Յովհաննիսի , և բարեսէր քահանային Յովանիսին : . Արդ՝ գրեցաւ սա ի հայրապետութեան Տէր Զաքարիայի Աղթամարցւոյ , և ի թագաւորութեան Ջհանշայ զանին : Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Աստուած (զգրիչն Իսրայէլ քահանայն)

[1] Թերեւս էր սա դէտ վիճակին Բաղիշոյ :

[2] 163 թիւ Աւետարանի գրիչն է տես ի վերոյ կես :

անյիշատակ , և զկողակիցն իւր զՄարթայ , և զորդին իւր զՆոր-
չահն ամէն . .

է 1880. Հ. 7. է վ. 7. է Լ. 4. վ. արտ. Երբայ Նշանին :

Թիւ 203 . յԱւետարանէ .

Գրեալ (յանձանօթ գրչէ) ընդ հովանեաւ Սուրբ Աստուածած-
նի , և նորաչէն Ս. Էջմիածնին , որ (մակ) անուամբ Բաղենից վանք
յորջորջի⁽¹⁾ . ի հայրապետութեան Տեառն Գրիգորի ընդհանուր
Հայոց կաթողիկոսի , և յաթուակալութեան մերոյս ք. վիճակին՝
պարծանք պարծանաց կաթողիկէ եկեղեցւոյ Սուրբ Խաչին Աղ-
թամարայ , Տէր Զաքարիայի Հայոց կաթողիկոսի . ի թագաւո-
րութեան Զհանչահի որդւոյ Ղարայ Ուսուֆի , ի թուականիս մե-
րում . ԶԳ. յորում ժամանակի յոյժ ճշդիւ հարկապահանջութեան
տառապի ազգս Հայոց :

Տե՛ս է Գեբ. Գորեգին Եղիսիպոսի Սրբաձորեանց Բ. հարսը Թարս Կրոց ԵԸ .
387 է 388 .

Թիւ 204 . յԱւետարանէ .

Գրեցաւ Սուրբ Աւետարանս՝ ի թուիս Հայոց ԶԳ . ի գաւա-
ռս Խախուայ և Թորթումայ ի վանս որ կոչի⁽²⁾ . . ընդ հովանեաւ
Սուրբ Աստուածածնին՝ լուսազարդ տաճարին . և . . ձեռամբ ա-
նարհեստ գրչի Աւետիք արեղայի :

է 1887. Օգոստ. 6. Հինգէն-Քէն է վ. 7. ար. Արժ. Արտն Լորդապետ Թօթ-
մախան . դր օրինակեալ եր է Բեբերդ է Սուրբ Հրեշտակոյ եկեղեցին :

Թիւ 205 . յԱւետարանէ .

Փառք . : Գրեցաւ տառս աստուածայինս և տիեզերաքարող
Սուրբ Աւետարանս՝ ձեռամբ անարժան արեղայի Մովսէսի փցուն

[1] Անկանի ուխտս ի գաւառին Գնունեաց մերձ գեղջն Էրերինայ՝ շինեալ ի
սիրտ Խաչկատար լերին յանդիման վանուց Արբոյն Սահակայ Պարթեւի հայրապե-
տին մերոյ . և է այժմ անցեալ գող թէ ութսուն ամաց հետէ ի շարս շաբաթա-
ցեալ վանօրէիցն . . . վասպուրականի , ի ցաւ և ի տրամութիւն եկեղեցասեր
Հայոց :

[2] Եղծեալ . բայց թէութեամբ Ագրգի ասէ Արժ. Արտն վարդապետ Թօթ-
մախան :

և անարհեստ գրչի՝ ի թուականիս Հայոց . ԶԴ. : Ետ օրինակել Տէր Մարտիրոսն ի յիշատակ իւր և ծնողաց իւրոց , Հօրն Մեղքիսէ-դին և մօրն Գուհար խաթունին . : Տէր Մարգարէն որ եղեալ է ի դուռն Սուրբ Ստեփաննոսին ի գեաւղս՝ որ կոչի Նորք⁽¹⁾ . . Արդ՝ եղեւ զրաւ Սուրբ Աւետարանիս ի գաւառիս Բասենոյ՝ ի յերկնա-հանգէտ և ի գերահռչակ Սուրբ Ռւխտ՝ որ կոչի Սպիտակ վանք . ընդ հովանեալ Սուրբ Աստուածածնիս , և կենսատու Սուրբ Նը-շանիս , ի կաթուղիկոսութեան Հայոց Տեառն Գրիգորի , և յեպիս-կոպոսութեան Տէր Յուսկանն , և հայրապետութիւն Մեղքիսէթ-քահանային . . այլ և կրկին աղաչեմ զձեզ մի մեղադրէք մեզ . զի ժամանակն դառն էր և ոչ եղեւ իմ սրտով գիր . զի ի անտեսու-նքն գրեցի ի մէջ միաբանիցն . և այս է միաբանքս՝ Տէր Յոհան-նէս և Բ . Առաքելն , և Կիրակոս՝ և ԺԲ . սարկաւազ և գործա-ւոր . և այնչափ ասել և լսել և կարդալ և պաշտել կայր , որ զա-մենն ոչ կարեմ գրել . : (Անդ այլ գրով թիւ չունէր) : Արդ՝ աղա-չեմ զձեզ . . յիշեալիք ի սուրբ յաղօթս ձեր զպարոն Յակոբ Մելիքս Բասենոյ գաւառիս , որ է հայր որբոց և դատաւոր այրեաց , տայ զհաց քաղցելոց և զջուր ծարաւելոց , և ընու զամենայն պէտս կա-րօտելոց . հոգով հեզ և բարուքն խոնարհ՝ ի դառն ժամանակիս պարգեւեալ ի յԱստուծոյ , իբրեւ զվարդ փթթեալ ի մէջ ձմերայ-նի : Տէր Աստուած պահեսցէ զսա անփորձ և անսասան յերկար ա-մօք բազմաց ժամանակօք՝ և յետ աստեացս ելանելոյ՝ դասակից և պսակակից առնէ սրբոյն Արրահամու հիւրասէր և աղքատասէր ծա-ռային Աստուծոյ . : Յիշեալիք ի սուրբ յաղօթս ձեր զպարոն Յակո-բըս և զհայր իւր զԱրեւ և զմայր իւր զԹամամ խաթուն . : (Դարձ-եալ այլ գրով սա եւս թիւ չունէր) . Ես Ղուբաթս որդի Ղուբա-սարին՝ գնեցի զԱւետարանս և ետի ի գիւղս՝ որ կոչի Բարավարակ . ի դուռն Սուրբ Գէորգայ . :

է 1887. յՕգոստոս 6. է վան . աւ Արժ . Արսէն Լարդապետ Թեմախեան . զոր օրինակեալ էր է Բեբեդ է գիւղն Բարավարակ :

Թիւ 206 . յԱւետարակ .

Փառք . : Արդ՝ յանկ եղեալ Աւետարանս՝ ի թուիս Հայոց . ԶԴ .

[1] Այս վերջի պարբերութեան յիշատակութիւնն ինձ թուի թէ յետոյ է , զի վերագոյն յիշեաց թէ Մարտիրոս քահանայն ստացեալ է զԱւետարան . և այս պակասութիւն զյիշատակարան խնամով չընդօրինակելոյն սակս դիպեալ է . զոր վերիվերոյ օրինակելով հոգ չէ տարեալ Արժ . Արսէն վարդապետ :

ի գաւառիս Քաղբերունոյ, ի քաղաքն որ կոչի Արճէշ՝ ընդ հովանեաւ Սուրբ Գրիգորի :

Է 1887 յօգոստոս 6. Է վ. ան. ար. Արճ. Արճէն վարդապետ Թովմատեան. որ օրինակեալ եր է Մշախոս գիւղէ եկեղեցին :

Թիւ 207. յԱւետարանէ .

Փառք. : Արդ՝ գրեցաւ Սուրբ Աւետարանս ի Թուակահիս Հայոց ԶԴ. ձեռամբ կարապետ անարհեստ գրչի. : Յիշեցէք զհամեստ Դշխուն տիկին՝ որ ստացաւ զՍուրբ Աւետարանս ի հալալ ընչից իւրոց. . և եղ յիշատակ ի գիւղս Ասպաւերակ⁽¹⁾. ի դուռն Սուրբ եկեղեցեացս՝ որ յանուն Ամենափրկչին, և Սրբոյն Ստեփաննոսի, և Սրբոյն Սարգսի գորավարին, և Սրբոյն Յակոբայ. :

1865. Է Սեփարիայ քաղաք. յոգոստոս կարապետ Արճ եղիստոյս է վերեւոյ վիճակաւոր արհեստրի :

Թիւ 208. յԱւետարանէ .

Փառք անսարազիծ էին. : Արդ՝ կատարեցաւ աստուածախօս Աւետարանս՝ ձեռամբ Յոհաննէս (վարդապետ) բանասնդրի (136 Թիւ ճաշոցի և 151 Թիւ Աւետարանի գրիչն է) ի խնդրոյ նորարողքոջ քահանային՝ Տէր Փիլիպպոսի. . ի վանքս՝ որ Գամաղիէլ կոչի. ընդ հովանեաւ Առաքելոյս Գամաղիէլի, և այլ սրբոց՝ որ աստ կան. ի յառաջնորդութիւն վանացս Յոհաննէս վարդապետի, և Դաւիթ եպիսկոպոսի, և այլ կրօնաւորացս՝ Յոհաննէսին՝ և միւս Յոհաննէսին, Մխիթարին և Յովանէսին, և մահգասու Սարգսին, և միւս Սարգսին, Ղազարին, կարապետին, և Յոհաննէսին՝ որ յայսմ ամի առաջնորդ կարգեցաւ վանուցս⁽¹⁾ : Արդ՝ գրեցաւ Սուրբ Աւետարանս ի Թուարերութեանս Հայոց. ԶԴ. ի դառն և ի նեղ ժամանակիս՝ ի զանութիւն ամիրզայ Զիհանչին, և ի մեր քուրդ ամիրիս՝ ամիրզայ Ղասրմիս. զոր Տէր Աստուած անյաղթելի պահեցէ զսա. և քաղցրացուցէ զսիրտ սորա ընդդէմ քրիստոնէիցս ամէն :

Է 1867. Փետր. 23. Է վ. ան. Է Ս. Բ. վարդապետ եկեղեցին :

[1] Ի տեղի հանգուցեալ վանահօրն Յովհաննէս վարդապետի Յիշէ զսոյն հանգուցեալ Յոհաննէս բարուն վանահայր Հ. Մ. Չամչեան, յամի 1414 ՊՂ. որք գրուի իւրեանց հաւան գտան ի կաթողիկոսութիւն կիրակոսի վիրապեցւոյ, տես ի նորին Գ. Հատորոյ էջ 487 :

Թիւ 209 . յԱւետարանէ .

Գրեցաւ Աւետարանս ի Խլաթ քաղաքի ընդ հովանեաւ ԺԱ . Խորանացն , և Գէորգայ զօրավարին . և Խնդրակատար Աստուածածնին , և Սուրբ Վարդանին , 27 թվ . ի հայրապետութեան Տեառն Գրիգորի , էջմիածնի կաթողիկոսի :

է 1878 . յՕգոստ . 6 . է վ . ան . ար . Արեւ . Արեւն շարդապետութեան . զոր օրինակ . եւ և եր Բարեւոյ Փարեանդ գեղի էկեղեցին :

Թիւ 210 . ի Յայսմաւուրէ .

Դաւիթ գրիչ յանձն առի գրել զՍուրբ Գիրքս ի դառն ժամանակիս՝ զոր կանք ի վշտի . . . : Եւ գրեցաւ սա ընդ հովանեաւ Սուրբ Կիրակոսին և Սուրբ Ուղիտային՝ ի քաղաքս Բաղէշ . ի Թուականիս Հայոց . 27 . յիշատակ Սարգիս կրօնաւորին :

է 1887 . յՕգոստ . 6 . է վ . ան . ար . Արեւ . Արեւն շարդապետութեան . զոր գրեցեալ էր ի Մլայ Արատեւոյ վան :

Թիւ 211 . յԱւետարանէ .

Փառք . . Գրեցաւ Սուրբ Աւետարանս , ձեռամբ Յովհաննէս քահանայի՝ ի 27 . ամին . ի հայրապետութեան Տէր Գրիգորի՝ ի յերկիրս Քաջբերունի . ի քաղաքիս Արճէշ կոչեցեալ , ի դուռն Սուրբ Տաճարիս Գէորգեայ . ի Թագաւորութեան Թուրքայ Ջհանշահի . և Քրդայ ամիր Շամշադնի :

է 1887 յՕգոստ . 6 . է վ . ան . ար . Արեւ . Արեւն շարդապետութեան . զոր օրինակ էր ի գրեանց Ղազարոս վանացն՝ որ է Մուշ :

1456 . — 28 .

Տար . — Մատթէոս քահանայ գրէ զՃառընտիր մի ի թվ . 28 . ի վերին Նորովանս :

Մարտիանոս կայ է Մուրթ էջմիածնի :

Արշ . — Յովհաննէս արհի եպիսկոպոս առաջնորդ Սուրբ Ուլիտիս . :

Թիւ 212 . յԱւետարանէ .

Յնշ . — Փառք քեզ եղակի Եռահիւսակ դաւանութեան , Ապէ-

նիազին կատարեալ և անսահմանելի Աստուծոյ Հօր՝ Աստուծոյ Որդւոյ՝ Աստուծոյ Հոգւոյ յաւիտեանս ամէն : Արդ՝ յանկ ելեալ աւարտեցաւ աստուածախօս և աւետարեք Սուրբ Աւետարանս՝ ի թուիս Հայոց . Ձե ի գաւառիս Քաջբերունւոյ՝ որ կոչի Արճէշ, ի գեղս Գայթիս . ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին, և Սուրբ Երրորդութեանն, և Սուրբ Ուռնկարու Սուրբ Նշանին⁽¹⁾ : Ձեռամբ Մինասի մեղսամակարթ գրչի, ի խնդրոյ Ամիրբէկի, որ ըստացաւ զսա :

† 1366. Սեպտ. 8. յԱրճէշ. † Լանս Արճէշ :

Թիւ 213 . յԱրճաթապատ Աւետարանէ .

Փառք . : Արդ՝ գրեցաւ Աւետարանս՝ յերկիրն Կեղոյ՝ ի վանքն որ կոչի Խլպաշի՝ ընդ հովանեաւ Սուրբ Կարապետին, ձեռամբ . . Ոնովրիոս կրօնաւորի . . ի թվ. Հայոց՝ Ձե :

† 1887. † Վ. Վ. Արճ. Արճէշ Լուսինայի Թոմարիտան, զոր օրհնութեալ էր † Գեղեցի գեղ :

Թիւ 214 . յԱւետարանէ .

Փառք Անակղբանն և Սկզբանն ամենայնի : Աստանօր յանդ ելեալ կատարեցաւ Սուրբ Աւետարանս ի քաղաքիս Հաղան կոչեցեալ՝ ձեռամբ անարժան քահանայիս Մկրտչի, ի թուականիս Հայոց՝ Ձե . ի կաթողիկոսութեան Տէր Գրիգորի՝ և ի ղանութեան Ջհանշային :

† 1868. Նոյ. 17. † Վ. Վ. † Թուրքմանի Մարտիրոս աղայեցի Կոստ. † Գեղեցի Հոգոյ Լանից :

Թիւ 215 . յԱւետարանէ .

Փառք Ամենասուրբ Երրորդութեան . : Արդ՝ գրեցաւ Սուրբ Աւետարանս՝ ի թուականիս Հայոց՝ ի քաղաքիս Բաբերդ՝ ընդ հովանեաւ Սուրբ Հրեշտակապետացս . և Սրբոյն Սարգսի զօրավարին, և Սրբոյն Մինասայ . : Եւ ես անարհեստ գրիչս Յովհաննէս . :

† 1873. Սեպտ. 19. † Զգեղեցի Սուրբ Սրբեմնանոս եկեղեցին^[2] :

[1] Այս հոյակապ մենաստան, այժմ կայ անընակ՝ և է ի ձեռս Այտարանցի քրդաց . . . և անկանի յարեւելից կուսէ Արճուաբեր ուխտին և փոքրիկ Հայ գեղջն Սոսկոնայ :

[2] Յաւուրս առաջնորդական տեղապահութեան տեղոյն Եղեցեան Յոհաննէս եպիսկոպոսի, մինչ հանդերձեալ էի գնալ անտի յԱնգղիա ի քաղաքն Մանչեսթըր՝ վասն հոգեւոր տեսչութեան պատուարժան Հայ հասարակութեան :

Թիւ 216 . Ս. Ետարանէ .

Փառք Անսկզբանն . : Այլ և գրեցաւ Սուրբ Աւետարանս՝ ձեռամբ Մկրտիչ քահանայի⁽¹⁾ սուտ անուն և ախմար գրչի և անարժանի . . յընտիր և ի ստոյգ օրինակէ կենօք տառապանօք և բազում պանդխտութեամբ , ի դառն և ի նեղութեան ժամանակի յոյժ յոյժ . . ի թուին Ձե . ի կաթուղիկոսութեան Հայկազեան սեռի Տեառն Գրիգորի՝ Էջմիածնի Սուրբ Աթոռոյն և Տէր Զաքարիայի Աղթամարեցւոյ . և ի թագաւորութեան այլասեռից Ձհանչի , և ի քաղաքի մերոյ պարոնութեանս ամիր Սլէյմանայ . . ի քաղաքիս՝ որ կոչի Սազան⁽²⁾ . ընդ հովանեաւ Սրբուհւոյ Աստուածածնին , և Սրբոյն Սարգսի զօրավարին , և նորաբողբջ Սուրբ Յարութեան Քրիստոսի . . և Սրբոյն Գէորգայ զօրավարին՝ որ է սակաւ մի հեռի ի քաղաքէն . ի վայելումն անձին վարդան կրօնաւորին . :

Է 1865. Սեպտ. 15. Չորեքշաբթի է կրօնայ Անուարտ Սուրբ կորուցեալ . որ է կրօն է ծովան Ուշտանեայ :

Թիւ 217 . Ս. Ետարանէ .

Փառք Անսկզբանն . : Արդ՝ աւարտեցաւ Սուրբ Աւետարանս՝ յարքունական երկիրս Հռչտունեայ , ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս , ի թուականիս Հայոց . Ձե . ձեռամբ Մարգարայ յոգնամեղ գրչի⁽³⁾ . ի խնդրոյ պատուական և հարկեւոր տանուարոջս Ատոմի հիւսան Բերդակեցւոյ , որ ստացաւ ի հալալ ընչից . և ետ Բերդակոյ եկեղեցւոյ Սուրբ Յովնանիսի⁽⁴⁾՝ անջինջ յիշատակ . :

Է 1866. Յունիս. 24. կերտի է Բերդակ . է Սուրբ Յովնանիս եկեղեցին՝ յառաջորդեալն Տէր Մարգարէ տահանայի :

1457 . — 22.

Տար .— Սիմէոն կրօնաւորն գրէ զհնդհանրական գիրք ներսէսի Շնորհալոյն ի Սուրբ Անապատ Դերձկայ :

Էջմիածին :

Ձհանչէն առաւ զՍտարաւ :

Մերտիւ տահանայ յարեգի :

[1] 214 թիւ Աւետարանի գրիչն է :
 [2] Հիզան ներկայիւս զիւր քաղաքի մակդիրն կորուսեալ է :
 [3] 157 թիւ Աւետարանի գրիչն է :
 [4] Այս եկեղեցին և գիւղն կան կանգուն մինչեւ ցայսօր 30 տուն Հայ բընակչօք է Տոսպ գաւառի ի հարաւոյ յարեւելիցն վանոց երկու ժամ հեռաւորութեամբ :

Արդ . — Ես Սայտունս որդի պարոն Աղբաստայ՝ տուի իմ հայրենեաց՝ ի Սուրբ Ուխտս Գանձասարայ⁽¹⁾ . առաջնորդու թեամբ Տէր Եղիային . :

Տե՛ս է Զաւարան Սուրբիս Եղիայայի . Հարսր Ա. ԿԶ 158 :

Թիւ 218 . Սւետարանէ .

Յիշ . — Փառք անպարագիծ էին . : Արդ՝ կաաարեցաւ Սասունաժախօս գանձս . ձեռամբ Ներսէս արեղայի⁽²⁾ . . յաստուածաբնակ յաթոռս Աղթամար . ընդ հովանեաւ Սուրբ Սաշիս . . ի թըլարերու թիւն Հայկազեան տումարի 22

է 1883 . է Յուլի 12 . Հոգւոց Լուս[3] :

Թիւ 219 . ի ճաշոցէ .

Փառք Եռանձնեայ Սուրբ Երրորդութեան . : Աւարտեցաւ քըրիատոսահիմն և առաքելաչէն մարգարէախօս այս կտակ . յամի ինն հարիւրերորդի և վեց երրորդի՝ թուականութեանս Հայկազեան տոհմիս տումարի՝ ձեռամբ անարժան գրչի Յովհաննէս սուտ անուն քահանայի⁽⁴⁾ ի խնդրոյ հեզահոգի և պատուական կրօնաւորի սուրբ և մաքուր արեղայի Մխիթարայ . : զոր և Տիրացու քահանայն Մշոյ յետոյ ի մի գիրս ժողովեաց՝ որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի : Յիշեալիք զստացող աստուածային կտակիս զՄխիթար կրօնաւորն՝ և զբարեպաշտ ծնողսն իւր զՎարդաշահն և զԴաւլաթն . : Այլ և զիս զանարժան և զանպիտան գրիչս Յովհաննէս անուամբ քահանայս և ոչ գործով՝ և զերախտաւոր ուսուցիչն իմ զսուրբ վարդապետն Թումայ մեծ բարունին⁽⁵⁾ : Եւ

[1] Էր սա աթոռ կաթուղիկոսութեան Աղուանից՝ և անկանի ի հիւսիսակողմն Արցախ նահանգին՝ մերձ ի սահմանս Գուգարաց՝ յարեւելից կուսէ ծովուն Սեւանայ . և աեւեաց կաթուղիկոսութիւն Աղուանից՝ մինչեւ ցոկիպն սոյն դարուս՝ և ապա միացաւ ընդ Էջմիածնի յաւուրս Եփրեմ կաթուղիկոսի Երեւանցւոյ .

[2] Սոյն Ներսէս որ եղև յետոյ արհի եպիսկոպոս՝ էր եղբայր Գ. Ստեփաննոս կաթուղիկոսի՝ որ նստաւ զկնի Զաքարիայի , և էր մինն ի նշանաւոր գրչացն Աղթամարայ . :

[3] Որ կայ ի վասպուրական աշխարհի ի գաւառին Անձեւացեաց ի հարաւային յարեւելս շեզեալ Հայոց Զոր գաւառին՝ շինեալ առ ամն գետոյն Տեգրիսայ խրոխտի . ի խորածորս լերանց կորդուաց ի Սրբոյն Բարդուղիմէոսէ Առաքելոյն՝ նախկին Լուսաւորչէն Հայոցս .

[4] 154 թիւ Մեռել Յարոյց մականուամբ Աւետարանի Արճիշեցի երեւելի գըրիչն է :

[5] Մեծօփեցի պատմիչ բարուն է՝ որ վախճանեցաւ ի թվին Հայոց ՊՂԵ . ի վանս Մեծօփայ :

չին. առնէի չորս գումիչ (գումէչ) և չորս եղ, և աջի համբուրից փարէն (դրամն) մեր վանիցն է. ով ոք յանդգնի Սուրբ Առաքելոյ անէծքն ի վերայ նորա եղիցի ամէն: Վկայ Աւետիս եպիսկոպոսն և այլ միաբանք սուրբ վանիցան:

է 1867. Յունուար 26. է վ. ան. է Բելա-դէ-ն[1]:

Թիւ 221. է Մաշտոցէ.

Փառք Ամենասուրբ Երրորդութեան. : Արդ՝ գրեցաւ սա ի թվին Հայոց 22. ձեռամբ Աստուածատուր սարկաւազի, և վարդապետիս իմ Գրիգոր եպիսկոպոսիս. : գրեցաւ Մաշտոցս յերկիրն Կամախայ՝ ի գաւառն Սուրբ Լուսաւորչին՝ ի դրունս Սուրբ Լուսաւորչին. և Սուրբ Կարապետին, և Սուրբ Տիկիինի և Սուրբ Աստուածածնին:

է 1887 յՕգոստոս. 6. է վ. ան. արք. Արեւն Լարդապետ Թօթիսիեան. զոր օրինակեալ էր յԵրզնայ է Սուրբ Կերեմէտ Լան:

1458. — 23.

Տար.— Շարժ եղեւ յԵրզնկան՝ երեսուն երկու հազար մարդիկ մեռան:

Արեւել Լարդապետի պարսնիեան էջ 598:

Գարձեալ 23 թվին՝ շարժ եղեւ յԵրզնկայն և ԼԲ. հազար մարդ մեռաւ, և ոչ այսչափ միայն՝ այլ ԺԶ. անգամ շարժ եղեր յԵրզնկայն՝ քան զայս այլ սաստիկ:

Վարդան Լարդապետ Բաղեշցի պարսիւ: Ըստ այսմ գրեւ Գրեթս Գրեթ Գրեթէր:

Յակոբ կրօնաւորն՝ գրէ զՄայր Մաշտոց մի յԱղթամար կղզին՝ ի հայրապետութեան Տեառն Զաքարիայի:

յԷջմիշին է նոյն Մաշտոցն այժմ:

Արդ.— Կամառն Ամենակալին Աստուծոյ և Փաթշահութեան Զահանշահի, ես Ուլուբէզս որդի Մէջլիսին՝ թոռն մեծի Զալալին. ես Շահանշէս որդի Մէրաբին թոռն Արղութին՝ մեր հայրենեացս. : ես Եղիա եպիսկոպոս առաջնորդ Գանձասարայ վկայ. ես Յօհաննէս կաթողիկոս որդի Զալալին թոռն մեծ Աթաբէկին վկայ(2).

[1] Որ կայ 74 երդ Հայ գերդաստանօք ի հարաւային յարեւմտեան ծայրն Ուշտունեաց գաւառին:

[2] Էր սա ի կաթողիկոսաց երկրին Ազուանից:

եւ Աղբաստի որդի Ջալալին վկայ . եւ Աթարէզս որդի Ջալալին վկայ . եւ Ամիր Հասանս որդի Ջալալին վկայ . եւ Միրզալիս որդի Գուրսուենին վկայ , ո՛վ որ այս սարհատիս դաւի անի Աստուծոյ նահլաթ լինի :

Տէ՛ն է Ջալալեան Սուրէիս եղեւնոստ Սուրբերսեան գրոյ Բ. հար 244 :

Յիշատակ է Սուրբ Խաչս Մխիթար քահանային ի թվ. 25⁽¹⁾ :

Քաջ Զօհրար ի թվ. 25⁽²⁾ :

Գրեալ ի թուին Հայոց , 25 . ի քաղաքն Վան , ընդ հովանեաւ Սուրբ Ստեփաննոս նախավկային և Սրբոյն Սահակայ հայրապետին ի հայրապետութեան Տեառն Գրիգորի , և մերոյ առաջնորդութեան Սուրբ Ուստիս Վարադայ Տէր⁽³⁾ Յովսէփ եպիսկոպոսի և Զաքարիա վարդապետի : Յանկացող . . տառիս կրօնաւորն Մելքիսէդ . . գրիչ . . կարապետ երէց . . ի ստոյգ և յընտիր օրինակէ . զոր գրեալ էր մեծ վարդապետն Սարգիս , որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի :

Պարոն Ջալալն ծնանի զՅովհաննէսն՝ որ եղեւ կաթուղիկոս , և զԱթարէկն և զԱղբաստն :

Ջալալ Բ. էջ 480 :

Թիւ 222 . Լուծմունք Նարեկի :

Փառք Ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Սուրբ Հոգւոյն . : Արդ եւ մեղապարտս ի մանկուենս եկեղեցւոյ՝ նուաստ վարդապետս թովմա ի յերկրէն Քաջբերունեաց ի յուստէ Սուրբ Աստուածածին՝ որ այժմ Մեծոփայ վանք վերածայնի . սրբագրեցի զաղօթամատոյցս յընտիր ընտիր օրինակացն յԱստուածարան վարդապետացն և հոգի ընկալ մերոյ ազգիս թարգմանչացն : Հրամանաւ սուրբ և երջանիկ վարժապետացն մերոց՝ համչիրակ հարազատ հոգեւոր եղբարցն՝ և բաժանեցի յիններրորդ աստիճան

[1] Սոյն յիշատակաբարն կայ ըստ ասութեան Գարեգին եպիսկոպոսի յորմն սեղանի կարմիր վանից Սուրբ կարապետին տես ի Բ. հատոր նորին էջ 115 :

[2] Է համառօտ մի մահարձան . զոր յիշատակէ Սարգիս հանգուցեալ եպիսկոպոս Ջալալեան տես ի նորին Բ. հատոր էջ 119 :

[3] Փոխանակ Յոհաննէս առաջնորդ գրեւոյ , սխալմամբ Յովսէփ գրեալ կամ տպագրեալ են :

զաղօթս հասարակաց դիւրահաս և դիւրագիւտ ամենայն խմատուն մտաց : Եւ թողաք բարի յիշատակ զինուորեալ եկեղեցւոյս մեր Հայաստանեայց ի փառս Անմահ թագաւորին Քրիստոսի, և ի լուսաւորութիւն պայծառութեան հոգեւոր որդոցդ Աստուծոյ գլխոց աշակերտեալ անձանց և քահանայական դասուց միանձանց ամէն : Գրեցաւ սա ԶԷ թուականիս ի լուսազարդ Անապատիս Աստուածածնի Տիրամօր տաճարիս, որ այժմ Խնդրակատար վանս կոչի⁽¹⁾ : Յիշատակ ինձ և ծնողաց իմոց, հօրն իմ Մուրատին և մօրն իմ Մարգարտին և հօր եղբօրն և Տէր Աստուածատուր սրբալոյս քահանային . . Արդ՝ խոչորութեան անմեղադիր լերուք՝ զի կարմեր այս է . և Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն : Վա՛յ, ի դառն և ի նախանձոտ ընկերաց՝ զի բազում աշխատեցաք . և զվարպետն իմ յիշեցէք ի Քրիստոս զԳրիգոր արեղայն :

Է 1884. Մայիս 24. Է կրօնայ իղիկն Է ծովն վանայ :

Թիւ 223 . Ի Գանձարանէ .

Փառք համագոյ Սուրբ Երրորդութեան . . Այլ և գրեցաւ գիրքս ի գեօղս՝ որ կոչի Շատուան⁽²⁾, ընդ հովանեաւ սրբուհւոյ Աստուածածնին, և Սրբոյն Ստեփաննոսի նախավիային, և Սրբոյն Գէորգայ զօրավարին . ի թուականութեանս Հայոց . ԶԷ . ձեռամբ յոգնամեղ Մեղքիսէդ քահանայի . . այլ և ես թումայ կրօնաւորս ստացայ զԳանձարանս զայս . . և ետու նուէր ի դուռն Սրբոյն Յակոբայ (կապուտիողայ ուխտին) և այլ սրբոցն :

Է 1867. Յունիս 17. Է Սուրբ Յակոբայ լան կրօնաւորս զայս՝ որ իայ զմեաւ ընդ շուրջ լինչստեալ լերին Է շայր քահանայն Սրբուհեաց յարեմօրեան իղիկն, Է լանահայրսն Սրբահոմ լարդաղերի Մուկուչայ . որ իայ անդ մինչեւ յայժմ :

Թիւ 224 . Ի ճաշոցէ .

Փառք եղակի Անձառելոյ . . Գծագրեցաւ . . (սուրբ գիրքս) յաստուածապահ քաղաքս Վան . ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և Սուրբ Վարդանայ քաջ զօրավարիս . ի հայրապետութեան Տեառն Գրիգորի, և (Աղթամարայ) Տէր Զաքարիայի, և ի

[1] Ի Բաղէշ քաղաքի կայ ուխտս ի հարաւային յարեմօրեան նորին :
 [2] 12 Հոյ տամբ կայ շէնս ի գաւառին Սրբուհեաց :

Թուարերու թեանս Հայոց . ԶԷ . ի խնդրոյ հեղահողի և քաջ հռետորի Ներսէս վարդապետին : Իսկ ես անյիշելիս ի գըր-
չաց(1) . վարդան սուտ անուն էրէցս :

Է 1866 Յունիս 21 է վ.ն . է Հնս կարգուր Սարբ Աստուածածնի՝ Բազմ-
հայեաց «իբրայի ստորի» է քսի վանահայրաբեան Անանաս Լարդապետի վանեց-
այ արդին է Տէր հանգստեցելն :

Թիւ 225 . Յայամաւուրէ .

Որոց աղօթիւք ողորմի Բրիստոս Աստուած ստացողի գրոցս՝
Տէր Գրիգորին և ծնողաց նորին Սուրբ Լուչին և Այվելիքին . : Նա-
եւ՝ Յովհաննէս գրագրին , և ծնողացն Կարապետ քահանային և
Տիրուհի մէլիքին , և ամուսնոյն Թանսուխին՝ և զաւակին Պաղտա-
սարին՝ որ յայսմ ամի՝ ԶԷ . ի մեծ մահտարածամիս փոխեցան ի
Բրիստոս մայրն որդւոյն , և թողին զմեզ անմխիթար սգով մին-
չեւ ի մահն մեր : Սոյն հատուածս Յունիս Զ . ի վերջն էր : Դարձ-
եալ ի նոյն Յովհաննէս գրչէ յԱպրիլ Բ . ի լուսանցէն : Թվ . ԶԷ .
յԱպրիլ ԻԹ . մեռաւ եղբայրն իմ Իսրայէլն . և մեծ սուգ և տըրտ-
մութիւն հասին մեզ . վա՛յ . հազար բերան՝ թէ յորպի՞սի դառն
ժամանակ հասաք . և եմք տարակուսեալ :

1881 . Փետր . 27 է վ.բադ :

226 . ի Յայամաւուրէ .

Փառք . . : Եւ գրեցաւ սա , ընդ հովանեաւ Տիրամօր Աստ-
ուածածնի՝ և Գէորգայ զօրավարին ի քաղաքս Բաղէշ . ի հայրա-
պետութեան Տէր Գրիգորի . և մերոյս առաջնորդութեան Յովհան-
նէս եպիսկոպոսի , և յամիրութեան քաղաքիս Մելիք Շարաֆին .
և ի զանութեան մելիք Ահանչային . որ յայսմ ամի Հասան Ալի
ամիրդէն (էր սա որդի Ահանչահի) ելաւ ի զընտանէն և էառ զթալ-
րէզ և վասն ծովացեալ մեղաց մերոց եկն յայսմ ամի մահ և կո-
տորեաց զբազումս(2) ի թուականիս մեր ԶԷ :

Է 1887 . յՕգոստ . 6 է վ.ն . — Արժ . Արեւն Լարդապետ Թօնաբեան՝ զըր
օրինակեալ եր Բնն է Հըս — ասան է եկեղեցին :

[1] Մինն ի ծանուցեալ գրչացն վաստուրական աշխարհի՝ որ է գրիչ 155 .
185 . և 189 . թուոց :

[2] Ըստ այսմ պատմէ Յովհաննէս գրիչն ի թիւն 224 մեծ մահտարածամ ա-
նուն տալով նմա :

Թիւ 227 . Յայտնաւորէ .

Օրհնութիւն գոհութիւն՝ բարեբանութիւն՝ գթածին և Ողորմածին և Մարդասիրին Աստուծոյ Հօր՝ Աստուծոյ, Որդւոյն՝ Աստուծոյ Հոգւոյն . : Որ և ես՝ Յովհաննէս՝ տեսի զփափագ և զսէր, զոր ունէր առ հոգեւոր գանձս մեծութեան՝ աստուածասէրն Խօջայ Ասլան, և ըստ իմում ախմարութեան . : Սկիզբըն արարեալ սուրբ տառիս, և կարողութեամբն Աստուծոյ յանկ հանեալ կատարեցի ի թուականիս մերոյ . 2Ը . ամի, ի հայրապետութեան Տեառն Գրիգորի՝ ընդ հանուր Հայոց կաթուղիկոսի՝ Վաղարշաբաթու առ դրան Էջմիածնին . և ի թագաւորութեան թաղթին (Պարսից) Ջհանշայի, ի քաղաքս Բաղէշ . . միր Շարաֆի . . անկեալ աղ . . նկանաց՝ սրբ . (1) ողորմի ասացէք հոգեւոր հօրն Խօջայ Ասլանին, Յովհաննէս սրբասնեալ կրօնաւորին կորուցոյն, վասն զի անմտանալի երախտիք ունի ի վերայ նորա ծնողապէս . : Եւ զիս անախտան գծողս զՅովհաննէս(2) աղաչեմ յիշեւ ի Քրիստոս միով Աստուած ողորմիլ՝ որ բազում աշխատութեամբ, և պանդխտութեամբ յօտարութեանն վշտալի կենօք ի ներքին և յարտաքին թշնամեաց գրեցի զսուրբ տառս : Նաեւ զծնողսն իմ զՅակոբ սրբասնեալ քահանայ և զՍալչուկ խաթուն յիշեցէք ի Քրիստոս և զհարազատ եղբարքն իմ զտարածամ փոխեցեալքն ի Քրիստոս, զԳրիգոր սրբասնեալ կրօնաւորն՝ և զՅօհաննէս և զՆերսէս սարկաւազունքն . : Նաեւ զտիեզերալոյս բարունապետն՝ զԹումայ Մեծոփայ վանաց մեծ վարդապետն՝ որ բազում աշխատանօք ուսուցեալ է մեզ՝ զարուեստ գրչութեանս տացէ նմա Տէր Քրիստոս՝ ընդ սրբոց աստուածաբան վարդապետացն դասաւորիլ և պսակիլ ամէն(3) :

† 1881. Փետրւոր 25. † Վ. Գ. Գ.

[1] Թուղթն փսորեալ էր ի հնութենէն .

[2] 142 թիւ ճաշոցի գրիչն է . անդ թէ զԳրիգոր արեղայն և թէ զՆերսէս գպիրն ի թվ. ՊՂԲ. ամի կենդանի ցուցանէ .

[3] Ի ամին միջոցի բաց ի թովմայ վարդապետ պատմագրէն Մեծոփեցւոյ . որ վախճանեցաւ անդ ի վանս Մեծոփայ ի թվ. ՊՂԷ. ըստ մահարձանին իւրոյ . կայր նաեւ մի վարդապետ եւս թովմայ սնուամբ անդ որ կոչէ զինքն աշակերտ առաջնոյն : Տես նաեւ ի թիւն 221 ի վերոյ :

Թիւ 228. Ի Ծագականկար ճաշոցէ .

Փառք . . Սուրբ Երրորդութեան . : Աւարտեցաւ . . այս կտակ յամի 22. Ի խնդրոյ հեզահոգի և տառապեալ այրի քահանային Խաչատրոյ . ձեռամբ ամենամեղ և անարժան գրչի⁽¹⁾ : Յովհաննէս քահանայի նորին հարազատի⁽²⁾ :

Է 1881, Յունիս 15. Է Բաղեւ . Է Սուրբ Սուրբ Եկեղեցին :

Թիւ 229 . յԱւետարանէ .

Փառք անեղին Աստուծոյ՝ Յիսուսի Քրիստոսի , և Սուրբ Հոգւոյն ամէն : Արդ՝ գրեցաւ սա ի գեաւղս՝ որ կոչի Սրկղունս⁽³⁾ . ընդ հովանեաւ Սուրբ Գէորգիս և Սուրբ Յակոբիս , ձեռամբ սուտ անուն Դաւիթ իրիցի . և առ ոտս երջանիկ և սրբասէր Տէր Երեմիա արեղիս . . Ի թուարերութեանս Հայոց . 22. եղև զրաւ սորա ի զանութեան 22անչին :

Է 1866 : Փետր. 22. Է վ. ան . Է Հայկազնիս Է Սուրբ Աստուծոյն Եկեղեցին :

Թիւ 230 . յԱւետարանէ .

Օրհնութիւն գոհութիւն . : Եւ ես անպիտանս յամենայնի՝ մեղուցեալ գրիչս Յովհաննէս⁽¹⁾ : գրեցի զՍուրբ Աւետարանս ի քաղաքս Արծկէ . ընդ հովանեաւ ամենամաքուր Սուրբ Աստուածածնի տաճարիս , և Սուրբ Ստեփաննոսի նախավկայիս , և ամենազօր Սուրբ Նշանիս Պատերազմի⁽⁵⁾ . Ի հայրապետութեան Տեառն

[1] Խիստ արժանաւոր և սքանչելի ծագականկար գրչի :

[2] Էր սա որդի Խաչատուր քահանային :

[3] Սրկղունս գիւղն անկանի ի վայոց Ձոր գաւառի Սիւնեաց՝ մերձ ի Յախաբարոյ ուխտն , և էր նոյն շէն կալուած մեծի իշխանին Պաօշայ և զարմից նորին , ըստ յետագոյ արձանագրին : «Կամաւն Աստուծոյ ես Եւզի որդի Հասանայ «Թոռն Պաօշայ , միաբանեցայ Սուրբ ուխտիս Յախաբարոյ , և ետու յիմ հայրենեաց ի Սրկղունիս զմեր ձեռատունկ այգին նորակերտ իւր ջրով , ևն .» Տէ՛ս Է Զուլուլեանի Բ. հատոր , ստորագրութեան հարկն էջ 162 : Ի սոյն 3 ծանօթութեան յի. շատակեալ Հասան իշխանն վախճանեալ է ի Զխ. 1291 ամի Տես ի Թիւն 74. Ի կարգըս մեր անտիպ Յիշատակարանաց :

[4] 165 Թիւ Աւետարանի գրիչն է :

[5] Թերեւս Սքանչելագործ Սուրբ Նշան ակնարկէ՝ որ կոյ այժմ ի վանս Արծկոյ՝ և կոչի նոյն Սուրբ Ուխտն յանուն Սքանչելագործ Սուրբ Նշանին ի բը նակչաց երկրին Սքանչելագործ :

Գրիգորի՝ ընդ հանուր Հայոց կաթողիկոսի . իսկ ի յաշխարհա-
կալութեան Ջհանշայի՝ որդւոյ Ղարայ Ուսուֆի՝ ի թուականիս մե-
րում. ՋԸ ամիս . և զիս զանարժան գրիչս (Յոհաննէս քահանայ) և
զճնողսն իմ Յակոբ սրբասնեալ քահանայ և զՍալչուկ խաթունն . :
այլ և զտիեզերալոյս ըստուհապետն՝ զԹումայ Մեծոփայ վանաց(1) .
Յիշեցէք ի Քրիստոս , որ բազում աշխատանօք ուսուցեալ է մեզ
զարուեստ գրչութեան(2) . : Աստուած ողորմի ասացէք թուրվանդայ
խաթունին՝ Բաղիշեցի խոճայ Փահրատի մօրն՝ որ ետ զսկիհս ի
Սուրբ Աստուածածնի տաճարս Արծկէ քաղաքիս . :

Է 1869 . է Նոյ . 23 է Մանասղաւերս իմ Մանչիերս՝ երբեմն հոյակապ տապա-
փէն է Հայս . իսկ ներկայս լցեալ բազմալոյս տերախօտ . է Սուրբ Սուրբիս կամարա-
կապ եկեղեցին . յաւագ տահանայսնեան որդւոյն Մերտեանց Տեր Գրեգորէ որ-
դէ՝ Տեր Մարտիրոս ձերանաչարդ տահանայի՝ փնչ է վանայ երկայի է Կ . Պօլիս .
ընդ կաթողիկոսի տահանայի իւրայելի և ընդ թեւալեան պարսն Գիսրֆայ և այլ ըն-
կերաց իմս .

Թիւ 230 . ի Մաղիկ Աւետարանէ

Գրեցաւ Մաղիկ Աւետարանս ձեռամբ Հայրապետ արեղայի
յԱղթամար . ի թվ . ՋԸ . ի դառն և ի նեղ ժամանակի՝ որ երկիր
ամենայն երերեալ կայ :

Է 1887 . է վան . աւ Արշ . Արեւն Վարդապետ թօխմախեան զոր օրինակեալ եր
է Մայ Սուրբ Սուրբիս եկեղեցին

Թիւ 231 . Ճաշոցէ .

Փառք և պատիւ . . արդ՝ ցանկացող եղեւ . . Սուրբ գրոցս ի-
մաստուն և աստուածասէր՝ բարեպաշտ տանուտէրն խօջայ Արդը-
լազիզն՝ որ ի քաղաքիս Ոստան(3) . և վերստին ստացաւ զսա ի հա-
լալ վաստակոց իւրոց . յիշատակ հոգւոյ իւրոյ և ճնողացն իւր ,

[1] Թումայ պատմագիր վարդապետն ակնարկէ՝ որ էր հայր ուխտին Մեծո-
փայ՝ որ կայ յերկրին Քաջբերունեաց .

[2] Որպէս զայս յիշատակարանիս գրիչ Տեր Յովհաննէս՝ որդի Յակոբ քահա-
նայի Արծկեցի . նոյնպէս Յոհաննէս քահանայ Արճիշեցի՝ որդի Մանկասարայ ի
Թիւն 154 Մեռել յարոյց Աւետարանի , և ի Թիւն 219 Ճաշոցի՝ զԹումայ Մեծո-
փեցի ըստուհապետն ինքեանց վարժապետ կոչեն և ուսուցիչ . ահա՛ սոքօք յայտ-
նի երեւի թէ՛ Մեծոփեցին էր մինն յարդիւնաւոր վարդապետաց Հայոց ի նմին
ժամանակի :

[3] Էր սոյն քաղաքն ի գաւառին Ռշտունեաց առ ընթեր Աւասոսայ պարթեւ
լերին հղօրի . իսկ ներկայս չիք ի միջի քաղաք՝ այլ միայն մի քանի տունք կան
որք բնակին ի խեշերանս՝ աւերակաց նորին :

հօրն պարոն Զաքարուն՝ և մօրն Շնահվոր խաթունին, և եղբար-
ցըն խօջայ Սքանտարին և ուսթայ Աբղուլին⁽¹⁾. և լի բերանով
Աստուած ողորմի ասացէք Աբղլազիզին՝ որ եկեղեցի շինեաց, և
բազում արդիւնս արար սուրբ եկեղեցեաց. և է սա ողորմած և ա-
ռատաձեռն աղքատաց և կարգաւորաց, որ և ազատեաց զսուրբ
գիրքս. . . : Եւ դարձեալ ծանուցանեմք ձեզ՝ զաւեր աշխարհիս մե-
րոյ, որ վասն մեր մեղաց հաս⁽²⁾. . . Մակու, և յազդմանէ չարին,
և վասն ծովացեալ մեղաց մերոց արձակեցաւ ի յերկաթոյն, և բա-
զում աւեր արար քաղաքաց և զինչ բռնած (բանտարկեալ) կայր
հօրն ազատեաց⁽³⁾ զՂլիճ Ասլանն⁽⁴⁾. և զորդին իւր, զԱրապչէն և
զորդին նորա, և ժողովեաց առ ինքն, և արար իւր բազում հե-
ծելս, և յետոյ առաքեաց զՂլիճ Ասլանն ի վերայ Վանայ բեր-
դին զի առցէ զնա՝ և ոչ կարաց. և ապա խորհուրդ չար արար
վասն երկրիս մերոյ՝ և արար շատ աւեր և թա. (լան) և գնաց ա-
մօթով ի յետս՝ և մնաց երկիրս աւերեալ. բայց մնաց փոքր ի շա-
տէ երկիրն Գաւաշից (Ռշտունեաց) ի դատարանք: (ի հանգիստ
վիճակի). . . և մնաց ի խաղաղութեան Աղթամար. զօրու-
թեամբ Սուրբ Սաշին, և արիութեամբ Տէր Զաքարիա կաթուղի-
կոսին⁽⁵⁾: Ի սմին աւուրս գնաց (Տէր Զաքարիա կաթուղիկոսն)
մնչիւք (մինչեւ) մօտ մրգայ Ջհանչէն⁽⁶⁾ զաւերումն աշխարհիս. և
ելեալ (Ջհանչահն) ի քաղաքէն Սոյու⁽⁷⁾ բազում զօրօք, և եկեալ
վրէժխնդիր վասն աւերման աշխարհիս, և վասն տառապեալ ազ-
գիս քրիստոնէից՝ (Հայոց) զոր յուսամք՝ որ զմրգայ Ջհանչէն ընդ
երկայն աւուրս արասցէ. զի թէ չէր եկեալ՝ ազգս քրիստոնէից
կորուսեալ էր. . . Եւ այս եղել ի թուականիս Հայոց ԶԸ. և բե-
րաւ գիրքս ի քաղաքիս Ոստան. . . (և ստացաւ խօջայ Աբղլազիզն)

[1] Ի սմին ժամանակի Հայք թուի թէ՛ անխտիր գործածեալ են զանուանս
խորդս և օտարս՝ որպէս տեսանի ի վերոյ:

[2] Կէտ եդեալ տեղիս մկունք զթուղթն վաստեալ էին երեք տողի չափ:

[3] Ի թիւն 226 անծանօթ գրիչ միոյ Յայսմաւուրի յիշէ զայս Հասան Ալին՝
որ էր որդի Ջհանչահի:

[4] Յիշէ զայս Ղլիճ Ասլանն իշխողն Վանայ՝ Մինասենց թովմայ վարդապետ
տարեգիրն ի թիւն 144 և 149:

[5] Յիշատակ մեծագգի և անձնանուէր հայրապետիս՝ օրհնութեամբ եղիցի
գարուց ի դարս. և զարիական ձիրս քաջագործութեան սորին շնորհեացէ Տէր
Աստուած յաջորդաց նորին ի միթարութիւն և ի պաշտպանութիւն անտերունջ
ազգիս:

[6] Որ նստէր ի թաւրէղ, և պատմեաց նմա:

[7] Որ է ի Հեր և ի Զարեւանդ գաւառի:

... և ետուր ի դուռն Սուրբ Ստեփաննոսի Նախավկային . . (Ոստանայ) Աստուած ողորմի ասացէք խոջայ Արդւազիզին . . ընդ նոսին (յիշեցէք) և զիս՝ զանպիտանս յամենայնի զմեղսաթաւալ կարապետ գրիչս . .

Է 1857. Յունի 15. կերտի է վան է Գառնի Ուղտանեայ է գիւղն Բելա :

1460 . — 2Թ .

Տար . — Զաքարիա գրիչ գրէ զԱւետարան մի ի մենաստան Հերմոնի . ի թագաւորութեան Ջհանշահի . և ի հայրապետութեան Հայոց Տեառն Գրիգորի :

Ելեմի :

Թիւ 232 . յԱւետարանէ .

Յիշ . — Փառք անձառելի և անսկիզբն բանին Աստուծոյ . . որում ցանկացող եղև աստուածասէր այրն Ստեփաննոս . . որ ստացաւ . . զՍուրբ Աւետարանս : Եւ ետ զսա ի գեղաքաղաքն Գառնի , ի դուռն Սուրբ Կաթուղիկէ եկեղեցւոյ , անջինջ յիշատակ իւրն և ամենայն արեան առու մերձաւորացն . : Արդ՝ գրեցաւ Սուրբ Աւետարանս՝ ի թուականութեանս Հայոց 2Թ . ի հայրապետութեան Տեառն Տէր Գրիգորի , ի յաթոռն Սուրբ Էջմիածնի : Եւ ի զանութեան Ջահանշահի որդոյ Ուսուֆի . որ գնաց ի հրէ (ՋԲ. ամի) երկու հարիւր հազար հեծելով . և եօթն տարի անդ կացեալ՝ և ի դուրս եկեալ բազում աւարաւ . գրեալ ձեռամբ յոգնամեղ և անարհեստ գրչի Վարդան արեղայի . այլ խաբերայ և ոչ արեղայ՝ ի դառն և ի նեղութեան ժամանակի՝ որ երերուն և տատանեալ ազգս Հայոց (կայ) ի ձեռն . . յանիրաւ պահանջողաց : Ի վանքս Աղջոց⁽¹⁾ ընդ հովանեաւ Սուրբ Ստեփաննոս նահատակիս , և հրաշափառ Սուրբ Կաթուղիկէ եղկեցւոյս , և Սուրբ Աստուածածնիս և ամենայն սրբոցս՝ որ աստ հաւաքեալ կան :

Է 1879. է Մայիս 14. է Բաբերդ եկեղեցւոյ գրեմն : Յառաջ աստուածորդս .

Բեան Տեր Գրեգոր եղեմիստի կ . Ուլտեցւոյ . ուր հիւր լեալ ետ նմա ընդ Արժ .

Վահան Վարդապետի Տեր Մեմուտան Պարտեղեցւոյ :

[1] Անկանի ուխտս ի հիւսիսային յարեւելս Գառնւոյ աւանին և կոչի այժմ Գեղարգոյ վանք :

Թիւ 233 . Սւետարանէ .

Փառք Ամենասուրբ Երրորդութեան . : Եւ արդ՝ գրեցաւ սա
ի քաղաքս Արծկէ . ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի տաճա-
րին . և Նախավկայ Սուրբ Ստեփաննոսի , և Գէորգայ զօրավարին
ձեռամբ յողնամեղ գրչի՝ Միքայէլ սուտ անուն քահանայի⁽¹⁾ ի
Թուականութեանս Հայոց 2թ . ի հայրապետութեան Տեառն Գը-
րիգորի . և յառաջնորդութեան Սուրբ Ուխտիս Սքանչելագործի՝
Մինաս արհի եպիսկոպոսի⁽²⁾ . Եւ արդ՝ ես ամենամեղ Ստեփաննոս
(միայնակեացս) ետու գծագրել զՍուրբ Աւետարանս ի խոնջացեալ
քրտանց , և ի հալալ արդեանց իմոց , և ետու զսա ընծայ և նը-
ւէր՝ Հաւատաւորի Անապատի Սուրբ Գէորգայ երկնանման տա-
ճարիս⁽³⁾ . ի յառաջնորդութիւն Սուրբ Ուխտիս Մարուգէ ճգնա-
ւորին . որ շատ չարչարեցաւ , և շինեաց զՍուրբ Ուխտս ի կոր-
դէ . (ի քարուկրէ) և զՍուրբ Գէորգ զօրավարս . տացէ Տէր Աստ-
ուած զանձեռագործ խորանն և զերկնից արքայութիւն իւր՝ և
ծնողաց իւրոց . և Ստեփաննոս միակեցին՝ որ ստացողն է Սուրբ
Աւետարանիս ամէն : Եւ ես Ստեփաննոս ետու զՍուրբ Աւետարա-
նս Հաւատաւորի վանաց՝ դրան Սուրբ Գէորգայ զօրավարին՝ ի
հայրապետութեան՝ Տէր Զաքարիայի՝ որ յայսմ (2թ) ամի՝ տիրեաց
էջմիածնին՝ և Լուսաւորչի Սուրբ Աջոյն . :

† 1867. Փետր. 24. Ուրբ. † վան † Սուրբ վարդ. եկեղեցի .

Թիւ 234 . Սւետարանէ .

Փառք Հօր Անծնին . : Եւ արդ՝ ես յետինս ի գրչաց՝ սուտ ա-
նուն կրօնաւոր Ներսէս խարեղայ . . կատարեցի զսա՝ մեղստմած
մատամբս յԱստուածաբնակ յաթոռս Աղթամար , ընդ հովանեաւ
ամենայաղթ Սուրբ Խաչիս , և Սուրբ Աջերոյս , ի հայրապետու-
թեան Տեառն Զաքարիայի , ի Թուականիս Հայոց . 2թ . . կենօք տա-
ռապանօք և բազում տրտմութեամբ , ի դառն և ի վշտալից ժա-

[1] 184 թիւ Աւետարանի գրիչն է :

[2] Ի թիւն 176 Թումայ կրօնաւորն Մեծոփեցի , և ի թիւն 182 Յոհաննէս կրօնաւորն յիշատակեն զսոյն Մինաս արհին՝ որ էր վիճակաւոր տեսուչ երկրին Բզնունեաց :

[3] Ինձ յոյժ հաւանական երեւի՝ թէ սոյն Սուրբ Գէորգ ուխտն է նա՝ որ այժմ կոչի Արջունից վանք՝ և յիշատակէ զսա Թումայ կրօնաւոր գրիչ Մեծոփեցի ի թիւն 176 :

մանակիս . . . : Յիշեցէք զՏէր Հէրապետ քահանայն . . որ կամակից եղան Սուրբ Աւետարանիս՝ տալ ընծայ ի դուռն Սուրբ Վարդանայ⁽¹⁾, ձեռամբ Ստեփաննոս եպիսկոպոսին, և Թումայ եպիսկոպոսին, և Կարապետ վարդապետին, և Թադէոս Հէրպետին, և Ստեփաննոս արեղային, ու էս Մուղղլին, և Թումային . . Յիշեցէք զստացող սորին զբարեպաշտ Թումայն . :

Է 1866. Նոյ. 7. յԱղեւսոյ :

1461. — 2թ.

Տար . — Գրի մի Աւետարան յանձանօթ գրչէ ի Թվ 2թ. ի Մեղիտինոյ վանք՝ ի Սուրբ Լուսաւորիչ :

Եկէ 340. Բ. Թորոս Աղեւս :

Մկրտիչ քահանայ գրէ զՅայտաւուր մի ի Հիզան ի Թվ. 2թ. : Եկէ Գեղեցիկ :

Զաքարիա կաթուղիկոսն Աղթամարայ նստի Էջմիածին եւս կաթուղիկոս :

Շահե. Ա. 211 :

Նոյն Տէր Գրիգոր և նոյն Տէր Արիստակէս, այլ և եղեւ կաթուղիկոս Տէր Զաքարիայ :

Արտեւ. պատմութիւն 421 :

Այս Տէր Զաքարիայս՝ նախ կաթուղիկոս էր Աղթամարայ, և 2թ Թուին յորժամ եկն Ջահանշահ փաթշահն ի Թավրէզ. սա բազում ընծայիւք գնաց ընդ առաջ փաթշահին ի Թավրէզ. և փաթշահն ետ սմա պարգեւս զկաթուղիկոսութիւն Սրբոյ Էջմիածնի՝ և զԱջ Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին. այլ և ընդ նմին զՍաչալամն և զՈւրարն : Վասնորոյ Զաքարիա կաթուղիկոսն ընդ իւր ունելով զԱջն եկեալ ի Սուրբ Էջմիածինն՝ նստաւ կաթուղիկոս Էջմիածնի :

Արտեւ. պատմութիւն 422 :

[1] Սուրբ Վարդան անուամբ ի վիճակին Աղթամարայ զոյգ վանորայք կան . մինն ի մէջ Ռշտունեաց Ապողովանք կոչեցեալ՝ ի սահմանակցութեան Նարեկայ ուխտին՝ և Փշաւանք և Տրշոյ գիւղորէիցն : Իսկ միւսն կայ յաշխարհին Մոկաց . շինեալ ընդ շքով հզոր լերին Աւնոսայ : Արդ վերոյիշեալ միաբանք սոյն երկոքին վանորէից յորոյ պատկանէին չէ ինձ յայտ առ այժմ :

Չաքարիա կաթուղիկոսն Աղթամարու գնաց ի Դաւրէժ ի տե-
սութիւն Ջհանչահ թագաւորին՝ յոյժ սիրեցեալ ի նմանէ՝ ընկալ-
նու զկաթուղիկոսութիւն Էջմիածնի՝ ընդ նմին և պարգեւ զԱջ
Սուրբ Լուսաւորչին . զՍաչաւառն և զՈւրարն՝ և գայ յԷջմիածին :
Էջ 8. Է Զմիտ Ժորեան Սեփեան Խմբագրուի Երեւանցոյ :

Ար) .— Սուրբ նշանքն (ի Լուսաւորչիչ աւագ եկեղեցին նոր Նա-
խիջեւան քաղաքի) . բարեխօս է Սիմէօն քահանային , և երիցակը-
նոջն իւր Մեկիքին . և իւրեանց ծոնդացն . թուին ԶԺ . ձեռամբ
Աւետիք արեղային :

Զուլեան Սարգիս Եղեղուպոսի Բ. հար. էջ. 466 .

Թիւ 235 . յարժաթապատ Աւետարանէ .

Փառք քեզ անսահման Անուն և անզուգական Անձնաւորու-
թիւն՝ Հայր և Որդի և Սուրբ Հոգի : Որ ետուր կարողութիւն
մեղսամակարդ գծողի՝ Վարդանի բանի խնդրողի հասանել յաւար-
տըս՝ այսմ աստուածախօս տառի : Որ շարադրեցաւ ի խնդրոյ աստ-
ուածասէր և երկիւղած Սիոն միակեցին : . Եւ ես յողնամեղս և
փցունս ի գրչաց Վարդան արեղայ⁽¹⁾ կատարեցի ըստ իմում կարի
զխնդիր սորա . շնորհօք և ողորմութեամբն Աստուծոյ . ի թուա-
կանիս Հայոց . ԶԺ . ամի՝ յամսեանն Մահեկի : Արդ՝ եղեւ սկիզբն
սորա՝ ի վանքս որ կոչի Կողուց , ընդ հովանեաւ Սուրբ Լուսաւոր-
չի՝ և կարմիր Ակն Սուրբ նշանի . որոց խնամօքն աւարտեցի : , Յի-
շատակ բարի իւրն (Սիոն Միակեցին) և ծնողաց իւրոց Բուրդեայ-
չին՝ Ծնուխւորին . . գրչիս Վարդանի . և իմ ծնողացն Ստեփաննո-
սի և Մեկիքի . , արեղայն զՍարգիս կոկող քարտիս յիշեցէք ի յա-
ղօթս ձեր : ի ժամանակս որ զԱջն (Լուսաւորչին) ի Սսոյ՝ բերին
ի Էջմիածինն . ի հայրապետութիւն Տէր Գրիգորի . ի թագաւո-
րութիւն Ջհանչի

Է 1881 . Յունիս . 26 . Է Բողեւ . Է Կարճուի Էկեղեցոյ :

Թիւ 236 . հատուած ի 178 թիւ Ճաշոցէ .

Ես Պօղոս վարդապետ ծառայ Աստուծոյ՝ և աշակերտ Ղազար
վարդապետին⁽²⁾ վկայութեամբն Աստուծոյ և Սուրբ Յովանիսին ,

[1] 232 թիւ Աւետարանի գրիչն եւս Վարդան արեղայ կոչէ զինքն .
[2] Թեքեւս էր նա նահատակ Ղազար վարդապետն . զոր յիշէ Թովմայ վար-
դապետ Մեծոփեցի պատմագիրն :

և արհի եպիսկոպոսին Բաղիշու Տէր Յովանիսին⁽¹⁾ և Մկրտիչ վարդապետին՝ Արծկոյ Աքանչեւագործին, և խօջայ Կարապետին, և Մկրտիչ վանից հօրն, (Ամիրդօլ ուխտին) և Յովանէս եկեղեցրանին վկայութեամբ՝ և Գրիգոր արեղային, և խօջայ ամիր Եսայուն, և իմ աղբօր Աղուսչային: Ես Պօղոս վարդապետս և Յովանէս արեղայն գնացաք ի ժողովք՝ և եկաք ի վանքս, և տուի զիմ երեք Սուրբ Նշանն՝ զերեք և չորս մասն տուի ի ժողովոց տեղն ի Ռ. ու ԶԺ. (1600) թանգի տեղն. զիմ հալալ ապրանքն. և վկայութեամբ Բաղիշու աւագ երիցանուն՝ (երիցանց) Տէր Մխիթարին և Տէր Մելքիսէդին, և առ ի զՇարականոցն և զձին եարաղովն, (համեալիւք). ոչ ոք չիշխէ հեռացուցանել ի Սուրբ Յովանիսի դըրանէն. ի թվ. Հայոց ԶԺ. աւագ պահոց Հինգշաբթի օրն՝ առաջին շաբթուն, Հռովմայեցւոց ի Փետրվար ժԹ: Ո՛վ ի յայս զավլէս (պայմանագրէս) ի դուրս ելանէ, Ռ. թանգայ տուգանք տայ ամիրին: (Բաղիշոյ քաղաքապետին):

Ի 1881. Ի Յունիս 9. Ի Բաղիշու վանս Ս. Գրիգորայ:

Թիւ 237. Ճառնտիրէ.

. . Անպտուղս ի բարեաց . . անյիշելիս ի գրչաց . . սոսկ անուն քաւեայ Գրիգոր՝ որ զձեւ ունիմ քահանայի . . կատարեցի զսա . . յաստուածաբնակ կղզիս Աղթամար. ընդ հովանեաւ ամենայաղթ գմբէթայարկ Սուրբ Խաչիս, և Սուրբ Աստուածածնի, և այլ ամենայն սրբոց որ աստ կան հաւաքեալ. ի հայրապետութեան Տեառն Զաքարիայի. որ յայսմ ամի եղեւ Պատրիարք⁽²⁾ զոր տեսեալ զայսպիսի գանձս աստուածային՝ պատուական և ընտրեալ երիցս երանեալ առաջնորդ և հերապետ⁽³⁾ Սուրբ Ուխտին Երաշխաւոր Սուրբ Աստուածածնին⁽⁴⁾: Ատոմ կրօնաւորն մականուն

[1] Անուն սորին յիշի ի վարս Գլակայ վանից վանահօր Տէր Յովանէս Արք եպիսկոպոսի՝ մակ անուամբ Խորասանջի կոչեցելոյն, ի Պոսեցի Մարտիրոս վարդապետէ. որ կատարեցաւ ի Բաղէշ ի ԶԺԲ. ամի յաւուրս ամիր Շարաֆի ամիրայի տեղւոյն:

[2] Միքայէլ քահանայ գրիչն ի թիւն 233 յիւրում գրեալ յԱւետարանի ի թվ. ԶԺ. ամի դնէ զկաթողիկոսութիւն Զաքարիայի ի Սուրբ Էջմիածին:

[3] Փոխանորդ և միանգամայն վանահայր:

[4] Ուխտս այս անկանի ի Բզնունեաց գաւառի՝ մերձ ի Նօրչունճուկ գիւղն Հայոց. և կայ անբնակ ի դարաւոր ժամանակաց հետէ: Ի սոյն ուխտն եկն յաւուրս Արտաւազդայ վանահօր՝ որ և Աբրահամ եւս կոչիւր. մեծ իշխանն Հայոց և քաջ նահատակն Քրիստոսի՝ Սուրբն Վահան Գողթնեաց տէր. որ և երաշխաւորեալ սփոփեաց զերանելին վասն ակամայ մանկական ուրացութեան՝ և սպառազինեաց զինքն ի նահատակութիւն:

Շահմէլիքենց կոչեցեալ՝ և ցանկացող եղեալ այսմ տառի . . և ծնողաց իւրոց Շահ մէլիքին և Եղիսաբեդին . : Արդ՝ ես Ատոմ հերպէտ՝ Սուրբ Երաշխաւոր Աստուածածնիս՝ սիրող եղէ այս աստուածային տառիս . :

Է 1881 Յուլի 24. յԼՆՅՄԻ ԳԵՂԷ՝ ուր է գտնուին Ռուսաց . . և հետէ է ԼՆԻԿ Կոմիտայի յարեւելից կոտէ նորին՝ ուր Տէր Արգիշտի Յովնայ :

Թիւ 238 . Ի Յայսմաւուրէ .

Արդ՝ գրեցաւ սուրբ Գիրքս՝ յամի թուականութեանս Հայոց . 26. ամին . յերկիրս Քաջբերունւոյ ի քաղաքս Արճէշ, ընդ հովանեաւ ամենօրհնեալ Սրբուհւոյ Աստուածածնի տաճարիս՝ ի հայրապետութեան տեառն Զաքարիայի՝ կաթուղիկոսի ամենից Հայոց . և յիշխանութեան ազգիս նետողաց՝ Զհանչայի փաթշային՝ որ ել բազում զօրօք և գնացեալ եմուտ ի տունն Իրաղայ և զամենեւեան գրաւեաց ընդ ձեռամբ իւրով . և հասեալ ի մեծ քաղաքն Ասպահան, որ է Շօշ քաղաք, յոր մարգարէն Դանիէլ զտեսիլն ետես՝ որ էր ամուր և բազմամարդ, որոց ընդիմացեալ նմա պատերազմեցան, և յաղթեալ նոցա էառ գքաղաքն, և զամենայն զօրսն սրոյ ճարակ տուեալ, և ի սուր սուսերի մաշեալ՝ քանդեալ և աւերեալ . և զջուր գետոյն կապեալ ի վերայ քաղաքին . զի որք ի նդմունս և ի ներքնատունս և ի դարանս մտեալ էին և թագուցեալ՝ ամենեքեան ջրասոյզ և հեղձամկձուկ լեալ մեռան . որ և քաղաքն ամենայն տապալեցաւ ի վերայ նոցա՝ զի հողաչէն էր : Եւ անտի գնացեալ եմուտ ի Հրէ և ի Սորասան, և զամենայն տունն թաթարաց նուաճեաց ընդ ձեռամբ իւրով . և դարձեալ եկն ի թախտն իւր, ի քաղաքն Շահաստան ի Թաւրէզ : Որոյ ընդ առաջ գնացեալ մեծ հայրապետն Տէր Զաքարիա, աթուակալ սրբոյ Սաչին Աղթամարայ, որ էր թագաւորազն ի թուանց և ի շառաւիղէ արքային Գաղայ⁽¹⁾ բազում ընծայիւք և պատարադօք, զոր յոյժ սիրով ընկալաւ արքայն արքայից Զհանչայ փաթշահն, և դշխոյն Բէկում խաթունն՝ և պատուեալ մեծարեցին զնա . և ետուն նմա զխլայ և զպարգեւ զԱջ Կուսաւորչին մերոյ Սրբոյն Գըրիգորի, և զպատիւ Պատրիարքութեան՝ Որոյ առաջնորդութեամբ ըն Աստուծոյ, և կամաւ սրբոյ Կուսաւորչին և հրամանաւ փաթ-

[1] Գաղիկս այս յաղթեալ ի փառասիրութենէն՝ յաւուրս Սմբատոյ Բագրատունւոյ՝ նահատակ արքային՝ թագ կապեալ թագաւորեաց ի Վասպուրական աշխարհի . և եղև այսու պատճառ բազում փնասու և գերութեան Հայ . .

չահին, (արքային Չհանչահի) եկեալ յաստուածարեալ և յաստուածանկար Սուրբ Գրիգորայէն և երկնահանգէտ կաթուղիկէ Սուրբ Էջմիածինն՝ յառաքելաշնորհ աթոռ սրբոյն Գրիգորի. և նշատաւ ինքնակալ Պատրիարք ընդհանուր ամենայնի քրիստոնէականի ազգիս՝ որք են ընդ ամենայն ոլորտս տիեզերաց. և արարեալ զաշխարհս ամենայն՝ լինիլ մի հօտ և մի հովիւ ըստ բանին Տեառն. և հովուէր զամենեսեան ի հաւատս ուղղափառ Նիկիականի սրբոյ դաւանութեան: Ըստ այնմ ժամանակի եղեւ ցառնուլ փաթչահին ի վերայ ամիրային Բաղիշու, և բարկութեամբ առաքեաց զչորս զօրագլուխս երկոտասան հազար հեծեւազօրօք ի վերայ քաղաքին Սլաթայ. և գնացեալ աւերեալ քանդեցին զնա, և բազում աւար ի մի ժողովեալ՝ նստան ի վերայ բերդին՝ և նեղէին առնուլ զնա. և զնոյն հանդերձեալ էին առնել ի Բաղէշ՝ և Մուշ. ի Սութ և ի Սասունք, և յամենայն՝ զաւառս նոցա: Զոր տեսեալ նորընծայ Պատրիարքն Տէր Զաքարիա զտարակուսանս աշխարհին այնորիկ՝ զգերեվարիլն և մատնիլն ի ձեռն. . . և զտապալումն սրբոց սեղանացն, զգերեվարիլն սրբութեանց, և զխափանումն փառաբանութեանցն Աստուծոյ՝ և զտարաշխարհիկ լինիլն ամենայն խառնիճաղանճ ժողովրդեան՝ զգերիլն և զտատանիլն. զայս ամենայն զմտաւ ածեալ մեծ հայրապետն Տէր Զաքարիա՝ և զմիտս իւր բերեալ զբանն Տէրունական, որ ասէ թէ «Ես եմ հովիւն քաջ, հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց՝» և կատարեալ գործով զբանն՝ ետ զանձն իւր ի վերայ բանաւոր հօտին Քրիստոսի՝ ի վերայ ամենայն ժողովրդեան Բաղիշու, և զօրացեալ ի Հոգւոյն Սըրբոյ՝ և արարեալ զսիրտ իւր իբրեւ զկարծր վէմ և մտեալ առաջի թագաւորին՝ ետ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց՝ տուեալ զձեռագիր և մտեալ դաման (արարեալ պայման) առնուլ զհարկօ յամիրայէն Բաղիշու՝ և տալ կայսերն՝ առ ի մնալ երկրին ի խաղաղութեան. և առնել զաղօթս վասն կենաց թագաւորին և որդւոց նորա, Որոյ հաւանեալ արքայն և դշխոյն ետուն նմա զնշանագիր և զհրաման առնել զինչ և կամեսցի. և նորա ելեալ երեսաց նոցա վաղվաղակի ձիւրնթաց արշաւմամբ գնացեալ եհաս ի քաղաքն Բաղէշ: Որոյ ընդ առաջ ելեալ ամիրայն հանդերձ ամենայն մեծամեծօք իւրովք, և մեծարեալ փառօք տարաւ զնա ի գլուխ բերդին, և խոստացան առնել զկամս նորա՝ և տալ զինչ և խընդրեսցէ. բայց միայն զի յետս դարձուցէ զամենայն հեծեւազօրսն ի բերդէն Սլաթայ: Եւ նա առեալ զվկայութիւն ի բերանոյ նոցա գնաց ի Սլաթ, և ետ զօրագլխացն կրկին ձեռագիր, և ցուցեալ

նոցա զնշանագիր փաթշահին՝ և համոզեաց զնոսա՝ որք խաղաղութեամբ զնացին ի տեղիս իւրեանց . և ինքն դարձաւ ի Բաղէշ և նստաւ ամիսս երիս , և առեալ զխոստացեալ հարկն կայսերական , և տարեալ մատոյց առաջի փաթշահին , և արար զխաղաղութիւն ի մէջ նոցա , և ազատեաց զամենայն խառնիճաղանճ՝ ժողովուրդն զայ և զՏաճիկ ի ձեռաց թշնամեաց և ի դառն գերութենէ⁽¹⁾ . զոր Աստուած ազատեսցէ զնա յամենայն փորձութենէ հոգւոյ և մարմնոյ ամէն : Եւ նորա դարձեալ ի փաթշահէն նստաւ յԱթոռն իւր ի Սուրբ Էջմիածին . և մեծարանօք խիլայեալ եղեւ յերկուց գոռոզաց յայլասեռից ի թուրքմանէ փաթշահէն , և ի քրդոյ ամիրայէն՝ որպէս զԶօրաբարէլ ի Դարեհէ առ ի հովուել զհաւատացեալ ժողովուրդս իւր : Եւ եղեւ կրկին անգամ զնալ Ջհանշայ փաթշահին ի տունն Իրաղայ ի Շիրազ . և ի Քրման , և էր նորա որդի մի Հասան Ալի անուն՝ որ շրջէր թափառական զվերին կողմամբ գաւառին Արարատեան . և նա նենգութեամբ շարախօսաց ոմանց՝ կամեցաւ ըմբռնել զմեծ Պատրիարքն՝ զՏէր Զաքարիայն . և պահանջել ի նմանէ զգանձս և զինչս՝ զոր իմացեալ մեծ հայրապետն զնենգութիւն նորա , և առեալ զԱջ Սուրբ Լուսաւորչին հանդերձ այլօք սպասիւք յաւուրս ձմերայնոյ . և զնացեալ մինչ ի Բագուան , և անտի եկեալ մինչեւ ի բերդն Բիագտի⁽²⁾ իջեալ ի Սուրբ Արդեւան . ո՛ւր հանգուցեալ կայ պատուական նշխար սրբոյ վարդապետին Ստեփաննոսի Տէր Թուսկայ որդւոյն : Եւ անդ հասեալ յայտնեաց զգանձն աստուածային , և զԱջ սրբոյ Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի՝ հանդերձ Սաչալամովն . որ նկարեալ կայր ի մի կողմն ճապատկերն Տէրունական , և ի միւս կողմն Լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի՝ և թագաւորին Տրդատայ , և չքնաղագեղ կուսին սրբուհւոյն Հռիփսիմեայ . այլ և ոսկեթել յօրինուածով և ազգի ազգի գունով՝ երանգ երանգ զարդարեալ սուրբ Ուրարովն՝ որ զարմանալի է տեսողացն : Եւ դէմ եղեալ գալ ի հայրենի աթոռն իւր ի գեղեցկայարմար գմբէթայարկ Սուրբ Սաչն Աղթամարայ : Եւ ել համբաւ գալոյ նորա հանդերձ սրբոյ Աջովն և Սաչալամովն՝ որ բարձրեալ կայր ի ծայրս ձողոյ՝ և Սաչ

[1] Յիշատակ մեծի հայրապետիս օրհնութեամբ եղիցի . այս երեւելի գործ սիրալի կաթուղիկոսիս , բարձր է ըստ իմ կարծեաց քան զայն . զոր յիշատակէ ի վերոյ ի թիւն 231 կարապետ գրիչ ի պաշարման անդ Աղթամարայ . զոր արար դարձեալ սոյն հայրապետ մեծաւ քաջութեամբ ընդդէմ Ռօշկանցի քրդաց , և Սեւտալի գլխաւորի նոցին :

[2] Դարօնի՝ որ է ի Կոկոսիտ գաւառի :

ոսկի կառուցեալ ի գլուխս նորա . ընդ որ գրոհ տուեալ ամենից
 բնակչաց գաւառացն ընդ որ գայր հայրապետն . և ամենեքեան
 ընդ առաջ ընթանային խնկօք և մոմեղինօք և զենամար խոյոց և
 զուարակաց , և երկիրպագութիւն մատուցանէին սրբոյ Աջոյն՝ և
 հայրապետին՝ և համբուրէին զնա մեծաւ փառաքանօք . մինչեւ
 եկեալ եհաս ի գաւառն Տոսպայ . և մտեալ ի քաղաքն Վան , բազ-
 մօք եպիսկոպոսօք և վարդապետօք , քահանայիւք և բազմամիտիս
 ժողովրդովք , ձիօք և ձիաւորօք՝ և խաչալամն առաջի՝ և քահա-
 նայք յառաջ և յետոյ երգէին քաղցր եղանակօք , և այնպէս պերճ
 և փառաւոր եմուտ ի քաղաքն Վան : Իսկ պարոն այն՝ որ նստէր
 յամուրն Շաիրամայ ի բերդն Վանայ Մահմուտ բէկ կոչեց-
 եալ , որ էր կաթն եղբայր Զհանչայ փաթշահին , ետես զպայ-
 ծառութիւն քրիստոնէիցն , և ցանկացաւ տեսութեան սրբոյ Աջոյն ,
 և յղեալ տարաւ ի գլուխ բերդին . և եղեւ ընդ մտանել մեծի
 հայրապետին սրբոյ Աջոյն ընդ դուռն վերին բերդին . ընդ առաջ
 ել գոռոզն Մահմուտ բէկ ամենայն մեծամեծօք իւրովք , տամբ և
 ամիրդայ որդովքն , և ամենայն ընտանեօքն . և երկիրպագութիւն
 մատուցանէին սրբոյ Աջոյն և համբուրէին , և զաղերս պատարա-
 գաց նուիրէին , և մեծարեալ խիլայեաց զհայրապետն՝ և դար-
 ձոյց յօթեւանս իւր . զոր տեսեալ բազմութեան քաղաքին և գա-
 ւառին օր ըստ օրէ գային յերկիրպագութիւն սրբոյ Աջոյն՝ և յող-
 ջոյն մեծի հայրապետին բազում ընծայիւք և պատարագօք : Եւ
 յետ աւուրց ինչ առեալ զհրաման ի պարոնէն զնալ ի հայրենի
 յԱթոռն իւր յԱղթամար . և իբրեւ ել ի քաղաքէն՝ ելին ընդ նը-
 մա բազմութիւնք եպիսկոպոսաց՝ վարդապետաց և քահանայից , և
 ամենայն ազատագունդ խօջայքն Վանայ՝ ձիօք և ձիաւորօք ըս-
 պառագինեալք . և եկեալ հասին մերձ ծովահայեաց քաղաքին Ոս-
 տանայ⁽¹⁾ . որում ընդ առաջ ելին ամենայն բնակիչք քաղաքին քա-
 հանայիւք և բազմամիտիս ժողովրդօք ի մեծամեծաց մինչեւ ցփո-
 քունս . խնկօք և մոմեղինօք՝ և բարձրաձայն եղանակօք՝ մինչեւ
 գրեթէ քան զհազար մարդ աւելի կայր յառաջ և յետոյ մեծի հայ-
 րապետին . և խաչալամն առաջի գնայր , ունելով զգլուխն զԽաչ
 ոսկեփայլեալ լուսոյ նման . և այնպէս շքեղ փառօք եմուտ ի քա-
 ղաքն յՈստան . իբրեւ տեսին այլասեռ բնակիչքն՝ որք յՈստան
 զխրախութիւն զայն՝ ի խոր խոցեցան ընդ պայծառութիւն և ընդ

[1] Այս Ոստան քաղաքն՝ որ երբեմն Շահաստան քաղաք լեալ է ի Ռչտու-
 նիս՝ ի ժամանակս Արժրուեկաց , և յաւուրս սոյն անձանօթ տարեգրին , ներ-
 կայս քանի մի աղքատիկ տնակօք ներկայանայ իւր այցելողացն :

համարձակութիւն հայրապետին . որ ի գաւառէն Տարբերունոյ մինչ ի քաղաքն յՈստան Սաչալամով էր եկեալ՝ եպիսկոպոսօք և վարդապետօք՝ և բազում կարգաւորօք և ժողովրդովք , վասնորոյ ժողովեցան ի միասին առ իշխան քաղաքին , որ էր ազգաւ քուրդ . և խորհեցան խորհուրդ զչար . զի գաղտագողի նենգեսցեն հովուապետին՝ զոր իմացեալ զչարութիւն նոցա քաջ դիտապետն , և ընդ լուսանալ առաւօտուն՝ առեալ զՍուրբ Աջն գնալ ի յեզր ծովուն՝ ո՛ւր նաւահանգիստն լինէր . զոր իմացեալ ամենից եկեղոցն ընդ նմա՝ որք ի վանայ՝ և որք յայլոց գաւառացն՝ ելին զհետ նորա . և եկին հանդէպ աստուածապահ կղզւոյն Աղթամարայ մերձ ի բերդին Մանածիրհի⁽¹⁾ . որ է Քարադաշտ : Եւ անդ զտեղի առեալ օրհնեաց զամենեսեան շնորհարաշխ սրբոյ Աջոյն . և համարուեալ զամենայն ի համայն սրբութեան . և արձակեաց զնոսա խաղաղութեամբ և օրհնութեամբ գնալ ի հարկս իւրեանց : Եւ ինքն էառ զՍուրբ Աջն Լուսաւորչին և եմուտ ի նաւ , և գնաց յաստուածարնակ կղզին Աղթամար ի հայրենի ժառանգութիւն իւր . զոր իբրեւ ելին ի ցամաք՝ ընդ առաջ ելին նմա ամենայն բնակիչք տեղւոյն յեզր ծովուն խնկօք և մոմեղինօք և քահանայիւք՝ քաղցրաձայն եղանակօք , և առեալ տարան զՍուրբ Աջն՝ և եղին ի գեղեցկայարմար Սուրբ Սաչն Աղթամարայ , և երկիրապագութիւն մատուցանէին սրբոյ Աջոյն և հայրապետին՝ և զօրհնութիւն և զփառարանութիւն վերառաքէին հրաշագործողին Աստուծոյ , որ արժանի արար զամենեսեան տեսութեան շնորհարաշխ սրբոյ Աջոյն Լուսաւորչի . եմուտ ի յամուր կղզին Աղթամար և հանգեաւ ի գլմբէթայարկ Սուրբ Աջն (Սաչն թերեւս) ի բուն տեղիան իւր՝ ի թըւականութեանս մերում ինն հարիւր և տասն և մէկ ամին ԶԺԱ . ի սկիզբն տարւոյն . որ էր նաւասարդի ամսոյ տասն և վեց . ԺԶ . յաւուր ուրբաթի սրբոյ Յակոբի պահոցն եմուտ Սուրբ Սաչն Աղթամար . ի պահպանութիւն մեզ ամենից հաւատացելոց՝ որոյ եղեւ ուրախութիւն ոչ սակաւ : Եւ զայս լուեալ ամենից բնակչաց գաւառացն՝ օր ըստ օրէ գային յերկիրապագութիւն սրբոյ Աջոյն՝ և յողջոյն մեծի հայրապետին բազում ընծայիւք և պատարագօք , և մեծաւ օրհնութեամբ և ուրախութեամբ դառնային յարկս իւրեանց՝ փա-

[1] Մանածիրհ իշխանն Ռշտունի էր մինն ի չորից գլխաւոր իշխանաց մեծին Տրդատայ արքային Հայոց . և շինեալ էր զայն բերդն որոյ անուամբ բերդս Մանածիրհ բերդ յորջորջի մինչև ցաւօր . զոր այժմ աւերեալ է ծովն վանայ : Աստի ծովասոյզ արար նա անիրաւաբար զսարկաւագունս Սրբոյն Յակոբայ Մծպնայ հայրապետին , և ընկալաւ զանէծս նորին :

ուսուրեւելով զՍմեհասուրբ Երրորդութիւն . զՀայր , և զՈրդի , և զՍուրբ Հոգին այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն :

Տե՛ս է պարտաւիտեան Գաւրիժեցի Աստուծոյ լարդապետ պարտաբէր է Ռզնահամարս 405. 406. 407. 408. 409. 410. և 411 :

Թիւ 239 . Թագաւոր Աւետարան .

Փառք անսկզբանն . : Աստանօր յանկ ելեալ աւարտեցաւ քառարուխ և քառավտակ աստուածախօս Սուրբ Աւետարանս այս . ի թուարեւութեան Հայկազեան տումարիս , 2Ժ . յաստուածախընամ քաղաքս Ոստան . ընդ հովանեաւ Քարի Սուրբ Աստուածածնին . և Սուրբ Ստեփաննոս Նախավկային . ի հայրապետութեան Տեառն Զաքարիայի . որ և յայսմ ամի բերաւ Աջ Սուրբ Լուսաւորչին ի յԱղթամար՝ ի դուռն Սուրբ Խաչին⁽¹⁾ . ի դառն և ի վշտալից ժամանակիս՝ յորում ի խիստ նեղութեան՝ և ի չար ծառայութեան կամք . . . ազգս քրիստոնէից : . Իսկ ես ունայնս և թափուրս յամենայն հոգեւոր բարեմասնութեանց՝ կարապետ քահանայ⁽²⁾ . լուայ զփախազ և զսէր հաւատարիմ Գուհարին . որ առ Սուրբ Աւետարանս՝ և դժագրեցի զսա անարժան ձեռօք խնովք՝ յիշատակ բարի իւրն և ծնողաց . :

է 1865. Հւիտ. 2. է վ. տ. է Յայնկոնեւոյ Սուրբ Աստուածածնին էկեղեցին :

Թիւ 240 . Պատարագամատոյց .

Փառք Սմեհասուրբ Երրորդութեան . : Արդ՝ գրեցաւ փրկական խորհուրդ պատարագի , ի թուականիս մեր Հայոց . 2Ժ . ամի . ի ձորս Շահապունից , ի վանքս կուգոյ . ընդ հովանեաւ Սուրբ Խաչիս՝ որ կոչի Հազարարուրք . և կաթուղիկէ Սուրբ Ստեփաննոսի՝ և Սուրբ Աստուածածնին . և Սուրբ Նշան սրբոց Քառասնից . ձեռամբ յոգնամեղ և փծուն գրչի , և պիտակ անուն Յովսէփի յեաին եպիսկոպոսի :

է 1869. Փետր. 19. է վ. տ. է Լան կարճուրայ Սուրբ Աստուածածնին . Գնչ լէի տնորժանութեամբ Լանահայր տնոր :

[1] Առ Առաքել վարդապետ Գաւրիժեցի պատմիչ՝ մի անծանօթ գրիչ յոյժ ընդարձակագոյն գրէ վասն բերման Սուրբ Աջոյն Լուսաւորչի . եթէ կամիս տես ի թիւն 238 :

[2] 124. 127. և 231 թուոց գրիչն է :

Թիւ 241 . յԱւետարանէ .

Փառք Անեղ . : Արդ՝ գրեցաւ Սուրբ Աւետարանս . ի թուականութեանս Հայոց . ԶԺ . ի գաւառս Սաղտեաց . ի Սուրբ Անապատս որ Սուրբ Գէորգ կոչի . որ Պալախորու վանք ասի⁽¹⁾ . . զսուտանուն գրչաւորս Կարապետս և զուսուցիչն իմ⁽²⁾ . : Եւ վասն անբարի և դառն ժամանակիս յորում եմք . չէ բնաւ կարողութիւն պատմել կամ ընդ գրով արկանել . յորում ժամանակի նեղին ազգն քրիստոնէից երեքալեան թշուառութեամբ . սովով . . . և այլ ազգի ազգի վշտօք և նեղութեամբ . վա՛յ մեզ . և դարձեալ վա՛յ , զի կատարեցաւ մարգարէութիւն հոգելից առն Աստուծոյ սրբոյն Ներսէսի՝ որ վասն քրիստոնէից , թէ յամենայն կողմանց նեղին և փոփոխին տեղւոջէ ի տեղիս՝ և հանգիստ ոչ գտանեն ահա կատարեցաւ ամենայն , զի ասեմք լերանց թէ անկերուք ի վերայ մեր . և բլրոց թէ ծածկեցէք զմեզ վասն սաստիկ նեղութեանս , և վասն կարի և անբարի ժամանակիս . այս բաւական լիցի եղբարք :

Ի 1868 . Ի Մայիս 17 . Ի Կարէն Ի Սուրբ Աստուծոյն Եկեղեցին . յաստի
 րեւոյթեան րեւոյթ Տէր Յարութեան Արտեմիոսի վեհապետեան . ներկայիս
 Արքայ Երեմիայի Ա. Պարթևոսի :

1462 . — ԶԺԱ.

Տար . — Մատթէոս կաթուղիկոսն Աղուանից՝ յաջորդն Յովհաննու ի սոյն ԶԺԱ . ամի . զհրովարտակ ստացեալ է ի տէրութենէն Պարսից :

Տե՛ս Ի Զաւարտեան Սուրբ Եղիսիոսի Բ . հարսը Սուրբ Երեմիայի ԵԼ 481 . և 482 :

Աթաբէկն ծնանի զՄատթէոս⁽³⁾ որ եղեւ կաթուղիկոս և զԱյտիմբէկն :

Զաւարտեան Բ . հարսը ԵԼ 480 . և 481 :

[1] Սոյն Պալախոր գիւղն կայ Հայ բնակչօք ի վիճակին Բարերդու մինչեւ յայսօր ժամանակի . իսկ Սուրբ Գէորգ վանքն՝ ինձ թուի թէ է անբնակ :

[2] Վասն սղութեան ժամանակիս ի մերումն ճանապարհորդութեան . բազում անգամ ստիպեալ ակամայ՝ զանց արարեալ եմ զպարագայս և զանուանս վարժապետաց և ծնողաց՝ ինձ հանդիպեալ Յիշատակարանս գրողաց . բայց աւա՛ղ . այժմ զղջամ յոյժ յոյժ . թերեւս նոյն անուանք առաւել եւս կարէին լոյս սփռել ի վերայ մոլթ և ազօտ պատմութեանց :

[3] Զանուն սոյն Մատթէոսի յիշատակէ Չհանշահ ի հրովարտակի իւրում . ի ԹՎ . ԶԺԱ . ամի . ընդ հօր եղբօր սորին Յովհաննու կաթուղիկոսին :

Տէր Զաքարիա կաթողիկոսն առեալ ընդ իւր զԱջ սրբոյ Լուսաւորչին գնաց յԱղթամար . նաւասարդի ԺԶ . յաւուր Ուրբաթի սրբոյ Յակոբայ պահոցն :

յԱռաքել Լարտայեան պարսկերան ի Գ 422 :

Առեալ զՍուրբ Աջն (Զաքարիա կաթողիկոսն) գնաց վերստին յԱղթամար :

Տե՛ս ի Ուրբաթի Երեւանցոյ Զմեռ Գրոց ի Գ 20 :

Զաքարիա կաթողիկոսն տարաւ զՍուրբ Աջն (Լուսաւորչին) յԱղթամար կղզին :

Վարդեայ Գրեթուր Գրեթուր : Իր սոյն Գրեթուր Գրեթուր ժամանակից Երեւան զար Կաթողիկոսին Հրատարակուց :

Գրիգոր Եպիսկոպոսն էր վանահայր Կտուց Անապատի :

Ի Գրեթուրանիս պատեր հանդիպել Յակոբ Եպիսկոպոսի Թոփուզեան վանեցոյ, որ էր վանահայր ի Լե՛՛ ի Կաթողիկոսանի Ե. Ներսէսի Ալտարակեցոյ : Ի վանահայրանիս սոյն ի 1852 թի . Գրեթուր է Կ. Պոլսոյ Կրօնատեսչոյ ի Լե՛՛ :

Արիստակէս Բ . կաթողիկոսն կոնդակ գրեալ է առ Լեհացի Հայս :

Գ . հարսը Ինճիճեան :

Թիւ 242 . յԱւետարանէ .

Փառք Անսկզբան . : Արդ՝ գրեցաւ Սուրբ Աւետարանս այս ձեռամբ սուտ անուն Մկրտչի . . (քահանայի) կենօք տառապանօք , և բազում պանդխտութեամբ . . ի մեծ թուականութեան Հայոց . ԶԺԱ . ի կաթողիկոս . . :

Ի 1881 . Յունիս 25 . Հինգշաբթի . ի Բաղէշ . առ պարս Երեւան Գաթողիկոսն Սանցի :

Թիւ 243 . Յայտնաւորէ .

Փառք եղակի . : Աւարտեցաւ քրիստոսահիմն և քաջ նահատակաց և մարտիրոսաց հոգիարուխ սուրբ տառս ի յամի ԶԺԱ . ի վանքըս որ կոչի Կտուց . ընդ հովանեաւ Սուրբ Սաշիս . և սուրբ նըշխարաց ճառագայթի ճրագ ճշմարտութեան Սուրբ Կարապետիս , որ յայսմ ամի նորոգեցաւ մոլայիւ (սպիտակ բռամբ) ձեռամբ Ստեփաննոս վարդապետի՝ որ մակ անուն Փալակ կոչի . և կամեցողութեամբ Գրիգոր Եպիսկոպոսի , որ էր առաջնորդ Սուրբ Ուխտիս . . ի կաթողիկոսութեան Հայոցս Տեառն Զաքարիայի . որ տիրեաց

երկու Աթոռոյն⁽¹⁾, ոչ զարաւով (կաշառով) այլ բաշխելով և շնորհելով Զհանչայ զանին, որ գնաց Տէր Զաքարիա կաթուղիկոսն և նստաւ ի յԷջմիածինն, և երբ իւր կամաւ զՍուրբ Աջն Լուսաւորչին ի յերկիրս Վասպուրական. ի գեօղն և ի քաղաք՝ շուրջ ածելով ի տեսութիւն որդիացեալ քրիստոնէիցս. քանզի ուրախացեալ բերկրեցան յաստուածատուր պարգեւացն և շնորհացն՝ որ տուաւ ի Սուրբ Աջն Լուսաւորչին, և ամենայն ոք օրհնէր զԱրարիչն Աստուած՝ և զՏէր Զաքարիա կաթուղիկոսն՝ որ արժանացոյց տեսեան Սուրբ Աջոյ Լուսաւորչին: Եւ ապա տարեալ ի յԱստուածազահ կղզին Աղթամար, և դըրդեալ Աղթամար՝ ելին ընդ առաջ Սուրբ Աջին, և թագաւորական զարմին՝ Տէր Զաքարիայ կաթուղիկոսին, որ էր ի յազգէն Գագիկ թագաւորին⁽²⁾, և բերեալ պաշտելով և ուրախութեամբ ի յերկնանման և ի լուսեղէն դմբէթայարկ և կամարածեւ Սուրբ Սաշն, անդ էր տեսանել զուրախութիւն և զցընծութիւն վարդապետաց և եպիսկոպոսաց, քահանայից և կրօնաւորաց: Քանզի գրոհ տուեալ էր յամենայն տեղաց, և եկեալ էին տեսանել զՍուրբ Աջ Լուսաւորչին, և եղեալ ի սուրբ եկեղեցին՝ ընդ այլ Սուրբ Աջերոյն՝ որ անդ կային, և ինքն դարձեալ գնաց ի յաթոռն իւր յԷջմիածինն՝ և կացեալ յոլով ժամանակս, և տիրէր երկու Աթոռոյն ի թուականիս Հայոց. ԶԺ. ի թագաւորութեան Զհանչայ զանին, որ ելեալ ի Թաւրիզոյ և գնացեալ ի Հրէ և էառ զամենայն աշխարհն Սորասանայ, և տասն և հինգ ամ թագաւորեաց ի Պարսկաստան, և հարկատու արար զամենայն Զաղաթայսն, և դարձեալ երեկ (եկն) նստաւ ի Թաւրէզ, և որդիք թագաւորեալ նստան ի Շիրազ՝ և յԱռաքան և ի Քրման՝ և ամենայն աշխարհս ի խաղաղութեան էր⁽³⁾: Այլ և յիշեցէք յաղօթս ձեր զՍտեփաննոս վարդապետն, որ է հոգեւոր հայր մեր և խրատիչ ամենայն բարութեանց, որ և զօգուտն քարոզեաց ի գիշերի և ի ցերեկի մեզ, և է փիլիսոփայ երիցական արհեստի, և ծաղիկ ժամատեղաց, և է գիտակ ամենայն հին և նոր կտակարանաց աստուածային գրոց գիտութեան, որ յար և նման է վարժապե-

[1] Էջմիածնի և Աղթամարայ, և ըստ Մեքայէլ քահանայի Արժեկեցւոյ՝ որ գրէ ի թիւն 233. այս տիրումն լեալ է. ի ԶԺ. ամի:

[2] Զոյս ցեղական պարագայն սեծի կաթուղիկոսին ոչ յիշատակէ ի թիւն 238 անձանօթ գրիչն Յայամաւուրի միոյ. զոր ընդօրինակեալ է արժանայիշատակ պատմագիրն Հայոց, Տէր Առաքել վարդապետ Գաւրիժեցի:

[3] Ըստ այսմ գրէ անձանօթ տարեգիրն Առաքել պատմագրի զորոյ բանս տես ի թիւն 238:

տին իւրոյ Թումայ վարդապետին⁽¹⁾. . Յա խաչատուր կրօնաւոր ստացայ ի հալալ արդեանց խնոց . և եղի յիշատակ յաստուածապահ գիւղաքաղաքս Մարմեռ⁽²⁾ . ի դուռն Սուրբ Ստեփաննոս Նախավկային . :

Է 1865. Սեպտ. 14. Է ԶԺԱ վ. անոյ Է կրօնայ Անապատ :

ԹԻՒ 244 . յԱւետարանէ .

Փառք Անսկզբանն . . և ողորմութեամբ նորին կատարեցի՝ յամի յորում է թուականն Հայոց , ԶԺԱ . յերկիրս Քաջքերունի . ի քաղաքիս Արճէշ կոչեցեալ . ընդ հովանեաւ Սուրբ Տաճարիս Գէորգեայ զօրավարիս . յաշխարհակալութեան մեծ զանին Զհանչայ փաթշահին՝ որ մեծաւ քաջութեամբ տիրեաց աշխարհին Իրաղայ . և ի կաթուղիկոսութեան մեծ իմաստասիրին՝ քաջ և արի հայրապետին՝ Տեառն Զաքարիայի⁽³⁾ . որ և նա Աստուածատուր զօրութեամբն տիրեաց երկու Աթուոյն Էջմիածնի և Աղթամարայ . զոր Տէր Աստուած հաստատուն պահեսցէ զսա ամէն . Արդ՝ յայսմ ամի գրեցաւ տէրունեան Սուրբ Աւետարանս ձեռամբ անարժան քահանային Յովհաննու⁽⁴⁾ . : Աստուած ողորմի ասել անարժան գրչիս Յովհաննու , և իմ ծնողացն . . և ուսուցչին իմոյ տիեզերալոյս վարդապետին Թումայի⁽⁵⁾ . . :

Է 1866. Է Մայիս 13. Է վ. ան. Է Սուրբ Սահակ Էկեղեցիէն .

1463. — ԶԺԲ.

Տար . — Սուղթան Մահմատն զՏրապիզոն էառ . և մահ բազում անկաւ յաշխարհ ամենայն . և Նաղաշ վարդապետն⁽⁶⁾ ա-

[1] Եթէ Թովմայ Մեծոփեցի պատմագիր վարդապետն չէ՝ յիշեալ վարդապետն . ուրիմն Մինասեկն Թովմայ բարուն Աղթամարցին է՝ որ փայլեցաւ յոյժ գրական ուղխատութեամբ ի վանս Աղթամարայ՝ յաւուրս սոյն վերոյիշեալ Զաքարիա կաթուղիկոսին :

[2] Սոյն Մարմեռ գիւղն կայ շինեալ ի Տոսպ գաւառի առ ամն համանուն գետոյն՝ որ թափի ի ծովն Բղնունեաց : Սոյն շէն՝ որ յաւուրս խաչատուր կրօնաւորի ստացողի գրոյս գիւղաքաղաք լեալ է . և երեսունէն աւելի տանուտէր իշխանք կային ի նմա . իսկ սոյժմ միսոյն 82 աղքատիկ Հայ գերդաստանաւ շատանայ :

[3] Ըստ այսմ գրեն՝ զամոնէ ի Թիւս 233. 238. 239. և 243 Նօտարք Հայոց :

[4] 167. և 230. Թուոց գրիչն է :

[5] Է պատմագիր Մեծոփեցի Թումայ բարուն :

[6] Պոսեցի Մկրտիչ արհի եպիսկոպոսն Ամթայ առաջնորդ :

սաց զողբն⁽¹⁾ . և յայսմ ամի շարժ եղև յԵզնկայն՝ և մեռան ԼՍԻ .
մարդ :

Դասին շարժուի որբեքի բողեքի . Լինանեցաւ սա է Լէ՛հղին՝ է Լուին
Հոյոց ՌճԻԲ :

Յովսէփ քահանայ ի Բաղէշ գրէ զՄեկնութիւն տումարի Ղրի-
մեցի Յակոբ վարդապետի :

Էջէմն :

Մենք տանուտէրքն առաջ պարոն վոյթ խաչատուր⁽²⁾ պարոն
Նիկոլ՝ երեսփոխան պարոն Յոհաննէս . . երեկ մեր առջեւս պարոն
Վոյթ Ովանէս դուստր Եղիսարեղն պարոն Յակոբին կողակիրն Գ .
որդով՝ մեծ որդուն անուն Եւաչք . Բ . Հստեցքս⁽³⁾ Գ . Թումայն ևն :
Տե՛ս է ճանապարհորդութեան Լեհաստնէ Հ . Մեհոոյ Բէլէլեան . էջ 87 :

Արձ— Այս է տապան հանգստեան Փաշա խաթունին . որ փո-
խեցաւ ի Քրիստոս , թուին ԶԺԲ :

է 1866 Յունի 27 . յԵրզնէս է Լան Յովակիմայ և Աննայ :

Ես Թումայ հայրապետս կանգնեցի զՍաչս Սուրբ բարեխաւս
առ Աստուած՝ ննջեցեալ ծնողաց խոց . որք եկիրպագանէք յիշե-
ցէք ի Քրիստոս , թուին . ԶԺԲ :

է 1865 . է Դեկտ . 6 . է Լէ՛հղին է շուէ վանայ :

Թիւ 215 . Կատարումն Յովհաննէս եպիսկոպոսի Գլակայ վանուց վանահօր .

Ի ամին աւուր կատարեցաւ ի Քրիստոս վկայական մահուամբ
սուրբ եպիսկոպոսն Յոհաննէս ի քաղաքն Բաղէշ կոչեցեալ ի
ԶԺԲ . թուականիս Հայոց : Էր սուրբ եպիսկոպոսն Յոհաննէս ի տը-
ղայութենէ սնեալ և վարժեալ ի վանս Սուրբ Կարապետին ի գա-
ւառին Տարօնոյ . կրթեալ ի վարս պարկեշտութեան կրօնաւորա-
կան ժողովակալութեամբ . և հասեալ ի չափ հասակի արժանաւորե-
ցաւ ձեռնադրիլ յաթոռ եպիսկոպոսութեան՝ նոյն աստուածար-

[1] Սոյն մահտարածամն գիպեալ է յամի ԶԺԷ . ին և ոչ ԶԺԲ . ին :
[2] Իլովոյ Հայոց դատարանի նախագահին վոյթ անուն տային :
[3] Լեհացի Հայոց օտարամոլութիւն սկսեալ է . որ յայտ լինի ի վերոյիշեալ
խորդ անուանց գործածութենէ :

եալ վանս իննակեանն . որ է յաթոռ Սրբոյն Յոհաննու Կարապետի ձեռնադրողին Քրիստոսի . որ և առաքելաբար հովուէր զժողովուրդն Քրիստոսի ուղիղ վարդապետութեամբ . ոչ որպէս տիրերելով վիճակին , այլ զանձն օրինակ կացուցեալ առնելով և ուսուցանելով : Եւ ըստ բարեոք յօժարութեան իւրոյ՝ զոր ունէր եպիսկոպոսն Յոհաննէս ձեռնարկեաց առ ի նորոգել վերատին զտաճար Սուրբ Կարապետին՝ և յօրինեաց զնա գեղեցիկ շինուածովն Եւ ապա ձեռնարկեաց ի մեծ Կաթուղիկէն ի վկայարան Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային , և այնպէս կային և գործէին մեծաւ ուրախութեամբ : Զոր տեսեալ վիշապն ահօրէն՝ օձն կամակոր՝ թշնամին արդարութեան սատանայ զայնպիսի յառաջադիմութիւն եպիսկոպոսին՝ ոչ կարաց ժուժել ի ցաւոյն՝ տուտն շարժեալ գլխոյն ջախջախեալ՝ և յարոյց պատերազմ ընդդէմ նորա : Եւ գլտեալ ազգ մի խուժադուժ լեզուաւ և ազգաւ՝ որ կոչի Դըմլի՝ որք տեղի առեալ բնակէին ի նոյն գաւառն Տարօնոյ . առ ստորոտս լերին Տորոսի ի մերձակայ գեօղան՝ որք գնացեալ եղին բարուրս ի վերայ նորա . եթէ քակեաց զքարինս մեր և տարեալ շինեաց զեղեցին իւր , և այնպէս արկեալ զնա յորսայս մահու : Եւ ծանուցեալ զայս գաւառապետին Սալըլի՝ ետ ունել զեպիսկոպոսն . և կապեալ զնա յուղարկեաց ի Բաղէշ քաղաք առ ամիրապետն Շարաֆ : Եւ նա ոչինչ քննեաց զպատճառս իրացն՝ այլ վաղվաղակի ետ ի ձեռս գահճացն . և հրամայեաց հանել արտաքս յատենէն՝ ի աեսութիւն հրապարակի քաղաքին . Որ և անդէն մերկացուցին զնա և արկին չուան ի պարանոցն , և հանեալ ի բարձր տեղի մի . որ կոչի շահնշի՝ առ ի տեսանել զելս իրացն՝ թէ զինչ հրամայեացէ ամիրայն . իսկ եպիսկոպոսն ել ի միջի նոցա , և կոչեաց առ ինքն զմի ոմն ի քահանայիցն՝ որ անդ կային . և դաւանութիւն ուղղափառ հաւատոյս կատարեալ ճշմարիտ խոստովանութեամբ ի ծածուկ . և հաղորդեցաւ ի փրկական մարմնոյ և յարենէ կենարարին մերոյ . զոր յառաջագոյն բերեալ էր ընդ իւրն . և ասացեալ զգոհացողական աղօթան՝ դարձաւ անդրէն առ զինւորսն : Եւ նոցա բազում հարց և փորձ արարեալ ընդ նմա նենգութեամբ , զի թերեւս կարացեն պատրել զնա բանիւք և ոչ կարացին . և ապա սուսերումերկ խժժէին զնա ընդ երեսս և ընդ թիկունսն՝ մահ սպառնալով եթէ ոչ լուիցէ և դարձցի յօրէնս նոցա . . . իսկ նորա ոչինչ զանգիտեալ ի նոցանէ ամենեւին՝ այլ տայր համարձակ զպատասխանին . . . Եւ ապա քարչեալ անտի բռնութեամբ ընդ քարամէջն՝ և տարեալ կացուցին զնա առաջի դրան

բերդին : Եւ գրոհ տուեալ ի վերայ նորա քարչեցին արտաքս ի հրոյն . և եհար մի ոմն ի նոցանէ ուժգին սրով զկողս եպիսկոպոսին՝ վասն որոյ գրոհ տուեալ ի վերայ նորա բազմութեան՝ հարեալ զնա քարիւ և փայտիւ՝ և գայր ի վերայ նորա բազմութիւն քարանցն որպէս տարափս կարկոտոյ . մինչեւ անդէն ի տեղւոջն ծածկեցաւ մարմին երանելոյն ի տասակութենէ քարանցն : Եւ այնպէս աւանդեաց սուրբ եպիսկոպոսն Յօհաննէս զհոգին իւր առ Աստուած որպէս խուճկ անուշ : Եւ ապա հրաման ետ ամիրապետ Շարաֆ քրիստոնէիցն ի նմին աւուր բառնալ զնա և թաղել՝ զոր և յառաջագոյն հարձուկս արար արձակել զնա վասն քրիստոնէից քաղաքին : Ի՞՞նչ բազմութիւն ամբոխին ոչ անսացին հրամանաց ամիրային՝ այլ փութապէս զկամս սրտից իւրեանց կատարեցին Առ որ եկեալ արք եպիսկոպոսն քաղաքին Տէր Յօհաննէս ամենայն ուխտիւն և ժողովրդովն , բարձին զպատուական մարմին երանելի եպիսկոպոսին , և տարեալ յաւագ եկեղեցին ի վրկայարան Սրբոյն Սարգսի զօրավարին , և կատարեալ զպաշտօնըն գիշերոյն հսկամաք յերեկոյէ մինչեւ ցառաւօտն . և մատուցեալ զխորհուրդ փրկական Պատարագին , եղին զնա ի տապանի առաջի սրբոյ սեղանոյն սաղմոսիւք և օրհնութեամբ , ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ : Կատարեցաւ սուրբ եպիսկոպոսն Յօհաննէս՝ յԱպրիլի ԺԹ. (ՋԺԲ) յետ Սրբոյ Զատիկին զկնի Նոր կիրակէին յեկրորդումն շաբթու Զորեքշաբթի ի փառս Քրիստոսի օրհնելոյ յաւիտեան :

Ձայն նահապոյ Յօհաննէս եպիսկոպոսի լարաց պատմութեան՝ ընդօրինակեալ էմ յԵրասիայ՝ է Սուրբ Երբարտման եկեղեցին՝ յտի 1865. է 11. Փետր. է յետգիւր Յայտնութի՝ որ իւր անդ . զոր գրեալ են է իսկն Հայոց ՌՃԻԿ. Տեր Մերէւ Ժաննայն և սրբին իւր Աստուածատուր Գրեմն :

Գարձեալ Յովհաննէս եպիսկոպոսի նահատակութեան առթիւ յայլ գրչէ համառօտեալ .

Քանզի էր սա ի Գաւառէն Մշոյ , և էր առաջնորդ և խնամածու մեծափառ ուխտին Գլակայ՝ որ այժմ ասի Սուրբ Կարապետ . : Եւ էր վանքս այս ի բազում ժամանակէ աւեր և անմարդարնակ . սա ի Հոգւոյն Սրբոյ շարժեալ և ի խընամոցն Աստուծոյ յորդորեալ ժողովեաց միարան և գնացեալ ի սուրբ Մենաստանն արար շինութիւն . . բայց սա սկսաւ շինել և նորոգել զխախտեալ և զփուլ եկեալ քարինքն եկեղեցւոյն . և լինէր շատ սէր և պատիւ յաշխարհէն սուրբ հայրապետին : Վասն

որոյ ոմանք ի յիւր միաբանէն՝ և յընկերացն՝ որ ի Բողայ բլուրն
կային, յորժամ տեսին զյառաջադիմութիւնն նորա՝ լցան չար նա-
խանձովն սատանայի: . . գնացին . . . և մատնեցին զեպիսկոպոսն
Յովհաննէս: . . Եղև կատարումն մեծ և երանելի նոր վկայիս
Քրիստոսի ի Թուականիս Հայոց. ՋԺԲ. Ահկի Գ. և Ապրիլ Ի. ի
Բաղէշ քաղաքի:

Դարձեալ վասն Յոհաննու եպիսկոպոսի նահատակութեան՝ ի Պոռեցի Մար-
տիրոս ժամանակակից վարդապետի բանից համառօտութիւն:

Ի սմին աւուր կատարեցաւ եպիսկոպոսն Յոհաննէս ի քա-
ղաքն Բաղէշ. որ էր եպիսկոպոս և առաջնորդ Սուրբ Կարապե-
տին՝ Գլակայ վանիցն ի Գաւառէն Մշոյ, ի Հողարլուր գեղջէ յա-
մի ՋԺԲ. յաւուրս Սրբոյ Յինաց. և էր օր Երեքշաբթի յետ նոր
Կիրակէին. և եղաւ ի գերեզմանի յեկեղեցին Սրբոյն Սարգսի.
Յոհաննէս՝ որ մակ անուամբ Սորասանցի կոչէր. և էր պարոն ի
Թաւրէզ Ջհանչայն. և ի Բաղէշ Մէլիք Շարաֆ. իսկ եպիսկոպոսն
(Բաղիշոյ) Տէր Յոհաննէս Թամուրենց: Ես Մարտիրոս Պոռեցի բա-
նի սպասաւոր, յիշատակեցաք զայս ի սակաւումն:

Է 1881. է Բաղէշ. է Վ Երեքշաբթի Երեքշաբթի. հանի է վասն Ա. Երեքշաբթի:

Թիւ 246: Ի ներսէս բանասիրէ առ Յոհաննէս եպիսկոպոսն՝ նոր
վկայն Քրիստոսի ուղերձ:

Եռամեծար սրբազան հոգի,
Տէր Յոհաննէս պսակ տենչալի.
Նմանեցար Սուրբ Ստեփաննոսի,
Արիւնաներկ դասուցն երամի.
Դու հասեցեր զարիւնդ ի մարմնի,
Եւ խառնեցար յարիւն Յիսուսի.
Նմա խոցուածք՝ քեզ շանթ կրակի:
Նմա լեղի քեզ ուղեղ գլխի.
Տէրն աղօթէր վասն իւր խոցողի,
Դու սակս մեր խնդրեա ձիր բարի.
Այսօր ելեր դու ի կառս վեհի,
Քան զՔրոքէսն ահիւ մեծարգի.
Ընդ Աստուածարան Որոտման որդի,
Ոսկի բերան սուրբ Հայրապետի.
Մաղկեալ արմաւ շուշան ձիթենի,
Բուսար յաջմէ փառաց Քրիստոսի.

Ի յօր տօնիս քո սուրբ հանդիսի ,
 Զքեզ աղաչեմ վկայ Յիսուսի .
 Զի (դու) լցար հոգևով շնորհալի ,
 Եւ յաղթող գտար չար սաղայէլի .
 Անցեր ընդ հուր ըստ երգոյն Սաղմոսի ,
 Եւ պսակեցար անթառամելի .
 Սուրբ նահատակ տեսուչ սքանչելի ,
 Բարեխօսեա՛ առ Տէրն ամենի .
 Վասն ամենայն քրիստոնեայ զարմի ,
 Քահանայից և սարկաւազի .
 Եւ ինձ Ներսէսի սպասաւոր բանի ,
 Որ զճառս ի սէր քո շարադրեցի :
 Է 1866. Է Մարտ 23. Է Վան. Է Սուրբ Պօղոս Եկեղեցին Է Վ Երեւանի Յայն-
 տաւանքի [1] :

Թիւ 247 . յԱւետարանէ .

Փառք համագոյ և միասնական Սուրբ Երրորդութեան . . սուտ
 անուն քահանայ Կիրակոս ախմար գրիչ (122 և 195 թուոց գրիչն
 է) . յանկ և աւարտ հանեալ . . ի յայս դառն ի չար ժամանակիս . .
 . . . : Արդ՝ դրեցաւ սա ի դառն ժամանակիս՝ ի թուականիս Հայոց
 ՋԺԲ . ձեռամբ անարժան գրչիս Կիրակոսիս , ի հայրապետութեան
 Տեառն Զաքարիայի . և յեպիսկոպոսութեան (Բաղիչոյ Թամուրենց)
 Տէր Յովաննէսի . ի զանութիւն Ջհանչայ Միրզին . և մեր ամիրու-
 թեանս Մէլէք Շարաֆին . . որ նեղացեալ կանք . . զոր Տէր Աստ-

[1] Վերոյիշեալ ուղերձի հեղինակ Ներսէս բանի սպասաւորն , ինձ յոյժ հա-
 ւանական թուի . թէ էր մեծանուն Ներսէս եպիսկոպոսն Աղթամարցի՝ աշակերտ
 առն երեւելոյ Մինասենց թովմոյ տարեգիր և երգիչ վարդապետի . որ ծաղկեցաւ
 յետ նորա ընտիր գրչութեամբ և գանձուց հեղինակութեամբ յԱղթամար
 կղզին . յաւուրս նշանաւոր Գ. Զաքարիա հանրահաշակ կաթողիկոսի տե-
 ղոյն , և որովհետեւ Բաղէշ մերձաւոր և սահմանակից է , վիճակացն Աղթա-
 մարոյ , ոչ մնայր թագուն ի Ներսէս բանասիրէ վկայական մահ Սրբոյն Յոհան-
 նու եպիսկոպոսին՝ առաքինի վանահօր մեծի ուխտին Գլակայ . ուստի լսելով ի
 բազմոց ականատեսից զփառաւոր վախճան սրբոյ նոր վկային Քրիստոսի , ներբո-
 ղական ուղերձիւ պատուեալ է զերանելին . որոյ աղօթիւք և բարեխօսութեամբ
 Տէր Յիսուս Փրկիչն մեր հաշտեցի ընդ մեզ . և ողորմեցի ըստ մեծի ողորմու-
 թեան իւրում համայն վերձանողացդ նորին պատմութեա՛ւ և ինձ նուաստիս ձե-
 րում ծառայի ծրողի սորին :

ուած հատուցէ նոցա զփոխարէն : Արդ՝ կրկին յիշեցէք ի Քրիստոս զմղտեսի զԱրմանդուխտն՝ որ ստացաւ զՍուրբ Աւետարանս . և ետ յիշատակ ի դուռն Սուրբ Գէորգայ . ի ձեռն սրբասնեալ քահանայիցն Թադէոսի և Արսէնի՝ Կիրակոսի և Գրիգորի , և այլ փոքր քահանայից՝ որ տիրութիւն առնեն . . . Աստուած ողորմի ասէք մեղաւոր գրչիս Կիրակոս քահանայիս , և ծնողաց խնոց էլէքսան քահանային և Եղիսաբեղին . ,

Է 1881. Է Յունիս 27. Շաբաթ Է Բողոք Է Գրեանց Սրբայն Գեորգայ . որ էայ Է Դանն Անիայեան վարդապետ աղայի :

Թիւ 218 . յԱւետարանէ .

Փառք Եղակի Եռանկիւսակ Դաւանութեան . : Գրեցաւ աստուածախօս և Աւետարեր Սուրբ Աւետարանս . ի թուիս Հայոց . ԶԺԲ ձեռամբ անարժան և մեղսաթաւալ գրչի՝ սուտ անուռն Ստեփաննոսի . և ի կաթուղիկոսութիւն Տէր Զաքարիայի , և յառաջնորդութեան Սուրբ Ուխտիս Տէր Յովհաննէս արհի եպիսկոպոսին՝ ի գաւառն Տարօնոյ . յերկնահանկէտ Սուրբ Ուխտիս , և ի հրեշտակացոյց մենաստանիս Եղերդոտ կոչեցեալ⁽¹⁾ . Ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին , և Յովհաննու Մկրտչին , և Սուրբ Ստեփաննոսի նախավկային , և Սուրբ Գրիգորի Լուսաւորչին . և օրհնարուղիս Սուրբ Իւղոյս՝ ի դառն և ի չար ժամանակիս , յորում է արդարութեան կողմն նուաղեալ՝ և անիրաւութիւն յամենայն կողմանց զօրացեալ : Յիշեցէք ի մեղսաքաւիչ յաղօթս ձեր՝ զընտրեալ և զարժանաւոր՝ զպատուական և զկուսակրօն արեղայն զՅովհաննէս՝ որ ետ գրել զՍուրբ Աւետարանս . : Արդ՝ ես կտսերս յորդիս եկեղեցոյ՝ և անպիտանս ի կրօնաւորաց . . Ստեփաննոս . . աղաչեմ զձեզ՝ որ միոյ ողորմու արժան առնէք զչարեօք լըցեալս : Ընդ նմին և զծնողսն մեր՝ զհայրն իմ զՅովհաննէս , և զմայրըն իմ զՀիրիքայ , և զեղբայրն իմ զՍահակ : Դարձեալ աղաչեմ զձեզ յիշեցէք ի Քրիստոս զաշակերտքն մեր՝ զկուսակրօն արեղայքըն՝ զՅովհաննէսն՝ զԿիրակոսն և զՊետրոսն⁽²⁾ և զայնոսիկ որ ի հետ մեզ են աշխատեր . :

[Ի վերջն Մարկոսի նոյն Աւետարանի]

Յայսմ աւուր անտանելի սուգ հասաւ մեզ՝ Մշոյ երկրիս . զի կալան զառաջնորդ Սուրբ Ուխտին՝ Սուրբ Կարապետին՝ զՏէր Յո-

[1] Սուրբ Յովհաննէս վանուցն ասէ . որ անկանի յարեւմուտս Մշոյ :

[2] Էին սոքա աշակերտք Ստեփաննոս գրիչ կրօնաւորի :

հաննէս եպիսկոպոսն՝ տարան ի Բաղէշ և չարաչար նահատակեցին, յիշատակ նորին օրհնութեամբ եղիցի: Այս գործեցաւ ի ԶԺԲ. թուին. ի յ' սկրորդ Չորեքշաբթի Յիւնացն՝ ի Քաղոց ամսոյ ԻԶ. այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց⁽¹⁾. ո՞վ կարէ պատմել զաղէտն և զկսկիծն որ գործեցաւ: Յայսմ ամի (ԶԺԲ) մորեխն երեկ, և զաշխարհս ապականեց:

† 1882. Սեպտ. 18. † վ. ան: Արար † Սարգս Աստուածածին եկեղեցին:

Թիւ 249. Մայր Մաշտոցե:

Փառք փառաւորեալ անբաժանելի. Սուրբ Երրորդութեան. Եւ արդ՝ ես ամենամեղս և անարժանս ի մէջ կարգաւորաց՝ թուամայ անպիտան քահանայ՝ տեսի զսէր և զփափաք առ հոգեւորն՝ (տանուտէր Աւիտոնին) և իմով իսկ տկարութեամբ յանձն առի. և ամենակարող զօրութեամբն Աստուծոյ կատարեցի զսա՛ յաստուածաբնակ կղզիս Աղթամար⁽²⁾. ընդ հովանեաւ ամենայաղթ Սուրբ Սաշիս, և շնորհաբաշխ Սուրբ Լուսաւորչի Աջիս. ի Պատրիարքութեան Տեառն Զաքարիայի Հայոց վերադիտողի՝ ի թուականութեանս Հայոց. ԶԺԲ. ի դառն և ի վշտալից ժամանակիս. . .

† 1866. Մարտ 2. † վ. ան. Արար † Սարգս Աստուածածին եկեղեցին:

Թիւ 250. յԱւետարանէ:

Փառք Անսկզբան. Աւարտեցաւ Սուրբ Աւետարանս. ի յերկիրս Ռչտունեաց՝ ի վանքս Բերդաձոր կոչեցեալ՝ ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, և այլ սրբոցս՝ որ աստ կան հաւաքեալ՝ ի թուականիս Հայոց. ԶԺԲ. ձեռամբ մեղաւոր գրչի Մարգարէի⁽³⁾.

† 1866. Յունւ. 19. † վ. ան. † Սարգս Նշն եկեղեցին:

Թիւ 251. Ծաղկազարդեալ Աւետարանէ:

Փառք Անսկզբանն և սկիզբն ամենայնի. Եւ արդ ես յետինս ի կարգաւորաց. . (Յովհաննէս) և ողորմութեամբն նորին կատարեցի (յԱւետարանս) յամի յորում էր թուականն Հայոց. ԶԺԲ. յերկիրս Քաղբերունի. ի քաղաքիս Արճէշ կոչեցեալ. ընդ հովան-

[1] Զընդարձակ պատմութիւն երանեալ եպիսկոպոսիս տես ի Թիւն 245:

[2] Ինձ թուի թէ 137 թիւ Յայսմաւուրի գրիչն է:

[3] 161 թիւ Աւետարանի գրիչն է. ի խնդրոյ տանուտէր Աստուածատուրինս:

եաւ Սուրբ տաճարիս Գէորգեայ զօրավարին . . . ժամանակիս՝ յորում է Ջհանչա փաթշահն յաշխարհն Իրազաց . և է իշխան երկրիս՝ նորին որդին Հասան Ալին՝ արդ յայսմ ամի գրեցաւ Սուրբ Աւետարանս՝ ձեռամբ անարժան քահանայի Յովհաննու⁽¹⁾ . Աստուած ողորմի ասացէք անարժան գրչիս , և ծնողաց իմոց Մանգասարին և Փաշամէլիքին , և ուսուցչին իմոյ՝ քաջ բարունապետին Թուամայի⁽²⁾ :

է 4885 . է Հ.Կ. 14 . Ուրբ. է Վ.Պ. է Բեբեբ Գ.Պ. է Լան Տէր Յովհ. Որդ. :

252 . յԱւետարանէ .

Աւետարան գրեալ ի վանս Յաւղեաց քար ի Վայոց Ձոր գաւառի՝ ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին , և Սուրբ Կարապետիս երկնանման կաթուղիկէի . ի Թուին Հայկազեան տումարի . ԶԺԲ . ի կաթուղիկոսութեան Տէր Զաքարիայի . Բ . ամ⁽³⁾ . ի զանութեան Ջհանչահին ԻԳ . ամ⁽⁴⁾ :

է 1887 . է Վ.Պ. Պ.Պ. Արժ. Արժ. Լորդ. Թ.Պ.Պ.Պ.Պ.Պ.Պ. զոր օրհնակեալ էր է Ս.Մ.Պ. է կրկնայ Գեղեկեան :

1464 . — ԶԺԳ .

Տար. — Ես Սիմոն առ ի Ս . ամ . (սոմ) սպ . (սպիտակ) իմ աներձագերուն բաժինէն՝ որ ստկին շահ չի լինայ՝ ոչ տան վարձ լինայ , ոչ խանութին վարձ լինայ , ու զայն Բ . տղան սրահեմ հան-

[1] 167 . 230 . և 244 Թուոց գրիչն է . ի խնդրոյ Տէր Յոհաննէս կուսակրօն արեղային գրեցաւ նոյն Աւետարան :

[2] Եթէ Մեծոփեցի պատմագիր Թուամա բարուն չէ . ապա ուրեմն 176 Թըւով յիշատակեալ Թուամայ Մեծոփեցի գրիչն է :

[3] Է նոյն իսկ Տէր Զաքարիա կաթուղիկոսն Աղթամարայ՝ որ հրամանաւ Ջհան շահայ նստաւ յամի ԶԺ . կաթուղիկոս ի Սուրբ Էջմիածին :

[4] Ջհան շահս այս եր որդի Ղարայ Խ.սու.Փայ և եղբայր Սքանտարայ . որ հրամանաւ Շահ Ռուհայ որդւոյն Լանկթամուրայ՝ կարգեցաւ իշխան Ատրպատականի և սահմանակից վիճակաց նորին յամի ՊՁԶ . սա պաշարելով զբերդն Երընջակայ՝ յոր ապաստանեալ էր անգ աշխարհաւեր եղբայր նորին Սքանտար բռնաւորն՝ և ի ձեռն որդւոյն Սքանտարայ Շահուբաթ կոչեցելոյ՝ տայ հեղձամղձուկ առնել զվիթիարի անպարիշտն՝ մինչ կայր ի խոր քուն արբուիչ արքեցութեան . ըստ պատմութեան Թովմայի Մեծոփեցւոյ . էջ 107 . և 108 :

ցւոց՝ որ հիմիկ կուպահեմ. նացայ հալաւ շինեմ, ու զնաքայ կերակրեմ և վկայ պարոն վոյթ Սաչատուր. :

Տե՛ս է պարսեւեան Լեհատարանէ էջ 117 :

Մարգարէ առաջնորդ էր ուխտին վարագայ ի սոյն ԶԺԳ թուին. ըստ պատմութեան Յակոբ եպիսկոպոսի Թօփուղեան :

Թիւ . 253 . յԱւետարանէ .

Աստուած ահաւոր և սքանչելագործ՝ սահման սիրոյ և ողորմութեան. . Յայսմ Հայկազեան թուարերութեանս տուժարի, յորում էր թիւ համարոյ թուականին Թորգոմեան տոհմին. ԶԺԳ. աւարտագործեալ եղեւ սուրբ և կենսատու Աւետարանս. : Զոր իմ անարժանի և անպիտան և սուտ անուն Ստեփաննոս եպիսկոպոսիս. . և գրեցի զսա իմ անիմաստ և տկար մտօքս՝ ի գաւառիս Սորձենոյ՝ ի վանս՝ որ կոչի Խլպաշի, ընդ հովանեաւ Սուրբ Կարապետի. և ի բազմահաւաք սուրբ կրօնաւորացս՝ Տէր Յովանէսին, Տէր Նիկողոսին, Տէր Կիրակոսին, Տէր Մելքիսեդին, Տէր Յովանիսին, Տէր Մաղաքիային, Տէր Սիմաւոնին, Տէր Դաւթին, Տէր Աստուածատուրին, Տէր Կարապետին նորարողս չ հասակին. . յիշեցէք զհոգեւոր եղբայրն իմ զհանգուցեալ զՏէր Սենոփրիոսն և զգործակալքս սոցա զԹորոսն և զԴաւիթն, և զՅակոբն. . . և զԸնողսն իմ. . :

Տե՛ս է էջ 149: Բաւաւոյ տեղեւոյն մասմբ գիրք Նախնեան Արժ. Պօղոս Լուրդապետի. նոյնպէս տե՛ս և է Բ. հարսր Թորոս Աղբար գրոց էջ 341. և 342: Սոյն Աւետարանս յոյժ կոյ է Խորհրդոս Սուրբ Կարապետ եկեղեցին. ըստ մասնութեան Գեղ. Գործքին եղեւոյնս Սրատանցեանց :

Թիւ 254. Արծաթապատ Աւետարանէ .

Օրհնութիւն, գոհութիւն, բարեբանութիւն, Գթածին. : Եւ ես անպիտանս յամենայնի՝ Յակոբ գծող մարդս եղկելի տեսի զփափաքն Գուլշատին. . Փծուն գրչի Յակոբ. . քահանայի. . (գրեցաւ) ի քաղաքիս Արծկէ. ընդ հովանեաւ Սուրբ Տաճարի մօրս լուսոյ Աստուածածնի, և Սուրբ Ստեփաննոսի Նախավկայի, և մերոյս մենաստանի՝ Աքանչելագործ Սուրբ Նշանի. ի հայրապետութեան Տեառն Զաքարիայի Աղթամարցւոյ, ի զանութեան Զհանչայի Դարայ Ուսուֆի (որդւոյ) և ի թուականիս մերում ԶԺԳ. Արդ՝ որք հանդիպիք Սուրբ Աւետարանիս՝ յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս

ձեր զստացող Սուրբ Աւետարանիս գԳուշատ Խաթուն , և զճնող-
 սըն իւր զՍիրունն և զԴովլաթն և զեղբայրսն իւր զՆահըրմանն և
 զՄկրտիչն . . Յիշեցէիք ի յերկնաբացիկ յաղօթս ձեր զախմար գը-
 րիչս Յակօր (Նեարարենցն է) և զճնողսն իմ զՆերսէս քահանայն
 զփոխեցեալն առ Քրիստոս՝ և զԽաթուն Մէլիք . և զեղբայրն իմ
 զՀնորհալից քահանայն Ղազար⁽¹⁾ . և զամուսին իմ զՄեհրուբանն
 զփոխեցեալն ի Քրիստոս , և լի բերանով և ուղիղ սրտիւ Աստուած
 ողորմի ասացէք . և Աստուած ձեզ ողորմեացի ամէն : Եւ դարձեալ
 յիշեցէք զՄինաս եպիսկոպոսն զփոխեցեալն ի Քրիստոս⁽²⁾ . և զԱստ-
 ուածատուրն՝ և լի բերանով Աստուած ողորմի ասացէք . :

Է 1881 . Է Յունիս 27 . Է Բողէլ Է Սուրբ Գեորգ Էկեղեցի :

Թիւ 255 . յԱւետարանէ .

Օրհնութիւն , գոհութիւն , բարեբանութիւն Գթածին . : Եւ
 ես անպիտանս յամենայնի մեղուցեալ գրիչս Յօհաննէս⁽³⁾ ձեռնար-
 կեալ գրեցի զՍուրբ Աւետարանս՝ ի քաղաքիս Արծկէ . ընդ հովան-
 եաւ Սուրբ Աստուածածնի տաճարիս , և Սուրբ Ստեփաննոսի՝ ի
 հայրապետութեան Տեառն Չաքարիայի . և ի թագաւորութեան
 թագթին Ջհանշայի . ի թուականիս Հայոց 269 . ամին : . ստացողի
 սորա (կրօնաւոր) Տէր Մարտիրոսին՝ և ճնողաց իւրոց Տէր Յօհան-
 նէսին և Հռիփսիմին : . գրիչս Յովհաննէս յիշման արժանի արարէք ,
 և զճնողսն իմ զՅակօր քահանայ և զՍալչուկ խաթուն . այլ և
 զՅակօր որդեակն իմ , որ աշխատեցաւ ընդիս ի գրել Սուրբ Աւե-
 տարանիս . :

Է 1882 . Յունիս 28 . Չրեւելիքի Է Վան . Է Տերմայր Էկեղեցւոյ քրեանցի օրե-
 նակեցի՝ Է Էկեղեցի Տեր Գեորգ Էրեւնուրհ Է հանայնի Էգօրն Էնոյ հարազատի :

Թիւ 256 . յԱւետարանէ .

Փառք անպարագիծ էին . : Եւ արդ՝ ի յայսմ թուարերութեա-

[1] Ի վերայ վախճանի սորին որ դիպեալ է Ձի ամի Յակօր քահանայն Նեարարենց որ ի նմին ժամանակի եպիսկոպոսութեան աստիճան էր բարձրացեալ զկնի վախճանի Մեհրուբայ կողակցին իւրոյ . զմի սրտառուչ եղերական ոգբս յօրինեալ է . որոյ պատճէն կայ առ Արժ . Արիստակէս վարդապետ Տէր Սարգիսեան հայրենակիցն իմ :

[2] Թերեւս էր սա վանահայր Սքանչելագործայ Ուխտին և դէտ վիճակին Բրդնունեաց . և վասն վախճանին՝ չէր յիշատակեալ զանուն սորին՝ ընդ անուան Չաքարիայ կաթուղիկոսի :

[3] 142 թիւ ճաշոցի և 165 և 167 թիւ Աւետարանաց գրիչն է :

նրս Հայկական տուժարիս . ԶԺԳ. ի դառն և ի վշտարեր ժամանակի . . (գրեցաւ Աւետարանս ձեռամբ Մկրտչի՝ ի խնդրոյ Պետրոս քահանային :

Վերէն « Դասակարգութիւն » լինելու :

. Ես խոջա Գիշուկս տուի Սուրբ Աւետարանս ի դառն յԸնծայնից Սուրբ Աստուածածնին . :

Է 1865. է Նոյ. 7. է Վ. ան. է Տերմայր եկեղեցին :

Թիւ 257 . Հասուած 133 թիւ յԱւետարանէ .

Ի թուականիս Հայոց . ԶԺԳ. Տէր Զաքարիա կաթուղիկոսն էառ զԷջմիածինն⁽¹⁾ . և երկու տարի ի տեղն նստաւ . և դեղակուր եղեւ ի նոցանէ , և սրբութիւն Սուրբ Սաղիս , և Աւետարաներս , և գրեանքս ի ձեռն այլոց մատնեցաւ : Եւ ես Յովանէս մաղթասի թամեցի զՍուրբ Աւետարանս՝ յիշատակ ինձ և ծնողաց իմոց Դաւթին . :

Է 1866. է Նոյ. 7. Երեւանի Ս. Մարտիրոս :

1465 . — ԶԺԵ.

Տար . — Ասլան Մելիքեանց Աքանդար քաջ նահատակն՝ ի սոյն ԶԺԵ. թուականէն զկնի վկայեալ է վասն Քրիստոսի Աստուածութեան :

Թիւ 258 . Մաշտոցէ .

Յէշ . — . . Ո՛վ սուրբ ընթերցող անմեղադիր լեր . . որ ԶԺԵ. թուականին ծնայ զտառս ի գեօղն որ կոչի Սալկին . ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին ամէն : Եւ զիս անպիտան զՏէր Թովմայն՝ որ աշխատեցայ և գրեցի զտառս . ով որ յիշէ . :

Տէր է Գեր. Գրեթէն եղեմուսի Սրբ. Երեւանի Ա. հարս թուս Աղբուր էջ 77 .

[1] Փոխանակ դնելոյ թէ վախճանեցաւ Զաքարիա կաթուղիկոսն՝ զԷջմիածնի առուսն յիշատակէ . որ ըստ Մեքայէլ քահանայի Արծկեցւոյ՝ ի թիւն 233 գրքեալ յիւրում Աւետարանի ասէ, Զաքարիայն տիրէ կաթուղիկոսութեան Էջմիածնի ի ԶԺ. ամի : Իսկ ըստ անձանօթ գրչի միոյ Յայսմաւուրի զոր յառաջ բերեալ է Առաքել վարդապետ Գաւրիթեցի յիւրում պատմութեան էջ 405. 406 ևն կաթուղիկոսութիւն Զաքարիայի ի վերայ Էջմիածնի լեալ է յամի ԶԺ. Ըստ այսմ գրեն նաեւ 243 և 245 թուոց գրեչք՝ ուստի վերոյիշեալ ԶԺԵ. թուական Զաքարիայի մահն նշանակէ և ոչ այլ ինչ :

Թիւ 259 . ՄԱԷտարանէ .

Փառք անակիրքն էին . : Հստ այսմ օրինակի աստուածասէր և բարեպաշտ կինն Ազիզ . ասացաւ զՍուրբ Աւետարանս մեծափառագ սիրով և ետ ի դուռն Նորագեղոյ եկեղեցւոյն որ յանուն Սուրբ Գրիգորի . վասն յիշատակի հոգւոյ իւրոյ՝ և առն Խերադինին , և զաւակացն փոխեցելոցն ի Քրիստոս Վիրապարին և Աստուածատրին . . յիշեալիք ջերմեռանդ սիրով զսպասաւոր սուրբ եկեղեցւոյն (Նոր գեղջն) զՍարգիս քահանայն և զտանուտէրքն Նորագեղոյ Ամիրն , զՋանիբէկն , զԳալիկն , Սօլթանբէկն , զԱւագն , Սարգիսն , Մխիթարն , և զՊօղոսն , զՍիրատեղն , և զՄանիկն , զՂզիզբէկն . և զամենեւեան մեծ և փոքր՝ որ կամակից եղեն և օգնական : Եւ ես Ազիզս տվի զիմ հալալ դանձագին Սուրբ Աւետարանս ընծայ և նուէրք ի սուրբ եկեղեցիս Նորագեղոյ՝ յիշատակ մեր ննջեցելոցն և կենդանեացն : Եւ արդ՝ գրեցաւ Սուրբ Աւետարանս ի դաւառս Արարատեան՝ ի փառաւոր վանքն Եղիվարդայ⁽¹⁾ . ձեռամբ յոգնամեզ և փծուն գրչի Մատթէոսի : Ի կաթուղիկոսութեան Տեառն Յրաւրտակէսի . որ յայսմ ամի նստաւ յԱթոռ հայրապետութեան⁽²⁾ . և եպիսկոպոսութեան Տէր Յովաննէ . ի Հայոց Թառոյ⁽³⁾ իշխանութեան Ջհանշի՝ որդւոյ Ուսուֆի . ի վերակացութեան երկրիս պարոն Վիշելի , ի մեծ թուականիս Հայոց . ԶԺԴ : Այլ և յիշեցէք ի Քրիստոս զհոգեւոր հայրն մեր՝ զարի և քաջ զՍարգիս վարդապետըն⁽⁴⁾ . և զիւր միաբանքն՝ զՄխիթար արեղայն , որ է հայր վանացս Սուրբ Գեորգեղայ⁽⁵⁾ . և զայլ միեղէն եղբարցս՝ զօրրասէր և զհեղահոգի Ալեքսանն . և զՄատթէոսն՝ և զՅովհաննէսն : Եւ որ յիշէք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ . :

Ի 1879. Ի Մայիս 14. Ի Բաբերդ Ի Սուրբ Աստուածատրին Եկեղեցին :

Թիւ 260 . ՄԱԷտարանէ .

Փառք քեզ . : (գրեցաւ Սուրբ Աւետարանս ի) ԶԺԴ. ամի յարեթական տուժարի տոհմիս . ի Սուրբ և Աստուածակոխ քաղաքս

[1] Անկանի ուխտս ի Կոտայս գաւառի .
 [2] Ուրեմն Այս Արիստակէս կաթուղիկոսն այլ է՝ յայն Արիստակէսէն . զոր յիշէ խաչատուր երէցն ի թվ. ՊՂԷ. յիւրոսմ Գանձարանի . տես ի թիւն 168 ի վերոյ .
 [3] Այն վանք որ յանուն Ամենափրկչին կայ շինեալ ի Գրիգոր Մագիստրոս իշխանէ , կայ հանդեպ Գառնոյ ի հարաւակոյս յարեւմուտս նորին . և այժմ անցեալ է ի վաղուց հետէ ի շարս շարաթացեալ մենաստանացն Արարատոյ .
 [4] Վանահայրն Եղիվարդայ ուխտին .
 [5] Ուխտս է ի մերձակայս քաղաքին Երեւանոյ .

Երուսաղէմ, ընդ հովանեաւ Սրբոյն Յակոբայ դամբարանի՝ որդւոյն Զերեղեայ Առաքելոյն . . ձեռամբ Թորոս արեղայի . :

Է 1854. է Դեկտ. 7. է Մարտիանոս Սուրբ Աստուածածին եկեղեցին .

Թիւ 261 . Յայտնաւորէ .

Փառք Եռանձնեայ եղակի համակամ՝ միաշար անորիչ՝ անբաժանելի անքակ և անքանակ միասնական և համագոյ Սուրբ Երրորդութեան . : Աւարտեցաւ սուրբ Գիրքս . ԶԺԴ . ձեռամբ յողնամեղ և անարհեստ գրչի՝ Վարդան մեղաւոր և անարժան երիցու (1) : Եւ գրեցաւ սուրբ գիրքս ի քաղաքս ի Վան ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին , և Սուրբ Վարդանայ զօրավարին , և Սուրբ Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի , և Սուրբ Ստեփաննոսի Նախապիային , և Սուրբ Սահակ հայրապետին . ի կաթողիկոսութեան (Աղթամարայ) Տեառն Ստեփաննոսի , և մերոյ եպիսկոպոսին՝ առաջնորդին Վարդայ Տէր Յովանիսին մեծին . (և Տէր Յոհանիսի) փոքուն . ի թագաւորութեան Զհանչային , որ այս երկու ամ է (ԶԺԲ . էն սկըսեալ) որ նստեր է ի վերայ Բաղդատ քաղաքին՝ և խսարեր զորդին իւր զՓիրպուտախն . որոյ Բրիատոս Աստուած գինքն ընդ երկայն աւուրս առնէ , և զիւր թագաւորութիւն օրհնէ ամէն . : Ի խընդրոյ սրբահոգի քահանային Աւետիսի . որ ստացաւ զսուրբ գիրքս և եղ ի դուռն Սուրբ Պօղոս եկեղեցւոյն . . և զիմ ծնողքն (գրիչ Վարդան քահանային) զՅովաննէս քահանայն և զԶմրութ , և զորդիքն իմ զՆիկողայոս քահանայն՝ որ սակաւ մի նա գրեաց . և զՅոհաննէսն և զԳրիգորն . : Յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զԱւետիս քահանայն . և զԾնողսն իւր զՄկրտիչ քահանայն՝ և զՄելիք խաթունն՝ որ ցանկացող եղեն այսմ սուրբ գրոց՝ և ետուն ի դուռն Սուրբ Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի անջինջ յիշատակ իւրեանց՝ և ամենայն արեան մերձաւորացն ի ձեռն Սուրբ քահանայից՝ Տէր Ստեփաննոսին և Տէր Սաշատուրին՝ և Տէր Կարապետին՝ և Տէր Թումին՝ և միւս Տէր Կարապետին , և միւս Տէր Ստեփաննոսին , և Տէր Դանիէլին , և Տէր Յովանիսին , և սարկաւագացն առ հասարակ(2)

Է 1882. Յունիս 30 է վ. և է Մարտի Պօղոս եկեղեցին .

[1] 134 և 159 Թիւ Յայտնաւորաց . 186. 190. և 191 Թիւ Աւետարանայ արդիւնաւոր գրիչն է . որոյ . յիշատակն օրհնութեամբ եղիցի :

[2] Սուրբ Պօղոս եկեղեցին զոր երբեմն ութ քահանայ և նոյնչափ եւս սարկաւագ պահեալ է ի գրկի իւրում . այժմ երկու քահանայ միայն ունի :

Թիւ 262 . Մաշտոցէ .

Գրեալ յԱստուածատուր երկցէ ի թվ. ԶԺԴ. ի հայրապետութեան Տէր Սարգսի, ընդ հովանեաւ Սուրբ Աթոռոյս՝ որ կոչի Տիրաշէն :

Է 1887. է վ. ան. աս Աբշ. Աբսին Լարդուկէ Թօթիմիտան՝ զոր օրինակեալ է յԵրզնայ է վ. ան. Սուրբ կերակուսի :

1466 . — ԶԺԵ .

Տար . — Ազամ գրիչ գրէ զԳանձարան մի յԱրծկէ քաղաքի :
յԷջնիմիտին :

Ջհանշայն զԲաղդատն էառ . սա զորդին սպան :
Մերտիւ Կահանայ Կարեփի :

Յետ վախճանի Արիստակէս կաթողիկոսին⁽¹⁾ նստի Սարգիս Բ. ի յաթոռն .

Շահաբաւեան Յահանէս Երեմիայի Ա. հար . էջ 212 :

Նոյն Տէր Գրիգոր և նոյն Տէր Արիստակէս՝ այլ և եղեւ կաթողիկոս Տէր Սարգիս :

Արատեւ Կարտիւ էջ 422 :

Տէր Սարգիս նստի կաթողիկոս յԷջմիածին :
էջ 20. Զամբր հարեան Սիմեոն Կաթողիկոսի Երեմիայի :

Թիւ 263 . Մաշտոցէ .

Աւարտեցաւ Մաշտոցս . . յամի ԶԺԵ. ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի՝ և Սուրբ Գէորգայ զօրավարին . ի . . (եղծեալ էր մրով) Եւ յեպիսկոպոսութեան այս նահանգի՝ Տէր Ստեփաննոս վարդապետի, և Տէր Յովաննէս եպիսկոպոսի . ծաղկեցուցէ զնոսա Տէր Աստուած ի վերայ ծաղկեալ գաւազանի իւրեանց : Եղեւ արումն Սուրբ Մաշտոցիս ձեռամբ սուտ անուն քահանայի Հէրա-

[1] Սոյն ԶԺԵ թվ. գեռ. չէր վախճանեալ Արիստակէս :

պէտի : Յիշեցէք զստացող սուրբ գրոցս զբարեպաշտ և զերկիւղած կինն Սալչուկ Սաթուենն . . յիշատակ իւր և ծնողաց նորին Ստեփաննոսին և Գուլիգարին . և ջոջ պապուն Յերուն աղին . և մամուն Հէրմէլիքին . : Սյս գիրքս . . Եղեգնձոր Աքանտարի աղայն Յովաննէս գնեց և երեւ յիշատակ . . յիշեցէք զծնողսն իմ (գրչին) զՅովաննէսն և զՍուլիքան Մէլիքն և զաւակն իմ զնորընծայ Յովաննէսն :

Տէ՛ր ի Գեր. Գարեգին Եղեգնձորի Արքեպիսկոպոսի Թորոս Աղբար Ա. հար. էջ 231. և 232 : Նոյնդէն և Բ. հարար էջ 337 և 338 :

Թիւ 264 . Ամիրդօլվաթի Բժշկարան .

Անուն Աստուծոյ Գթածին . : Յայսպէս գիրմն շինեցի՝ ես անպիտան և անարժան նուաստ ծառայս Աստուծոյ Ամիրդօլվաթ բրժիշկ Ամասիացի ի մայրաքաղաքն ի Ֆիլիպայ . ի թուականութեանըս Հայոց . ԶԺԵ . թարգմանեցաւ պատուական Բժշկարանս ի թըւականիս Հայոց ԶԺԸ ամին . Գեկա . ԻԶ . ի կաթուղիկոսութեան Տէր Ընթատակիսի , և յեպիսկոպոսութեան⁽¹⁾ Տէր Յովակիմին . որ կարդաք կամ օրինակէք թողութիւն մեղաց խնդրեցէք ի Քրիստոսէ թարգմանողի գրոցս Ամիրդօլվաթ բժշկին . և Աստուած զձեզ յիշէ յիւր միւսանգամ զալուստն ամէն :

է 1880 : Յունի 10 . է Կ . Պօլէն է Ղալաթիոյ Մարտիրոսարան :

Թիւ 265 . Գանձարանէ .

Փառք և պատիւ Հօր Անծնի . : Եւ արդ ես ունայնս . . և անյիշելիս ի գրչաց՝ Մկրտիչ եղկելի ոգիս՝ անուամբ և եթ արեղայս . . գծագրեցի զսա . . յԱստուածախնամ կղզիս Աղթամար . ընդհովանեաւ հռչակաւոր և երկնանման գումբէթայարկ Սուրբ Սաչի տաճարիս . և ի հայրապետութեան Ստեփաննոսի . և ի թուականութեան Հայկազեան տումարիս ԶԺԵ : . Մկրտիչ սոսկ անուն արեղայս . . գծագրող սորա՝ յիշման արժանի առնէք զանարժանութիւնս իմ . նաեւ զծնողքն իմ զԹումայ և զՇահլմրաթ . : Յիշեցէք յաղօթս ձեր զստացող Սուրբ Գանձարանիս զՏէր Յովաննէսն և զորդիսն զՏէր Առաքելն և զՏէր Մովսէսն , և զԹումէն և զՍահակն . :

է 1880 . Նոյ . 9 . է վարդ .

[1] Թերեւս Կ . Պօլսոյ և ոչ Ֆիլիպէի :

Թիւ 266 . Յայտնաւորէ .

Փառք Ամենասուրբ Երրորդութեան . . Արդ՝ գրեցաւ սա . . .
 յերկիրս Մոկաց՝ ի գեղս որ Փասա վանք կոչի⁽¹⁾ . ընդ հովանեաւ
 Սուրբ Աստուածածնիս , և Սուրբ Գրիգորիս . և Սուրբ Կարապե-
 տիս՝ ձեռամբ մեղաւոր Իսրայէլ գրչիս . . և ի թուարերութեանս
 Հայոց՝ ԶԺԵ . ամին . ի դանութիւն Ջհանշին՝ և ի հայրապետու-
 թիւն նորընծայ Տէր Ստեփաննոսին Աղթամարայ . . սուրբք . . բա-
 րեխօս լերուք առ Քրիստոս՝ որ պահէ զդասս քահանայից Սուրբ
 Ուխտիս Առբերդոյ վանիցս⁽²⁾ . զՍաչատուր ստացող տառիս , և զե-
 րախտաւոր վարպետն զՏէր Մկրտիչն , և զՏէր Կարապետն , և
 զՏէր Մարտիրոսն , և զրաբունապետն՝ զԿիրակոս վարդապետն՝ և
 զՆերսէս հերպետն , և զՍտեփաննոս ճգնաւորն՝ և զՅովանէսն Բէլ-
 ւեցին⁽³⁾ . և զՅովանէս Աղթեցին⁽⁴⁾ . և զՏէր Աւետիսն . և զՏէր
 Մարտիրոսն , և զԱստուածատուր սարկաւազն՝ և զՊօղոս մաճա-
 կալն , և զտնտես զՍտեփաննոսն , և զՉաղացական Մարտիրոսն , և
 զՄկրտիչ հովիւն ամէն . . արդ անկեալ յերես աղաչեմ զդասս քա-
 հանայիցդ՝ որ կայք ի սպասաւորութիւն Առբերդոյ վանից Սուրբ
 Աստուածածնիս . և Առբերդոյ⁽⁵⁾ տանուտրայք և տանտիկնայք ,
 զձեր աղն ու հացն՝ որ ի գրել գրոցս կերաք մեզ հալալ արարէք՝
 և խոչորութեան գրոցս անմեղադիր կալաք (լերուք) զի կար մեր
 այս է :

Է 1866, Նոյ. 8. յԱղթամար :

Թիւ 267 : յԱւետարանէ .

Օրհնութիւն գոհութիւն . : Եւ ես անպիտանս յամենայնի՝ մե-
 ղուցեալ գրիչս Ատոմ՝ . . (քահանայ) ձեռնարկեալ գրեցի զՍուրբ
 Աւետարանս՝ ի քաղաքս Արծկէ . ընդ հովանեաւ ամենամաքուր

[1] Այժմ՝ Փեասոյ վանք և երեք Հայ տամբ կայ միայն :

[2] Թերեւս վանքն Ակնդաշտոյ կամի ակնարկել՝ որ է ի մերձակայս Փեաս-
 վանք գեղջն :

[3] Բէլու գիւղն կայ ի ծայրն գաւառին Ոչտունեաց յարեւմտից կուսէ ի
 սահմանակցութեան Աղձնեաց՝ հանդերձ 72 Հայ ընտանեօք :

[4] 20 տամբ կայ կանգուն Յաղթ գեղն ի Կարկառ գաւառի Մոկաց աշ-
 խարհին :

[5] Զսոցն Առբերդ գիւղն չէ եղեալ ի կարգ շարի գիւղօրէից Մոկաց աշ-
 խարհին՝ Տէր Բարսեղեան Գեորգ հանգուցեալ վարդապետն յիւրում տեղագրու-
 թեան՝ ուստի մնայ ինձ անծանօթ :

Սուրբ Աստուածածնի տաճարիս, և Սուրբ Ստեփաննոսի Նախա-
վկայիս. և ամենազօր Սուրբ Նշանիս Պատերազմի. ի հայրապե-
տութեան Տեառն Գրիգորի՝ ընդհանուր Հայոց կաթողիկոսի.
Իսկ յաշխարհակալութեան Զհանչայի՝ որդւոյ Ղարայ Ուսուֆին. ի
թուականիս մերում ԶԺԵ ամի. :

† 1866. Սեպտ. 8. յԱրժէւ է Լնն Արժամբէր Սուրբ Աստուածածնի. է նախ-
նեոյ Սուրբայ լանդ իւլեցեւոյ :

Թիւ 268. յԱւետարանէ .

Փառք Անսկզբանն և Սկիզբն ամենայնի. : Արդ՝ գրեցաւ Սուրբ
Աւետարանս ի յարքունական երկիրս Մոկաց՝ ի գեղ Անապատիս՝
որ Փասայ վանք կոչի՝ ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, և
Սուրբ Գրիգորիս, և Սուրբ Կարապետիս, և այլ սրբոցս որ աստ
հանգուցեալ կան. ի թուականիս Հայոց. ԶԺԵ. ամին. ի հայրա-
պետութեան նորընծայ կաթողիկոսի Տէր Ստեփաննոսի, և թա-
գաւորին Սմբատայ(1). ձեռամբ մեղաւոր և անարժան գրչի Իսրա-
յէլ, սուս անունս ի կարգաւորաց(2). և զերախտաւոր վար-
պետք մեր զՄարգարայ Կոռեցին, և զՎարդան մահատասին՝ որ մա-
կանուն Մաքի կոչի, լի բերանով ասացէք Աստուած ողորմի. :

† 1866. Հոկ. 14 է Բեբեբէ է Լնն Տեր Բարսեղ Որդւոյ. որ կոյ լինել աս-
տին Պանդի հասցեբոյն՝ որ Լուկ է լին վանայ :

Թիւ 269. Նարեկէ .

Փառք և պատիւ և գոհութիւն Ամենասուրբ Երրորդութեան. .
ողորմութեամբ հզօրին Յիսուսի Քրիստոսի սկսայ՝ և օգնութեամբ
նորին կատարեցի. ես անարժանս և մեղօք զառածեալս Յովհան-
նէս անուն. . զկտակ մաղթանաց ամենագով սուրբ և հանճարեղ՝
մեծանուն Գրիգորի Նարեկացւոյ. . որում ցանկացող եղեալ Յո-
հաննէս քահանայն. : Բայց գրեցաւ ի թուականիս Հայոց. ԶԺԵ. ի
գաւառիս Մոկաց՝ ի գեղս՝ որ Դաշա կոչի(3). ընդ հովանեաւ Ան-
ջողաց՝ Սուրբ Աստուածածնիս, և Սուրբ Յակոբ հայրապետիս :

† 1866. յԱրեւ 28. է Լնն Նարեկայ՝ Բնւ որդեւէ է է Եղեղաբարսեղին
վանայ անդ. որ հանգուցեալ Լննհայրն սուրբն Հիւանդե Յովհէ Վարդապետ՝ որ
յետ Լուկան է 1856 ամի. նախորդ Լննհօր սուրբն՝ հանճարեղ Մկրտիչ Վարդապե-
տի՝ յաջորդեալ էր է Դեղե նորին :

[1] Յայտ է պատմագիտաց Ազգիս՝ զի Հայք չունէին ի սմին ժամանակի թագ
և իշխանութիւն. ուստի թուի ինձ թէ այս թագաւոր տիպղոս կրող անձն՝ մեծ
ոմն իշխան լեալ է ի մէջ Մոկաց աշխարհին՝ և ոչ թագաւոր :

[2] 266 թիւ Յայամաւորի գրեցն է :

[3] 40 տամբ Հայ ընտանեօք կոյ շէնս կանգուն :

Թիւ 270 . Ճաշու գիրք :

Գրեալ թիւ . ԶԺԵ . ձեռամբ Բ . գրչաց Յակոբ քահանայի և Պօղոս սարկաւազի՝ ի Սարբերդ քաղաքի՝ ի թաղն Սինամուտ , ի կաթուղիկոսութեան Տեառն Սարգսի , և յեպիսկոպոսութեան Տեառն Յոհաննիսի . և ամիրայութեան Հասան Սանի՝ ի խնդրոյ Տէր Յոհաննէս եպիսկոպոսին , ընդ հովանեաւ Սուրբ Սարգսի զօրավարին . . ի յիշատակ իւր և ծնողացն Լիպարտին և Մանանային . :

Տե՛ս է Գեբ : Ար՝... Գրեթէն Եղիսիպոսի Բ , հար . Թարս Ար՝... էլ 479 :

Թիւ 271 . Գանձարանէ .

. . Գրեցաւ Գանձատետրս ի թիւիս Հայոց . ԶԺԵ . ընդ հովանեաւ Սուրբ Յովանիսին , և Սուրբ Աստուածածնին , և Սուրբ Ստեփաննոս Նախավկային Եղբրդոս կոչեցեալ . ձեռամբ Ստեփաննոս գրչի . յառաջնորդութեան սուրբ Ուխտիս Տէր Յովանէս հերպետի և Տէր Յովհաննէս եպիսկոպոսին . նաեւ այլ միաբանից մեծի և փոքու : Այս ամենայն եկն ի վերայ մեր վասն ծովացեալ մեղաց մերոց . քանզի յայսմ ամի քակեցին զբերդն Մշոյ և շատ չարիք արարին : Եւ Ձհանչէն զՊաղղատն էսո՛ւ՝ և երկու ամ ի խսար սղահեց :

1887. է վ. ան Ար՝ . Ար՝... Լարդապետ Թօթմախեան . զը ընդօրինակեալ էր է Մշոյ Ար՝... Յոհաննէս վան :

1467. — ԶԺԶ .

Տար . — Հասան բէկն սպան զՁհանչէն :

Մերթիւ Կահանայ Գրեթէն :

Հասան բէկն՝ (ուզուեն Հասան մականուանեալն՝ սպան զՁհանչան) գնաց ի Վրասցատուն և գերեցոյց :

Տե՛ս Ար՝... էլ 598 :

Թիւ . ԶԺԶ . զՊարոնչոյսն նահատակեցին ի Կաֆայ :

Գրեթէն Գրեթէն Գրեթէն[1] .

[1] Ինձ թուի թէ երկու Պարոնչոյս անուամբ վկայ լեալ են ի Կաֆայ քաղաքէն մինն ի սոյն ԶԺԶ թուին որպէս գնէ Գրեթոր գպերն վարագեցի . և միւսըն . ՌԺԶ . ամի՝ յաւուրս Բ . Սուլթան Սելիմայ որպէս գրէ ի վարսնորին վրդանէս վարդապետն ականատես : Իսկ Չամչեան Հ . Մեքայէլ յիւրում տարեգրութեան որ կայ ի վերջ Գ . հատորի պատմութեան իւրում՝ գրէ այսպէս . « Պարոնչոյս «նահատակի ի Կաֆա՝ ի թուին Հայոց . ՌԺԶ՝ կամ ԶԺԶ : » Եթէ Պարոնչոյս անուամբ երկու նահատակ չեն եղեալ՝ ՌԺԶ թուականաւն է ճիշտ :

ԶՊարոնելոյսն նահատակեցին ի Կաֆայ :

Տե՛ս յԱռաքել գոր. էջ 599 :

Յիսուսի Բրիստոսի ծառայ Սաչատուր Արք եպիսկոպոս . ի թուականութեանս ԶԺԶ. ի ժամանակս երիցս երանեալ հայրապետի հանուրց Հայաստանեայց Տեառն Յառիստակէս կաթուղիկոսի . և Պաարիարքի Վաղարշաբաթու սուրբ յԱթոռն էջմիածնի . նըլաաստս ի բանասիրաց Սաչատուր եպիսկոպոս՝ ձեռնադրեցայ եպիսկոպոս Իլովի աթոռոյն և իւր վիճակացն՝ և ողորմութեամբն Աստուծոյ եկեալ հասաք ի մեր հօտս՝ որ յԱստուծոյ և ի մեր հայրապետէն յանձնեցաւ մեզ : Եւ ի սոյն աւուրս շնորհօք Փրկչին եկեալ հասեալ կային սուրբ և պարծանաց պարծանք նուիրակքն Տէր Անանիաս արհի եպիսկոպոսն և Տէր Թուսա եպիսկոպոսն (թերեւս նուիրակք էջմիածնի և Երուսաղէմի) յաստուածաշէն և տիրախնամ քաղաքս Իլովս . և հանդիսիւ ժողովեցան միագումար ամենայն օրհնութեանց արժանաւոր երջանիկ և ուղղափառ ժողովուրդ քաղաքիս ի գաւիթս աստուածային լուսոյ մօրս ի մենաստանիս , որ է ընդդէմ քաղաքիս . . : Եւ այլ թէ կաթուղիկոսն Տէր Առիստակէսն վերստին հրաման այնէ (առնէ) և Զլով քաղաքս տէրունի այնէ , գրով ես պատասխան տամ կաթուղիկոսին :

Պատմութեան Անոյ էջ 110 :

Արձ. — Կամաւն Աստուծոյ՝ ես Սայդուն որդի պարոն Աղբաստոյ տուի իմ հայրենեացն զՏանձաձոր ի Սուրբ Ուխտս Փանձասարայ՝ յառաջնորդութեան Տէր Եղիային . սոքա (միաբանք) ետուն տարին երեք ժամ . ով զայս հայրենիքս հանէ ի Սուրբ եկեղեցւոյս ՅԺԸ հայրապետացն նղոված է և Սուրբ Ովանէսիս (Յոհաննիսէս) կապած՝ թվ. ԶԺԶ :

Շահի. Բ. 375: Զուլեխան Ա. հարսր էջ 185. Բ. հարսր 495 :

Կամաւն Ամենակալին Աստուծոյ , ես տէր Եղիայ առաջնորդ սուրբ ուխտիս Փանձասարայ , տուի զիմ հոգւոյ արդիւնս մէկ Յայսմաւուրք , մէկ Տարեգիրք , մէկ շուրջառ . Աղախայ երեք ստակն . ով ոք զայս գրեանքս և հայրենիքս հանէ ի Սուրբ Ովհաննիսէս ՅԺԸ . հայրապետացն նղոված է . ԶԺԶ թուիս :

Շահի. Բ. հարսր. 374: Զուլեխան Ա. հարսր 187 :

Կամաւն Աստուծոյ ես Ս. յտինս և Սիմէնս որդիք Աթաբակին՝

տուաք Ալմաճատաւի հողն ի սուրբ ուխտս Գանձասարայ առաջ-
նորդութամբ Տէր Ներսէսին՝ որ զհողն հանել ջանայ ՅԺԸ. հայ-
րապետացն նզոված է և մասն Յուդային առցէ. ԶԺԶ:

Շահ. Բ. 375: Զուլէմ. Ա. 185:

Թիւ 272. յԱւետարանէ.

Յէշ.— Օրհնութիւն. : Եւ արդ՝ գրեցաւ սա ի քաղաքս Արծ-
կէ. ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնի տաճարիս, և Սուրբ
Նշանիս Պատերազմի. ի թուին Հայոց. ԶԺԶ. ի թագաւորութեան
որդոյ Զհանչայի. Հասան Ալիի միրզին: Եւ ի կաթուղիկոսութեան
Տեառն Ընքստակէսի ընդհանուր Հայոց, Սղթամարայ Տեառն Տէր
Ստեփաննոսի: Յայսմ ամի յորում Ուզուն Հասան զԶհանչէն կո-
տորեաց:(¹) Եւ մեք յահ ենք (եմք) և ի փախ. և ի դառնութեան
ժամանակի, ձեռամբ Յակոբ եպիսկոպոսի:(²)

Է 1887. է վ. ան. — Արեւն Լորդոպետ Թօթմիեան որոյ բնագիրն էայ է Դերին
Գեղի եկեղեցին:

Թիւ 273. ճառքնտիրէ.

Փառք Անճառելոյ Եռահիւսակ դաւանութեան. : . զոր տես-
եալ զայս աստուածային Գանձս մեղաւոր և անարժան կիրակոս է-
րէցն՝ որ մակ անուն Զօշկանց ասի, և սկսաւ գրել տկար հողով.
բազում և մեծ աշխատութեամբ հասուցի յաւարտումն զսուրբ գիր-
քս ճառարան՝ սկսայ անարժան ձեռօք իմովք ի Բաղէշ. և գը-
րեցի ընդ հովանեաւ Հինգ Սորանացն՝ Սուրբ Աստուածածնին՝ և
Սուրբ Սաշին. և Սուրբ Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, և ատե-
նահաս Սուրբ Սարգսի զօրավարին. և սոցին աջողութեամբն ա-
ւարտեցաւ սուրբ գիրքս կղզոջն յՍղթամար. ընդ հովանեաւ Սուրբ
Սաշին՝ և Սուրբ Գէորգայ զօրավարին. ի թուականիս Հայոց ԶԺԶ.
ի հայրապետութիւն Տեառն Ստեփաննոսի. որ յայսմ ամի գնաց
յԵջմիածին՝ և տիրեաց յամենայն Հայկազեան ազգի(³) և ի դանու-

[1] Որպէս գրեն վերագոյն տարեգիր Մկրտիչ քահանայն և Առաքել պատ-
մագիրն.

[2] Ինձ թուի թէ Նեարարենց երգասաց նշանաւոր եպիսկոպոսն է:

[3] Անճամոթ էր դէպս այս ի գաւազանագրութեան Գաւրիժեցի Առաքել
վարդապետ պատմագրի. և այլ տարեգրաց Ազգիս մինչև ցայսօր ժամանակի:

Թեան Ջհանշայի . և Բաղէշ քաղաքի ամիրու թեան Մէլիք Շարաֆի . և ի մեր առաջնորդութեան Տէր Յովաննէս եպիսկոպոսի⁽¹⁾ . աւարտեցաւ ճառս ձեռամբ մեղաւոր գրչի Կիրակոսի՝ յիշատակ հոգւոյ իւրոյ՝ և եղբարցն Յակոբին , և ծնողացն Ջանիրէկին և Նիգարին . և հանգուցեալ եղբարցն Ստեփաննոսին և Հերապետին՝ Սադաղին և Գուռջիրէկին՝ և քրւերցն մահդասի Սալչուկին և Հնազանդին՝ և կենակցին իմոյ Սօլտանին . . և ուսուցողին (գրիչ Կիրակոս քահանային) Յովաննէս քահանային , և թղթի կոկողին . . (Յայլ տեղէ) Աստուած ողորմի ասացէք ստացողի գրոցս և գրչին Կիրակոս իրիցուն . և ծնողաց Ջանիրէկին և Նիգարին . . և հօր եղբարցն Ատոմ քահանային և Վարդան քահանային . . և զհոգեւոր հայրն մեր զՏէր Թումէն . որ բազում աշխատութիւն կրեց հետ մեզ՝ և զուսուցիչն իմ զՅովաննէս քահանայն զՄանկասարենցն⁽²⁾ ամէն

† 1881. Յունիս 24: Չորեքշաբթի է Բաղէշ . որ Տէր Մուլէիս քահանայ Սահրաթի [3] :

Թիւ 274 . յԱւետարանէ .

Եւ արդ՝ ես յետինս ի գրչաց՝ և անարժանս ի կարգաւորաց՝ սուտ անուն քահանայ կարապետ . տեսի զսէր և զփափազ պատուական քահանային Յովաննէսի և զորդւոյ Սարգիս քահանայի՝ զոր ունէին առ հոգեւորն և իմով իսկ տկարութեամբս . . կատար-

[1] Թամուրենց մականուանելոյ, զոր յիշատակէ Պոռեցի Մարտիրոս վարդապետըն ի վարս նոր վկային Քրիստոսի՝ Սրբոյն Յոհաննու եպիսկոպոսին Գլակայ վանուց վանահօրն . որ կատարեցաւ ի Բաղէշ հրամանաւ Ամիր Շարաֆայ ի ԶԺԹ թուականին Հայոց՝ պայծառ և փառաւոր նահատակութեամբ տես ի վերոյ ի թիւսն 245 և 246 :

[2] 154 թիւ Մեռելյարոյց Աւետարանի և 219 թիւ Ճաշոցի նշանաւոր և երեւելի գրիչն է : Էր սա յաշակերտաց մեծի վարժապետին Հայոց՝ Սրբոյն Թովմայի Մեծոփեցւոյ պատմագրի :

[3] Սոյն հոգեւորն Մովսէս հեղահամբոյր քահանայն՝ նախ քան զքահանայութիւն իւր էր ճատար քարտաշ և տաճարաշէն . թէ ինքն և թէ հանգուցեալ հայրն իւր Ոահրատ երեւելին . որոց գեղեցիկ ձեռակերտք տեսանին ի տեղիս տեղիս թէ ի Վան՝ որպէս է հոյակապ զանգակատուն Նարեկայ , թէ ի Պուլա . նուիս որպէս է տաճարն կոփայ Սուրբ Դանիէլի ուխտին . և առաւել եւս ի Բաղէշ . որպէս են հոյակապ գմբէթք խնդրակատար Սուրբ Աստուածածնի և Ամիրգօլայ վանօրէիցն .

րեցի զսա մեղսամած մատամբս իմով ի մայրաքաղաքիս յՈստան⁽¹⁾ .
 ի դրունս Սուրբ Աստուածածնին Քարի՝ որ է ծովահայեաց , ընդ
 հովանեաւ մեծի Սուրբ Ստեփաննոս Նախավկային , ի հայրապե-
 տութեան (Աղթամարայ) Տեառն Ստեփաննոսի . և ի թուականիս
 Հայոց ԶԺԶ : Եւ գծագրեցի զսա ի յստոյգ և յընտիր օրինակէ՝ կե-
 նօք տառապանօք և բազում տրտմութեամբ՝ ի դառն և ի վըշ-
 լից ժամանակիս . . .

է 1866. Մարտ 15. է Սեբաստիոս Սուրբ Սուրբի եկեղեցին .

Թիւ 275 : Ճառընտիրէ .

Փառք Համագոյ և Միասնական Անբաժանելի Սուրբ Երրորդ-
 դութեան . : Եւ արդ՝ ես անպտուղս ի բարեաց . . սոսկ անուն ա-
 բեղայ Հայրապետ⁽²⁾ բազում և մեծ աշխատութեամբ հասուցի զսա
 յաւարտումն . զկէսն ի Սուրբ Էջմիածինն⁽³⁾ . և զկէսն յաստուա-
 ծաբնակ կղզիս Աղթամար . ընդ հովանեաւ գմբէթայարկ Սուրբ
 Սաչիս՝ և Սուրբ Սարգիս զօրավարիս՝ և այլ ամենայն սրբոցս՝ որ
 աստ կան հաւաքեալ . ի հայրապետութեան Տեառն Ստեփաննո-
 սի Հայոց կաթուղիկոսի Աղթամարայ շնորհալից Աթոռոյս . ի թը-
 ւականութեանս Հայոց . ԶԺԶ . ի ժամանակիս՝ յորում կամք ընդ
 հարկի և ի ծառայութեան ազգին նետողաց , (ի խնդրոյ Ֆախըր-
 կանց տանուտէր Յոհաննու) :

է 1865. Սեպտ. 23. է վ. ան է Սուրբ Սահակ եկեղեցին .

Թիւ 276 . Գանձարանէ թիւ չունէր .

Փառք . . Սուրբ Երրորդութեան . : Գրեցաւ եղանակաւոր տա-
 ուրս ձեռամբ . . կարապետ գրչի . . ի հայրապետութեան Տեառն

[1] 124 թիւ ճառոցի , 127 թիւ Գանձարանի , 231 թիւ ճառոցի և 239 թիւ
 Աւետարանի գեղեցկագիր գրիչն է :

[2] Էր սա մինն յերեւելի գրչացն Աղթամարայ , և քեռօրդի Մինասնց
 Թովմոյ բարունուոյ ժամանակագրի . տես նաև ի թիւն 144 Աւետարանի յիշա-
 տակարանն ի վերոյ :

[3] Ինձ թուի թէ սոյն Հայրապետ աբեղայն ևւս գնացեալ էր ընդ Ստեփան-
 նոս կաթուղիկոսին Աղթամարայ ի Սուրբ Էջմիածին . որպէս յիշէ յիւրում յիշա-
 տակարանի Զօշկանց Աիրակոս քահանայն Բաղիշեցի ի թիւն 273 Ճառընտիր մա-
 տենի . քանզի էր սա այր նշանաւոր և միանգամայն մօրքեռ որդի Ստեփաննոս
 կաթուղիկոսին Աղթամարայ :

Ստեփաննոսի⁽¹⁾ և մերոյ առաջնորդի Սուրբ Ռւխտիս Վարազայ՝
Տէր Յովաննէս եպիսկոպոսի . և ի թագաւորութեան Ջհանշայ
փաթշահին . որ յայսմ ամի եկեալ բազում զօրօք՝ և կամի պատե-
րազմել ընդ Հասան բէկին⁽²⁾ զոր Տէր Աստուած յաջողունի տայցէ
ամա . (Ջհանշահայ) վասն զի պարիսպ ամուր է քրիստոնէից⁽³⁾ . Եւ
աւարտեցաք ի քաղաքս Վան . ընդ հովանեաւ Սուրբ Աստուածաձ-
նիս , և Նախավկայ Սուրբ Ստեփաննոսիս , և Սուրբ Սահակ հայ-
րապետիս , և այլ . :

Է 1883 . Յունի 3 . կերտի . է Հոգոյ Լն+ [4] .

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐՈՅ

[1] Նստաւ սա յետ մահուան Ջաքարիայի յԱթոռն Աղթամուրայ . յամի
1464 և ի թուին Հայոց ՋԺԳ .

[2] Թուական չունէր այն Գանձարանն . բայց հաւանական հաշուով ինձ
թուի թէ ՋԺԶ . ամի գրեալ էր զայն կարապետ գրիչ . վասնզի ի սին յիշատա
կարանի յիշատակեալ Ջհան շահն՝ որդի Արայ Ռսուֆայ՝ և եղբայրն Սքան-
տարոյ . որ հրամանաւ Շահ Ռուհայ որդւոյն Անկթամուրայ բարձրացաւ ի
գահն թագաւորութեան Պարսից ի Գաւրէժ . սպանաւ ի ՋԺԶ 1468 ամի . ի մեծ
պատերազմի անդ . որ մղէր ընդ Հասան բէկին՝ որդւոյն Օթմանայ՝ ամիրային Տիգ-
րանակերտի և կողմանցն այնոցիկ : Եւ զայս պատմութիւնս իմ հաստատունն Աւե-
տիս և Յոհաննէս ժամանակակից գրիչք ի Յիշատակարանս իւրեանց՝ տես զբանս
նոցին՝ ի Նշխար Պատմութեան մատենի մերում . յառաջին հատորօջ . ի թիւս
297 . և 298 որ կան դեռ անտիպ : Ահա այսու ծանօթութեամբ յայտ գայ-
կորուսեալ թուական Գանձարանիս : Տես նաեւ ի վերոյ ի թիւն 272 Աւետարանի
Յիշատակարան զբանս Նեաբարենց Յակոբ եպիսկոպոսի :

[3] Որչափ որ բարեմաղթութիւնս առնէ կարապետ գրիչն վասն յաղթու-
թեան Ջհանշահայ՝ բայց չեղև ըստ մաղթանաց նորին . այլ ըստ ծանօթութեան
մերում . որպէս գրեցաք վերագոյն՝ հակառակն դիպաւ նմին . զի կոտորեցաւ բա-
նակն նորին ի զօրացն Ռզուէն Հասանայ . և անկան հրամանատարք նորին հան-
գերձ զօրաւոր պատերազմող սպայիւք իւրեանց . հուսկ յետոյ Ջհանշահն եւս հան-
գերձ որդւովք անկաւ ի ձեռս յաղթականին և խողխողեցաւ ի նմանէ :

[4] Մինչ գնացեալ էի անդ՝ ըստ որոշման գաւառական վարչութեան խառն
ժողովոյն Վանայ : Եւ ընկերակիցք էին ինձ յուղեւորութեանս՝ արժանայիշատակ
Երեմիա արք եպիսկոպոս Գեւկանց . Արժ . Տէր Մատթէոս վարդապետ՝ վանահայ-
րըն Հոգւոց վանից . Արժ . Յակոբոս վարդապետ Շահպաղեան . Արժ . Տէր Գիո-
նէսիոս քահանայ Արամեացեան . Սեդրակ էֆէնտի Գեւկանց . և Նշան էֆ .
Շիրվանեան :



